

ԱՐ ԵՐԵՎԱՆ

V SOLER

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա Գ Ի Բ

№ 6

ՅՈՒՆԻՑ

1905

ՀՎՀ

Թ. Բ Յ Լ Բ Ո

Տպարան „ՀԵՐԱՐԴՈՒ“ Մալաթ. փող. № 15.

1905

# ՅՈՒՆԱԴԱԿԱՆԻԹԻՒՆ

## № 6

*Երես*

- |   |           |     |
|---|-----------|-----|
| 1. ԱՏԱՐՇԻՆԱ (պատկերներ զիւղից), Վ.  | Փափազեանի | 5   |
| 2. ԶՈՒՄԱ, պատմուածք Ռուբէն Դրիզորեանցի . . . .  |           | 32  |
| 3. ԿԸ ԳԱՅ ԳԱՐՈՒԵՆ ոտան., Սմբատ Խոգրաշեանի.  |           | 35  |
| 4. Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ, Արշակ Չօպանեանի. . . .  |           | 36  |
| 5. ՈՒՐՄԻԱՅՅԻՑ—ԽՈՅ, Դալուատի . . . . .   |           | 46  |
| 6. ՃԱՆԱՊԱՐՀՅՈՒԹՈՒԹԻՒՆ, ԹԻՒՐՔԱՅ ՔԻՒՐԴ., (Ղանից<br>—Շէմպինան) Կ—ցիկ . . . . .   |           | 51  |
| 7. Բ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ, . . . . .   |           | 58  |
| 8. ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱՆ, Ջմս Բրայսի . . . .  |           | 64  |
| 9. ԹԻՒՐՔԻԱՅԻ ՖԻՆԱՆՆԵՐԸ, Ռուբէն Բերբերեանի .   |           | 75  |
| 10. ՄԵՐ ԴԺԲԱԽՏՈՒԹԻՒՆ, պատմուածք . . . Տիկ. Եկ.<br>Բարիաթուրի. . . . .   |           | 83  |
| 11. ԴԱՍՍԿԱՐԴԻԵՐԸ ԺԱՄԱՆԱԿ. ԵՒՐՈՊ. ՀԱՍԱՐԱԿ.<br>ՄԷՋ, Ս. Շի . . . . .   |           | 100 |
| 12. ՕԲԵՐԼԵՆԵՐԸ, Վէպ Ռընէ Բազլէնի . . . . .  |           | 114 |
| 13. ՆԵՐԿԱՅ ՃԱՊՈՆՆԸ Միշէլ Ռըվոնի . . . . .   |           | 123 |
| 14. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԿՈՍՈՒԹԻՒՆ.—1)  |           |     |
| Միամանթօ, «Հայորդիները».—Տ. Զ.: 2) Հեղինէ Մելիք-<br>Հայկագեան, «Մի պայուտ Ճապոնում».—Զ.: 3) Մ.<br>Մերաօ, «Մանկան մօտ».  | 137       |     |
| 15. ՆՈՐ ՄԱՅՈՒՄԾ ԳՐԲԵՐ . . . . .   |           | 143 |
| 16. ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԿԸ, Տ. ԶաւԷնի . . . . .  |           | 145 |
| 17. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀՅԻՑ.—Համառօտ տևառնին զե-<br>ղարուեատական դպրայներու, մլզքէն մինչեւ նորապոյն<br>շրջանները. Հ. Ալեւարի . . . . .  |           | 155 |
| 18. ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Երեւանի նահանգի անցքերը.—<br>Համիսլամական ծրագիր Եւ նրա իրազործման նպաս-<br>տաւոր հանգամանքներ. —Հայ գիւղացիների կրած վը-<br>նասների մօտաւոր չափերը.—Դիմումներ Կովկասեան<br>փոխարքային:—Տրեսպին տուած լիազօրութիւնները:—<br>Երկրագործութեան մինիստրութեան խափանումը:—<br>† Կարապետ Եղիան: Հ. Ս. . . . . |           | 165 |

Նոր շրջան V տարի

Հրատ. XVII տարի

# ՄՈՒՐՃ

ԴՐԱԿԵՆ, ՀԱՍՏԵՎԿԵՆ ԵՒ ՔԵԼԵՔԵՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Բ

№ 6

ՅՈՒՆԻՍ

1905



ԹԻՑԼԻՍ

Տպարան „ՀԵՌՄԱԿՍ“ Ընկ. Մադար. փող., 15.  
1905

Дозволено цензурою Тифлисъ 1905 г. іюня 9.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### № 6

b<sub>r<sup>1/2</sup></sub>

1. ՍՏԱՐՇԻՆԱ. (պատկերներ զիւղից), Վ. Փափագեանի	5
2. ԶՈՒՄԱ, պատմուածք Ռուլբէն Գրիգորեանցի . . . . .	32
3. ԿԸ ԳԱՅ ԴԱՐՈՒՆ ուսան., Սմբատ Խոզբաշեանի . . . . .	35
4. Մ. Պէշիկթաշլեան, Արշալ Չօպանեանի . . . . .	36
5. ՌԻՐՄԻԱՅՅԻՑ—ԽՈՅ, Դալուստի . . . . .	46
6. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԹԻՒՐՔԱՅ ՔԻՒՐԴ., (վանից —Շէմպինան) Կ—ցիի . . . . .	51
7. Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ, . . . . .	58
8. ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱՆ, Ջէմս Բրայսի . . . . .	64
9. ԹԻՒՐՔԻԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ, Ռուլբէն Բերքերեանի .	75
10. ՄԵՐ՝ ԴԺԲԱԽՍՈՒԹԻՒՆԸ, պատմուածք . Տիկ. Եկ. Բահաթուրի. . . . .	83
11. ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ԺԱՄԱՆԱԿ. ԵՒՐՈՊ. ՀԱՍԱՐԱԿ. Մէջ, Ս. Շ. . . . .	100
12. ՕԲԵՐԼԷՆԵՐԸ, վէպ Ռընէ Բազէնի . . . . .	114
13. ՆԵՐԿԱՅ ՃԱՊՈՆԸ ՄԻՇէԼ Ռուլոնի . . . . .	123
14. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—1) Սիամանթօ, «Հայորդիները».—Տ. Զ.: 2) Հեղինէ Մելիք- Հայկագեան, «Մի պտոյտ Ճապոնում».—Զ.: 3) Մ. Սերաօ, «Մանկան մօտ». «Վերջին խօսք».—Ս.: . . . 15. ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ . . . . .	137
16. ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼԸ. Տ. Զաւէնի . . . . .	143
17. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀՅԻՑ.—Համառօս տեսութիւն գե- ղարուեստական դպրոցներու, սկզբէն մինչեւ նորագոյն շրջանները. Հ. Ալեանարի . . . . .	145
18. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Երեւանի նահանդի անցքերը:— Համիսլամական ծրագիր եւ նրա իրագործման նպաս- տաւոր հանգամանքներ:—Հայ գիւղացիների կրած վը- նասների մօտաւոր չափերը:—Դիմումներ Կովկասեան փոխարքային:—Տրեպովին տուած լիազօրութիւնները:— Երկրագործութեան մինիստրութեան խափանումը:— † Կարապետ Եղիան: Հ. Ս. Վ. . . . .	155
	165

19. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ռուսաց նաւատորմղի ջախչա-  
խումը:—Գերմանիան ազատուած ձեռներով:—Շլեդ-  
Նորվեգիան ընդհարում: Լ. Մ. . . . . 182
20. ՎՐԻՊԱԿՆԵՐ . . . . . 185
21. ՅԱՅՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . —
22. ՅԱԻԵԼՈՒԱԾ. Զէյմն Մորիէր «ՀԱԶԻ ԲԱԲԱՆ ԱՆԳ-  
ԼԻԱՅՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ.  
անդ. Մ. Կարապետեան. . . . . 33—64

# ՍՏԱՐԾԻՆԱ

(Պատկերներ գիւղից)

## I

Բնդոստ վեր թռայ:

Այս այդ կաչաղակ տանտէրս: Դարձեալ նա էր: Ամէն առաւօտ այդպէս զարթեցնում էր ինձ, հանգիստ չեր տալիս: Ճշում էր թռփերի ամբողջ ոյժով, գոռում ծառայի, գոռում հարսի, գոռում նոյն իսկ անցորդների վրայ:

Անշուշտ ժամը հինգն էր:

—Ադա Մուկուչ, թաղեմ գլուխդ, էդ հեր ես բաղչի դուռը բաց թողել. էծերը պատրուսնին կերան է է... փիէ, տօ դուս քշի, հարամ կերած... էդ հեր ես առտեհան բողկերը դուս տալի, Վարդան. գնա կորի տուն, համ մէկ չայդ խմի... Հարսի, Սաթենիկ, եկեք էս լակոտին տարէք է է...

Եւ այսպէս, աչքիցը ոչ ոքի չեր վրիպեցնում: Մէկ իր թռասն, որ մտել էր անշուշտ պարտէզ և բողկ էր խժում. մէ՛կ իր ծառային, մէ՛կ հարսին. նոյն իսկ բազի շների վրայ էլ ճշում էր, հաւերի վրայ զայրանում:

Հազար ասա գու. սովորութիւն էր. առանց գրան էր կարող: Ո՞չ առանց գոռգոռալու, ոչ էլ առանց առաւօտ շուտով իր բաժին երեք «րիւմկա» արաղը կոնծելու:

\* ) Շրջանական գիւղապետ, շահապ:

Անկողնիս մէջ շուռ ու մուռ դալով՝ ստիպուած էի  
լսել այդ բոլորը և զիմանալ:

Արդեօք լնչպիսի եղանակ էր դրսում: Նոյնը,—մի  
շաբաթից ’ի վեր անընդհատ մաղող անձրի, թացու-  
թիւն, մշուշ... երկինքն էլ կապար, ճնշող...

—Վայ ես քո հաց տուողին, Մուկուչ, կանգնել ես  
էշի պէս որ լնչ... կորի ձիանոնքը տար ջրի... էն խո-  
տըն էլ շուռ ու մուռ տուր, բեալքի արևը չորացնի...

Արև, իրան էր այդ:

Երկու բովէի մէջ վեր թուայ, լուսամուտների փեղ-  
կերը բացի, յետոյ հագնուեցի և դուրս նետուեցի սեն-  
եակից:

Դժուար էր պատահում պայծառ արևով ողողուած  
օր, անամալ երկինք տեմնել Դուզանում: Բայց հազիւ  
պատշգամբ ելայ, որ սքանչացման աղաղակ դուրս թուաւ  
բերնիցս:

Արև էր. զուարթ, ժպտուն արև, որ ջերմ ճառա-  
գայթներով ողողել էր ամեն լնչ:

Պարտէզ, դաշտ ու անտառ փողփողում էին. ոչ մի  
ամպի կտոր. մշուշ իսկ, որ անբաժան՝ ճնշում էր միշտ  
զիմացի մայրի անտառը—այժմ զորւում, մազցում էր  
դէպի կտարներն ու այնտեղից հալւում—անհետանում:

Որքան շքեղ էր: Դիմաց՝ պարտէզների շարքը, ա-  
պա՝ գետակն ու դէպի վեր պարզուող ծաղկալից դաշ-  
տը, ուր իւրաքանչիւր բոյս ցօղաթաթախ սարսում  
էր, ուր սիզաւէտ մարգերը պսպղում էին հաճոցքով և  
նրանց մէջ կայտուում էին այծեր, արածում՝ կովեր ու  
ոչխարներ:

Հեռուն, մշուշի տակից պարզուում, երևան էին գա-  
լիս դալարագեղ լեռներն ու անտառը. երկնքի պարզ  
խորքի վրայ շեշտուում էին ծառախմբերով պատած գա-  
դաթներ...

Իսկ թոշունները... Որքան բարձր, որքան զեղպեղ  
երգում էին ամեն կողմից, ոստոստում բարտիների կտ-  
արքներին, խմբային խաղեր սարքում, համերգներ

կազմում և ճիչ ու դայլայլով սաւառնում դէպի կանաչ  
բլուրները...

Մեղուներն էլ դուրս նետուած փեթակներից,  
զուարթ բզզոցով կոյտ առ կոյտ արանում էին ամեն ուղա-  
րութեամբ; Գլխաւոր բերքի այդ օրերին նրանք ամբողջ մի  
շաբաթ ստիպուած էին փակուած մնալ և ահա այժմ ա-  
ճապարում էին խորիսիները լեցնել; Այլս ծաղկեփոշի  
չէին բերում, այլ միմիայն մեղք՝ այն բազմազան ծա-  
ղիկներից, որոնք ամեն կողմից գլուխ էին դուրս պար-  
գել՝ ժպաելու արևին, հրճուելու նրա տուած ջերմու-  
թիւնով:

Դիւղն ամբողջ կենդանացել էր. նա մեռած, դե-  
րեզմանի էր նման անձրևալից օրերում: Հողը արագ չո-  
րանում էր այժմ, շոգի արձակում. ճռչող սայլերը դաշ-  
տըն էին ենում. երևում էին ձիաւորներ... Սագերի ե-  
րամներն էլ, օրօրուն, վզերնին ցցած՝ շարժւում էին  
դէպի դետափը:

—Բարի լոյս, բարի լոյս, կանչեց զուարթութեամբ  
տանտէրս—այ լաւ արև... հիմիկանց դէնը էլ դրախտ  
կըլի ըստեղ...

—Այս:

—Բաէնց ա մեր տեղը, անիծուի՛ նա... դժոխք ա  
անձրև օրերին, դրախտ՝ երբ արև ա անում... Դու էլ  
չե՞ս գնայ սար, մերսնք հրէս կերթան:

—Ո՛չ, պէտք է փեթակները նայել, մաքրել...

—Հա՛, թացութիւնը հալ չը թողեց... կըլի որ կաթած  
էլ ունենայ...

Մտայ պարտէզ: Որքան շուտ ցեխ էր կտրում հո-  
վը, այնքան էլ արագ ցամաքում էր: Ծառայիս հետ  
երկար զբաղուեցինք նրանով, յետոյ, կէսօրուայ մօտ,  
մտածեցի հանգչել քիչ ճօճի (գամակ) մէջ, որ կապու-  
ած էր երկու ծառերի ստուերի տակ:

Երկար սակայն մենակ չմնացի: Նախ, աջ կողմիս  
զբացու կինը, որ իրանց պարտէզի մէջ ինչ որ բանով  
էր զբաղուած, դիմեց ինձ «աղա-աղբէր» տիտղոսով և

ամանը պարզած պատի վրայով, ջուր խնդրեց կողքիս գտնուող աղբիւրից: Յետոյ, երկու մեծ թռչուններ գրլիսիս վրայի ծառի ճիւղերի մէջ մի լաւ գգգեցին իրար և տերենների անձրև հոսեցրին. հուսկ ուրեմն նկատեցի թէ ինչպէս պարտէզի գոնից մի առ մի ներս մտան և դէպի իմ կողմը գիմեցին մի խումբ գիւղացիներ:

Ամենից տուաջ քայլողը նիհար ու երկարաճասակ անձ էր: «Չերքեզկա», երկար կօշիկ, կլոր-կարճլիկ փափակ, ձեռքին էլ մտրակ: Զը մոռանամ սուլճ ու արծաթապատ գօտին:

Ցաւագար աչքերը ճպճպուն, շուրթերը պլրկած, քիթը ցցած՝ զննում էր նա պարտէզը և մէկ-մէկ էլ ճիշտ պարսիկ մեծաւորի նման, առանց դառնալու, երեկի իր նկատողութիւններն էր, որ հաղորդում էր հետևորդներին:

Այդ մարդու հետ թէև գեռ զործ չէի ունեցել, բայց ծանօթ էի: Շրջանական, 5—6 գիւղերի շահապն էր: «Ստարշինա», «գոլովա» այդպէս էին տիտղոսում նրանց գիւղացիք:

Անմիջապէս ետեից բայլողը՝ զըազիւն էր: Ագուսի էր յիշեցնում այդ երկար ու կոր, զլուխը միշտ կախ, զունտ քիթը կապոյտ ու ստրկական շարժումներով երիտասարդը: Մի քանի անդամ հանդիսել էլ նրան. հազիւ մի քանի բառ էլ լսել բերնից, սակայն միշտ օղու հոտը զգացել:

Ինչպէս ամէն «ուշիմ» գրազիր, ճարտար քերթող էր Սրապիսնը: Զեռքն ընկնողը էժան չէր պլծնիկ: Պրտոկոլներ (արձանագրութիւն) կազմողն էր: Նայելով թէ սկ և ի՞նչ կը կրչէր ձեռքը—նրա համեմատ էլ արձանագրութեան մէջ այս և այն եղբակացութիւն կը գոյցնէր: «Ստարշինան» կարգալ-գրել չգիտէր: Իր անունը—այն հրաշալի հնգատառ Գիգու անունը ստորագրել սովորել էր, բայց այդ իսկ ճզմզելու համար, թշուառը ստիպուած էր առ նուազն տասն անգամ աչքերը ճպճը պացնել, գոնէ երեք անգամ քիթը վեր քաշել և երեք

անդամ էլ զրիչը կոտրելու ուժգնութեամբ՝ թանաքի մէջ թաթախել:

Եւ ի՞նչ հարկ, խնդրեմ, որ ծանրակշիռ պաշտօնեան աւելին գրել զիտենար: Զեռնտու էլ չէր: Կնիքը գրպանում: հանել, կոփել, միշտ մի-երկու մանէթ այդ նեղութեան համար ստանալի շատ աւելի նպաստաւոր էր:

Ահա այդ զոյդն էր, որ դալիս էր դէպի ինձ՝ բաւական հանդիսաւոր, պաշտօնական քայլերով, ետևից տեղական քեօխվան, մոռթը ցցած զզիր Սահակը, այլ և ուստա Համօն, կարմրամաղ Սմբատը, երեսփոխը, Խօլերան...

Հասկացայ խմբային այդ այցելութեան պատճառը: Պարտէզիս մէջ կազ մի աղբիւր: Նրա ջրի կէսը, անցնելով մեր հողի վրայ կեղրոնայող ստորերկրեայ աւագանում, խողովակներով գնում էր դիւղի ներքին թաղերի աղբիւրին ևս: Մի ամսից ՚ի վեր աւազանը փչացել էր, ջուրը դուրս էր տալիս և շուրջը ճահիճ զոյացնում, իսկ դրանով ներքին թաղի աղբիւրի ջուրը լիովին կտրւում:

Յայտնել էի դիւղացոց: Նրանք դիմել էին որ աւազանը շինել տամ իմ ծախսով, բայց մերժել էի և աւարկել որ դա իրանց պարագն էր:

Գանդատուել էին: Այժմ երեխ ստարշինայով, քեօխվայով և գրազրով միասին՝ եկել էին որ արձանագրութիւն կազմեն:

—Բարի լոյս, պ. Երուանդ, կանչեց հեռուից ստարշինան—հ՞ը, էդ ի՞նչ ա, չըլի՛ երեխութիւնդ միտդ ալնկել, որ ճօճի մէջ ես պառկել...

Եւ մօտեցած՝ նստեց գետնի մէջ հաստատուած նըստարանին, մտրակը դրեց սեղանի վրայ, նայեց շուրջն ու ասաց.

—Զէ, լաւ ես շինել... Բառ տնկած ծառերդ ուր էն... էդ են և սշչիկներդ...<sup>1)</sup> Քիչ ա, ես մեր բազումը

<sup>1)</sup> Դադանի սիստեմով փեթակներ:

200 հատ ունիմ...

Ելայ և նստեցի դիմացը:

—Աղբիւրն էլ սա ա. շարունակեց նա լուրջ—բա  
ընչի՞ ըստնց քիչ ա ջուրը:

—Աւազանը փչացել է. տակից ջուրը գուրս է տա-  
լիս և ահա այդքան հողը ճահճ է շինել... Ստիպուած  
պիտի լինեմ բոլորովին քանողել, առուտի գոյացնել, եթէ  
գիւղացիք չլինեն:

—Հա, ՚ի հարկէ, հողը խարաք ա անում... Դէ  
շինել տուր էլի. գեղացիք էլ շնորհակալ կ'ըլեն:

—Գիւղացիք պիտի շինեն և ոչ թէ ես:

Գիւղացիներից ոչ մէկը դեռ չէր խօսում: Ուստա  
չամօն քեօխիլի հետ մօտեցել աղբիւրին՝ կկղել էին ու  
զնում:

—Ասենք դու մի քիչ դրուստ ես, գեղացիք էլ պի-  
տի շինեն. ամա չէ որ սա քեզ էլ վնաս ա տալիս...

—Համ էլ, մէջ մտաւ Խոլերան—թէ մէնտկ գեղա-  
ցիք շինեն, էն ա էլ քեզ ջուր չեն տալ ըստիանց:

—Որ կռանտը (ծորակ) ըստեղից փակուի, ձայնեց  
ուստան աղբիւրի մօտից—ցածի աղբիւրին կերթայ էս  
ջուրը:

—Սխալւում ես, ուստա. մօտ զնացի ես—փորձիր  
փակիր և կը տեսնես որ չի դնալ. այ, նայիր, աւազանի-  
տակից է ջուրը գուրս զնում և ծծւում հողի մէջ:

—Հա, արեց քեօխվէն—ըտէնց կ'ըլի... Պիտի հօ-  
գուզը շինուի... էլի մէկ 50—60 մանէթ ծախս ունի:

—Բաս, գոչեց ուստան—ծախս կուզի. ցէմէնտ,  
ուստի հախ, քեարփիչ... կուզէք, ինչի՞ չէ, շինեմ...

Ասաց, աւազանը ծածկող քարը գէն շպրտեց և բո-  
լորը կռացան նայելու, բացի ստարշինայից և գրազրից:

Առ հասարակ Սրապիոնը լուռ, բաւական հեռու  
կանգնած, ձեռքին էր սեղմել աղտոտ թղթի մի կտոր և  
անընդհատ մատիտի ծայրն էր թքոտում:

Սակայն երբ ամենքը կռացել էին աղբիւրի վրայ,  
իսկ ստարշինան քիթը ցցած՝ ծառերի բարձունքներին

էր նայում—զբագիրը մի քայլ ետ գնաց ու մատովն ինձ  
նշան արաւ իրան մօտենալու:

Զարմացայ նկատելով նրա յանդուգն ժպիտը և այդ  
ձեռվ ինձ կանչելլ։ Զգուանքս էր շարժում ընդհանրա-  
պէս այդ ագուաւը, բայց, մի ըստէ զայրանալուց յետոյ,  
հետաքըքութիւնս յաղթեց և ելաց ու մօտ գնացի։

Տեսնենք, ի՞նչ ունէր ինձ ասելու այդպէս խորհրդա-  
ւոր կերպով։

Զանաց սիրալիր ժպիտ ստանալ, յետոյ ոսք վեր-  
ցրեց գէպի փեթակների կողմն ու ասաց կիսաձայն։

—Հա մէկ ինդրեմ գնանք էն կողմը... ձեզ ասելիք  
ունիմ... փեթակներն էլ մէկ ցոյց տուէք ինձ։

Գնացի։ Լուռ քայլեցինք մինչև առաջին ծառը։ Այն-  
տեղ նա կանդ առաւ, դարձաւ ու ասաց.

—Խօ տեսնում էք, պարոն, պրատակոլ են կազմել  
տալիս... գեղացիք են, անկիբթ... գանգատել են թէ  
դուք նրանց աղբիւրի ջուրը կտրում էք... Հա կաց մէկ  
ամէնը ասեմ... Հա. գիւղացոց դատաստանն էլ, գի-  
տէք, նրանց կողմը կը վճռի... Էս սո՛ւղ, <sup>1)</sup> Էս սլրիս-  
տաւ... զլսացաւանք. Ջուրը կտրել անկարելի ա... հո-  
վուզը չեն շինել, կուանտը կը կապեն ու էլի ջուրը տա-  
կից հողդ կը փչացնի...

—Այն ժամանակ ես կը քանդեմ աւագանը, աղբիւրը.  
Ես թոյլ չեմ տալիս աղբիւրը հողովս անցկացնել, աւա-  
գանը հողիս մէջը շինել...

Անկարելի ա... աթագան-բարագան շինածը չի քան-  
տուի ու ըտէնց հողիդ մեծ մասը կը գառնայ բայրու... <sup>2)</sup>

—Կը ստիպեմ դատաստանով, որ շինեն աւագա-  
նը... .

—Ամիսներ, տարիներ կը քաշի... գանգաւ, էլի  
պրատակուր, պրիստաւ... Դուք գիտէք. բայց որ ինձ լը-  
սէք, ես ձեզ մի լաւ, կտրուկ բան կառաջարկեմ, որ մի

<sup>1)</sup> Դատարան։

<sup>2)</sup> Ճահիճ. սուսերէն բառ է։

անգամով ամէն բան վերջանայ, աղբիւրն էլ շինուի, ձեզ  
էլ չուր գայ, նրանց էլ, հողն էլ չը փչանայ...

—Առաջարկէք տեսնե՞սք:

—Այ ասեմ... Մի քիչ դէնը գնանք... էս ի՞նչ լու  
բնել են էս ծառերը... խնձորի են... վաճառքահ, ինչ  
էլ լաւերն են... Հա, էն էի ասում... խօ լսեցիք, շի-  
նելու համար էն քիչը յիսուն մանէթ կը նստի... որ լու  
վճռեն, ծախսի կէսը ձեր վզին կը գնեն... Հը... ոչ,  
ըտէնց էլ կանեն. ես լաւ գիտեմ մեր գատաւորներին...  
թէ չէ, կռանտը կը փակեն, հովուզը չեն շինիլ ու ըա-  
լուս կը գառնայ ողջ հողդ:

Բարկացած մի շարժում դործեցի:

—Հա, հէնց ըտէնց կ'ըլի, ես լաւ գիտեմ. գեղամէ-  
ջումն էլ խօսել են ու ըտենց էլ վճռել... ետ 25 մանէթ  
պիտի ծախս քաշես, եմ թէ չէ հողդ ըսէնց ջուր կը  
կտրի, կռանտդ էլ կը փակեն...

—Վերջացրէք. յետոյ...

—Յետոյ՝ էլ էն, որ օրէնքներից գուշս կայ մի ու-  
րիշ աւելի մեծ օրէնք. խօ գիտէք... էն ո՞ր բանն ա, որ  
աղամամութի մէջ դնես՝ լուս կը տայ... ըստեղ ամէն  
բան Ստարշինի ու իմ ձեռին ա... ոնց ուզենանք՝  
ընէնց շուռ կը տանք... Հլա դուք էդ «լուս տուող» զա-  
դի ծէրը ցոյց տուէք ու կը տեսնեք... ընէնց անենք,  
որ ամէն բան էսօր և եթ զլատուի... թանգ էլ չի նըս-  
տի քեզ... մի կարմիր ա ու մի կատուտ...

Մի վարկեան ապշեցի այդքան յանդկնօրէն արուած  
կաշառքի առաջարկի վրայ: Յետոյ, զզուանօք նայեցի  
ագուախին, մէջքս գարձրի և լուս՝ գնացի դէպի նախկին  
տեղս, առանց խոկ ետ նայելու նորից:

Անշուշտ զրագիրը սառած—մնացած սլիտի լինէր և  
կամ ուսերը թոթուած ու մի լաւ հայհոյանք արձակած  
իմ հասցէին:

Յամենայն դէպս ուղիղ դէպի ստարշինան գնացի և  
անվրդով, նստեցի ճոճի մէջ:

Ստարշինան նայեց ինձ, աչքերը կլոցեց, ապա դարձաւ եկող գրագրին և կմնչեց.

—Հ՞ը, Սբապին, պարոնի ծառերը աեսար, շատ են...

—Զէ, ստարշինան, պարոնը սկի չուզաց էլ ծառերը ցոյց տալ... վախենում ա որ աչք գիւղչի...

Ստարշինան դարձեալ նայեց ինձ: Ժպտում էի: Կատարելապէս ըմբռնել էի թէ նրա տուած հարցի և թէ գրագրի պատասխանի ներքին խմաստը:

—Շատ խոստացան, ուզում էր հարցրած լինել պաշտօնեան:

—Չուզեց ոչինչ տալ, մերժեց. հասկացրել էր գրագրը:

## II

Ու այնուհետեւ որոշուած էր ստարշինայի բռնելիք գիրքն ու վերաբերմունքը:

Անմիջապէս առաջ նա դէմքը կնճռեց, արագ շարժումով դլսի փափախը, ետեից զարնելով՝ իջեցրեց դէպի ճակատը, ապա կուրծքը ցցեց և երրորդ շարժումով նստեց նստարանի վրայ ու ոսները պազեց դէպի ինձ:

Մտնում էր ստարշինական դերի մէջ: Սկսում էր կոմեդիան: Հաղիւ ծիծաղս զսպած՝ սպասում էի եղածին:

Երբ այդ բոլորն արել էր Դիգօլը, մտրակի կոթը ուսաղլսից ետ պարզելով՝ կանչեց մօտ գրագրին, հաղաց և խիստ ձայնով ասաց.

—Դէ հմի գըի. պի՛սէր...<sup>1)</sup> Զէր հրամանոց անունը, պարոն երուանդ:

—Սմբատ, ասացի ծաղրելով:

—Ո՞սց Սմբատ. ձեր անունը իսօ Երուանդ ա...

—Բայս որ գիտէք, էլ ուր էք հարցնում:

<sup>1)</sup>) Գրագիր:

— Հանաքները թողէք, ասաց նա յոխորտաձայն—  
ըստի վոլոստնօյ ստարշինան՝<sup>2)</sup> ա խօսում:

Ասացի անունս և աղգանունս:

— Հմի հրամանոցդ պաշտոնական ամսիս 5-իցը ու-  
սիլնինի—խլէն՝<sup>3)</sup> ա ուէզով...<sup>4)</sup> ըտէնց չի, պիսէր...

— Հրամանք ես, ստարշինա, շտավեց ասել զրագիրը—  
անցեալ ամսի 5-իցը ոսսելէնա ախրանա ա զուրելնին  
5) ողջ... առանց պաշտոնական մարդ չպիսի երեք օրից  
աւելի մնայ... չունեցողին էտապով՝<sup>6)</sup> կը զրկեն ուէզո-  
նի նաշալնիկի՝<sup>7)</sup> մօտ...

— Որ տառմ եմ... նեղութիւն կըի պաշտոնական ցոյց  
տալ...

— Բայց չի որ, ասացի— երբորդ ամփան է այստեղ եմ.  
ի՞նչու մինչև այժմ չէիք հետաքրքրուել:

— Մենք մեր բանը լաւ դիտենք, պարհն. պատաս-  
խանեց հպարտութեամբ ստարշինան—պարտաւոր էլ չենք  
ամեն հարցմունքի ջուղաք առաջ... Մերն էն ա, երբ ու-  
զենանք հրամայենք ու պիսի կատարուի...

— Համ էլ էդ քեօխսվի պարտքն էր. մէջ մտաւ զրա-  
գիրը:

Գիւղացիք այժմ թողել էին աղբիւրը և լրջաղէմ,  
զգալով որ «պաշտօնական գործողութիւններ» էին սկը-  
սում—մօտեցել ու շրջապատել էին մեզ:

— Հա բան... արեց ստարշինան՝ քեօխսվին դառնա-  
լով—քեզ պըէղպիսանիէն՝<sup>8)</sup> եկել ա խօ, էլ ուր ես ա-  
ռանց պաշտոնական մարդ թողում գիւղումը... գու մա-  
գամ գիտես ոչ որ հմի ուսնիշիքէն ա...

— Ուաիլնա ախրանա... ուզուց զրագիրը:

Գիրը մի բան մըթմըթաց քթի տակից, յետոյ կա-  
մենալով պատժել իր այդ յանդգնութիւնը՝ իսկոյն բե-

<sup>2)</sup> Շրջանական տանուտէր, շահապ. <sup>3)</sup> աղճատած՝ յսւլեն-  
հայ օхրա զօրեղացրած դրութիւն. <sup>4)</sup> գաւառ: <sup>5)</sup> Նահանգ <sup>6)</sup>  
Ոտքով և զինուորներով ինչպէս բանտարկեալ. <sup>7)</sup> գաւառա-  
պետ: <sup>8)</sup> Հրաման:

բանը ծածկեց երկար յուպովը՝ թեօխվէն շփոթուեց,  
ժպտայ ու ասաց.

—Դէ էս մարդը խօ փախստական չի<sup>3</sup>. անովակեղով  
ըստեղ ա...

—Միմնոյն ա, արեց խստութեամբ ստարշինան—  
ուսիլնի-խրէնը ֆիդանների համար էլ ա... Մենք չենք  
ուզում որ մեր վոլոստի մէջ ըտէնց մարդիկ ըլին...

Ապա դարձաւ ինձ ու կրկնեց.

—Հրամանքդ նեղութիւն կրիր պաշպորտդ...

—Լաւ, ասացի ես—տանն է. եթէ կուղէք՝ դնանք  
քիչ նախաճաշ անենք և ցոյց կը տամ:

—Զկուսկի՞... փայլեց ստարշինի դէմքը—հա տօ,  
անիծուի մեր էս պաշտօնն էլ. էնքան գործ կայ, որ  
մարդ մոռանում ա թէ քաղցած ա... ընչի չէ, դնանք...  
թէ գինի կունենաս ու...

—Ունիմ:

—Բաս լաւ... Ասում ես պաշպորտ էլ ունիս էլի<sup>4</sup>...  
չը...

—Կայ:

—Եղ լաւ... Որ ըտէնց ա, պարոն, շուտ գանգատդ  
ասա, թող զըի պիտէն ու զնանք փորներս պնտացնենք  
քիչ:

—Ես գանգատ չունիմ... եթէ գիւղացիք մինչև 15  
օր ես չեն շինիլ աւագանը, այն ժամանակ աղքիւրը կը  
քանդեմ, ջուրն էլ առուակ կը շինեմ—կ'երթայ:

—Հլա կաց մէկ. ճշաց Խոլերան—էդ ոնց թէ կը  
քանդես. բայ մեղ առանց ջուրի<sup>5</sup> կը թողաս:

—Եթէ մաքուր ջուր էք ուզում, աւագանը շինէք:

—Կայէք հլա... մէջ մտաւ ստարշինան: Ցետոյ  
ոտքի ելաւ, ինձ դարձաւ ու աւելացրեց.

—Էս սպօրը զակուսկի<sup>6</sup>) վրայ լաւ կը դրստուի...  
դնանք, տղէք... ինչ ա, բոլորին ես դօնաղ անում,  
ալ. Երուանդ:

<sup>1)</sup> Նախաճաշ:

— Ի՞նչու չէ. համեցէք բոլորդ էլ:

— Ճուխրդ մարդ ա, ես ու իմ Աստոծը. ասաց ստարշինան քայլելիս՝ գիւղացոց — Հը, ի՞նչ ա, խամ քաղաքացի էք դոել, որ վրայ էք տալիս... Սա մեզանից լու ա համիմում զակոնը... Զակոնով պիտի վարուե՞նք թէ ոչ... Թողէք, ճաշի վրայ կը վերջացընենք... Մարդը պաշ զորտ ունի, ֆիդան չի, քաղաքավարի ինսան ա... Գնանք, պ. Երուանդ, դու քէֆդ քեօք պահի, մենք չենք թողալ որ գեղացիք գլխիդ նատեն...

Քայլեցինք գեղի դուռը: Անմիջապէս, զակուսի անունից կակղացած ստարշինան թողեց ինձ առաջ անցնելու, յետոյ, մինչև պարտէղից դուրս գնալը՝ գովեց ծառերը, գիւղացոց դարձած՝ շեշտեց որ նրանք չնորհակալ պիտի լինին ինձպէս մարդ իրանց մէջ զտնուելու համար, որ ես ջոմարդ մարդ եմ երեսում և որ վերջապէս գիտեմ «պատիւս պատուառորաց և հարկս հարկաւորաց» տալը...

Սյս բոլոր միտումաւոր ակնարկներով լի գովեստները նա անում էք հանդիսաւոր, աչքերը անընդհատ կկոցելով. իսկ զրագիրը, որ թուղթը զրավանն էր կոխել, այժմ գլուխը կախ՝ գալիս էր նրա ետևից:

Գնացքը փակում էր զգիր Սահակը՝ իրանից կրկնակի մեծութեամբ ցուպը միշտ ուսին դրած:

Երբ տուն էինք մտնում, տանտէրս, որ լուսամուտից նայում էր, կանչեց.

— Բահ-բահ, էդ ի՞նչ խաբար ա. Էտքան մարդիկը մրգիանց որսացիր, պարոն Երուանդ... Սադ ուէզզի<sup>1)</sup> մեծանոնքը թոփ ես արել — բերում:

— Եկել են պրատակօլ կազմելու:

— Դու քո Աստումծը... ի՞նչի, տօ, էն ո՞ր շան որդին ա գանգատել քեզնից:

— Գիւղացիք:

— Ա՛յ կասես... Համա չըլի՛ էն անտէր աղբիւրի

1) Գաւառ:

համար... Հլա կացէք գամ տեսնամ էղ ո՞նց բան ա...

—Համեցէք, հրաւիրեցի ես—համ էլ ասէք ձեր գիշուցը մի-երկու շիշ ուղարկեն մեզ:

—Երկու. ծիծաղեց ստարշինան—ուղարին ուղում ես գտալով ջրի:

—Ճո ջաններդ սաղ ըլի... կանչեց տանտէրս մօտենալով մեղ—հրէն կարասը ընդի՛ չի... պարոն Երուանդին վախեցնել չես կարայ. ողջիդ էլ գինու մէջ կը խեղդի:

—Ճո ուր ա բաս մէկ օր էլ մեկ չխեղտեց. ստացք եօխվէն ծիծաղելով:

—Դժև ինչացու ես, դժև. ծաղրեց նրան տանտէրս —ընչի՛, մուֆթա գինի՛ ա գտել պարոնը... Դէհ, հլա մէկ համեցէք օթախը...

Ասաց և առանց սպասելու որ ես կարդադրութիւն անեմ տանս մէջ, մտաւ սրահս առաջ և յետոյ ինձ ներս թողեց:

Կանչեցի ծառային: Սեղան դրին, բերին ինչ կար և քիչ յետոյ բաժակները լցուեցին:

Ահա հէնց այդ ժամանակ էր որ մէկէն աղբիւրը անցաւ երկրորդ պլանի վրայ, որովհետև մի նոր խնդիր եկաւ զբաղեցնելու ստարշինային:

Մեզ ծառայում էր սեղանի վրայ մեր Սիսակ անունով ծառան, որ միենոյն ժամանակ և վարպետ այդեղործ էր, ճարպիկ ու հասկացող մշակող:

Մշտապէս խռովկանի դէմքով այդ երիտասարդը լրթունքները կախ, յաւկտենապէս դժգոհի շարժուածքներով զնում-զալիս էր առանց ուշադրութիւն գրաւելու իր վրայ:

Սակայն երբ մի անգամ, երեխ կամենալով իր խոնարհութիւնը արտայայտել՝ զինի լեցրեց ստարշինայի բաժակում, Գիլկոլը յանկաբծ դարձաւ, աչքերը ճողճպացնելով նայեց նրան ու գոչեց.

—Փիէ... էս Սիսակը չի... ձեզ մօտ ա ծառայում:

—Հրամանը ես, ստարշինա, ես եմ... Դէ էլ ինչ

անեմ, ով ինձ հաց կը տայ կը պահի. Գրիգորն էլ որ  
ընէնց զուլում արաւ ինձ...

—Կաց հայ... Քեզ հետ գործ ունիմ... Աղա Սրա-  
պիօն, սրա անունը էն թղթումը չկար...

—Կար, ստարշինա:

—Բաս լաւ...

Աղա փափախն իջեցրեց ճակատին, խիստ կերպա-  
րանք ստացաւ, պարզից ձեռը դէպի Սիսակն ու ասաց.

—Պաշտոնութիւնի հմի սլինիւխընէն ա:

—Ռւսիլնա-ախրանա, այ ստարշինա, ուղղեց նորից  
դրագիրը:

—Դու ձէնդ քեզ քաշի հմի. բարկացաւ այս ան-  
գամ պաշտօնեան-լեզուն իմն ա' սլանի-լրէն եմ ա-  
սում... Շնուտ, Սիսակ, պաշտոնութիւնի բի տենմնք...

—Եա... զունատ ետ քաշուեց ծառաս—ի՞նչ պաշ-  
տօրտ...

### III

Սլեքսանդրօպովի զիւղերից բերուած որբ տղայ էր  
Սիսակը: Միայն մի եղբայր ունէր, որ մնտառապահի  
օգնական էր: Մանկութիւնից մեծացած Դուզանում,  
տեղացիի նման էր դարձել: Խնամել էին նրան տանտէ-  
րըս, ջրաղացի քարերով առևտուր անող Մելիքը և մի  
քիչ էլ ուրիշները:

Այժմ, մօտ 25 տարեկան, մտադիր էր ամուսնանալ  
և տնիկեսայ լինել Դուզանում. տսում էին մինչև իսկ  
որ նշանուել էր, բայց մի քանի ամսից ի վեր, ինչ-ինչ  
գժտութիւններ նրա և աներոջը մէջ՝ Սիսակին թողել  
էր շուարած, դռնէ դուռ ընկած: Գովել էին ինձ որպէս  
լաւ այգեգործի. վարձել էի նրան, պարտէզիս մի ան-  
կիւնում հէնց ինքը մի խրճիթ էր կառուցել ցցերով և  
նրա մէջն էր ասլում:

Իսկ թէ նոր ի՞նչ էր պատահել, ինչու յանկարծ  
նրանից անցագիր էին ուզում (ինչ որ չէին ուզել 20

տարուց ի վեր) — դա զարմացրեց թէ ինձ և թէ իրան  
— Սիսակին:

Հաստ երևոյթին միւս գիւղացիք բոլորն էլ գիտէին  
պատճառը: Ոմանք ժալուում էին, միւսներն անտարբեր՝  
սպասում էին լինելիքին:

— Պաշպօրտ... կրկնեց նորից Սիսակը կակազելով  
— ի՞նչի, բա ես եադ եմ... Դու ինձ չես ճանաչում,  
սոսարշինա:

— Դուս մի՛ տալ, այ շաշ... կանչեց նրա վրայ  
պաշտօնեան — ես, հլա դու մէկ մաս լակու էիր, որ  
գիւղումը ականջներդ քօքել նմ... Ամա հմի սլինի-խրէն  
ա, ասացի, ու առանց պաշպօրտի չի՛ ըլի...

— Եա... ո՞նց թէ խրէն ա... բա ինձի՞ ինչ... կան-  
չեց վրդովուած Սիսակը — բա դու չես իմանում որ ես  
պաշպօրտ սկի չեմ էլ ունեցել:

— Էդ ա է՛ք... Դու հլա ըստեղի վրան վրուած  
չես, բա ո՞ւր ես ըստեղ վեր ընկել առանց բիլէթի, հ՞ը...  
փալաս-մալասդ հաւաքի դէ, ու դնա եա բիլէթ հանի,  
եա թէ չէ՛ էլ էս գեղի դրազովը անց չկենաս:.. Սա  
մեր հրամանն ա...

Հարկ համարեցի միջամտել: Թշուառ Սիսակը երե-  
րուն՝ կարկամել էր ու քիչ էր մնում լաց լինէր դայ-  
րոյթից:

— Կսեցէք, սլարմն Գիգն, ասացի — էլի՛ դուք տա-  
րօրինակ բաներ էք մնում: այս մարդը վաղուց այստեղ  
է, հասարակութեան անդամ է, ինչո՞ւ էք վոնտել ու-  
զում:

— Բուէնց ա զակօնը, ասաց գրագիրը — առանց  
պաշպօրտ չի կարելի. պաշպօրտ չունի՞ թող դնա իր  
տեղիցը հանի:

— Համ էլ էդ սիլնի-խրէն ա, — ի՞նչ զահրումար  
ա, աւելացրեց ստարշինան — վի՞ս բան ա ըլել. որ մէջ  
տեղ ընկաւ, ասում են, առանց պաշպօրտի մարդու բըռ-  
նելն ու քշելը մէկ ա ըլում...

— Կաց հլա, գոլովա. խօսեց տանտէրս — չի՞ ըլիւ,

որ մի կերպ անենք էս խեղճ տղի համար... մնայ ըստեղ ու գիր գրի որ զրկեն:

— Զէ, չէ, մնց կըլի... թող գնայ գեղիցը. մէկ էլ աեսար պրիստաւն խմացաւ... Լսեցիր, Սիսակ, էդուցուանից էլ առանց բկլէթի էս գեղումը, իմ վոլոստումը<sup>1)</sup> սկի չերևսս, թէ չէ էտապով քեզ քշել կը տամ:

— Խմիր, առ. բաժակը նրան պարզեց տանտէըս—լաւ ա, մի բարկանալ, հասկացանք... Կ'երթայ էլի, ինչ կայ. կերթայ պաշպորտ կը հանի ու էլի կը դայ... եանի գրանուլ խօ Սիսակից չ'աղատուեցին...

Ու աչքով արեց Սիսակին, որ սենեակիցը հեռանար: Դեռ մութն էր ինձ համար. տանտիրոջս ակնարկութիւններից երեսում էր որ մի ինչ որ ինարիգ կայ ինդղում...

— Իմ գործերը կը մնան. խօսեցի ես—քեալամի քուկը տալու<sup>2)</sup> ժամանակն է... Եթէ մի քանի օր ժամանակ տաք, ես ինքս կը գրեմ և կ'աշխատեմ որ անցագիրը ուղարկեն:

— Զէ, մնց կ'ըլի... Հը<sup>3)</sup>, Սրապիօն, ըտենց չի ըլիլ... Են զահըումաք սլուկալսանան մնց ա ասում, դու ես կարդացել:

— Ասում ա, խօսեց ծանրակշիռ՝ գրագիրը—առանց պասպորտի չի կարելի. որ զեղումն էլ որ էլաւ՝ քեօխին պողոսուկ<sup>3)</sup> կը տան, կը պատժեն...

— Փիէ... ոստնեց քեօխին—թող գնա ունդ ըլի զիսից էէ. ինչի՞ են կատղել մեր մեծանոնքը... Գնա որդի, մեր խանումին էլ ասա՝ թէ իշխան ձկնիցը կայ, մի քիչ մազացու զրկի... էս զինիներն էլ պրծան:

— Տօ զնա է, Սիսակ... զնա որդի, գործիդ զնա ու թող տեսնենք ընչի՞ են կատղել մեր մեծանոնքը... Գնա որդի, մեր խանումին էլ ասա՝ թէ իշխան ձկնիցը կայ, մի քիչ մազացու զրկի... էս զինիներն էլ պրծան:

1) Համայնք. 2) Հող լցնել բոյսի տակը. օկучивать. 3) Պատի տակ:

Սիսակը լուռ՝ շշերը հաւաքեց և գլուխը երերցների դուրս գնաց:

Ոչ ոք չխօսեց մի բոպէ: Ստարշինան կռացել էր շաքարով շինած սալաթի վրայ, միւս գիւղացիները սենեակս էին զննում, իսկ ուստա Համօն փառակազմ գըրքերին պլշած իր կապոյտ աչքերը, ակներև կերպով գարձանում էր թէ արդեօք ես համբերութիւն էի ունեցել ծայրէծայր կարգալու այն հաստափոր հատորները:

—Հըմ... արեց վերջապէս ստարշինան—էս սալաթը լաւ բան ա ըլել... Կասես սկի զինի խմած չըլեմ... Թրի պէս կտրեց...

—Եանի դու սրանք ողջ կարդացել ես... չկարողացաւ իրան զսպել ուստա Համօն և դարձաւ դէպի ինձ:

—Զէ հա... արեց Խոլերան—մարդ հարուր տարի ապրի, էսքանը կարող չի կարդալ...

—Բաքի Աստուածաշունչնի են. դիտեց երևսփոխը:

—Գակոնի գրքեր կ'ըլեն. պնդեց գրագիրը:

—Բառարաններ են. ժպտեցի ես —ինչ խօսք ուզենամ միշտ կը գտնեմ... Այ, կ'ուզէք հէնց գտնեմ էդ ոտիլէննայա ախրանա բառը և ասեմ թէ ո՞նց են նրա օրէսքները:

—Հլա... գոչեց տանտէրս—Դու քո Աստուածը, մէկ նայի տես թէ ստարշինան իրաւունք ունի Սիսակին գեղիցը քշել:

—Ճո ինչ իրաւունք, ձայնեց ստարշինան—իրանունքը որն ա. զակոնն ըտէնց ա—պրծաւ գնաց. էլ ըստեղ իրաւունքի բան չկայ:

—Դէ զակոնն էլ իրաւունքն ա էլի. ասաց երեսփոխը:

—Զէ հա... ծիծաղեց քեօխվէն—տօ մարդ էլ իրաւունքիցը կը դողմայ շան պէս. ամա արի տես, որ զակոնի անունը չեն տալիս—դողը ջանդ ա ընկնում. կ'ասես խոլեր բռնած ըլի քեզ:

—Դէ հալբաթ, աւելացրեց Խոլերան—զակոնն ուրիշ ա, իրաւունքն՝ ուրիշ...

—Եամի այ Գիգով, ասաց տաճտէրս—արի ու դըրիսն ասա... էղ սլինի-խրէ՞նն ա քեզ ստիպում, թէ նրանից աւելի... ընէնց էմի... Հօը, դու ըլես էն Ս. Գէռմալը...

—Ռւրիշ ի՞նչ պիտի ըլի... ասաց խստութեամբ ստարշինան—ասի քեզ՝ որ զակոնն ըտէնց ա հմի... ՚ի զուր խօ չի, որ ինձ ստարշինա են արել, վոլոտնի ստարշինա<sup>1)</sup> ... ես պիտի զակոնը պահեմ...

—Զէ, չէ, դու էն ասա, եամի ըտի իս Գրիգորի, էն չոլախ քաֆթառի մատը խսոր չի՞... Հօը... ընէնց, ուզում ա Սիսակին ուադ անի, նրա աշխատանքն ուրանայ, իր խոստմունքը մոռանայ... Կ'ըլի որ ուրիշ փեսացու էլ գտած ըլի...

Ստարշինան մի ումարով դատարկեց բաժակը, երկի վարկենական շփոթութիւնը ծածկելու համար. յետոյ աչքերը ճարճապացրեց ու ասաց.

—Զէ, Գրիգորը ըստի գործ չ'ունի... ինձի ինչ որ աղջիկն էլ Սիսակին չի ուզում տայ... աղջիկը իմը իս չի...

—Այս, բայց մի ամբողջ տարի որ Սիսակին բանեցրել է խաբելով թէ աղջկը նրան կը տայ, անփեսայ կը շնի...

—Է՞ն դու էլ, պ. Երուանդ, արեց քեօխվէն—ի՞նչ ես Սիսակին ականջ դնում:

—Լաւ ա, հերիք ա... մեր կացաւ սեղանից ստարշինան և ինձ գարձաւ.

—Շնորհակալ ենք, ախպէր... Այ աղա, դուք էս ի՞նչ տեսակ մարդիկ էք. Եկանք որ աղքիւրի գործը դպտենք ու չժողեցիք էլ... մարդու հայը կերանք...

—Ոչինչ. միջամտեց քօեխվէն—պարոնը մելն ա, եօլա կը տանենք:

—Զէ, էղ իմ գործն ա. ասաց ստարշինան—ես ու պ. Երուանդը հմի քիչ բաղը կերթանք, ծառերը, եաշ-

<sup>1)</sup> Շըջանական տաճուտէր:

շիկները կը տեսնանք ու ընտեղ էլ բանը կը վերջաց-  
նենք... Հօր, պարոն, ըտենց չի՞...

— Եաւ, ասացի ես ժալտելով:

— Դէ, խալլար, դուք գեղամէջ գնացէք. ես էլ վեր-  
ջացնեմ ու մէկ կէս սհաթից կը դամ... Աղա Մրապի-  
ճն, դու էլ զնա Մաթօխն ասա, որ շան որդին դուքան-  
ների առաջը գայ իմ հրամանին, թէ չէ կերթամ զամշիովս  
զլովիը կը ջարդեմ... Գնանք, պ. Երուանդ, գնանք մէկ  
ծառերդ տեսնենք, ասում են՝ լաւն են...

Բոլորս դուքս ելանք, իսկ ստարշինան յուսալից՝  
որ զբաղրի չ'արածը ինքը կը յաջողեցնէք, ինձ հետ  
պարտէզ իջաւ:

## IV

Վլաճակուած էք. այդ օր ստարշինան կաշառք չպի-  
սի ուտէր: Որսինետև հազիւ մտել էինք պարտէզ, որ  
Սիսակը վաղելով եկաւ յայտնելու թէ քաղաքից երկու  
հիւրեր էին եկել ինձ մօտ:

Երկու ծանօթներ, որոնքը օգտուելով մի քանի օր-  
ուայ տօներից—եկել էին զիւղ՝ զղերը հանգստացնելու,  
գուցէ և իմ նոր կեանքս տեսնելու:

Ստարշինան ստիպուեց դործը մի ուրիշ օրուայ  
թողնել և հեռանալ:

Հիւրերս իջան և երբ հանգստացել էին, երեկոյեան  
դէմ պարտէզ տարայ նրանց: Մեղուի փեթակներ մօ-  
տից երբէք չէին տեսել: Սիսակի հետ միասին բացինք  
մէկը, ցոյց տուի ամէն ինչ:

Յետոյ, երբ պարտէզիներք եռում կտնգ առած, մայ-  
քի անտառն էինք դիտում և ծառան մի քանի քայլ հե-  
ռու սպասում էք, յանկարծ նա մօտ եկաւ, կպաւ թեփս  
ու ասաց երկչու:

— Աղա-ախոսէք...

— Ի՞նչ կայ, Սիսակ:

— Մէկ գետի զրադը դուքս գնանք...

— Ի՞նչու, ի՞նչ կայ:

— Հնէնց... Մէկ բան պիտի ցոյց տամ ձեզ:  
Այնքան աղաչանք էր գրուտծ այդ խղճուկ դէմքի  
վրայ, որ բոլորս էլ հետեւցինք նրան և գետափն ելանք:

Այդտեղ նա մեզ տարաւ դէմի աջ և երբ հասել  
էինք գետակի մէջ հոսող առոււակին, ցոյց տուաւ նրա  
միւս կողմը դժոնուող մի այգի և ասաց յուզուած, լա-  
ցի ձայնով.

— Դուք ու ձեր Աստուածը, աղաւախպէրներ, մէկ  
գնացէք մտէք էդ բաղը, մէկ լաւ մտիկ արէք թէ ինչ-  
քան աշխատանք էր պէտք, էն էլ մի հոգու—մինակ  
մարդու աշխատանք, որ չեօլիցը ըտէնց բաղ շինուէր:

— Ո՞ւմ պարտէցն է այդ, հարցրեց հիւրերիցս մէկը:

— Գնացէք՝ թէ խիղճ ունէք. շարունակեց Սիսակը  
աւելի ու աւելի յուզուած—առաջ մէկ տեսէք ու երբ  
գաք՝ ամենը կը պատմեմ:

Ես հասկայել էի: Իրաւ է, երբէք առիթ չէի ունե-  
ցել տեսնելու այգին, բայց լսել էի որ այդտեղ էր նա—  
նրա աներոջ այն հողը, որ շնորհիւ Սիսակի հսկայա-  
կան ու անդուլ ջանքերի, ճահիճից փոխուել էր պար-  
տէզի:

— Բայց չէ որ կարող են մեզ ներս չթողնել. ա-  
ռարկեցի ես նրան:

— Կը թողան... հրէն, տէրն էլ մէջն ա... Մէկ գլ-  
նացէք հէնց էդ պառաւիցը հարցրէք, թէ ով ա էդ ծա-  
ծառերը տնկել, մէշիցը շալակով ցախ բերել ու չափա-  
ռը քաշել, բաղի դովը փոս փորել... Հարցրէք թէ ի՞նչ  
էր առաջ էդ բաղատեղը, ով ա չորացրել, ով ա պատ-  
րուսնին արել, էդ կարտոֆէլը, էդ մարգերը... Հար-  
ցրէք թէ ով ա, որ գիշերցերէկ, ողջ մէկ տարի փորել  
ա, չորացրել, տնկել, մաքրել ու հէնց որ չեօլիցը բադ  
դարձրել, վակոթին տուել են ու շան պէս դուս քցել...  
հմի էլ ուզում են ըտէնց, նամարտի պէս քշել գեղիցը  
ու նրա աշխատանքը վայելել...

Յուղմունքը շատանում էր, սկսել էր լաւ գրեթէ.  
Ճայնը դողում էր շրթունքների հետ:

—Գնացէք, շարունակեց նա—ես ըստեղ, կուչ կը  
դամ էս քարերի մէջ... ձեր դատաստանին կը թողամ.  
թէ կասէք «Սիսակ», ձէնդ կտրի, իրաւունքը քոնը չի»  
զլուխս դէմ կը տամ որ խփեն... Սկի աջալա<sup>1)</sup> չանէք,  
աղա-ախսպէրներ, մէկ լաւ տեսէք, մէկ լաւ հարցրէք...:

Հիւրերս զարմացած էին և ինձ էին նայում հար-  
ցական դէմքով: Ակնարկեցի սպասելու, յետոյ, երբ յի-  
րաւի Սիսակը կկղեց քարերի մէջ ու նատեց—հըաւիրե-  
ցի նրանց հետեւ ինձ:

Սաստիկ խղճում էի հարստահարուած երիտասար-  
դին, և, քանի որ իր դատը նա մեզ էր յանձնում, մը-  
տածեցի չմերժել: Բայցի զրանից, իմ մէջ ևս կուտակ-  
ւում էր դայրոյթ այն մարդու դէմ, որ մի ամբողջ տա-  
րի խաբելով, տնիկեսայ շինելու յոյսեր տալով՝ շահա-  
դործել էր որբին և այժմ, երբ ճահիճը մի շքեղ, ար-  
դիւնաշահ պարտէղ էր դարձրել—այժմ վոնտում էր  
նրան և մինչև իսկ կաշառքի ոյժով զրդում ստարշինա-  
յին՝ զիւղից էլ քշելու:

—Գնանք, ասացի հիւրերիս—հետաքրքիր բան է:  
Եւ առուտակը չանցած, բաւական մանրամասն պատ-  
մեցի նրանց եղելութիւնը:

—Տօ գնանք է մէկ, գոչեց Գէորգը (հիւրերիցս  
մէկը)—գնանք այդ անպիտան ծերուկի մօրուքը թափ  
տանք քիչ:

—Արժէր դրան մի լաւ գնքսել. աւելացրեց Յա-  
կովը (միւս հիւրս)՝ չէի կարող երեակայել այդ աստի-  
ճան հարստահարութիւն զիւղում:

—Մա դեռ մի երեսյթ է. զիւղում տեղի ունեցող  
հարստահարութիւնը այնպէս մեծ չափերով է լինում,  
որ զիւղացին ցանցի նման բռնուած է, ծծւում ու չո-  
քանում...

<sup>1)</sup> Զատապէք:

Ոսանեցինք առուի վրայից և մօտեցանք պարտէզին։ Յիրաւի, լեռնաղաշտի ոչ մի դիւզում չէի տեսել այդքան խնամքով և ճաշակով շինուած պարտէզ։ Զարմացած կանգ առինք մեծ բաց դարպասի տուած։

—Օհօ, գոչեց Յակովը—սո ինչ սիրուն պարտէզէ։ կարծես մասնագէտի ձեռքի դործ լինի։

Վանդակածե մեծ դուան կողքից ձգւում էր աւազածէկ մի լայն ծառուղի գէափ ներս։ Պարտէզն ամբողջ նախ շրջապատուած էր փշալից խիտ ցանկորմով, իսկ յետոյ՝ առած ուսիների շրջանակի մէջ։ Ապա, անասունների մուաքը լիովին արգիլելու համար՝ պարփակուած էր լայն խրամով։ Իւրաքանչիւր թիղ հողը ներսում մշակուած էր ու մաքրած։ Անտառից բերած վայրի ինձորենիների կոճղերի վրայ պատուաստած ընտիր ճիւղերն այժմ լաւ բանել էին և ծաղկել։ մի կողմը —կեռասենիք, սալորենիք, մի ուրիշ գծով՝ արքայամորու բազմաթիւ թիեր, վարդենիներ։ աւելի ցած՝ լորիի ցցերը զինուորների կանոնաւոր շարքերով՝ կանաչ էին կապել, իսկ նրա առջեռում գետնախնձորի մաքուր ու լաւ ակօններ ցոյց էին տալիս ամենալաւ տեսակի տուններ։

Ինչե՛ր ասես չկար։—ընդեղէն, կաղամբ... Ու այդ բոլորը շատ կանոնաւոր տեղաւորած մաքուր մարզերով։ ոչ մի փուշ կամ քար։

Գինձի մարգի մէջ կուչ եկած քաղհանք էր անում Գրիգորը։ Կուզ ու կարճ մի ծերունի, որ մեր ձայնը լսելով՝ դարձաւ նայեց, յետոյ ոտքի ելաւ քահանը ձեռքին։

—Բարեւ, ծերունի։

—Աստծու բարին... Էս ո՞նց էլաւ, պ. Երուանդ, որ եկաք բազս տեսնելու... Համեցէք։

—Դրացի ենք գլեթէ, ասացի էս—չգիտէի որ այս բան մօտիկ, այսպիսի դեղեցիկ պարտէզ կայ. իմ պարտէզը սրա մօտ անապատ է...»

—Ըտէնց ա. ժպտեց ծերունին—ուրիշի ձեռքով ա-

բած բանը բա ի՞նչ պիտի լլի. մարդ իրա, իրա ձեռքով վը պիտի շինի, իրա քրտինքը պիտի թափի հողի վրէն...

—Բայց մի՞թէ այս բոլորը քն իսկ ձեռքով, քն քրտինքովն ես շինել ու մշակել. հը, ծերնւնի. հարցրեց տաքութեամբ Յակովը:

—Հա... արեց ծերունին բաւական համարձակութեամբ—բաս ուրիշ էլ ով ունիմ:

—Կօչաղն ես եղել, գիտեց Գէորգը ծաղրով—լաւ էլ այդեպահն:

—Կանես՝ կը սովորես... Ճշմարիտ ա, էս բոլորը—ասած կը լինի պարոնը—իմ ձեռքովս չեմ անկել շինել, ամա ես էլ շատ քրտինք եմ թափել ըստեղ:

—Այսինքն ի՞նչ, զոչեց Յակովը—գուցէ այս ծառերն ես գու պատուաստել:

—Չէ:

—Կամ այս պատը գու քաշել... չինի՞ խրամը քո փորածն է...

—Մարգերը գու ես կազմել, գետնախնձորը գու մշակել... աւելացրեց Գէորգը:

—Կամ այս մորիների թփերը գու բերել անտառից...

—Գուցէ այդ ուսիները գու տնկել, այդ ծառուղի՞ները...

—Չէ, աղաներ, յաջողուեց ասել ծերունին խօսքերի այդ կարկուտի տակից—չէ, էտոնք իմ շինածները չի... իմ... իմ մշակն ա, իմ նոքեարն ա շինել:

—Ի՞նչ նոքեար, զարմացաւ Գէորգը ինձ դառնալով—ուրեմն վարձատրել է:

—Եպասիր, ծերունի, միջամտեցի ես—խօսքդ Սիսակի համար է... լաւ, թող նօքեարդ եղած լինի. իսկ որքան վարձ ես տուել նրան. տուել ես օրինակ այնքան, որքան ես տալիս եմ. ինչու ուրեմն ամսական 10 ր. առնելով ինձնից, նոյն ջանքով չի մշակում պարտէց:

— Ո՞նց, գոչեց ծերունին — տարեկան 120 լանկը  
ես տալիս... փիէ... հացն էլ, տժւնն էլ...

— Այո... կօշիկ, մի ձեռք էլ հագուստ.

— Ասում էին — չէի հաւատում... բա էդ ո՞նց ա որ  
քո բաղը սրանից լաւ չի շինել... ի՞նչ դալքն ա էլէլ  
տօ՛...

— Լսիր, ծերունի, միջահատեց Յակովը — դու էն  
ասա թէ դու ի՞նչքան վարձ ես տուել նրան, դու...

Ծերունին շփոթուեց, փորձեց ժպտել, խօսքը կը-  
տուը ձգել, բայց Յակովը ամուր էր բռնել նրան, իսկ  
ես ու Գէորգը ծիծաղում էինք:

— Փիէ... արեց վերջապէս ծերունին — քո ի՞նչ  
բանն ա էդ, ախալէ՛ր, դու նրա վէքի՞ն ես... ես դի-  
տենք ու նա... էդ մեր գործն ա...

Ու Յակովը սկսեց. «Թափահարել» նրան մի ֆիլի-  
պեականով, ուր խառն կային և ծաղը և կծու յարձա-  
կում, և բարոյախօսութիւն։ Օրինակ.

— ... Քանի տարեկան ես, ծերունի... վաթսէն...  
Տես, էլ սև մազ չկայ գլխիդ. մէջքդ էլ կամուրջի նման  
ծոռուել է. մէկ էլ տեսար՝ մի օր ընկար ու ոսքերդ  
սլարգեցիր... հը՞նչ է, կարծում ես էն աշխարհումը  
քեզ հարցնող չի՞ լինելու թէ՝ «ա Գրիգոր, այ ծերուկ,  
ինչի՞ Սիսակին խաբեցիր, ողջ տարին բանացրիր, ճա-  
հիճդ այգի՛ շինել տուիր, աղջկադ խոստացա՛ր. նա էլ  
կարծեց թէ իր աշխատանքի պտուղն ի՞նքն է վայելելու,  
ողջ ջահելութեան ոյժը դրեց հողիդ վրայ, բայց դու  
վանտեցիր նրան ու աշխատանը խպշտեցիր»... Հը՞նչ  
է, չի՞ գտնուիլ մէկ սատանայ, որ էդ մօրուքիցդ մի  
բռնի, էն կալըէ կարասը կոխի ու հանի, եա քեզ քարէ-  
քար խփի, երկնքից գետին շպլափի...»

— Փիէ, փիէ... անում էր ետեւ քաշուելով ծե-  
րունին — տօ եկել էք ինձ խեղղելու... տօ դուք սլի՞ն-  
տաւ էք, ստարշինամ էք...

— Հը՞նչ, չի՞ դու այն ասա. մօտենում էր նրան Յա-  
կովը սպառնալից — կարծում ես էն թարս ոտներով

պոկերով ու պոչերով սատանաները քեզ բաց կը թող-  
նեն. եա թէ չէ, հէնց էս կեանքում, դու չես մտածում  
որ եթէ Թիֆլիզում ձեռքս ընկնես, քեզ ծեծելով թան  
կը շինեմ, էդ մազերդ կը սեացնեմ մուրով... եա թէ  
չէ, Սիսակն է, կատաղեց ու մի օր էլ բռնեց քեզ հէնց  
այստեղ խեղղեց, էս բաղն էլ քար ու քանդ արեց, տը-  
րորեց ու ինքն էլ կորաւ գնաց...

— Տօ ձեռք քաշի է... մեղայ Աստուծոյ... տօ ես  
ի՞նչ եմ տառւմ... հլա թող գնայ պաշպորտ բերի...

— Պաշպորդ... քայլեց դէպի նա Յակոբը - տօ դու  
անամտուած ես, մլթոնի ես. քսան տարի գիւղում մե-  
ծացած մարդուց պտշպորտ կ'ուզեն... տօ դու չես կար-  
դացել Աւետարանում, որ կաշառք տուղին դժոխումը  
քսան անգամ հալած արձիճի մէջ են թաթախելու, հա-  
րիւր չորս չամչա <sup>1)</sup> կըակ են լցնելու բերանը, ամեն  
օր երեք ամսգամ ձեռքերը դադելու են, կաշառք տուղի  
ձեռքն էլ շների առաջ են քցելու... տօ բաս դու Աւե-  
տարանին էլ չես հաւատում...

Մենք, ես ու Գէորգը ծիծաղից չգիտէինք ի՞նչ ա-  
նել, տեսնելով ծերունու լրջօրէն վախենալն ու ետ-ետ  
քաշուելը, իսկ Յակոբի ծաղրով լի սպառնալիքները:

— Համ' էլ որ, վերջացրեց սուր խազով Յակոբը իր  
խօսքերի կարկուտը — ես է ես քաղաք գնալիս՝ գուքեր-  
նատորին ասելու եմ որ քեզ բռնեն հոգիդ հանեն... ի՞նչ  
է, դու ի՞նչ ես կարծում ինձ. կարծում ես որ քիչ  
փող ունիմ կաշառելու բոլորին ու քեզ քշել տալու գիւ-  
ղցը... Բայց ամենից առաջ ես քեզ մի լաւ կը ծեծեմ  
էգուց. հէնց ըստեղ կը գամ քոթակ կը տամ, թէ աղ-  
ջկդ չես առւել Սիսակին...

Կատարեալ մոլիէրական բռնի ամուսնութեան կեր-  
պարանքն էր ստանում հարցը: Ծերունին կարկամել էր.  
Վերցրեց գետնից բահը, մի ոստիւն գործելով դուրս  
թռաւ ծառուղուց և ծածկուեց ծառերի ետել:

<sup>1)</sup> Շերեփ:

իսկ մենք մի մեծ քրիզիջ բարձրացրինք և այլպէս էր որ դուրս գնացինք պարտէզից:

Այդ ամենն անշուշտ բաւական զուարձալի կը լինէր, զուարձացրած իմ հիւրերին—եթէ միայն քարերի մէջ սպասելիս չինէր թշուառ. Սիսակը, որ դուցէ յոյս ունէր մեր միջամտութեան վրայ, դուցէ կարծում էր որ երեք «աղա» քաղաքացիները պիտի կարողանային ջարդել ծերաւնու յամառութիւնը, պիտի յաջողութին վերականգնելու իր հրաւունքները և վերջ տակու տանջանքներին...

Այդ մտածութիւնը երեխ ըրլորիս խկոյն համակեց առուից անցնելուն պէս, որովհետև անմիջապէս լրջացնք և լուռ՝ քայլեցինք դէպի գետակը:

—Շնծերը... բայցականչեց Յակովը—Ասուուած է վկայ, որ վաղը զնալու եմ նրան գնքսեմ. թող ինչ ու զում է լինի:

Ոչ մէկս չխօսեցինք: Քարերի վրայ կուչ եկած՝ անշարժ նստել էր Սիսակը՝ դէմքը ձեռքերի մէջ: Զլսեց մեր մօտենալը. գետի խոփոջը չէր թողնում:

Ի՞նչ ասել այժմ նրան, ի՞նչպէս մխիթարել:

—Սիսակ...

Դարձաւ ու ոտքի ելաւ:

Յուզմունքը ծածկել անհնար եղաւ: Լացել էր. լաց էր լինում և զունատ դէմքը թրջուած էր աղի արցունքով:

Յիրաւի... որը, վոնտուած, հարստահարսւած և անտուն. անցեալում յոյսերով լի, երխասարդութեան ամբողջ ոյժը դրած մի հողի վրայ, որը իրանն էր կարծել և ահա այժմ կողոպտուած ու նետուած...

Գուցէ և աղջկան սիրում էր նա, երազներով ու յոյսերով լի ապրել էր տարիներ ամբողջ և այժմ յանկարծ ամէն ինչ խարիսլուած, ամէն ինչ կորցրած՝ արտասուքն էր միայն մնացել մխիթարիչ...

—Սիսակ, գոչեցի յուզուած—ամօթ է...

—Ի՞նչու ամօթ, աղաւախպէր, ինչի՞ ասաց արտասուալից—էլ ի՞նչ ունիմ, էլ որտեղ գնամ, ո՞ր քարին.

զլուխս դնեմ... Գիտեմ, գնաք էլ չկարացիք բան անել... փող ունի—զոռքայ ա, ապիս ա, իրաւունքի ձէնը խըշ բացնում... Աստուած էլ խօ շատ հեռու ա... բա էլ ի՞նչ անեմ որ լաց չըլեմ...

—Կաց աօ, ձեռքը գրեց նրա ուսին Գէորգը նոյն-պէս յուղուած—կաց, ի՞նչ ես կնկայ պէս լալիս. տղամարդ ես, մի բան մտածիր...

—Եա թէ չէ զնա բանի խեղափի... կանչեց կատա-դութեամբ Յակովը:

—Թէ ի՞նչ... զլուխլ շարժեց Սիսակը — գլանով աղ-ջիկը կը տանի, հոզս կը տան... Զէ, աղա—ախպէրներ, ես կորած մարդ եմ, ես սկի մարդ էլ չեմ... ոչ ոք չու-նիմ, ամէնքը զուլում են անում ինձ, ամէնքը նրա կողմն են, հարուստ մարդ ա, իրանց գեղացին ա... Ստարշինան էլ, քեօխիվան էլ, պրիստաւն էլ... Աղջիկն էլ. աղջիկը հօր կողմն ա... տուանց հօր իլաւունքի՝ ե-րեսիս նայել չի ուզում... Ախը ես ո՞լ եմ, տո՞ւն ունիմ, ծննդք, աղղական ունիմ—թէ փող՝ որ սրան նրան—խեղեմ, որին ուզեմ քշել տամ, պատժել տամ... իմը լայն ա. ամա հմի լացի վրայ էլ են ծիծաղում...

Ասաց, նստեց դարձեալ քարերի վրայ և ձեռքերով զլուխը ծածկեց:

Մթնաշաղի, վերահաս գիշերուայ մէջ, երկար նրա մէ կոյաը հեռուից երեսում էր խոխոջող գետափին՝ անշարժ ու յուղիչ...

Դ. Փափազնան

## Զ Ո Ւ Մ Ա<sup>1)</sup>

---

Առաւօտ էր:

Գարնանային հով և պայծառ օրը, ստիպում էր թողնել  
քնակարանս, դուրս գալ և հիանալ Արաքսի տեսարանով, պարս-  
կական Զուլֆայի մօտ:

Կամաց-կամոց քայլում էի լայն փողոցով:

Տեղ-տեղ խանութների առջև նստուած էին ճամբորդներ,  
որոնք մի-մի բաժակ շիրին թէյը առաջները, մի-մի հացով լի-  
քը պարկ էլ կողքերին դրած՝ խմում էին և չոր հացը կրծո-  
տում:

Ճամբորդները պարսկաստանցի «համշարիներ» էին:

Բաժակները անդադար զարտակւում էին ու լցում: Ճամ-  
բորդներից ամեն մէկը ունէր կախ արած՝ աջ կողքում երկու  
շուխտ տրեխ և ձախ կողմից մի քանի ջուխտ գուլպա:

Անվերջ խօսում էին նրանք, ու միևնոյն ժամանակ, տաք-  
տաք թէյը կուլ տալիս. յաճախ բներանները այրելով՝ վայր էին  
դնում բաժակները և զոչում «եանդըրդի, չոխիսիդի»<sup>2)</sup>, և յե-  
տոյ էլի ձեռք առնելով շարունակում:

Դրանց բոլորին միտքն ու ճանապարհը մէկ էր: Հաւա-  
րուած թշուառ երկրի զանազան քաղաքներից ու գիւղերից,  
տուն ու տեղ թողած, ոմանք ճանապարհին միացած, գնում  
էին թափառելու երկրէ-երկիր, հարիւրաւոր ու հազարաւոր  
վերստեր անցնում մի կտոր չոր հաց աշխատելու համար: Ո՞հ մի  
կտոր հաց, որքան թանգ ես գու: Մինչդեռ ես մտածում էի  
դրանց մասին, տեսարանը փոխուեց: Ճամբորդները փափսացին  
իրար հետ և բոլորը ոտքի ելան: Պարկերը մէջը կապեցին,  
փայտերը ձեռք առան և ամրացնելով տրեխ ու գուլպան,

ուղերուեցին դէպի Արաքսի ափը:

Նրանք Ռուսիա պիտի անցնէին:

1) Ուրբաթ, պարսկակաների կիրակին:

2) Այրեց, շատ տաք էր:

Մի քամով անգամ էլ երեացին նըանց պարկերը և արագ բայլերը, այնուհետև անհետացան:

Ես վերադարձայ բնակարանս:

Կէս ժամ չաճացած՝ լսուեց բարձր աղմուկ: Շտապ տնից դուրս եկայ, կանգ տուայ գուան առաջ և սկսեցի նայել: Աղմուկը սաստկանում էր. տաննայն կողմից գոռում էին՝ հաւա՞ր, տարած... խեղզմւ...

Ամեն մարդ գործը թողած դէպի հաւարն էր վազում: Անհամքեր վազողներից հարցնում էի, հաւարի ի՞նչ լինելը, բայց որոշ պատասխան չէի ստանում: Սաստկանում էին ձայները և անդադար կրկնում:

—Հաւա՞ր... տարած... խեղզմւ...

Առանց ժամանակ կորցնելու ուղղուեցի հաւարի տեղը: Նա Արաքսի ափումն էր:

Այս տեղ զարունը Արաքսը երկու ճիւղի է բաժանում. մեծ և փոքր ճիւղի, որը ամառը չորանում է:

Մուսիմա գնացողները առաջ պիտի փոքրիկ նաւով անցնէին կղզին և այդտեղից ապահովնաւով մուսիմ: Փոքրիկ նաւը չորս անկիւնանի մի մեծ արկղ է, յատակը կարած, որ ջուր չանցնի. մի անկիւնից փոքրիկ դռնակ է թողած: Նոյն անկիւնի ծայրից կապուած է երկար ու հաստ թոկ: Նաւի վերի կողմում կանգնած է նաւավարը: Նրա դիմաց գնակի մօտ մի ուրիշը: Աջ ու ձախ կողմերում էլ մի-մի մարդ. ընդամենը չորս: Բեռնելով նաւը ամենօրեայ պաշար, որը լինում է 30—35 մարդ կամ նոյն քառվա ապրանք, նաւավարներից ամեն մէկը մի-մի ծող ձեռքին սկսում են հրել նաւը այդ փայտերով և մի կերպ միւս ափն են հասնում: Կղզու ափին գեռ չհասած դռնիկի մօտ կանգնած մարդը, իսկոյն ջուրն է մտնում և գուրս գալով ցամաք, սկսում է թոկից քաշել, այնքան, մինչև որ նաւը հասնի ափին:

Տեր ճամբորդներն էլ այդ նաւով պիտի անցնէին: Նաւավարները աւելի շահելու նպատակով այս անգամ վերցրել էին միանգամից 55 մարդ:

Տեսարանը սարսափելի էր:

Արաքսը իր կատաղած ալիքների մէջ առած նաւը տառում էր օրօրելով խաղաղ, հանգիստ: Տեղտեղ կանգ էր առնում մի քանի պտոյտ տալիս. յետոյ էլի շարունակում: Մեր ճամբորդները յուսահատուած, բղաւում, գոռում, աղաչում էին և անդադար օգնութիւն խնդրում ափում կանգնած պարսիկներից: Բայց իգորը: Ոչ ոք չէր մօտենում:

Ափի պարսիկներից ոմանք ջրի շատութեան պատճառաւ վախենում էին մօտենալ, ոմանք մեծ վարձատրութիւն էին

պահանջում, ոմանք էլ ջումի սլատճառաւ չէին վստահանուս մօտենալ:

Ճամբորդները շարունակ ողբաձայն աղաչում և օգնութիւն էին խնդրում Ալլահի, Մահմեդի, Ալլիի և այլ սրբերի անունները տալով: Նաւը խորտակուելու վրայ էր, նաւավարները մերկանալով ջուրը թափուեցին և լող ի լող աղատուեցան: Նրանք ստիպում էին ճամբորդներին թափուել ջուրը, որ գոնէ նաւը չխորտակուի: Իոկ ճամբորդները լող տալ չզիտէին: Ամենայն կողմից յոյները կտրած, նրանք էլ Ալլահ կանչելով իրարու ետևից ջուրը թափուեցին: Արաքսը սևացաւ զլուխներով:

Ամենայն բան մոռացած՝ այդ խեղճերը միայն օգնութիւն են խնդրում: Որը հօրն է կանչում, որը մօրը, որը եղրօրը, որը որգուն, որը կնոջը և այլն. բայց իզուր. շատ էին հեռու նրանք: Բազմութիւնը ժամէ ժամ՝ աւելանում էր: Մեծամասութիւնը ժամաշի էին դալիս: Սև գլխները լողում էին ջրի մէջ: Արաքսի փրփրած ու կատաղած ալիքները նրանց իր գիրկը առած, տակն էր կոխում, յետոյ դուրս հանում, պըտըտեցնում և էլի նորից դէպի անզունվը նետում, նորից դուրս հանում:

Աչքերը կարմրած, գոյնները սևացած՝ մեր ճամբորդներից ութը հոգի սլար բանած, իրարու գրկած, կարծես միմիանց օդնութեան էին հասնում, չէին բաժանում իրարից: Մի բանի անզամ էր ջրի տակ սուզելով ու դուրս դաշով, վերջապէս յոդնեցան: Կատաղի Արաքսը վիշապի նման ութիւն միատեղ կու տուեց: Հացի յետևից թափառող խեղճեր...

Մնացած սև գլուխները գեռ շարունակում էին լողալ և օգնութիւն կանչել: Մէկը աշխատում էր ընկերոջ բոներ միւսը ձեռքն էր պարզում. բայց Արաքսի գոռող ալիքները բաժանում էին նրանց իրարից և քշում շատ հետու: Սև գլխները, ձայները կարուած, լեզուները սոսկումից պատճանձուած, ձեռքերով էին օգնութիւն խնդրում: Բայց ոչ ոք տեղից չշարժուեց: Մի անզամ էլ երևացին գլուխները ու ջրի երեսին, այնունետեանհետացան յաւիտեան: Մի բանի ձեռք միայն տեղատեղ երեւացին օդումը, նրանք էլ շուտով անհետացան: Արաքսը էլի իր առաջուայ տեսքը ստանալով հոսում էր խայտալով:

Մի պարսիկ սուսական ափից նկատում է, թէ ինչպէս ջրի միջից երկու ձեռք օգնութիւն են խնդրում. գութը շարժուելով իրան Արաքսն է նետում, մաքասում կատաղի ալիքների հետ և աղատում է, ափ հանում երկու կիսամեռ ճամբորդներով:

րին. սկսում է հայեցել պարսկահպատակներին նրանց «բէկէյրաթ» ասելով:

Խփում էր Արաքը իր ալիքները ափի չոր աւազին, նորից յետ նահանջում, կարծես նոր որս էր ցանկանում և բարկացած թղղում էր աւազի վրայ իր սպիտակ փրփուրը: Խեղդուածների յետեկից քայլում էին լուռ ու մունջ պանդուխտների նոր խմբեր: Նրանք կանգ առին և ոկտեցին երկար վիճել պատահարի մասին:

—Վալլահ, բիլլահ համշարիները նրան համար խեղգուեցին, ասում էին նրանք, որ այսօր ջումա է, մեր կիրակի օրն է, բայց մեզ ստիպում են գործել, աշխատել, քանդում են մեր ջումէն:

Ռուբէն Դրիզորենանց

### ԿԸ ԳԱՅ ԳԱՐՈՒՆ...

Կը դայ դարուն խաս շորերով  
Խաս շորերը փայլ կուտան,  
Նախշուն հաւքեր վառ երգերով  
Սար ու ձորին ձէն կուտան:

Ու հաւքերի ձէնը անուշ  
Կընինէ սիրս, կը թնդայ.

Վէր կաց, ախալէր, դարուն եկաւ,  
Տես, դարունդ ետ կուգայ:  
Խճը քնից ես կը դարթնիմ,  
Սար դարդերս շուռ կուտան,  
Սէր երգերի քնարս առած  
Գարուն եարիս տես կերթամ:

Ոտքերիս տակ վարդ, ծաղիկներ  
Կը շողշողան, բոյր կուտան,  
Լերկ անապատ, սև, սև ժայռեր  
Թաղցը ու անուշ կը ժպտան:

Ու թե կառնեմ ու կը թռչեմ  
Արտ ու ափով, արօտով,  
Ու կ'այրուեմ ու կը խնդամ  
Գարուն եարիս կարօտով:

Սմբատ Խոջբաշեան

## Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ \*

Պէշիկթաշլեան, որ իր ամբողջ կեանքը հարուստ ընտանիքներու շրջանակի մը մէջ անցուցած է, մէկ տող չէ ձգած որ այդ ճոռոմ շողոմանքներուն ո և է նշոյլը կրէ. այն միակ անձերը զոր դրուատած է իր բանասանեղծութեանց մէջ, մտաւորականներ են,—Ալիշան, Բագրատունի, Երուանդ Հովումիւլ, Գէորգ Հիւրմիւլ. այն միակ անձը զոր ուղած է քերթուածով մը միսիթարել իր հօրը մահուան առթիւ, Գրիգոր Օտեանն է, իր մտաւոր ամենասիրական եղբայրը,—և ինչ լայն ու ազնիւ զգացումներու հոսում մըն է այդ բանաստեղծութիւնը. այն միակ անձերը որոնց մահը ողբացած է, Գաբրիէլ Էրանեանի պէս աղգային կարևոր գործիչներ են, կամ Ազնիւ Լութֆեանի պէս աղքատ երիտասարդներ՝ աղիտաւոր պարագաներու մէջ մեռած ու խեղճ ցաւագին ընտանիք մը իրենց ետև ձգող և կամ Յակոբ Զամչեանի ու Պետրոս Ռևիկեանի պէս սիրուած դասընկերներ. ու որքան երախտագէտ ենք իրենց որ այդ քանի մը մահեն ողբացած ըլլայ. հայերէն լեզուով չունինք եղերերգներ որ աւելի քննքուշ ըլլան քան այդ արծաթէ արցունքներով աստղացանուած տաղերը:

Իբր ուսուցիչ՝ շատ մեծ է եղած Պէշիկթաշլեանի կատարած գերը: Բոլոր մտաւորականներուն մէջ, ուսուցիչները ամենէն քիչ յարգուած—և իրօք ալ ընդհանրապէս իրենց նկարագրի ակարութեամբ ամենէն քիչ յարգելի—տիպարներն էին մինչև այդ օրը: Պէշիկթաշլեան ակնածանքով, հիացումով պաշարուած ուսուցիչը եղաւ. նախ, ամենքը գիտէին ու կը գնահատէին անոր լուրջ հմտութիւնը հայերէն ու ֆրանսերէն լեզուներուն զոր կ'ուսուցանէր. յետոյ, ու մանաւանդ, գիտէին թէ մեքենայական դասաւանդութիւն մը չէր անոր ուսուչութիւնը, այլ բարոյական խորին հաղորդակցութիւն մը աշակերտին հետ, որուն կ'ուսուցանէր՝ հայերէն ու ֆրանսերէն լեզու-

ներէն զատ՝ այդ լիդուներուն փառքը կազմող գրական հրաշակերտները հասկնաւու, սիրելու, իւրացնելու արտեսար. ամէն ծնողք գիտէր որ Պէտիկթաշլեանի դասերուն հետևելէ յետոյ, իր զաւակը անոր հոգիէն ու մտքէն ցոլը մը ընդունած պիտի ըլլար, բարոյապէս գեղեցկացած, մտաւորապէս բարձրացած պիտի ըլլար: Պէտիկթաշլեանը մտերժապէս ճանչցած անձ մը ինծի կը հաւասոտէր թէ անոր աշակերտած ըլլալը՝ մեծ ընտանիքի աղջկան մը համար գրեթէ տեսակ մը բարոյական դրամօժիտ կը կազմէր,—մանրամասնութիւն մը այնքան սիրուն, որքան յատկանշական, որովհետեւ շատ ջշափելի կերպով ցոյց կու տայ թէ որքան մեծ յարդ կ'ընծայուէր Պէտիկթաշլեանի դաստիարակչական կարողութեանը և թէ միամուգամայն՝ որքան ազնիւ տարրեր մտած էին Պէտիկթաշլեանի շուրջը խմբուած հայ ընկերութեան մէջ: Պէտիկթաշլեան ուսուցիչ եղած է վերև յիշուած ընտանիքներէն գրեթէ բոլորին մէջ, ինչպէս և Օրթաքէօյի Հայ-Հոռոմէականաց «Ս. Լուսաւորչեան» վարժարանին մէջ: Իր բոլոր աշակերտները իրմէ ուսած են սիրել իրենց ազգը, սիրել զրականութիւնն ու գեղարուեսը, սիրել համերաշխութիւնը, միութիւնը, վայելուչ ու չնորհալի բարքերը: Անոնցմէ ումանք, անձնական որոշ տաղանդով օժտուած, մեծապէս օգտուած են իրենց վարպետէն ու իրենք ալ եղած են յետոյ մատարական կարեոր գործիչներ,—ինչպէս տիկին Տիւսար, առաջին Հայուհին որ գրական շարժման մասնակցեցաւ ու Փորթուգալ Միքայէլ փաշան, որ հայ բանասիրութիւնը ճոխացուց Եղիշէի պատմութեան նուիրած իր խորաթափանց և աղատամիտ ուսումնասիրութեամբ:

Անգամ մը որ Պէտիկթաշլեան ընտանիքէ մը կը հրաւերուէր իրը ուսուցիչ, այլևս այդ տան ամենասիրելի բարեկամը կը դանար: Յաճախ կը խնդրէին իրմէ սեղանակից ըլլալ իրենց հետ, ներկայ գանուիլ իրենց բարեկատական հաւաքումներուն, որոնց զարդն ու փայլը կը կազմէր ան՝ իր հրահանգիչ, որքան հրապուրիչ խօսակցութեամբ, քերթուածներու արտասանութեամբ, հանրօգուտ ծրագիրներու թելագրութեամբ: Իր խորհուրդներուն և իր աջակցութեանը կը դիմէին բոլոր կարեոր պարապաներուն մէջ, ամէն անգամ որ աղղային գործմը կար հիմուելու, երեկոյթ կամ հանգէս մը կազմակերպուելու, ընկերութիւն մը հաստատուելու: Իր աղղակցութեամբն է զլիսաւորապէս՝ որ խօսակցութեանց մէջ մաքուր հայերէնի գործածութիւնը սկսած է տիրապետել. մինչեւ այն ատեն՝ Հայ-Կաթողիկոսնը թրքերէն կը խօսէին իրենց միջն, բացի Միքայէլ պատմութեանց աշակերտներէն, որոնք շատ մաքուր հայերէն կը խօսէին, բայց Ցունիս, 1905.

որոնք քիչ կը գործածէին այդ լեզուն և, յաճախ՝ ինչպէս մարդ օտար լեզու մը կը խօսի, իրենց մտերժական կամ հանրային հաւաքանց մէջ նորէն միշտ թրքերէն կը խօսէին՝ ամբողջութենէն հասկցուելու համար. իսկ Հայ-Լուսաւորչականները, թէ պէտ հայերէն կը խօսէին, ընդհանրապէս, բայց հայերէն մը, որուն երեք քառորդը թրքերէն բառերով էր կազմուած: Պէտիկ թաշեան հարկադրեց իրեն ծանօթ բոլոր լուսաւորչական թէ կաթողիկ ընտանիքները անխառն հայերէն խօսելու, անոնք որ չէին գիտեր, սորվեցան իր շնորհիւ. անոնք որ գիտէին, ինք պինքնին վարժեցուցին իրենց հայերէնին մէջ թրքերէն ըլխառնելու: Օրիորդ Վահանեան, որ յետոյ տիկին Տիւսար անունով հանրածանօթ գէմք մը պիտի ըլլար մեր գրականութեան մէջ, բառ մը հայերէն չէր գիտէր, երբ Պէտիկթաշլեան յարաբերութեան մտաւ Վահանեան ընտանիքին հետ. ոչ միայն հայերէն չէր գիտէր, այլ և աղջային զգացումէ զուրկ, զուտ եւրոպական դաստիակութիւն մը ստացած ու «Եւրոպամոլ գարձած, կ'արհամարհէր ու կը ծաղրէր Հայերն ու իրենց լեզուն. Պէտիկթաշլեան զէնիկա կերպարանափոխեց, էսոր սորվեցուց ոչ միայն իր մայրենի լեզուն, այլև յարգանքն ու սէրն իր ցեղին, և էսոր մէջ ատով իսկ արթնցուց մայրենի գրականութեան ծառայելու ցանկութիւնը: Տիկին Սրբուհի Երիցեանց, Պէտիկթաշլեանի գործունէութեան նուիրուած շատ շահեկան յօդուածի մը մէջ զոր հրատարակած է Փորձը (Բ. տարի, Բ. կիսամետակ), սա տողերով կը նկարագրէ այդ «կերպարանափոխութիւնը»:

«Եյն (Օրթաքէօյ) թաղի մէջ ընակում էր օրիորդ Սըրբուհի Վահանեանը (որ այժմ արդէն ամուսնացած է): Այդ օրիորդը իր ըստեկամուհեաց շատերի նման, եթէ հայատեաց չէր, զոնէ շատ օտարասէր էր: Նա գեղեցիկ խօսում էր ֆրանսերէն, յունարէն, իտալերէն և անգլիերէն, հիանալի դաշնամուր էր զարմում, և հայերէնի մասին խօսք եղած ժամանակ ուղղղավան, սեռոոտական ասելով ծաղրում էր: Այս օրիորդը ծանօթանալով Պէտիկթաշլեանի հետ, շատ հաւանում է նորաքնքուշ արտասանութիւնը հայոց լեզուի, և մօրը յայտնում իր ցանկութիւնը նրանից դասեր վեր տանելու: Տիկին Վահանեանը շատ է ուրախանում այս բանս լսելով, վասն զի նա ինքը արդէն քանի տարուց ի վեր նոյն թաղի օրիորդաց Հոփիսիմեան վարժարանի հոգաբարձու էր և աղքատասիրաց ընկերութեան ջերմագին գործող անդամ: Պարոն Պէտիկթաշլեանը սկսում է նրան հայերէն լեզուն դիւրին ոճով սովորեցնել և անուղղակի կերպով, առանց ձանձրացնելու, մեր հին մատենագրաց հետ

ծանօթացնել։ Օրիորդը հաճութեամբ լսում է իր նոր դասաւուի ոգևորուած բացատրութիւնները, և չորս տարուայ միշտցում նա այնպէս լաւ է սովորում հայերէն գրել, և հասկանալ, որ օրինակի համար, շատ լաւ է ըմբռում հայր Արսէն Բագրատունու Հայկ անուամբ բանաստեղծութիւնը, որի համար զրաբար լեզուի մեծ հմտութիւն է հարկաւոր։ Դեռ ևս Պէտրոսյանի կենդանութեան ժամանակ օրիորդ Սրբուհի Վահանանեանի գրչի տակից դուրս եկաւ մի փոքր բանաստեղծութիւն «Թառամեալ տերեւք» անունով, որ ձեռագիր Փարիզ ուղարկուեցաւ Պրիւդոմ հայագէտին, որպէս զի ֆրանսերէն թարգմանէ իր ժողովածուների մէջ։

«Ահա այսպէս էր պարոն Պէտրոսյանի բարի ներգործութիւնը իր ծանօթների վրայ։»

Պէտրոսյանը նպաստած է նաև երոպական բարեկըթութիւնը, վարմունքներու փափկութիւնը, վայելուչ ձեւերը, շնորհալի նիստ ու կացը մեր հասարակութեան մէջ տարածելու, զբացմանց ինչպէս և շարժմունքներու կոպտութիւնը, վարմունքներու և ձևերու դուհելութիւնը անհանդուրժելի էին իրեն, բայց իր քնքուշ նկարագիրը,—ինչպէս և նոյնիսկ իր պաշտամունքը բարեկըթութեան,—իրան թոյլ չէր տար կարծրօրէն յայտնել իր գժգոհութիւնը այլօրինակ տգեղութեանց հանդէալ, որոնք, աւանդ, չէին պակսեր այդ հայկական «բարձր ընկերութեան» պատկանող անձերէն ոմանց մօտ ալ, անուղղակի սիրուն ձև մը դտած էր իր բողոքն ու քննադատութիւնը սպըրդեցնելու, «Կոռնակ» կը գոչէր ինսդալով՝ այդպիսի պարագաներու մէջ։ և այդ միակ անունին (որ իր համանուն ողբերգութեան այլանդակ հերոսին անունն է) արտասանումը բաւական էր, ինչպէս Պէտրոսյանի ծանօթներէն մին պատմած է ինձի, որպէսզի տգեղութիւն մը կատարողը ուրիշ անդամ զայն չկրկնէր։ «Կոռնակ»-ը սովորական բանաձև մը դարձած էր վերջ ի վերջոյ, ուրիշներն ալ՝ ի հարկին՝ կը գործածէին զայն։

Բացի հայկական թատրոնի հիմնարկութեան ու կաթոլիկ և լուսաւորչական Հայոց միութեան համար իր թափած ջանքերէն—որոնց մասին պիտի խօսիմ յատուկ զլուխներու մէջ, Պէտրոսյան մասնակցած է իր օրով հիմնուած գրեթէ բոլոր ընկերութեանց ու ազգային ամեն տեսակ ձեւնարկներուն։ Երբեմն ինքն իսկ եղած է նախաձեռնարկներէն մին, և կամ ինքնարեաբար դնացած է ո և է գործ մը կազմակերպել ուղղանձերուն իր աջակցութիւնը տանելու, երբեմն ալ, հրաւէրը զրսէն կուգար, ու Պէտրոսյան միշտ պատրաստ էր այդ-

պիսի հրաւէրներու յօժարակամ պատասխանելու։ Այսպէս հայկաթողիկ հասարակութեան վարչութիւնը բարեկարգելու համար զումարուած ժողովներուն զինքը հրաւէրեցին։ թէպէտ Պէշիկթաշլեան վարչական հարցերու մէջ մեծ ձեռնհասութիւն չունէր, սիրով ընդունեցաւ հրաւէրը և մասնակցեցաւ այդ ժողովներուն։ զինքը հրաւէրոգները կ'ուզէին զայն իրենց հետ ունենալ, գլխաւորապէս, որովհետև գիտէին թէ անոր ներկայութիւնը պիտի նպաստէր վարչական նոր կանոնագրութեան մէջ մտցուիլ առաջարկուած յառաջադիմական ոգւով նոր օրէնքներուն ընդունելութեանը. այդ յոյսը իրականացաւ ալ արդարեւ. Պէշիկթաշլեան այդ ժողովներուն մէջ եղաւ ներշնչողը, ողերուողը, խրախուսողը,—կրակը, առանց որուն ոչինչ կ'եփի։ Ատկից զատ, Պէշիկթաշլեան՝ շարունակելովլ իր ազգային գրացման զարթուցիչ մշտական գերը, համոզեց ժողովական որ ոգով կ'ընդունելուն մէջ փոխանակ. թրբերէն խօսելու, ինչպէս կընէին մինչև այն ատեն, հայերէն խօսին։

Պէշիկթաշլեան զործակցած է Համազգեաց Ընկերութեան, Բարեգործական Ընկերութեան և Մուրատ-Ռափայէլեան Ընկերութեան։

Համազգեաց Ընկերութիւնը հիմնուած է 1846-ին, նախաձեռնութեամբ Մուրատ-Ռափայէլեան վարժարանի նախկին աշակերտներուն—գլխաւորապէս Պէշիկթաշլեան, Ս. Հէքիմնան, —և առաջնորդութեամբ Հ. Պետրոս Ծինասեանի։ Ահա ինչպէս կը նկարագրէ Պօյնուէյրեան իր «Հասունեան քաղաքականութիւն» տիտղոսով շատ շահեկան դրբին մէջ<sup>1)</sup>։ Համազգեաց Ընկերութեան հիմնարկութիւնը։

«Բաղաքագէտ և ուսումնական ազգասէրներէն ոմանք, տեսնելով հիմնկուան եւրոպացւոց մտաց լուսաւորութիւնը, վաճառականութեան և արուեստից ծաղկելը, հարստութիւնները և ասոր հակառակ ազգիս տղիտութիւնը և կերպին ծայր աղքատութիւնը, կ'ուզէին և կը փափաքէին ազգովին ասոր ճար և ճարակ և գարման մը մատուցանել մէկ կարգաւորեալ ընկերութեամբ մը, որպէս զի ազգիս աղքատ և անտէր տղոցը ըստ բաւականին գիտութիւն, ուսմունք և արուեստ սորվեցնեն, որ ետքը կարող ըլլան զիւրաւ իրենց ապրուստը ճարելու։

«Այս ժամանակ Վենետիկոյ Միսիթարեան Միարանութենէն, Մինասեան Հ. Պետրոս վարդապետը Պոլիս կուզայ, իր

<sup>1)</sup> Այս գիրքը, տպուած Թիֆլիս, 1868-ին իբր հեղինակ «Յ. Ասկերեան» անունը կը կը, բայց զրուած է Հ. Պոլոս վ. Պօյնուէյրեանէ, որ զլիաւոր հականասունեան գործիչներէն մին է եղած։

ձեռասուն աշակերտները աղդին այս բաղձանքը իրեն կը յայտնեն և կ'աղաչեն որ շէնքով շնորհքով այս ընկերութեան համար մէկ կանոնագրութիւն մը զրէ:

«Յամին 1846-ին սկիզբները եօթանասուն ու վեց հոգի առաջին անգամ գումարելով՝ կարդացին շինուած կանոնագրութիւնը, և որովհետև այս ընկերութիւնը ընդհանուր աղդին համար էր, ասոր համար անունը դրին Համազգեաց Ընկերութիւն, որուն վախճանը այս հետեւալ եօթը գլխարկութեան մէջ պարունակած էր, իրենց յայտարարութենչն ըաղելով.»

«Ա. Ամեն ընկեր մէկ սիրո և մէկ հոգի ըլլալով միաբանութիւն ընել:

«Բ. Օգտակար գիրքեր յօրինելով, թարգմանելով և զանոնք տպագրելով ամենուն տարածել:

«Գ. Մանչ և աղջկանց բարոյական կրթութեանը համար՝ բաղաքներու և գեղերու մէջ զպրոցներ հաստատել:

«Դ. Երկրագործութեան արհեստը աղդին մէջ ծաղկեցնել:

«Ե. Հայրենի հնութիւններն ու սովորութիւնները ընսել և փնտռել:

«Զ. Հին ձեռագիրներ և դրամներ ժողովել:

«Է. Բնական պատմութիւն, կենդանեաց, բուսականաց, և այլն:

Թ. Եւրոպական վաճառականութեան օրէնքները աղդին մէջ տեղն ի տեղօք մտցնել:

«Ժ. Մետաղագործութիւն:

«Այս ընկերութիւնը երեք տեսուչ ունէր, տասերկու խորհրդական, տասերկու խաղաղաբար, չորս գանձապետ, երկու գրագիր, երեք քննիչ գրոց, որոնց երկութը աշխարհական տէրութեան գէմ հղածները քննելու, իսկ երրորդը՝ եկեղեցական քահանաց մը, որ ուղղափառ հաւատոյ գէմ գրուածները սրբագրելու: Կանոնագիրը մ'ալ՝ շինուած քառասուն ու մէկ կանոնով: Եւ քուէարկութեամբ որոշուած ամէն գործողութիւնները պիտի ըլլան նոյն ընկերութեան նպատակը, վախճանը և հոգին:

«Համազգեաց Ընկերութիւն»-ը, հակառակ իր «գրոց քըննիչներուն», զուտ աղդային-բաղաբական ներքին նպատակի մը իրականացման կը ձգտէր: Հիմնագիրները կ'ուզէին որ անոր անգամ ըլլացին բոլոր Հայերը՝ առանց կրօնական խորութեան, անոնց ցանկութիւնն էր միացնելով Հայեր աղդային զգացման մէջ, բարձրացնելով հայ ժողովրդին մտաւոր ու բարոյական մակարգակը, հայութիւնը պատրաստել բաղաբական վերակենդանացումի մը: Իսրայէլ Օրիի օրով պարսկահայ Մելիքներու հայկական

ինքնավարութիւն մը հաստատելու ջանքէն յետոյ—զոր քիչ ետքը կրկնեց և պահ մը յաջողցուց Դաւիթ-քէկ, —Պոլիս հաստատուած կաթոլիկ Հայերու (և մանաւանդ Միհթարեանց աշակերտներու) մէջ է որ վերածնած է հայ ազգին քաղաքական կեանքը վերահաստատելու այդ նոյն ձգտումը. և այդ հասկանալի է. լուսաւորչական Հայերը ամենասատուար մեծամասութեամբ «կրօնական ազգ»-ի ձեւ ընդունած էին ոչ միայն իր բիրտուժով հաստատուած իրողութիւն, այլ և իրենց հոգեոյն, մլտքին, նկարագրին մէջ տեղաւորուած էր այդ ըմբռնումը. այն աստիճան, որ «արտաքոյ Հայստաննեայց եկեղեցւոյ չիք հայութիւն» կը դաւանէին, և այդ սկզբունքով՝ կաթոլիկ և բողոքական Հայերը Հայ չէին նկատեր. Կաթոլիկ Հայերուն մէջ աւելի բազմաթիւ էին անոնք որ բաւական զարդացած ու եւրոպականացած էին հասկանալու համար թէ ազդ և կրօնք տարբեր բաներ են, և որոնք ինքնինքնին բացարձակապէս Հայ կը նկատէին առանց Հայստաննեայց եկեղեցւոյն պատկանելու. ըլնական էր որ ատոնք աւելի շուտ պէտքը զգային Հայ ազգը այդ «կրօնական հասարակութեան» ատրտամ ու շփոթ գիրքին հանելու և զայն քաղաքական որոշ մարմնոյ մը վերածելու. ատկից զատ, եւրոպական կրթութիւնը, որ իրենց մէջ աւելի տարածուած էր քանի լուսաւորչական Հայոց մէջ, շատ աւելի խորապէս տուորած էր զիրենք այն համոզումով թէ աշխարհական, քաղաքական ինքնաւիլար դոյութիւն մը անհրաժեշտ է ժողովրդի մը լիակատար զարդացմանը համար:

«Համազգեաց Ընկերութիւն»-ը խանդավառ ընդունելութիւն գտաւ. սկզբները իր անդամ ունեցաւ Հայեր ամեն դաւանանքէ. հիմնեց լսարան մը ուր ծանօթ անձնաւորութիւններ բանախօսութիւններ կ'արտասանէին զլիսաւորապէս ազգային զգացումն արթնցնոր նիւթերու վրայ. Պէտք ամենամեծ հունդով գործակցեցաւ այդ Ընկերութեան բոլոր ձեռնարկներուն. անոր հաւաքումներուն մէջ է որ արտասանած է իր ճառերէն երկու կարևորագոյնները. ատոնցմէ մէկուն մէջ (Խօսեցեալ ի կաճառս Ընկերութեան Համազգեաց) հետեւալ յուղիչ տողերով կը բանաձևէ նպատակը որուն կը ձգտէր այդ Ընկերութիւնը:

«... Ո՞հ, ցանկալի է ինծի՝ հիմայ մաքիս աչքին առջեք բերել մեր բարեկիրթ Ընկերութեան վախճանն ու արդիւնքները. որպիսի փոփոխութիւն. ահա ուսմանց ու քաղաքականութեան արեւու ճառագայթներով ամենաբը տաքցած, մտքերը լուսաւորուած, իմաստութեան տաճարներ ասդիս անդին կանգնած, որոնց ամենուն ճակտին վրայ կը տեսնամ Համազ-

գեաց Ընկերութեան շրեպ անունը. հոն զիտութեանց յստակ ու մաքուր ջուրը իբր կենդամնի աղբիրէ մը կը բղխի անդադար, ուր որ բոլոր ծարաւի ժողովուրդ մը կը վազէ, ծարաւը անցնելու. հոս մէկը՝ պիտանի զրութեան մը զբաղած, հոն ուրիշ մը միտքը կը յոգնեցնէ նոր ու կարևոր զիւտ մը հարելու, վերջապէս տեն տեղ միաբանութիւնը, աղջասիրութիւնը և քաղաքականութիւնը տիրած Հայաստանի ոսկեղէն զարը նորոգուած, որպոց Սահակայ՝ Մեսրոպայ ժամանակները հասած, հայրենիքը՝ հանգստացած՝ խաղաղ երջանկութեան պըտուղը կը վայելէ, Հայու ազգը պատուաւոր ու մեծարոյ եղած ուրիշ բարեկիրթ աղջերուն առջեւ. Ահ, Հայրենիք, Հայրենիք իմ, վերցուր մէյ մը վրուխտ. տես կը ճանչնաս արդեօք քու հիմակուան վիճակը՝ առաջինը յիշելով. տես քու առաջինի որդիքներդ որ հայրենասէր ջանքով կը փափազին երջանկութեան պասկը կապել զլխուզ, զարգարել զքեղ իմաստութեան զգեստներվ, գեղեցկացնել ուսմունքներով ու զքեղ կրթուած ու ծաղկեալ ազգին անցընել»

Բայց այդ գեղեցիկ ճիշերուն վերև կը ցցուէր՝ այդ միջոցին՝ Հասունի աղջակործան չարալործ տիրապետութիւնը. և ինչպէս աւելի մանրամասնօրէն ցոյց պիտի տամ կրօնական պայքարներու նուրիրուած վլխուն մէց—այդ գարշելի անձնաւորութիւնը յաջաղեցաւ իր դաւաճան Էնթրիկներով նախ կաշկանդել ու սահմանափակել ու վերջ ի վերջոյ կործանել Համազդեաց Ընկերութիւնը, որ այն ատեն՝ ստիպուեցաւ իր բուժութագլուխը յատկացնել Համազկեաց գարժարանին. այդ վարժարանը, թէպէտ հիմնուած էր ամեն դաւաճանքէ; հայ աշակերտներ ընդունելու նպատակով, միմիայն կաթոլիկ Հայեր ունեցաւ իբր աշակերտ՝ Հասունի ճնշման հետևանքով, բայց հակառակ այդ սեղմումին ան դարձեալ սա մեծ օգուտն ունեցաւ որ հոն սպատրաստուող շատ մը հայ-կաթոլիկ սերունդներու սորվեցուց հայերէն լեզուն, անոնց մէջ վառեց աղջային զգացումը, և տուաւ աղջին ստուար թիւ մը կաթոլիկ Հայերու որ Հայ էին կաթոլիկ ըլլալէ առաջ:

«Բարեկործական Ընկերութիւնը» հիմնուած է 1760-ին նախաձեռնութեամբ խումբ մը կաթոլիկ և լուսաւորչական գործիչներու (Մ. Պէշիկթաշլիհան, Տր. Պետան, Մերովը Ալիշան, Տր. Յովսէփ Շիշմանեան, Գրիգոր Աղաթօն, Գրիգոր Օտեան, Ար. Բարունակ պէյ, ևայլն): Այս ընկերութեան նպատակին վրայ որոշ գաղափար մը տալու համար կ'արտաստակեմ այստեղ առաջին մասը ճառի մը զոր Տր. Շիշմանեան (Շիրենց) արտասահած է այդ Ընկերութեան 1860-ի հոկտեմբեր 30-ի նստին և

որ տպուած է Յ. Սվաճեանի Մեղուին 1860-ի նոյեմբեր 30-ի  
թուին մէջ:

«Երբ հինգ վեց շաբաթ առաջ աս ընկերութեան քասնը-  
հինգի չափ հիմնադիրքը մեզի յանձնեցին հիմնական կանոննե-  
րը շինել, ամենուն ալ խելքը կը հասնէր որ նոր բան չի կար  
մեզի հնարելու, այլ տեղեկանալու և ժղովելու:

«Արևմուտք՝ ուսկից արևուն լուսէն զատ ամեն լոյս կը  
ծագի յԱրևելս, երկրագործութեան և արուեստից համար զա-  
նազան բարեգործ ընկերութիւններ հաստատած է, որոնց հե-  
տեւիլ հաստատամութեամբ մեր միմիայն ջանքը պիտի ըլլայ:—Հաստատամութիւնը՝ որ շատ ազգային կ'ուրեն զանալ  
իրենց աղքին, մեզի այնպէս կ'երեայ թէ իր ձիրքերէն էն մե-  
ծըն է, վասն զի Հայը չորս հազար տարի է հաստատամու-  
թեամբ ապրեր, իր լեզուն պահեր և Ասիայի մէջ միմիայն  
քրիստոնեայ աղդ մնացեր է մինչեւ այսօր և պիտի մնայ:

«Ուրեմն այս առաջինութենին՝ զուրկ չըլլալով՝ կը մնայ մե-  
զի հետեւիլ Եւրոպիոյ այն ազգաց շաւիդներուն, որ որբ և ան-  
տէր աղոց՝ երկրագործութեան ձրի գպրոցներ բանալով, աղ-  
քատութիւնը բարեկեցիկ կեանքի գարձնելու, մուրացկանու-  
թիւնը բաւնալու, ագիտութիւնը հալածելու, և ապականեալ  
մարդը որ քաղաքներու թանձր միմուլութին մէջ մարմնով և  
հոգւով կը թաւալէր, վերանորոգելու համար աշխատեցան գե-  
ղերու մաքուր օդով:

«Այս գպրոցներուն մէջ տղաք, հողագործին զաւկնե-  
րուն պէս կը կրթուին մաքուր բայց խիստ երկրագործ աշխա-  
տութեանց մէջ. մէկ կողմէն մարմինները կորովի և տոկուն  
կ'ըլլան, միւսէն՝ հոգին և միտքը կը մշակուին:

«Այս գպրոցներուն նպատակը թուլամորթ քաղաքացիներ  
հրահանգել չէ, այլ զօրաւոր գործաւորներ հասցնել որ տոկան  
աշխատութեանց, չփախչին գործէ և որոնց միմիայն երշան-  
կութիւնը իրենց ճակտին քրտինքէն հասած հունձքերուն վայ-  
ելքն ըլլան:

«Հոն չէ թէ միայն հարկաւոր ուսմանց տեղեկութիւն կը  
տրուի իրենց, այլ նաև արհեստ մը, որ առօրեայ հացն ալ ի-  
րենց կ'ապահովէ: Անոր համար, մամնաւորապէս կը ջանան  
աղոց նորեկ զօրութիւնը անով զբաղեցնելու և միայն արտա-  
քոյ կարփի յարմարութիւն ունեցողները արհեստից կը պար-  
պեցնեն և արհեստներէն անոնք կը վերադասեն որ երկրագոր-  
ծութեան աւելի վերաբերութիւն ունին:

«Հողի մշակութիւնը մեծամեծ օգուաներ ունի, երբ աղոց  
մարմինը ուժով և առողջ կ'ընէ, մտքերնին կրօնական սկզբունք-

ներով ալ կը զարդարէ:—Տղաք կարգ կանոն չեն հասկնար. երկրագործութեան մէջ ամեն բան, կարգ կանոն կը գտնեն: Տղաք թեթևաբարոյ են. երկրագործութիւնը զիրենք ուշագիր կ'ընէ: իրենք անհամբեր՝ ամեն բանին պտուղը շուտ վայելի կ'ուղին. բնութիւնը՝ ծանր՝ համբերել կը սորվեցնէ իրենց. իրենք շուտ կը յուսան, բնութիւնը գիտէ զիրենք փորձառութեան խոնարհեցնել:

«Կրնա՞ր երկրագործ տղան գերազոյն պատճառին վրայ երկրայիլ: Ստեղծօղը շարունակ իրեն մորին հետ կը խօսի, իրեն երեակայութիւնը կը զրդէ, ամեն վայրկեան երկնաւոր ձեռքն է որ արգասարեր անձրեը կը պարգևէ կամ բաղմակուտոր կարկուտը կ'արձակէ:

«Նախախնամութեան վճիռ է, որ աշխատութիւնը որ ամենահարկաւորն է մարդուս՝ ըլլայ բարոյականի գաս մը իրեն և հանգիստ ու կանոնաւոր կեանքի մը ու երջանկութեան աղբիւր:

«Ահա աս տեսակ զպրոցի նկարադիր մը, մեր ամենուս մորին մէջ յեղյեղելով, բարեգործական անունէն աւելի երկրագործական անունը նախադասելի կ'երեար և ամենորոշ. բայց մենք բարեգործական անունը տալով ընկերութեան՝ ուղեցինք

«Ա. Շահու գիտաւորութիւնը հեռացնել.

«Բ. Արուեստները երկրագործութեան՝ ընկերութենէն դուրս չնետել:»

Այս ընկերութիւնն ալ, իր «երկրագործական» ծրագրին տակ ունիք աղգային-քաղաքական ներքին նպատակ մը. զարգացնելով երկրագործութիւնը Հայոց մէջ, Հայաստանի գիւղերուն բարօրութիւնն աճեցնելով, գիւղացիները աւելի ամուր կապերով կապելով իրենց հողին, անոնց մէջ խրախուսելով աշխատութեան ողին, այդ ընկերութեան հիմնադիրները կը ձըգտէին զօրացնել հայ տարրը իր հողին վրայ, ու հայ գիւղացին զօրացնելով հայ աղղութեան հիմունքն ամբացնել. Պէտիկթաշլեան այդ ընկերութեան ալ նախաձեռնարկներուն մէջ է գըտնուած, գործակցած է անոր՝ իր ուժերուն չափովը, անոր գործադիր ժողովին ատենապետ եղած է բաւական ատեն. իր թատերգութիւններէն մէկ քանին շատ անգամներ ներկայացնել տուած է Բերայի «Արևելեան թատրոն»-ին մէջ ի նպաստ այդ ընկերութեան. Զեմ գիտեր թէ որոշապէս ի՞նչ դեր կատարած է Պէտիկթաշլեան այդ ընկերութեան մէջ. բայց հաւանական է որ հոտ ալ, ինչպէս ամեն զործի մէջ, ոգեսրողի, գործունէութեան ոգին հրահրողի, աւելորդ վէճերը մարողի, ազդին օգտակար ըլլալու ձգտումին մէջ բոլոր անձնական կամ հատուա-

ծական ճղճիմ անհամաձայնութիւններն հալեցնողի իր անդուղական ձիրքը բերած է իրրև աջակցութեանց ամենէն անգինը: Բարեգսրծական Ընկերութիւնն ալ երկայն չէ տեած. Հասունեան հալածանքը զայն ալ քիչ ատենէն քար ու քանդ է ըրած:

### Արշակ Զօվաննեան

(Ա.ԵՐՃԸ յաջորդ համարում)

### Ո Ի Ռ Մ Ի Ա Յ Ի Ց—Խ Ո Յ

Ճանապարհը դէպի Խոյ նորից շարունակում է Սալմաստի գաշտով ընթանաւ որովհետեւ Դիլմանը գաւառի կենտրոնումն է: Այս դաշտը լաւ ոռոգուելու յարմարութիւններ ունի, այդ պատճառով էլ ամեն քայլափոխի կարելի է հանդիպել մեծամեծ առուների, որոնցից կառքը խիստ գժուարութեամբ է անցնում. գերաններով շինուած կամուրջը անվստահելի է, իսկ առուն մինչև ձիերի ծունկը՝ տիղմ է: Շատ թեթև ծախքով կարելի է Ուրմիից դէպի Խոյ եղած բաւական բանուկ ճանապարհը կանոնաւորել: Միակ գժուարութիւնը Սոմայի լեռան և Խոյի գեաղիւկներն են; որոնցից պէտք է բարձրանալ ոլորապտոյտ ելքով, Պարսկաստանում ինչպէս ամեն բան, նոյն պէս և ճանապարհները իրանց նախնական վիճակումն են:

Սալմաստի ճանապարհները այդ օրը բռնուած էին պարսիկ սարբազներով: Դէպի Խոյ տանող ճանապարհին, մօտիկ զիւղերը քրդերի կողմից յարձակման էին ենթարկուել. թուրք զիւղերի տաւարները յափշտակել էին, միայն Սարամէրիկ հայրենակ զիւղը կարծ պաշտպանութեամբ փախցրել էր քուրդ պալատակների խումբը:

Մուղանջուղ զիւղում հանգստանալու ժամանակ, լուր բերին քրդերի նոր-նոր յափշտակութիւնների մասին: Խմբուած թուրքերը վախից գողում էին: Գովում էին հայերին, որ կարողացել են ամեն դէպքում էլ աւագակներին դատարկ ետքարձնել: Սինլքոր սարբազները աւելի շուտ էին փախչում քան բնակիչները: Գիւղից նոր գուրս էինք եկել ճանապարհը

շարունակելու, երբ մեր առաջը կտրեցին քրդական տարազով ձիաւորներ, շարքով կանգնեցին ճանապարհի կողքին, իսկ մէկը ըստ երևոյթին գլխաւորը՝ սկսեց ձի խաղացնել հրացանը երրեմն դէպի կառքը ուղղել: Այս ամենից մենք եզրակացրինք որ աւագակների ձեռքումն ենք. միայն մեզ այն էր զարմացնում թէ, ինչո՞ւ հրացանները պատրաստ չէին բռնում, այլ ուսերից կախած էին պահում: Շուտով պարզուեց, որ դրանք քուրդ չեն, այլ բախտիեարի<sup>1)</sup>, և ճանապարհի պահպանութիւն են անում: Նրանք չկանգնեցրին մեր կառքը, այլ միասին գալով, սկսեցին պահանջներ անել, մարդագլուխ «թէյի փող» ստանալ: Այդ անիբաւացի պահանջը սպասնալիք դարձաւ, մինչև որ չսասացան մի կլոր գումար չհեռացան:

Այս դէպրը քիչ անգամ կրկնուող դէպր չէ: Պարսկաստանում ճանապարհորդողները միշտ ենթակայ են այս տեսակ «օրինական» կողոպուտների:

Սակայն այդ օրուայ մեր ճանապարհի ամենաերկիւղալի տեղերը գեռ չէինք անցել. պէտք էր անցնել «կանլի-դարան» (արինուած ձոր) որ ի զուր չէ ստացել այդ անունը: Ճանապարհորդները սրաի անհամբերութեամբ են սպասում այդ տեղին, բայց և բոլորն էլ գժուարանում են հաւատալ, երբ կառապանը ցոյց է տալիս մի բանի արշին խորութիւն ունեցող հեղեղի ճանապարհ, թէ սա է «կանլի-դարան»: Ամեն տարի տասնեակ սպասութիւններ են լինում այդ առուի մէջ, և սակայն մարդ իր աչքին չի հաւատում, թէ դա ի՞նչ մի յարմար տեղ է: Սալմաստից թաւրիդ տանող ճանապարհին էլ կայ մի այդպիսի կանլի-դարա:

Հասանք վերջապէս զարդանդ ազգող կանլի-դարան: Մեզ ուղեկից մի թուրք, հաստատում էր կառապանի պատմած արիննեղութիւնները այդ փոսիկում: Այդուեղ էր թագնուել բուդրական միսիօնար կարրիին սպանող սէյիդը՝ անցեալ զարնան:

Այս վերջին վտանգաւոր տեղն էլ անցնելով, իջնում ենք Խոյի Չուխուրը կամ Խոյի Փոսը: Ամբողջ կէս ժամ պէտք է իջնել: Ծառապարդ Սալմաստը հէնց նոր թողած՝ անապատի տըսպաւորութիւն է անում Խոյի դաշտը, մինչև ամենահեռաւոր լեռների ստորոտները ոչ մի ծառաղարդ կէտ չես տեսնի: Սակայն ամբողջ դաշտը մի անգամից չի պարզումնայողի աչքին:

1) Բախտիեարիները առանձին ցեղ են Պարսկաստանում, միշտ անհաղանդ դէպի կառավարութիւնը: Վտանգաւոր տեղերում միշտ սրանք են պահապան նշանակուում:

Ճանապարհը պատոյտ է գործում և ահա երթում են Խոյ քաղաքը և դաշտի գիւղերը:

Խոյի տափարակ գաշտում, մինչմենակ ցցուել է զանազան գոյնի հողի շերտերով՝ մի բլուր. դա Խոյի նշանաւոր աղտահնորսն է; Ի՞նչ խօսք, որ այդ անհատում բնական հարստութիւնն էլ անտէր, անտիրական է. մի քանի տեղեր ծալծըկոսել են և աւելի փչացնում են քան թէ աղ են հանում: Այս աղից ըըրդերը մաքսանինգութեամբ մատակարարում են Վանայ նահանգի ազգաբնակութեան գործածելիք աղի մեծ մասը: Ուրիշ կերպ չի արտահանուում. և միայն շրջակայ մի քանի տեղերի աղի պէտքն է լրացնում: Խոյնիսկ Սալմաստը, որ այնքան մօտիկ է, դարձեալ ծովի աղ է աւելի շատ գործածում քան թէ աղանանցի մաքուր աղը:

Ճանապարհը՝ գեռքաղաքին չհասած՝ անցնում է մի բարձր բլուրի ստորոտով, որի բարձրութեան վրայ գեռ շատ հետուից երեսում է մի մատուռ: Հայերի ասելով՝ դա Վարդան Մամիկոնիանի գերեզմանի տեղն է. իսկ թուրքերը կազանֆար<sup>1)</sup> անունն են տալիս: Թուրք կառապանը ասում էր, որ շատ հին ժամանակներում է ապրել այդ քաջ մարդը, աղգով հայ է եղել, և մեծ քաջազործութիւններ է կատարել. նրա ամրող մարմինը մի տեղ չի թաղուել. զլուխը կշմիածնումն է, իրանը այդ լրի մատուռում, իսկ սիրուը ուրիշ տեղ:

Գարնան սկզբին մի տօն կայ, երբ հայ և թուրք բազմութիւնը ուխտի է գալիս այդ մատուռին:

Բլուրի տակից անցնում է Կարմիր գետը՝ որի ջուրը կարմրագոյն է և տղմուտ: Գետը անցնում է քաղաքից կէս ժամ հեռաւորութեամբ. ունի մի բաւական հին, մեծ կամուրջ, որից սկսում է մի ուղիղ, կանոնաւոր ճանապարհ գէպի քաղաքի հարաւային դուռը: Պարիսպներից դուրս շինուած են մաքատունը և ընդարձակ ու յարմարաւոր քարվանսարաներ:

Խոյը շրջապատուած է հողէ երկկարգ բարձր պարիսպներով, որոնց թէ գրսից և թէ ներսից խրամատներ կան: Ազգաբնակութիւնը բացառապէս թուրքերից է բաղկացած: Գրանուելով թէ ծրանդիրի և թէ Շահմախտի ճանապարհների վրայ, բաւական վաճառաշահ քաղաք է և հետզհետէ մեծանում է: Բնակիչների թիւը առ 30,000 են հաշւում:

Խոյնիսկ Խոյ քաղաքը շարունակ երկիւղի մէջ է քրդերի յարձակումներից: Զաֆար աղան Սալմաստի պատուհանն է,

<sup>1)</sup> Կազանֆար հոմանիշ է աժդահա և աղնաւուր բասերին, ունի և հերոս բառի նշանակութիւնը:

Նարաֆ բէկն էլ այստեղի: Քաղաքի գոների մօտ իբր թէ պահականոցներ կան շինուած. պահապան զինուորները, առանց չափազանցութեամի, կարելի է ասել, որ իրանց յանձնուած հրաւցանները երբէք չեն էլ արձակիլ: Ռոճիկ չեն ստանում, և մասնաւոր առուտուրով էլ չեն պարապում, ինչպէս այդ անում են առնասապակ պարսիկ զինուորները ամեն տեղ. այլ կաժաւոր նուէրներով են իրանց ապրուստը հայթայթում: Այսպէս, ամեն մի բեռնաւոր կենդանի որ մի որկէ ծախու բան է մտցնում: Քաղաք, լինի այդ աթար, փայտ, սոխ, մրգեր... պարտաւոր է մի բան ձգել զինուորներու բաց գոնից ներս և այնպէս անցնել: Հիանալի՛ է չէ: Եւ զեռ Զառ-Ղամ հրամանատար է նստում այստեղ: Պարսիկ զինուորներու մասին այնքան պատմութիւններ կան, որ անեկդոտի հարուստ նիւթեր են զառնում: Պարսկաստան նոր եկող ամեն մի անձնաւորութիւն, արգէն լսած լինելով շատ բաներ, հնատաքըքրութեամբ զինուորի է փնտում. բայց այդ այնքան էլ հեշտ չէ, որովհետև զինուորը կանոնաւոր տարագ չունի: Ճանապարհին պատահում էին խումբ խումբ ձիաւորներ, բոլորն էլ հրացանաւոր. մենք կարծեցինք թէ հասարակ թուրքեր են, բայց յետոյ իմացանք որ զրանք Զառ-Ղամի զինուորներն են, որոնք Զափար աղայի դէմ են զնում: Երկու օր շարունակ հատ հատ զնում էին. ընդամենը հազիւ 250 ձիաւոր: Զինուորական չտեսնուած դիսցիպլինա...

Այս զինուորների գնալուց յետոյ, քաղաքը երկիւղի մէջ ընկաւ: Պարսկից գուրս, այգեստաններում, իրանց ամարանոցային տներում ապրող հարուստ թուրքերը իսկոյն քաղաք վերադարձն: Նրանք վախենում էին քրութիւն գիշերային յարձակումից:

Խոյեցի թուրքը առանձնայատուկ մի կողմ չունի, որով տարբերուէր առհասարակ Ատրպատականի միւս քաղաքների թուրքերից: Նոյն սահմանափակ աշխարհայեացքը, նոյն մոլեսանդութիւնը: Պարապում են մանր մուսր առևտուվ և տեղական արհեստներով:

Հայերը, խիստ զարմանալի է, այստեղ շատ ճնշուած են, և ոչ մի սապարիզում աչքի չեն ընկնում: Ուրիշ տեղերում վաճառականը հայն լինում է անպատճառ՝ նոր հետզհետէ կաղմը լուսմ և բազմանում են արհեստաւորները: Իսկ այստեղ չնայած որ հայերը բնիկներ են, ոչ մի զիրք ու կարողութիւն ունեցող հայ չկայ: Դիւղացին իր ամենաաղքատ վիճակով միշտ նոյն թշուառն է, իսկ քաղաքի «Թաղեր» կոչուած մասում և արուարձանում ապրող հայերը, որ քաղաքացի են համարւում, միմիան հիւմնութեամբ են պարապում. բոլորն էլ իրանց տը-

Ներում. քաղաքում խանութ չունեն: Բաւական ընդարձակ շուկայում հազիւ 5 հատ հայի խանութ գտնուի. այն էլ ոչ տեղացիների:

Շատ անմիտիթար է խոյեցի հայու վիճակը. թէ նիւթապէս և թէ մտաւորապէս զրկուած: Նշաններից երեսում է որ հայ ազգաբնակութիւնը այստեղում առաջ բազմաթիւ է եղել և ունեցել է աւելի բարեկեցիկ վիճակ: Թաղեր կոչուած քաղաքամասը զուտ հայաբնակ է եղել և ունեցել է երկու հեկեցի, որոնցից ս. Սարգիս եկեղեցին հին և հոյակապ է, սակայն անժողովուրդ մնալով՝ թուրքերը բնակութիւն են հաստատել և տիրել շրջակայքում եղած հողերին:

Մեր հոգեոր իշխանութեան կողմից էլ բոլորովին անուշագրութեան է մատնուած այս մի բուռ ժողովուրդը: Թաւրիզից շատ հեռու է. ս. Բարդուղիմէոս վանքի վարդապետներն են երբեմն այցելում այստեղ: Այժմուայ վանահայր Նալբանդեանց վարդապետը աշխատում է իր հովանաւորութեան տակն առնել և անջատել Աստրապատականի թիմից, բայց ժողովուրդը խելացիութեամբ մերժում է, որովհետեւ կառավարութեան հետ գործ ունեցած դէպքում թեժակալ առաջնորդը պիտի խաւնուի, իբրև ճանաչուած պաշտօնական անձնաւորութիւն:

Աֆրիկեանների ծախսով շինուած գալրոցի գործում, տեղի հոգաբարձուները և յիշուած վարդապետը անհամաձայն են եղել, այնպէս որ շինութիւնը դեռ ևս չէ վերջացել. վարդապետը որ ինքնագլուխ առաջ էր տանում շինութեան գործը, ինչու կիսաւարտ թողած հեռացել է: Ժողովուրդն էլ փողով օգնել է, և իրաւունք ունէր հաշիւներին տեղեակ լինելու:

Գերմանական Արևելեան միսիօնարական ընկերութեան պահած հայոց որբանոցը, որ 7 տարուց աւելի է գոյութիւն ունի, ինչպէս երեսում է, դրամի սրտկասութեան պատճառով, այլևս որբեր չի ընդունում, և պատսպարուած որբերի մեծանալուց յետոյ պիտի փակուի: Ընկերութիւնը նկատի չէ ունեցել հայ որբերի անսպառ ազգիւրի—Տաճկահայաստանի զրութիւնը, և իր հաստատութիւնը ժամանակաւոր է նկատել: Աւստի և Հայկական Որբանոցը կարճատե գոյութիւնից պիտի գագարի, գժբաղդաբար հասցնելով շատ համեստ օգնութիւն մեր որբերին:

Որբանոցի ներկայ զրութիւնը այնքան էլ գոհացուցիչ չէ. երկսեռ որբերի առողջութիւնը և սնունդը անրաւարար են Առհասարակ այս հաստատութեան մէջ չի նկատում եւրոպական նման հաստատութիւնների կարգերը և օրինաւորութիւնը: Ուրիշ միսիօնարութիւնների հաստատութիւնները Պարսկաս

տանում աւելի կանոնաւոր են, իսկ գերմանական այս հաստատութիւնը շատ անպաստ գաղափար է կազմել տալիս իր վարիչների մասին:

Նախկին կառավարիչները և ներկայ կառավարչուհի օր՝ Հառնակը իրանց մարդասիրական գործը արատաւորում են բողոքական պրոպագանդով: Նրանց (գուցէ և որբանոցի միջոցներից) հաշուով վարձուել է մի բողոքական ասորի՝ իբրև քարոզիչ: Վարձուել է և մի բաւական ընդարձակ տուն, ուր ամեն կիրակի հաւաքւում են թաղի հայ բնակիչները և լսում «տիրոջ» խօսքերը:

Իբրև եղբակացութիւն, կարելի է ասել, որ Ուրմիի, Սալմաստի և Խոյի գաշտերում ապրող հայերը տնտեսական այս պայմաններում ոչ մի կերպ առաջադիմութիւն չեն կարողանայցոյց տալ գուցէ մի կերպ բացառութիւն կազմի սալմաստեցի հայը, և այս՝ իր թուի առաւելութեան պատճառով: Սալմաստեցին այնքան չէ ճնշուած թուրքերից, ինչքան ուրմեցին և նամանաւանդ խոյեցին: Այս երեք գաւառների հայերը մեծ թուով պանդխտում դէպի Կովկաս. հաստատուն գործ չունեցողները, ամեն աշնան, վերադառնում են մի քանի ամսով հայրենիք: Գաղթականութիւնը՝ Տաճկահայաստանից՝ այս երեք գաւառներից միայն Սալմաստում բազմաթիւ է. թէև այստեղ գալու համար պէտք է անցնեն կամ Խոյից կամ Ուրմիից: Պարսից կառավարութիւնը և թուրք հիւպատոսները վերջին տարում սկսեցին նեղել գաղթականներին. խեղճները չեն իմանում որին դիմին: Ընդունել պարսկահպատակութիւն, անմտութիւն կը լինէր, քանի որ տեսնում են տեղացի հայերի չափազանց հարստահարուած գրութիւնը: Մնում է գարձեալ ճանաչել տալ իրանց օտարահպատակութիւնը. այս գէպքում էլ սուլ է անշագրի գինը, մանաւանդ կայ մի ուրիշ հանգամանք էլ, որ նրանց անեւ գրութեան մէջ է պցում. կան 10 տարուց ի վեր բարդուած տուրքեր, որոնք բաւական մեծ գումար են ներկայացնում. յանկարծ, թուրք հիւպատոսը կարող է պահանջել այդ ապառիկ տուրքերը:

Մի խօսով, թէ տեղացի և թէ եկուոր հայերը Պարսկաստանում ամենավատ դրութեան մէջ են զտնւում: Անկշտում պաշտօնեաները, և վայրենի քուրդերը ծծում են թէ հայու, թէ ասորու և թէ նոյնիսկ խաղաղ թուրքերի արիւն քրտինքը...

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԻՆ ԹԻՒԹՎԱՅՑ ՔՐԴԱՍՏԱՆՈՒՄ \*)

(Վանից—Շէմզլինան)

Տակաւին աղօթարանը չբացուած, արշալոյսի մերձեցումից միայն քիչ աղօտացած լուսնի շողիրի տակ ցած ենք իշնում նէղի-Թէփէլէրի, բուսականութեամբ ոչ այնքան հարուստ վայրէջքից՝ մանելով Բաշգալէի դիւզը (տափարակը): Այսաեղ մեր ճանապարհը բաժանում է երկուսի—Ճախտկողմեանը տառում է ուղղակի գէպի Գէվէսը, իսկ աջակողմեանը քիչ շեղելով ճանապարհի ուղղութիւնից, տանում է գէպի Բաշգալէ բերդաբաղաբը, որ շինուած է համանուն գաշտի արևմտեան սահմանը կազմող բարձրաբերձ բլուրների ժայռոտ լանջի վրայ, երբեմն նահանգական քաղաք Հէքիարիի կուսակալութեան<sup>1)</sup> (երբ սա գեռ չէր միացել Վանի կուսակալութեան հետ), այժմ կենարսնատեղի Բաշգալէի սանջակի Մութէսարիֆութեան:

Բաշգալէն ունի մօտաւոր հաշուով 3,000 բնակիչ, որի մեծամասնութիւնը ճրէայ տարրն է կազմում. հայերը հաշուու են 150 տուն, իսկ մնացեալը թուրք են և քիւրդ: Առևտուրը հրէաների և հայերի ձեռքին է, ինչպէս արհեստաները. վաճառանական ասլրանքները ստացւում են զլխաւորապէս Վանից և քիչ անգամ ուղղակի կ. Պոլսից, և այն Վանի ճանապարհով: Բաղաբը ունի 150-ի չափ խանութներ:

Բաշգաւէնում հայերը ունեն մի եկեղեցի՝ ո. Երրորդութիւն անունով. այսաեղ է բացուել և հանգուցեալ Գր. Զանշիեվի որբանոցներից մէկը՝ 25 որբերով: Տները Բաշգալէում հում աղիւսից է շինած, կան և երկյարկանի շինութիւններ: Բաղաքի օղը լաւ է որպէս և ջուրը, որ ստացւում է աղրիւրներից: Դիրքը քառարի՝ խորդ ու բորդ է, իսկ բնակութիւններից վերև ժայռերի

\*) ՏԵ՛Ս «Մուրճ» № 5.

<sup>1)</sup> Այդ կուսակալութիւնը կազմող գաւառներն էին Աղբակ, Զուլամերիկ, Գէվէս, Նորդուզ ևայլն:

վրայ, բարձրանում են Բաշգալէի հինաւուրց, հոչակաւոր բերդի աւերակ մնացորդները:

Շարաթը մի անգամ ստացւում է Վանից տաճկական պոտը, որը իր կարգին ուզարկուում է Գէվէս և Շէմզդինան: Բաշգալէի հեռագրական գծի միջոցաւ անմիջական հաղորդակցութեան մէջ է վանի, Շէմզդինանի և Սալմաստի (Պարսկաստան) հետ:

Բաշգալէում նստում է այդ գաւառի առաջնորդը, և միաժամանակ ա. Բարթուղիմէոս վանքի<sup>1)</sup> վանահայրը (այժմ, Արտէն վարդապետ Գէորգեան Կ. Պոլսեցի): Այստեղ հարկաւոր է նկատել, որ մուտք գործելով Աղբակ, մենք մտած ենք լինում միաժամանակ և իսկական Ջիւրլիստանը, քրդերի տիրապետութեան սահմաններում, որտեղ նա համարեա կիսանկախ է, երես առած և թելազրուած տիրող կառավարութիւնից, թշնամական տրամադրութեամբ հայ տարրին հանգէպ այժմ նոյն սահմարձակ վերաբերմունքն է ցոյց տալիս նա, ի հարկին, և տաճիկ իշխանութեան գիմաց: Աղբակի արևմտեան մասերում՝ Բաշգալէի հարաւակողմը բնակւում են Ծարթոցի կոչուած քրդական ցեղերը (աշիրէթ): Արևելակողմը՝ թիւրքական սահմանը կաղմող Զագրոշի լեռնաշղթայի արևմտեան տաճկական մասի լանջերի վրայ տարածուել են Ծարթոցի կոչուած քրդական ցեղերը, ախրահնչակ Շէրէֆ-բէկ ցեղապետի գլխաւորութեամբ: Մըանցից դէպի հիւսիս, Խոշապ գաւառի արևելեան մասի ամրող երկարութեամբ Մուկուսցի և Թակուսցի քրդական ցեղերն են ապրում: Իսկ Աղբակից դէպի հարաւ, սահմանակից Գէվէն ու Շամզդինանը, մինչեւ Մուսուլ, Բաղդադ ու Բասրա քաղաքները, սակաւ բացառութեամբ, քրդաբնակ կենտրոններ են ներկայացնում:

Բաշգալէից դէպի հարաւ, նրանից կէս ժամուայ ճանապարհ միայն միայն մի մասունք է Շամփլան:

<sup>1)</sup> Բաշգալէից 4 ժամ հեռաւորութեան վրայ, դէպի արևելք, գտնուում է Բարգուղիմէոս առաքեալի վանքը, կառւցուած ըստ աւանդութեան, նոյն առաքեալի նահատակման վայրում՝ Հին Արեփանոս կոչուած քաղաքի մօտ, Զապ Կամ Գայլ պետի ափին մի հրաշալի ձորակում: Երթեմնի հոյակապ, չին և հոչակաւոր այս եպիսկոպոսանիստ վանքը վերջին մի քանի տասնեակ տարիների լինթացքում հնիթարկուել է թիւրք և թիւրդ տարրի պարբերական բարբարոս աւերածութիւններին և կողոպուտին: Աներեակայելի, հակայ քարերով շնորւած այս անդուզական վանքի մի ժամանակ բազմաթիւ ուստաւորների համար շինուած սենեակները և խցերը ծառայում են այժմ որպէս պահականոց մի վաշտ տաճկական սահմանապահ զինուորներին:

գիւղը, ուր բնակւում է նշանաւոր քիւրդ Շէյխ-Համիդ-փաշա, տաճիկ կառավարութիւնից ճանաչուած որպէս թիւրք-պարսկական սահմանագլխի սահմանապահ կոմիտար: Սա հակառակ իր անհաջո թշնամութեան դէսի մարզիկցիների պարագլուխ՝ Շէրէֆ-բէկը, բարեկամական և խնամիական կապերով կապուած է Շամլղինանի մեծ շէյխի՝ Շէյխ-Մահմադ-Ալարդիի հետ:

Շարունակելով մեր ճաճապարհը Բաշգալէի դաշտի հրկարութեամբ, դէսի հարաւ, հասնում ենք Աղբակ գաւառի մեծ գիւղերից մէկը՝ հայաբնակ Հէրէսան զիւղը, որ ունցիլ է մի ժամանակ 78 տուն բնակիչ, 230 բնա սերմ, ոչխար՝ 1200, եղ և կոլ 200, գոմ 150, ջրաղաց 3, ձիթահան մէկ. կոտորածնարի ժամանակ սպանուած է տուել 3 անձ, իուկ թալանուել է գիւղը իր ամբողջ հարստութեամբ:

Դարձեալ ճաճապարհի վրայ, Հէրէսանից հազիւ մի ժամ հեռու, գտնուում է Աղբակի երբեմնի ամենահայշալատ և ամենամեծ գիւղը՝ Առակ, որ ունէր 80 տուն բնակիչ, 220 բնա սերմ, 400 ոչխար, 200 եղ և կով, 150 գոմ, 2 ջրաղաց, 2 ձիթահան. կոտորածի ժամանակ սպանուել են 11 հոգի, առեանգուել մի կին, մի կին էլ կրօնափոխ է եղել (իսլամացել է), իսկ ամբողջ գիւղը նմանապէս թալանի և կողոպսուած է ենթարկուել:

Առակ գիւղի հիւսիսակողմը մնում է գես ևս կանգուն գիւղական քարաշն սիրուն եկեղեցին, կարմիր սրբատաշ քարերից կառուցուած, ընդարձակ գերեզմանատով, եկեղեցու հարաւակողմը տարածում է, գերեզմանների հողակոյսերի նման, թալանուած Առակի հայ տների կլսակործան փլատակները: Այդ երեխմնի շն զիւղի հայ ընակիշներից մնացել են միայն 8 տուն հայեր, զուրկ սեփականութիւնից, մերկ եւ աղքատ: Իրանց նախկին հարստութիւնից, շարժական և անշարժ կալուածքից—որոնց ճշգրիտ յուցակը ես մի քիչ գերել առաջ բերի—ոչինչ է մնացել համարեա. այդպիսով վերածուել են նըրանք, հայրենի հոգերի վրայ բռնութեամբ հաստատուած: բիւրդ կալուածատէրերի ճորտեր, բայաթներ և ակամայ համակերպած իրանց նոր սեփականազուրկ, ստրկական վիճակին, վերցնում են իրանց տէրերից երկրագործական միջոցները, իրանց արիւն-քրտինքով բազմապատկում են օտար սերմը, օտար եղներով, մի ժամանակ իրանց պատկանած հողի վրայ, և տալիս են աղային, իրանք ստանալով այդ արդիւնաբերութիւնից շատ չնչին, ողորմելի տոկոս միայն՝ իրր վարձատրութիւն իրանց եղիպտական ծառայութեան:

Դեռ առաւօտ էր, արեգակը տակաւին նոր էր բարձրա-

ցել արևելեան հորիզոնի վրայ. Առակի եկեղեցին դիտելուց յետոյ, անցնելով աւերակ տների փլած պատերի տակով՝ մօտենում եմ տուկաւին կանգուն մնացում բնակութիւններին, ուր գիւղական խրճիթներից մէկի առջև գտնում եմ կանգնած մի հայ գիւղացու. Ներս եմ մտնում խրճիթը, բաղկացած երկու փետնափոր, խոնաւ բաժանմունքներից (թոնրատուն և գոմ) կտուրի վրայ բացուած երկու փոքր էրտիսներով (լուսանցք, աւելի ճիշտ ծուխանցք). Թոնիրի կողքին կեղտուտ, զջլոտած փալամսերի մէջ փաթաթուել են կիսամերկ երկու երեխաներ, կողք-կողքի, և քնել նոյնպէս կտրտած թաղիքի վրայ: Ներս հրաւիրող տանտէրը տալիս է ուրախութեամբ, և հայ-ախալէր տեսած լինելու գոհունակութեամբ լի, նոր կթած փրփրուն կաթից մի հողի ամանով, և մինչդեռ ցնցութիւներ հագած տանտիկինը խրճիթի մի անկիւնում զբաղւում էր կաթի անտեսութեամբ, նա պատմում է ընդմիջումներով մելօդրամական պատմութիւններ, սիրո կտրատող էպիկուներ հայկական պանիկայի օրերից և իրանց իրականութիւնից: Հազիւ է կարողանուած հայերէն խօսել՝ յաճախ բրդական բառերի օգնութեան դիմելով: Յազնում է որ հազիւ կէս ժամ հեռաւորութեան վրայից, Բաշդալէի քահանան միայն երբեմն-երբեմն (տարէն մի երկու անգամ, կնունք կամ մեռեալ պատահած ժամանակ) բարեհանում է այցելել, կենտրոնին այնքան մերձակայ այս գիւղերը, հայութեան այս ողորմելի բեկորների հոգեւոր մխիթարութեան համար, քանի որ իրանք քահանայ չունին. ասենք ապրեցնել էլ չեն կարող մի քահանայի: Պարզ է որ շատ չանցած՝ Աղբակի մի քանի գիւղերի մէջ դիմացած այս սակաւաթիւ հայերը հայութան համար իսպառ կորած պէտք է համարել: Սրանց բարբառը քիչ մօտենում է Սալմաստի հայերի բարբառին, և որպէս մօտագոյն վայրը պարսկական սահմանագլխին՝ (հազիւ Յ ժամուայ ճանապարհով) գործածում է պարսկական փողը, այն չափով՝ որ չափով՝ տաճկականը:

Պէտք է ասել, որ կոտորածի արհաւիրքների ժամանակը Աղբակ գաւառը աւելի է տուժել քան ուրիշ որեկից հայաբնակ վայր: Շըշալատուած լինելը քրդական անհամբոյր, վայրենի տարբերով, այլ և ինքնապաշապանութեան միջոցների բացակայութիւնը ոչ պակաս նպաստել են կոտորածի և աւերածութեան հակայական չափերին: Աղբակի մնացեալ հայաբնակ գիւղերից Բազ՝ 60 տուն, Մալքասա՝ 30, Կարապովի՝ 13, Եղնկանի՝ 75, Խառաւտուն՝ 32, Հասպիստան՝ 45, Սորատէր՝ 30, Բարսի, Աշկերտ՝ 4, Բժնկերտ՝ 35, Լաշկուտ՝ 30 և Զակովի՝ մէկ տուն հայ բնակիչ ունեցող գիւղերը կորցրել են

այժմ իրանց բնակիչների  $\frac{3}{4}$  մասը<sup>1)</sup> այդ գիւղերից այժմ կան այնպիսիներ օր. Բարլասան և այլն, որոնց հայկական գարաւոր օջախների բուխարիներից կտրուել է իսպատ հայ կրակի ծովիլը. Զակովիկ գիւղում ապրող միակ հայ ընտանիքը 40 անգամներից բազկացած, բռնի իսպամացել է. Աւելորդ չինի գուցէ ասել, որ այդ ժամանակներում սպանուեց Բաղզաէի յաջորդ և միաժամանակ Բարդուղիմէոս վանքի վանահայր վարդապետը՝ նոյն վանքում:

Աղբակեցիների համար միակ նպաստաւոր հանգամանքը, այդ աղետների ժամանակ, եղել է պարսկական սահմանի մերձակայութիւնը. և իրօք աղբակեցին այդ հանգամանքից օգտուելով գաղթել է, ամեն ինչ թողած, ահագին խմբերով ընտանիքներով դէպի Պարսկաստան, և անդաւորուել Ռեքմի և Սալմաստի հայարնակ գիւղերում, առաւելապէս Սաւրայում և Հաֆթուանում:

Հեռանալով Առակ գիւղից, մեր ճանապարհը ընթանում է գարնան հրաշալիքներով պճնուուծ այն հիանալի հովիտի կողքով, որի մէջանզով հոսում է սիրուն պտոյտներ գործելով, հիւսիսից հարաւ ուղղութեամբ, Զապ գետը, Բագուղիմէոս վանքի առաջից անցնելուց յետոյ: Հովիտի մէջ գետի երկու ափերի վրայ տարածւում է գեռ չհասկած ցորենի կանաչ փարթամութիւնը, Զապի կենսատու ջրի աղբեցութեամբ ուռացած:

Շատ չանցած՝ մենք հասնում ենք Զապի և նրա օժանդակ՝ Գեղագումի ջրի միախանուելու վայրը, որից յորդած գետը հսկայ հոսանքով և ծովացած-անցնում է մի քարաշէն հոյակապ կամարներով կամրջի տակից և հոսում մոլեզին թափով դէպի հարաւ: Կամրջի կամարներից երկուսի մէջտեղում կայ կամրջապահի մի ընդարձակ տնակ՝ այժմ անդնակ:

Անցնելուց յետոյ այդ կամրջի վրայից, մենք առաջ ենք գընում այժմ Մարզիկցի քրդական ցեղի պետ՝ Շէրէֆ-բէկի տիրապետութեան սահմանի միջով: Ճանապարհի արևելեան կողմը բարձրանում են այն անմատչելի և ամենի քառաժայռերը, որոնց բարձրունքների վրայ բուն գրած թառել է աւագակապետ Շէրէֆը իր արքաներիներով: Հետուից երկում են Արառուի կատարները, նրա ստորոտում՝ Խանասորը, աւագակապետի երբեմնի յիշատակելի անցեալ ունեցող վրանատեղին, որի շուրջը կատարուած անմոռաց դէպքերը նոյն բոլէին ցըշուում են մարդուս մտքում...

Աւագակապետ Շէրէֆը մինչև այսօր էլ իր ասպատակութիւններին վերջ չի դրել. ահ ու սարսափի է տարածում իր իշ-

1) Այս մասին տես «Die Fahne» vol. V № 24 1896թ.:

խանապետութեան սահմաններում և երես առած տաճիկ կառավարութեան խրախոյմներից, նա ըռնում է անց ու դարձի ճանապարհները, կողոպտում է անմեղ անցորներին, նոյնպէս կարաւանները, ում էլ որ պատկանելիս լինին. թալսնում է վաճառականների ապրանքները, անպաշտան գիւղերը և ամենայն ինչ որին նրա և նրա հրոսակների աւերիչ ձեռքը հասնել կարող է, ի հարկին արիւն թափելուց էլ չխորշելով:

Շարունակելով մեր ճանապարհը, ամեն մի ըոպէում աւագակների կողմից թալանի և սպանութեան յարձակում կրելու հաւանականութեան մտածութիւններով պաշարուած՝ անցնում ենք Հըզու կամ Խողէ քրդական փոքր գիւղի մօտով, որ ընկանում է մեր ճանապարհի ճախակողմը, և որի ընակիչներից 4—5 տունը հայերն են կաղմում: Հըզուից յետոյ մինչև Գէվէռը այլևս հայ գիւղերի չենք պատահի մենք և Բաշզալէի դաշտի հարաւային սահմանի վրայ ընտրում ենք մեր ճանապարհորդութեան չորրորդ գիշերուայ հանգստավայրը, Զապի օժանդակ առուակներից մէկի կանաչ ափին, ճանապարհի եղերքով, որի արեմը տակողմը, կէս ժամու հեռաւորութեան վրայ երևում է էօմէր աղա քրդական գիւղը, տարածուած մի սիրուն ջրաշատ տափարակի վրայ, ճոխ արօտավայրելով, ցորենի և կանաչ արտերով լըջապատուած:

Երջապատի բլուրները ձգում են իրանց երկար ստուերները այս հիանալի հովիտի վրայ, և ծածկում նրա ամեն գեղեցկութիւնները միանգամից՝ մեր կարօտ աջերից: Մութը պատելու հետ, պատում է մեզ և աւազակային յարձակում կրելու երկիրը, մանաւանդ որ կարաւանը շատ հարուստ լինելով՝ կարող էր դրգամ լինել ըրդերի վայրենի ախորժակները: Այս ժամանակ դուրս է գալիս ճանապարհի վրայ կարաւանատէր (շէմզինանցի) բիւրդերից մէկը և կէս ժամու ընդմիջումներով, մի քանի անգամ, կանչում է բարձր ձայնով, որպէս անվախ աղդարարութիւն, մօտաւորապէս հետևեալ սովորական բանաձևը:

—«Ավ մալէ կարվանայ եա շեխա, նան խազի՝ որայ նան ըլլամ, ավ գը խազի՝ որայ ավ բղամ, ակեար սըբայ կազակիէ կավըմի, ավ կազընդայ շըխ ժեկոտ կեատ»<sup>1)</sup>:

լ—ցի

(Կը շարունակուի)

<sup>1)</sup> «Այս կարաւանի ապրանքները մեծ շէյխին (Մահմադ-Սըդըղինի) են՝ պատկանում. եթէ հացի կարօտ էք՝ եկէք ձեղ հայ տանք, չուր էք ուզում եկէք ջուր տանք, միայն թէ մենք ազատ ենք յայտարարում մեզ ձեր չարամիտ ձեռնարկութեան հետևանքի պատասխանաւութիւնից:»

## ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ<sup>\*)</sup>

Հոգիս Քանանեան.

Քու ուշացած նամակը դարձեալ ուշ հասաւ իմ ձեռ և ես շտապում եմ որքան կարելի է շուտով զրել նորա պատասխանը, որ վերանորոգուի մեր խանզարուած թղթակցութիւնը, ուրից առաջները մեզ մեծ բարոյական օգուտներ ունեինք և այժմ մնացել է միայն նորա յիշատակը։ Այս, սիրելի Գէորգ, ես յետ չեմ կենում իմ առաջարկութիւնից թէ՝ մեր «ուղարկիր» խօսքը պիտի ունենայ նշանակութիւն և վերջնութեր (պредпослѣдній) նամակս քեզ յայտնեց որ՝ ես դորա ներհակ չեմ ներգործել. բայց թէ զու ինձ տեսնէիր իմ ներգործութիւնս այստեղ (որ ես անպարկեշտութիւն եմ համարում քեզ ասելը) այն ժամանակ զու և Թիմուրեանը կ'վկայէիք թէ մըրքան նուիրական է ինձ համար որպէս ելցէ համոզմունքը։ Կրկին անգամ ասում եմ, ես յետ չեմ կենում իմ այն խօսքից, որ ասել եմ այն ժամանակ, երբ որ մեր առողջամտութիւնն է տիրել և ոչ տաքացած ուղեղը։ Թողնենք այս։ Սաացար ոսմանըդ։

Ափսոս որ չեմ կարողանում ցոյց տալ նոր շինած մայրերը. հրաշալի և անզուգական գիւտ է այդ մեր տպարանի համար. օրացոյց, Եղովոս և Ռուսա-հայ բառարանի սկիզբը քեզ կ'ապացուցանեն շուտով թէ ինչ օգուտներ գիտեմ ես քաղել յաջողակ հանգամանքից։ Արձիճեայ տառերդ և նորաձե տաղարանը (որ կ'հաւանիս Աստծով) շուտով կ'ստանաս. միամիտ եղիր։ Թիմուրեանի լուութիւնը ինձ ոչ թէ զարմացնում է, այլ և զայրացնում է. պատճառը չի զրելուդ պատճառը, ինչ է։ Միթէ թագյնում ես նորա կողմանէ մի աններելի գնացքն 'ի զուր։ Գամառը հաւանել եմ. շատ ուրախ եմ։ Միւսը աւել կ'հաւանես։ Ես քեզ ինդրել էի անցեալ անգամ ինձ փոքր ինչ

\*) ՏԵ՛Ս «ՄՈՒՐՃ» № 5.

օգնութիւն անել, եթէ դու չես կարող, աշխատիր, ինսպրեմ, տեսնել Սանասարեանին, նա ինձ խոսացել էր մօտ 200 մանեթ տալ, ևս վերջի ժամանակ չի կարողացայ նորան տեսնելու (հիւանդ էի). այսպէս մնաց, նա գնաց Մոսկովի Երբ որ տեսնես նորան՝ կարգազրէ այսպէս որ Խալաթովը միշտ սոսանայ ինձանից կամ քեզանից և վարձ չի պահանջած ուղարկէ Թիֆլիս, Սանասարեանը գիտէ այդ մասին և ինձ խօսք տուել է: Տպարանական գործը այժմ այսպէս է, մենք ունինք ամէն հարկաւոր բաները, շուտով կ'ոտանանք մամուլը պլր, իդմիրեանից, կ'տանք Եօնսօնի 150 մանէթ պարտքը և կը բանանք մեր սեպհականը: Ես կանխադոյն պարասուել եմ 3 հատ գրաշար, որ խիստ արագ շարում են: Բոռուէն և Բէռոյեվը մեզ տալիս են մեծ օգուտ իւրեանց տպելու դրքերով, որ մեր մօտ կ'լինի: Թիֆլիզից ևս խնդրում են «մեր գեղեցիկ տառերով և տիպով» տպել մի աշխատութիւն, այդ լաւ է որ՝ մեր տպարանի (որ հաճով զեր ևս չի կայ) անունը հետուումը լաւ ձայն ունի: Ստացայ Փարիզից, Վենետիկից և Կոնստանդնուպոլից գովասանք, այնտեղի օրադրներումը «ազգային» մասումը՝ մեր անունը հռչակուած է, լսել ես: Դիւլորիէն մեզ կամում է ունենալ գործակատար իւր Հայոց մասին աշխատութեանցը և հրատարակել է իր օրագրի մէջ ես և մեր աշխատութիւնքը տպելու և հրատարակելու է Revue Orientale օրագրումը: Միթէ այդ լաւ լուր չէ: Մի ուրեմն քնիլ. յայտնէ այս ամէնը Թիմուրեանին (ևթէ ես գրեմ 'ի զուր է. նա չի ուզում, երևի, ինձ հետ թղթակցութիւն ունենալ): Հայոց գիրքերու կատարելի (ցուցակ): մասին առաջի անգամն եմ լըսում քեզանից, այս ինչ նամակից երեսում է որ ուրիշ անգամ էլ յիշած ես եղել այդ մասին, բարի է. միւս նամակումս կ'զրեմ իիստ լաւը: Այս անգամ ամեն ճիգս 'ի գործ դրի և գտայ 11 կոպէկ այս նամակի ծրարագրի համար, միւս անգամուայ նամակիս ուշանալը իսկապէս փող չունենալո, կ'լինի. Աստուած է վկայ որ սուս չեմ առում: Վերջապէս ծիծաղելի բան է որ ես գործ եմ կատարում առանց մի կոպէկի. հողիս, աշխատէ 'ի սէր քեզ սրբազան զգացմունքի, աղատել ինձ այս աններելի գրութիւնից, ուղիղ հաշուով այս վերջի անգամն է որ ես առաջուայ պէս նեղուած եմ տպարանական պարտատէրներից, Թիֆլիս, Յաժտարխան, Նախիջևան և այլ քաղաքներ այբբենարան չուղարկելու մեզ վկասեց, ես բաշխուալ նոցա վրայ, ուրիշ աղբիւր բացի մեր տպած գրքերից ունինք, ինքըդ ասն. բայց միտք արա որ՝ ես անգամար մարդիկ եմ բանացնում տառ թափել, տպել, ուղարկել, կազմել, մայրեր

շինել, թուղթ ևայլն ևայլն, այս ամենը ոչ ոք ձրի չի անիլ. խնայէ ինձ. մի՞թէ ես մեղք չեմ: Ուրեմն, ես սպասում եմ քեզանից շաբաթ օր... վոյ: Բայց ինչ որ ուրիշ բաներ ապսպիլ էի վերջնթեր նամակներում՝ կատարէ ճիշտ: Ֆիդանեանի տոմսակները պէտք է ստանալ, ամօթ է: Ինչու Բուգաղիանին զիր չեն գրում, նա խիստ վիրաւորուած է քեզանից. ասում է թէ՝ ես նորա խօսքին հաւատալով մի նշանաւոր մարդու հետ խօսեցայ, վճռեցի և... ամօթով և ուերեն մնացի: Ի՞նչ կ'ասես: Միթէ այսուհետև կարելի է մեր կոպիտ հայ վաճառականներու հետ բան բնել. բայց պիտի իմանաս որ Բուգաղեանը աղիլ հոգիով մարդ է: Միթէ չգիտես որ Քերորը արտասահմանումն է. հա. նա այնտեղ է, ես կարծում էի որ ես քեզ գրել եմ այդ մասին, ահա արգէն ամիս է որ նա բժշկուելու համար գնացել է այնտեղ, և ինձ Քռէյցնախից զիր է գրում: Շատ գովում է այնտեղի կեամքը, բայց առանձին բան չեմ գտնում նորա նամակումը. Եթրու յ նոր յ անունը չի անդամ անունը:

Մնամ մ. ք. ո. Ռափայէլ. ե. ք.

1857 25 յունիսի

Ս. Պ. Բուրգ:

### Հոգեհարազատ եղբայր Գէորգ.

Երեկ, այս ամսիս 2-ին մի վողբիկ նամակ ուղարկեցի և նրա հետը մի օրինակ Ռոբինզոնի, որ այժմ պիտի ստացած լինիս: Ես զարմանում եմ որ այսքան ժամանակ ինձ նամակ չես գրում և չես տեղեկացնում մամուլի մասին որոյ գնելը քեզ է յանձնած. պր. Իզմիրեանցն ես չգիտէ քո լը ուռիթեան պատճառը: Ի՞նչ ասել կ'ուզէ որ՝ գորանով բանը ձախողակ է գնում. դու այդ իմանում ես, ուրեմն մեր գանգաղութեան վատ հետևանքը գրելն անգամ աւելորդ եմ համարում: Նորերումն երկու մեծ օգուտ ձեռներէս փախաւ. Բէրոյեանը իւր գրքի համար պայման կապում է տեղւոյս Ակադեմիոյ տը պարանապետի հետ և մի թուղթ գրեց Գօթիէին, ես և մի հայ մարդ երկար ժամանակ կամելով իմ մօտ մի բազմահատոր գիրք տպելու՝ յուսահատեցաւ և մի շաբաթ առաջ ինձ տուած խօսքը յետ առաւ և տուեց գիրքը տպելու ակադեմիա: — Գոնէ այսուհետև շտապենք: Ոչ ոք չի կայ մեզ նման արի և մինոյն ժամանակ ոչ ոք մեզ պէս տարաբախտ չէ. հաւատում ես թէ ոչ: Ասա խնդրեմ՝ ի՞նչ պատասխան ստացար պր. Աֆթանդիկա-

նից կամ թիմուրեանից. թէ ոչինչ չես ստանում, նորից և նորից խնդրէ օգնութիւն: Դու նախընթաց նամակներիցս լաւ զիտես, որ մենք առցնց նոցա օգնութեան, թէև մամուլ ստանանք ես, ոչինչ յառաջացնել չենք կարող: Հաւատա: Ես պատրաստել եմ յայտարարութիւնը, եթէ ցէնդուլից դուքս գայ, իսկոյն կ'ուղարկեմ քեզ և այնուհետեւ խիստ շուտով կ'տպեմ: Խնդրեմ գրէ Ծնչպէս բաժանեցիր այբբենարանները, որոնց մասին Սերովը էն ես գրել էինք ում և որքան, որ ես նոցա խնդրագիր ես գրեմ: Շուտով գրէ նամակ և պատասխան:

Քու միշտ Ուափայէլ հաւատարիմ բարեկամւ:

Հոկտ. 4.

### Հոգեհարազատ եղբայր Գէորգ.

Վերջապէս ստացայ քեզանից վաղուցուայ սպասած պատասխանը՝ շնորհակալ եմ: Թողնենք յառաջարանները և սկսենք բան խօսելու: Տպարանը գրեթէ պատրաստ է. այսինքն մամուլը, սենեակը, մի ձև (մանր) տառերը իմ մօտ են. բայց որովհետև ես տպարանումը (Եօնսօնի) պարտը ունիմ և Շանշիանցը որ խօստացել էր ազատել՝ դեռ ես չկատարեց խօսքը՝ այդ պատճառաւ լիակատար չեմ կարող անուանել. Շանշեանցը փետրուարին տալու է: Բայց ցանկալի էր, որ աւել շուտով կատարուէր. Սանասարեանցը ես, որ խօստացել է տպել իմ Հայոց գիւցաղունքը՝ այժմ վճռական բան չի ասում: Ես այժմ հրամայել եմ օրուաշխիք շարել տալու Բեռոյեվի համար (բառարանի) և դորանով միայն զբաղած է բոլոր տպարանը. գուցէ 2 շաբաթից կ'տեսնի մեր գեղեցիկ մանր տառերը: Խորինզօններ ուղարկել չեմ կարող. տպարանից չեն տալիս. խնդրեմ ստանաս այն փողը որ հաւաքել էք, ես ստացածովս ճամբայ կ'զնեմ 100 հատ գիրքը առանց ժամանակ կորցնելու: Անանիան այստեղ է. զեռ ես նրա հետ լաւ չեմ խօսել. նա ինձ ասելու բաներ ունէք. մնաց առ ժամանակ: Նոր լուր ունի՞ս, գրէ: Ճառը կ'ստանաս միւս սննդամ, այժմ Մոերին նամակ եմ պատրաստում ըստ դիպաց նորա օրադրին:

Մնամ բարեւ: Խոնարհ եղբայր քո Ուափայէլ

Յունուարի 4.  
1858.

## ՍԻԼԻԼԻ ԳԵՌՈՒՊ,

Թու մի նամակին երկու պատասխան գրեցի և մինչև  
այսօր չգիտեմ ստացել ես, թէ ոչ, մանաւանդ երկրորդ նամա-  
կըս այնքան կարեռը էր, որ—չգիտեմ—կարելի՞ էր արդեօք  
նորան անպատճան թողնելու, տուբիր արդեօք նորա միջի  
գիրը պր. Իզմիրեանին, որ նա հասցնէր Հ. Մաերին և կամ  
յայտնեցի՞ր մնացած բաները պր. Իզմիրեանցին, որ նա ան-  
պատճառ կամմենում կը լինի իմանալու, ես միանգամայն ան-  
տեղեակ եմ, դարձեալ կրկնում եմ, ասա Հ. Մաերին, որ իմ  
նամակը անպատճառ տպէ, բայց իմ անուան տեղ ստորագրէ  
Թղթակից և այդ մականուամբ ես յաճախ ուղարկելու եմ նորա  
պատուական օրագրին պէս-պէս պարունակութեան հատուած-  
ներ: Եթէ նա դէպի վատ կողմը ուղէ մեկնելու իմ անկողմնա-  
պահ կարծիքը, դու, ջան դիր նորան միամտացնելու իմ մտեր-  
մութեան մասին, միայն ազգի իսկական օգուտը ինձ ստիպեց  
և միշտ ստիպելու է ճշմարտախօս լինել թէ կենդանի խօսքով  
և թէ գրութեամբ և ամեն ինչ ձեռնարկութիւն յանուն ազգի՝  
միշտ մուտ ունենալու է իմ սրտի մէջ և ցնծութեան արձա-  
գանք պիտի լուրի այնտեղէն: Խօբինզօնի մասին գրել էի և  
գրում եմ. պէտք է ուղարկես փողը, որ կարողանամ ջնուտների  
ձեռքէն ազատելու: Թիմուրեանէն գիր ստացայ, մի քանի յոյ-  
սեր տալիս է, նիւթական ոչինչ չի կայ:

Մնամ բարե միշտ քեզ հաւատարիմ Ռասիայէլ

1858, 15 յունուարի.  
Ս. Պետերբուրգ:

## ՍԻԼԻԼԻ և բաղմակարօտ եղբայր.

Ահա չորրորդ նամակն է որ մին մինի քամակից ուղար-  
կում եմ քեզ և առ մեծի զարմացմանս նոցա պատասխանը չեմ  
ստանում. այն ինչ դու ինձ անպատճառ պիտի միամտացնէիր  
ինչպէս սրտակից բարեկամին է վայել. այն յոյսերովն, որով  
միայն կարող է ոտքի վրայ հաստատ կանգնել մեր ուխտի ար-  
գասիքն, որ իմ կողմանէ հազար ու մէկ զոհերով վերջապէս է-  
ացաւ որ մի ժամանակ միայն իսկական ցանկութիւն էր երե-  
ւում: Քանանեան ես գիտեմ քու բարեացակամութիւնը. բայց  
գու ինձ հաւատացներ որ բարի կամենալն նոյն է որ բարի

անելն. այն ժամանակ ես տեղիք չեմ ունենալ քեզ անհանգիստ անելու. նմանապէս եթէ ես իմանայի որ մեր գործը երեքիս վրայ չէ լինելու, այլ պիտի ծանրանայ իմ վրայ՝ այն ժամանակ գուցէ ես մի ուրիշ ընթացք կ'ունենայի. բայց անգուստ ի վերուստ ես վստահած եմ ձեր երկուսի վրայ ինչպէս մի պինդ պատի, և միշտ սխալել եմ. այդ յոյսերն որ ես ունիմ ձեր օղնութեան մասին, եթէ անկատարելի են, եթէ լոկ խօսքեր են՝ առանց ամաչելու. հաւատացի՛ր, որ ես իմ պահանջմունքը խիստ կ'չափաւորեմ, գուցէ միանգամայն կ'կտրեմ ես. բայց քու խօսքն և զրութիւնը միշտ դրա ներհակն են եղել և այդ պատճառաւ դուք եղել էք իմ ապաւէնը: Ես իմ աներկիւդ և արի ընաւորութեամբ առաջուայ պէս առաջ եմ գնում մեծամեծ ձեռնարկութիւններով, որոյ ապացոյցը կ'տեսնեմ 1 շաբաթէն. նախ և առաջ ես կարծելով թէ դուք ինձ ոչ միայն ըստ ձեր կարեաց կ'օգնէք, այլ և այլոց ևս կ'յորդորէք օգնելու՝ ես առաւել և առաւել յանդուզն գարձայ զործերումս. եթէ այժմ յետ կենաք՝ 'իհարկէ որ ես 1) կամ ամօթով պիտի յետ քաշուեմ, 2) կամ նոր հնար պիտի գտնեմ վլուխ բերելու, 3) և կամ թէ պիտի կորչեմ, ճնշուեմ գործոց ծանրութեան տակ: Միթէ դուք պարզիւն հանդիսատես էք լինելու իմ չարաչար նահատակութեանը: Մտիկ արէք որ այդ խիստ վաս և անխիղճ բան կ'լինի ձեր կողմանէ. և այսուհետեւ ալինիւ գործոց մէջ մասն ունենալն պիտի միշտ ամաչացնէ ձեզ: Միթէ դուք փոքրոզի դարձաք մինչև այդ ստափճան: Լաւ չէ: Մսերի մասին ինձ միամտեցրելոր կամ մի բան գրէ: Զէք կամենում 100 Ռոբինզօն ստանալու: Իզմիրեանցը գնաց:

Ռափայէլ

1858, յունուարի 21  
Ս.-Պ. բուրգ:

## ԹիհրֆիԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱՆ \*

### Պարոններ

Այս հարցը որով մենք այս երեկոյ պիտի դրադուենք, գուցէ շատելին թուայ առաջնակարգ կարևորութիւնից զորկ՝ կամ առնուազն այրող այժմէութիւն չունեցող մի նիւթ: Բայց հաւատացած եղէք, որ ամեն վայրկեան նա կարող է դառնալ էական մեր երկրի արտաքին քաղաքականութեան համար: Այս կլուբում, որի անդամները միշտ կողմնակից են եղել ազատութեան և մարդասիրութեան, կայ արգեօք մի հաստիկ մարդ, որ անտարբեր լինէր դէպի այն բոլորը, ինչ կատարում է Մերձաւոր Արևելքում: Այսքան էլ հեշտ չէ արևմուտքում ճշտութեամբ իմանալ իրողութիւնները. թոյլ տուեք ինձ ուրեմն այս հակիրճ տեսութեան մէջ մի փոքր աւելի ժանրանալ փառտերի վրայ: Կարծւում է, թէ մեր երկիրը ներկայումս աւելի պակաս է հետաքրքրում արտաքին գործերով քան առաջ: Մեր մամուլը այժմ աւելի նուազ է զբաղւում այդ խնդիրներով քան անցեալում, քացի սուր կրիզիսի ժամանակներից, երբ որևէ խոշոր ընդհարում, ինչպէս ուսւ-ճապոնականն է, զրաւում է ընդհանուր ուշագրութիւն: Ճշմարիտ է, որ մեր Անգլիայում կրթուած մարդիկ՝ զբաղւուած հասարակական և անտեսական խոշոր խնդիրներով՝ այսօր աւելի սակաւ են ուշագրութիւն դարձնում արտաքին քաղաքականութեան վրայ, քան սրանից երեսուն, քառասուն կամ յիսուն տարի առաջ:

Արևելեան հարցը, սրանից երեսուն-քառասուն, յիսուն տարի առաջ սակայն մի հին հարց էր: Մեզանից ոչ ոք չի կարող յիշել, թէ նա Երբ էր նոր: Այս ծեծուած խնդիրի մասին արդէն որքան հատողներ են գրուել: Սակայն նա շատ պարզ

\* ) Այս գերնագորի տակ Revue de Paris-ի մայիս 15 թվառաշակուած է Զէմս-Բրայսի մի քաղաքական ճառը, որ ականաւոր անգլիացին արտասանել է այս տարուայ մարտ 10/23-ին, Լոնդոնի Էլիցի Շլի-ում: Մենք տալիս ենք այս թարգմանութիւնը մի քանի չնչին յապաւութիւնով:

է, թէ մարդ անկեղծօրէն կամինայ նրա խոկական բացատրութիւնը գտնել, որ հետեւեան է. Արեւելեան Եւրոպայում և Արեւեան Սսիայում կայ ռազմասէր մարդկանց մի խումբ, որը մնաք անուանում ենք թիւրք կառավարութիւն, և որը այն օրուանից՝ երր գուրս է պրծել իր գեղին Սսիայի խորքերից, ուրիշ զբաղմունք չի ունեցիլ, բայց եթէ կողովուել և կոտորել իր տիրապետած ժողովուրդներին: Եւ այս մարդկանց (թիւրքերին) բաղաքակիրթ Եւրոպան ճանաչում է և վարւում է հետեւը, որպէս մի քաղաքակիրթ պետութիւն: Մինք տանում ենք նրանց, կարելի է ասել նոյնիսկ, որ մենք պահպանում ենք նրանց, որովհետև Թիւրքիայի տէրերը՝ ապստամբութիւնների շնորհիւ գահներէց կամ հարեամների արշաւանքներով հալածական վաղուց հետէ անյայտացած կը լինէին, եթէ մեծ պետութիւնները այնքան եռանդով նրանց չալաշտպանէին:

Երկու խոշոր գծեր բնորոշում են Թիւրքական պետութիւնը՝ նախ այն, որ նա ապրում է ոչ իր սեփական ոյժերով, այլ ուրիշ տէրութիւնների վոխաղարձ նախամեծով, և երկրորդ՝ որ երրեք չի կարողանում լարենորոգուիլ: Այսօր նա աւելի վատթար է քան ԽՎԼ-րդ գարում, որովհետև այն ժամանակ նա ունէր Սէլիմ և Սուլէյման սուլթանների նման մեծապէս օժտուած պետեր: Այժմ ոչ միայն այդ գժբախտ միավետութիւնը չունի իր մէջ վերանորոգութեան որևէ կարելիութիւն, այլ նոյնիսկ գտնուում է այնպիսի կացութեան մէջ, որ ոչ ոք նրան բարենորոգել չի կարող: Սա ամենքի համար ապացուցուած մի խնդիր է:

\* \*

Արեւելեան հարցի ներկայ հուլը, Փազիսը սկսուած է ՀԽ-րդ դարի սկզբներից և շարունակուում է մինչև այժմ: Յունական ապստամբութիւնը սկիզբ գրեց այն խոշոր տրագետիային, որի ընթացքում ընկճուած ժողովուրդները մէկը միւսի յետեից Յունաստանը, Սէրբիան, Բումբիան, Բուլգարիան, Կրետէն—ապատեցին թիւրքական լծից և քաղաքակիրթ ազգերի շարքը բարձրացան: Մինչեւ Բէրլինի Դաշնագրութիւնը այս ապատագութիւնը շարունակ աճում էր, որպէս միակ խոչընդուռ ունենալով Եւրոպայի միջամտութիւնը յօդուտ Թիւրքիայի: Այս դրամայի նորագոյն յեղեղումը եղաւ Բէլինի դաշնագիրը 1878-ին: Խուսները 1877-ին միջամտեցին տարուած մի մեծահոգի մղումով դէպի տառապող ցեղերը, ինչպէս և իրանց շահերի համար: Նրանք ջարդեցին թիւրքերին, անցան Բալկանը, Սան-Ստեֆանոյում, Կոստանդնուպոլսի դուսերի առաջ, նրանց թելաղրեցին մի դաշնապիր, որով ապատուում էր Մակեդոնիան

համարեա ամբողջապէս, և որ տալիս էր Ռուսիային Փռքը-Ասիայի հայերի հովանաւորութիւնը: Լորդ Բիկոնսֆիլդի և լորդ Սալզբիւրիի Անգլիան ոչնչացրեց Սան-Ստեփանօյի գաշնազիրը և Բերլինի գաշնազը Մակեդոնիան վերստին զրեց Թիւրքիայի լծի տակ: Մակեդոնիան այնուհետև դարձաւ մի որս Թիւրքիայի ձեռքին, այս անողորմ հալածողի, որ երբէք չկատարեց խոստացուած բարենորոգումները, և որ երբէք չբռնագատուեց մեծ պետութիւններից: Քսան և հինգ տարի այսպիսի բեժիմ կրելուց յետոյ, ահա չորս տարի է, որ Մակեդոնիան ապստամբուած է, հայերը Ռուսաստանի առանձին հովանաւորութիւնից զրկուած՝ չստացան նաև Բերլինի գաշնազը խոստացուած բարենորոգումները: Հինգ դարերից ի վեր այս աղքը դեռ երբէք այդպէս անողորմ կերպնի չէր տանջուել քսան 1872 թուից սկսեալ:

Այս քսան և եօթը տարուայ ընթացքում Եւրոպայում մեծամեծ փոփոխութիւններ առաջ եկան: Նախ և առաջ Անգլիայում: Մենք մի փոքր թողինք անգլիական շահերի այն եսասէր և բիրտ պաշտպանութեան ձեւ, որը քիչ մնաց 1877-ին մեզ պատերազմ տանէր Թիւրքիայի պաշտպանութեան համար: Մեր ժողովուրդը երես գարծրեց այն ջինգոխոմից, որ այն ժամանակ մեծադղորդ աղմուկով պահանջում էր պաշտպանել այսպէս կոչուած անգլիական շահերը: Անգլիական շահերը բայց հէնց Անգլիայի շահերի տեսակէտից անհրաժեշտ է շարունակ զէպի Պոլիս խաղացող Ռուսիայի ճանապարհին մանր տէրութիւններ, ինքնավար ժողովուրդներ ստեղծել: Հէնց այս էր Գլազուտոնի պահանջածը, որի համար նա հոչակուեց որպէս ոռւսամոլ, համարեա մի գաւաճան: Բուլգարիայի քսան տարուայ պատմութիւնը լիուլի կերպով չապացուցեց արդեօք, որ այդ քաղաքականութիւնը դեռ այն ժամանակից լաւագոյնն է եղել:

Այսօր Անգլիան աւելի քան երր և իցէ քիչ ցամկութիւն ունի միջամտել Մերձաւոր Արևելքում: Մենք համարեա ամենքս համաձայն ենք, որ էլ չենք կարող Խրիմի պատերազմը վերըսկսել Թիւրքիայի պաշտպանութեան համար: Մենք տեսնում ենք, որ թիւրքական գործերը աւելի նուազ կարևորութիւն ունեն մեզ համար քան ինչ որ մենք կարծում էինք մինչև այժմ: Զգուշանանք սակայն չափազանցութիւններից և այս ուղղութեամբ, մոռացութեան չտանք մեր շահերի արժեքը արևելեան հարցի լուծման ժամանակ, Եթէ մենք կամենում ենք, որ մեր առետուրի շրջանը չնեղանայ, պէտք է որ ազատ ժողովուրդներ բռնեն Սուլթանի մեռած կայսրութեան տեղը:

Երկրորդ փոփոխութիւնը Ռուսաստանի քաղաքականութիւնն է: Ալէքսանդր Ա-ի Ռուսաստանը պատերազմ ոկրուց արևելքում քրիստոնէութիւնը պաշտպանելու և հովանաւորելու համար: Նա հաւատացած էր, թէ դա իր առաջին պարտաւորութիւնն է: Ալէքսանդր Ա-ի մահը մի անիշխանականի ոռութով ամեն ինչ փոխեց: Բուլղարիայի ցոյց տուած անկախութիւնն ձգտութիւնը ընդդեմ իր ազատարար Ռուսիայի՝ պատճառ եղան, որ Պետերբուրգի քաղաքականութիւնը զարձաւ սակաւ մեծահոգի: Եւ երբ 1895—1896-ին լորդ Սալբիւրին փորձեց Եւրոպայի միահամուռ գործակցութեամբ վերջ դնել Հայաստանի ջարդերին, նրա հանգէպ ցցուեց իշխան կորանովը:

Ահա այստեղից առաջ եկաւ Հայաստանի և Մակեդոնիայի երկու տեսակ կացութիւնը (la double situation), մի կողմից նման իրար՝ իրանց ժողովուրդների տառապանքով, և միւս կողմից տարրեր իրարից ուրիշ պայմաններով: Մակեդոնական խնդիրը բարդ է, և մեծ պետութիւնների մրցութեամբ մթագնած: Հայկական հարցը պարզ և որոշ կը լինէր, եթէ մի կողմ թողնուէր քաղաքականութիւնը, և մարդկային տարրական իշխանութիւնը յարգուէին և թէ Եւրոպան ցանկանար միայն վերջ դնել այդ խայտառակութեանը:

\* \* \*

Վերյնենք նախ Մակեդոնիան: Այստեղ առաջին բարդութիւնն սահնձում են երեք չորս ցեղեր, երկու-երեք կրօններ կամ եկեղեցիներ, որոնք մրցում են իրար հետ: Մի կողմ թողնելով Օտտոման թիւրքերը, հալամի միջոցով թիւրքացած տեղացիները, և մահմեդական ու քրիստոնեայ ալբանացիները, այստեղ բուլղարը իշխում է համարեա ամեն տեղ, և բաւական խոշոր մեծամասնութեամբ: Յոյնը գերակշռող թիւ է կազմում միայն ծովափերին և հարաւ արևմուտքում, իսկ սերբը հիւսիսարկմուտքում: Աւելացրէք այս հետաքրքիր և արդիւնաբերող փոքրիկ ժողովուրդը, կուցօվալախիներին, լատինական ցեղից և համարեա բումանական եղուովք: Այս իրար հակառակ չորս ազգերը անհաշտ ատելութեամբ են բռնուած իրար դէմ: Իւրաքանչյուրն ոնի կամ ուղում է ունենալ իր կղերը, իր եկեղեցին, իր գոլոցական կաղմակերպութիւնը: Եւ այս ազգային եկեղեցիներից մէկն ու մէկից ծագում է և ընթացք ամսում որևէ կոփւը, երեսուն տարուց ի վեր, լցնելով մեր թերթերը հեռագրերով: Հարկ է արդեօք ասել, որ թիւրքը, խորամանկ և նըբամիտ, աշխատում է խսորել և երկարացնել այդ կոփւները: Այդ ժամանակ պետութիւնները միջամտում են: Թիւրքիայի երկու

հարկանները, Ռուսաստանը և Աւստրիան, որոնք երկսով էլ սպասում են նրա ժառանգութեանը, հաւասար ախորժակով շրջապատել են մահամերձ հիւանդի անկողինը:

Ռուսիան՝ ինչպէս երկում է, իր յոյսը չի կորցրել մի օր տիրել Պոլիսը՝ և նա պատրաստ ունի զինուորական խոշոր ոյժ թրբական սահմանի երկարութեամբ: Մանջուրիայի պատերազմը ներկայ դէպքում արժէք չունի: Այդ հեռաւոր երկիրը կապուած է Ռուսիայի հետ միմիայն երկաթուղու անվերջ գծերով, մինչդեռ Սև ծովի վրայ նրա գրութիւնը բոլորովին տարբեր է: Եթէ Ռուսաստանը մի կողմից յոյս ունի որեւէ բան ձեռք բերել մօտաւոր կամ հեռաւոր առաջայում, նա միհնոյն ժամանակ լաւ զիտէ, որ ինքը պատրաստ չէ մի անմիջական տիրապետութեան համար ինչպէս և անկարող է վարել կրկնակի նոյնիսկ եռակի պատերազմ Աւստրիայի, Բուլգարիայի և Թիւրքիայի դէմ: Եւ ահա թէ ինչո՞ւ նա ցանկանում է statu quo պահպանել: Ներկայ անիշխանութիւնը, որ շարունակում է թուլացնել Թիւրքիան, և ըրիստոնեաների կրած տառապանքները՝ մի օր կը տան ոռուներին, երբ նրանք գտնեն ժամը յարմար, ըստ իրանց կամաց միջամտելու առիթ: Քանի դեռ գոյութիւն ունի թիւրքական կառավարութիւնը զանազան դժոննութիւններ և խառնակութիւններ միշտ կարող են օժանդակել սուսական նպատակների իրազործմանը:

Աւստրիան չի ձգտում ամրողշապէս տիրել Թիւրքիան: Նրա փառասիրութիւնը շատ լայն չէ, բայց խիստ որոշ է: Նա ցանկանում է Մակեդոնիայով անցնել և իջնել Սալոնիկ, Եգէտեան ծովում մի ծոց ունենալու համար, մինչդեռ Ալբանիայի միջից նա աշխատում է, Աղրիատրիկի բոլոր ափերը իր ձեռքի տակ ունենալ: Բայց նա բազմաթիւ ծանր արգելքներ ունի այս կրկնակի ծրագիրն իրազործելու համար: Կայսրը ծեր է և ուզում է խաղաղութեամբ մեռնել: Իր ընկերակիցը՝ Ունգարիան, միշտ ծուռ աչքով է նայել որեւէ նոր տիրապետութեան, որ գալիս է զօրացնելու կայսրութեան մէջ սլատօնական տարրը: Նոյնիսկ Աւստրիայում կաթոլիկ կուսակցութիւնը տհաճութեամբ կը տեսնէր օրթոդոքս տարրի մէծ աճումը կայսրութեան մէջ: Բոլոր այս պատճանները ստիպում են Աւստրիային առժամանակ ձեռնպահ մնալ: Նրան էլ ձեռնտու է, ինչպէս ոռուներին, որ statu quo պահպանուի:

Այս բոլորի հետևանքն այն է լինում, որ երկու պետութիւններ, որոնք ամենից աւելի շահագրգոռուած են և ամենից աւելի հնար ունին միջամտելու, մինչև այժմ արել են, կամ ուզում են անել ամենից քիչ: Նրանք ծրագրել են բարենու-

րոգումներ, նրանք նոյնիսկ այս ծրագլներից մէկը իրագործելու նշաններ են ցոյց տուել տարօրինակ ձևով։ Զարմանալի չէ, որ արդիւնքը, գոնէ զբական արգիւնքը՝ եղաւ զերօ... Մի յուսացէր, որ այդ երկու պետութիւնները ձեռք կ'առնեն երբեհցէ լուրջ բարենորոգումներ թիւրքիական կայսրութեանը ցաւքը դարձանելու համար։

Ի՞սկ մնացած եւրոպան։

Դերմանիան Մակեղոնիայում ուղղակի շահեր չունի, բայց նա մ'ըս կրկնակի շահ ունի բարի յարարելութիւններ պահպաններ Մուսասաւանի հետ և իր հոգատակների համար թիւրքիայում ձեռք բերել արգիւնագործական ձեռնարկութիւնների, մատակարարութիւնների կոնսեցիաներ և առևտրական արտօնութիւններ։ Հաւատայած եղէր, որ Գերմանիան թիւրքիայի դէմ չի գնայ, բայց կարող էք համոզուած լինել նոյնպէս որ նա սուլթանի իրական սպաշտպահութիւնը յանձն չի առնի այն օրը, երբ պետութիւնները կը վճռին միջամտել։ Ֆրանսիան տարուքերում է երկու զգացմունքի մէջ։ Մի կողմից նրա բուռն մարդասիրութիւնը, միւս կողմից զէպի ազատութիւնը տածած իր յարգանքը՝ միանուած են արևելեան բրիտանների պաշտպահութեան իր հին աւանդութեան հետ։ Բայց նա Մուսիայի դաշնակիցն է և չէր կամենայ մանանաւանդ այժմ խախտել այդ գաշնակցութիւնը։

Իտալիան Ֆրանսիայի ոկտո կուռակից է կարգի, խաղաղութեան, մարդասիրութեան և ազատութեան։ Բացի այդ նրա մի բանի շահերը պահանջուած են, որ Աղրիատիկի վրայ հաւասարակառութիւնը պահպանուած լինի. գուցէ և մի վոքը փառասիրութիւն ունի տարածելու իր ազդեցութիւնը Աղրիատիկան ծովի արևելեան ափերի վրայ։ Բայց այս շահերը նրա համար կենսական չեն և ես կարծուած եմ, որ ներկայումս այս փառասիրութիւնը չէ որ առաջնորդուած է նրա արտաքին քաղականութիւնը։

Ինչ վերաբերուած է մեզ՝ Պոլսի փրկութիւնը, նեղուցների աղատ մուտքը, և մեր ուրիշ շահերը թիւրքիայում, մեզ համար այլս նոյն կարևորութիւնը չունին, ինչ որ սրանից երեսուն տարի առաջ։ Այնուամենայնիւ մինք թոյլ չենք տայ, որ Բալկաննեան թերակղին ընկնի մի միծ պետութեան ձեռքը։ Մեզ համար լաւազայնը կը լինէր, որ այս երկրում ազատութեան և խողաղութեան մի ընթիմ հաստատուէր և լայն ազահովութիւն արուէր մեր առևտուրին։ Աւելացնենք այս շահերին և մեր աւանդութիւնները. համարեա միշտ, չնայելով ժամանակաւոր խենթութիւններին, մինք կոռւել ենք արգարութեան և ազատու-

թունին, 1905.

թեան համար. Թիւրքական կառավարութեան դարշելի չարագործութիւնները չեն կարող մեր արդար զայրոյթը չյարուցանել:

Ահա, ըստ իս, վեց պետութիւնների դիրքը: Իսկ Թիւրքիան: Պէտք է նրա պատմութեանը կատարելապէս անտեղիակ լինել մտածելու համար, թէ այս երկրում որևէ բարենորդում հնարաւոր է քանի նա գտնում է սուլթանի իշխանութեան, նրա ձեռքի տակ:

Այս խնդրի երկու տեսակ լուծումն հնարաւոր է: Առաջինն է՝ անել Մակեդոնիայում, այս ինչ արուած է, Բուլգարիայում և Յունաստանում, այսինքն այդ երկիրը լունել Թիւրքիայից, երկը ըստորդն է՝ պահպանել սուլթանի անուանական իշխանութիւնը, բայց արգելել նրա անձնուկան միջամտութիւնը և նշանակել մի նահանգապետ, որ պատասխանատու լինի ոչ թէ սուլթանի այլ պետութիւնների տռաջ, տալ այդ երկին առանձին բիւղէ անկախ դատավարութիւն, բաւականաչափ իշխանութիւն ժանդարմերիա հաստատելու, ինչպէս կարդ պահպանելու և դատական վճիւններն իրագործելու համար: Հարկ է արդիօք ասել, որ այս երկրորդ լուծումը ներկայումս յարմարագոյնն է, որովհետև չի պահանջում ոչ պատերազմ Թիւրքիայի դէմ, ոչ բաժան-բաժանութիւն ըստ ցեղերի փառասիրութեան, կամ ըստ պետութիւնների ձգտումների, միևնույն ժամանակ սրբանով կարելի էր տառապող ժողովուրդին տալ իրական սփոռիանք:

Բայց ինչպէս ձեռք բերել այսքան ցանկալի հետևանքներ: Աւատրօ-ուստական ծրագիրը դուրս եկաւ միանգամայն անօպուտ: Այս կամ առաջիկայ տարին այնտեղի ազգերը իրանց փրկութիւնը կը փնտուն միայն ապստամբութեան մէջ, որը Թիւրքիան կը զսպի բարբարոսարար, թէ Բուլգարիան չմիջամտի իր զօրքով: Եոր կոտորածներ կը լինին, և եթէ մի մեծ պատերազմ առաջ չգայ, Եւրոպան ստիպուած կը լինի մի բան անել, Բայց ի՞նչ.

—Նաւատորմիդ ուղարկենք, գրաւենք երկիրն ամբողջապէս, կամ ափերը, ասում են ոմանք: Ես էլ երկար ժամանակ հաւատացած եմ եղել, որ լորդ Սալմը ին Հայաստանում ընտրելով յաջող հոգերանական մոմենտը կարող էր կանգնեցնել ջարդերը մի բաւականաչափ արագ և եռանգուն գործողութեամբ: Ես զեռ այժմ էլ հաւատառ եմ, որ եթէ մենք 1895—1896-ին ուղարկենք մեր նաւատորմիդը Պոլսի առաջ, Թիւրքիան ստիպուած կը լինէր զիջել, փոյթ չէ նոյնիսկ թէ մենք մեն-մենակ լինէինք:

Բայց ստիպել Թիւրքիան դուրս տանել իր զօրքերը Մակեդոնիայից, հաստատել այնուեղ մի քրիստոնեայ նահանգառպեա, որ պատասխանատու լինի Եւրոպայի առաջ: Ես ընդունում եմ, որ սա մի դժուարին ձեռնարկութիւն է, եթէ մենք մենակ լինենք, և չունենանք միւս պետութիւնների օժանդակութիւնը: Բայց այս խոշոր գործը, այս դժուարին գործը հեշտութեամբ գլուխ կը գար, եթէ երկու կամ երեք պետութիւններ միանային: Սուլթանը երեքի սպառնալիքի տակ հաւանականարար կը զիջէր, եթէ ի հարկէ չստանար որևէ պետութեան իրական աջակցութիւնը, բայց յատկապէս ո՞ր պետութեան, ես չգիտեմ:

Երկու կամ երեք պետութեան համերաշխութիւն, ահա այն նպատակը, որին մենք շարունակ պէտք է ձգտենք առանց դադարի, օգտուելով բոլոր յաջող սպարագաններից և աշխատելով մանաւանդ գրաւել այն երկու ժողովուրդներին, որոնք ամենց աւելի զգայուն են մարդասիրութեան և արդարադատութեան համար. խօսքու Խտալիայի և Ֆրանսիայի մասին է: Սա Լանդսոտունի քաղաքականութիւնն է, որ նա սպարզել է և գործ է զնում կարծեմ մի տարուց ի վեր, և ես յոյս ունիմ, որ նա նրանից չի հրաժարուի: Ահա թէ ի՞նչու, ոչ ժողովական մասին է և պարզաբանեն մենք հակառակ կուսակցութեան անդամներս ոչինչ չենք առել, իր անձի, իր հայեացքների և իր յոյսերի դէմ: Առ առաւելն մենք ցանկացել ենք, մենք ներշնչել ենք մի աւելի կենդանի, աւելի յարատն յարաբերութիւն դէպի հատկան և ֆրանսիան: Առանց Խտալիայի և ֆրանսիայի աջակցութեան ես նախատեսում եմ Մակեդոնիայում գեռ երկար տարիների խառնակութիւններ և թշուասութիւններ, մինչեւ որ հասնի այն օրը, երբ իրերի այդ անտանելի կացութիւնը առաջ կը բերի եւրոպական միջամտութիւն, որ գուցէ այն ժամանակ կարժենայ հաղարաւոր մարդկային կեանքեր:

\* \*

Հայաստանում ինդիրը շատ աւելի սպարզ է. գոնէ պետութիւնների շահերն այնուեղ նուազ կարենոր և սակաւաթիւ են: Միմիայն Ռուսաստանն է, որ կարող է քաղաքական հայեցակտեր մէջ բերել: Միւս պետութիւնները ինչպէս և Անգլիան այսուեղ միայն մարդասիրական պարտքեր ունին: Եթէ այդ քրիստոնեայ կոչուած պետութիւնները պարտքի ամենափոքր զիտակցութիւնն ունենային, հայկական հարցը կը լուծուէր առանց որ և է դժուարութեան: Բաւական էր նշանակել Եւրոպայի հանդէպ պատասխանատու մի նահանգապետ որ ունենար առանձին բիւղջէ և բաւարար իշխանութիւն կարգը պահպա-

նելու, պաշտօնեամների վեղծումներին և քիւրդերի կողոպւանեարին վերջ գնելու համար. և հարցը կարելի էր լուծուած համարել: Արդ, ոչ Գերմանիան և ոչ Աւստրիան երբէք չեն զրազուիլ Հայաստանով: Խուսաստանից համաձայնութիւն առնելը այս ծրագրի համար եւ համարում եմ ոչ կասկածելի և ոչ գժուար, բաւական է, որ Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան, համերաշնչարարա ճնշումն գործ դնեն Պետերը բուժում:

Ես վերջացրի: Դարձալ երկու դիտողութիւն եղրափակելու համար: Ներկայումս ընդհանուր զրութիւնը չափազանց կրիտիկական է և գժուար բացատրելի, որովհետև Մերձաւոր Արենելը հարցը կարող է կապուել ուրիշ անցքերի հետ՝ հետաւոր կամ մօտիկ եւրոպական կամ ասիական:

Աւստրօ-ունգարական պետութիւնը կրիզիսի մէջ է, գլխուար է ասել, թէ ի՞նչ դուրս կը գայ այս աւստրօ-ունգարական գուալիզմի վերակազմութիւնից, որ երկու տարուց ի վեր փորձում են: Խուսաստանը պակաս ծանր կացութեան մէջ չէ. ութ օրից, մի ամսից յետոյ արդեօք ի՞նչ կը պատահի. խաղաղութիւն կը կնքի և կարդ կը հաստատի՞ իր ներքին նահանգներում, թէ կը շարունակի պատերազմը և կը փոխի իր կառավարութեան ձեզ. և ի՞նչ նոր ձեւ կը ստեղծի նոտ, և ի՞նչ հականարուած կ'ունենայ այս ներքին փոփոխութիւնը նրա արտաքին քաղաքականութեան վրայ:

Նոյնիսկ Թիւրքիայում տեսէք թէ որպիսի խառնակութիւններ ու ապատամբութիւններ կարող են տակն ու վրայ անել Արաբիան, մուսուլման Ասիան, ինչպէս և քրիստոնեայ Բաղանը: Տարօրինակ չէ աղքայնական զգացմունրի այս զարթնումը Ասիայում: Այսօր արաբը չի կամենում ընդունել սուլթանին որպէս հոգեոր և մարմնաւոր պետ, որպէս խալիֆ բոլոր մուսուլմանների: Արաբների այս զարթնումը մեծամեծ փոփոխութիւններ տուած չի բերի արդեօք Օսմանեան կայսրութեան ներսում: Խոլամ աշխարհում միայն արաբը չէ սակայն որ ատում է թիւրքին: Տարօրինակ ժամանակներ են մեր ժամանակները, ամեն տեսակ անակնկաներ կարող են ամեն բողէ տեղի ունենալ:

Ահա իմ առաջին դիտողութիւնը: Դառնանք երկրորդին: Ո՞րպիսի սկզբունքներով պիտի առաջնորդուի մեր արտաքին քաղաքականութիւնը: Երբեմն ասում են, որ միմիայն գաղթական և առևտրական շահերը մեզ պիտի առաջնորդեն: Ես չեմ կարծում, որ մեր աղքային կեսնքի մի այսպիսի նեղ հասկացութիւն կարողանայ բաւականութիւն տալ մեր ժողովրդի սրտին և հոգուն: Այս մողովուրդը, հաստատ լումացէք, գիտէ,

որ ինքը և՝ պարագեր ունի, և՝ շահեր: Ես չեմ ուզում մեր հրեկերը ասպետական արկածների մղել, ինչքան և ազնիւ լինէր, այդպիսի փառասիրութիւնը խոնթութիւն է մեզ կամ Եւրոպացին համար պատերազմի վատանգ ստեղծել, որից կարելի էր խուսափել: Բայց զգուշութեամբ և՝ վարպետօրէն Անգլիայի զօրութիւնը ծառայեցնել արդարութեան և ազատութեան գործին, ըստ իս, մի ազգային պարտք է:

Այսօր մենք առիթ ունենք գործ գնելու մեր ազգեցութիւնը Բայլսնեան քրիստոնեաների աղատութեան, նրանց ցաւերի թեթևութեան և այն անարդարութեան մեղքը քաւելու համար, որ 1878-ին լորդ Բիկոնսֆիլդի բազարականութիւնը պատճառի էր նրանց: Կը հրաժարում եմք արգեօք բոլոր մեր աւանդութիւններից: Յոյս կայ որ Իտալիան և Ֆրանսիան կը միանան մեզ հետ: Յոյս կայ, որ Ամերիկան կը տայ մեզ իր բարոյական աշխալցութիւնը, դուք գիտէք, որ նախագահ Ռուզբեկլու այդ միաբն արտայայտեց և գիտէք նոյնունու, թէ ամերիկական ժողովուրդը ինչպէս ընդունեց նրա ասածը:

Ուզիղ նայենք ուրեմն այն նպատակին, որին պիտի հետեւնք, և այն միջոցներին, որ մենք կարող ենք արամազրել: Նպատակը հետեւեան է: Սուլթանից ազատուած երկրներում հաստատել ինքնավար ազգեր և նահանդներ, առանց թոյլ տալու, որ նրանց վրայ ծանրանայ հարեան ուետութիւնների լուծը: Միջոցները—ահա, թիւրքական կայսրութեան մէջ ապրում են եռանգուստ, գործունեայ, խելացի ցեղեր: Բուլգարը ուժեղ է, համբերող, քաջ, գիմացկուն, որ փորձով ցոյց տուեց պատերազմի դաշտում, ինչպէս արուեստների մէջ և խաղաղութեան ժամանակ: Հայը գարերից ի վեր ապրում է իր նախնիքների կրծնի և լեզուի փառաւոր աւանդութիւններին անյօդգողդ հաւատարմութեամբ: Ամենասպան հալածանքները չկարողացան նըսրան վերջնականապէս ընկնել և ոչնչացնել. ազգը միշտ յարատեց, ուսքի ելաւ, նա կարողացաւ շնորհիւ իր գերազանց ընդունակութիւնների, իշխանութիւն և ազգեցութիւն ձեռք բերել, ինչպէս մի ժամանակ բիւլանդական կայսրութեան մէջ, երբ նա տուեց այնքան նախարարներ և զօրավարներ:

Մէ մուսացք մանաւանդ այս փոքրիկ, բայց արի ալբանական ազգը: Բնութիւնը օժտել է ալբանացուն այնպիսի ուժով և արխութեամբ, իշխելու այնպիսի ոգով և գերազանց կարողութեամբ, որ նա այսօր ամբողջ արևելեան իսլամի մէջ զրաւում է առաջնակարգ տեղ: Եթէ ալբանացիք իրանց լեռների ծոցերում մնացել են կիսավայրենի, մեղքը նրանցն է, ու-

բոնք զրկել են այդ ժողովրդին քաղաքակրթութեան աղքեցու թիւնից:

Որպէսի դժբախտութիւն, եթէ այս բոլոր ազգութիւններից իւրաքանչիւրը չհամնի ազատ զարգացման, անկախ կեանքի, հեռու որևէ բանակալութիւնից ինչպէս և որևէ է երկրի հետ միանալուց: Եւ ընդհակառակը որպիսի բարիք, որպիսի ապահովութիւն նրանց համար, Եւրոպայի համար, մարզկութիւնն, գուցէ և քաղաքակրթութեան ապագայի համար, թէ նրանցից իւրաքանչիւրը կարողանայ պահպանել իր անհատականութիւնը և ազատորէն տնօրինէ իր ճակատագիրը: Այժմէն իսկ արևմտեան ազգերի շահը պահանջում է, որ այս ազգերը չընկնին ուռւսական կամ աւստրիական լծի տակ: Բայց այսոք չէ սահմանափակել մեր ծրագրերը և ոչ նեղացնել մեր հայեացքը այսօրուայ մանր շահը ի համեմատ: Մեր նեղ հորիզոնից աւելի հեռու ով զիտչ քաղաքակրթութեան վերջնական յաղթանակի համար ապագան ի՞նչ է վերապահել այս երիտասարդ, ուժեղ, ազգերի համար, որոնք ազատուելով թիւրքական անարդութիւններից, և ձևոք բերելով պատուաւոր և ապահով կեանք, գուցէ կը տան այդ դժբախտ Արևելքին բարօրութիւն, խաղաղութիւն և հին դարերի փառքը:

Ճէմս Բրայս

## ԹԻՒՐՔԻԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ \*)

### III

Ռեֆորմների անկարելիութիւնը տնտեսական կեանքի տեսակէտից:

Ներկայ գլխում մենք՝ մտավրութիւն չունենք նկարագրելու հջույնը թիւրդերի խստութիւնները, ոչ ալբանանիների յարաբերութիւնը թիւրքանպատակ քրիստոնեաների հետ և ոչ էլ թիւրք կառավարութեան քաղաքականութիւնը դէպի իր հոգատակ ազդութիւնները: Քաղաքական այն անթիւ հալածանքներն ու տանջանքները, որոնց ենթարկուած են թիւրքիայի քրիստոնեայ ազգութիւնները ներկայումս ծանօթ է մինչեւ իսկ Եւրոպային: Աւելի ևս, 90-ական թուականների զեպքերից յետոյ, ոչ Եւրոպայում էլ չի համարձակւում, ինչպէս սրանից շուրջ 10—12 տարի առաջ, պնդեց թէ մակելունացիների կամ հայերի մասնաւոր կամ ընդհանուր կոտորածները հնարովի պատմութիւններ են. փաստը, տառմ ենք ապացուցուած է, որ կոտորածները հետևանք են թիւրքիայի ընդհանուր քաղաքական ու տնտեսական բեժիմի:

Մենք ուզում ենք կանգ առնել միայն իրերի տրամարանութեան վրայ, որոնք պարունակում են երկրի տնտեսական-ֆինանսմելան ձեների մէջ և որոնք բացատրում են հետեւակ պատմական իրողութիւնը թէ՝ ոչ մի մասնաւոր քարենորդութիւնը, ոչ մի մասնաւոր ընդունութիւնը: Իհարկէ եթէ Եւրոպական զիսլոմատիան ընդունէր այն ակտիօնան, որ արևելան հարցում, ինչպէս և բոլոր հասարակական-պատմական կնճռոտ հարցերում՝ յայտնի հասարակական երևոյթները—անխուսափելի ծնունդ են որոշ քաղաքական-սոցիալական պատճառների, այն ժամանակ, ասում ենք, մասնաւոր ընդունութիւնների անկարելիութիւնը ինքն ըստ ինքեան կը պարզուէր: Եթէ եւրոպական զիսլո-

\*) Տես «Մուլճ», № 5.

մատիաննեղութիւն կրէր ծանօթանալ (կամ եթէ ծանօթէ յայտնէր) ամբողջ թիւրք պետութեան արդի սոցիալական-տնտեսական զրութեան հետ այն ժամանակ գուցէ նրա տուաջարկած րեփորմների անպէտքութիւնը և նրանց չիք դերը ակներեւ կը լինէր թէ իրան տիպումատիային և թէ բազմաթիւ եւրոպացիներին: Եւրոպացիների համար պարզ կը լինէր, որ քանի թըրքահայուսանում ու Մակեդոնիայում գոյութիւն կունենան տիրող սոցիալական—տնտեսական յարաբերութիւնները, ոչ մի մասնաւոր բեֆորմ, լինի գատառուանական, ոստիկանական, թէ ժամանարմական չի կարող մաղի չափ անզում քրիստոնեաների զրութիւնը բարուաքել: Ընդհակառակը՝ շատ անզոմ մասնաւոր բեֆորմները այն ել զրսից թելազրած, այսինքն եւրոպական տէլութիւններից առաջարկուած բեֆորմները—ճակատագրօրէն կարող են զարթեցնել ու գրգռել թիւրք կառավարութեան ու տիրող տարբերի ֆանատիկուութիւնը, կրքերը և նրանց «չար կամքը» գէպի հպատակ այլազգիները: Որպէս պերճախօս ապացոյց մեր ասածին կարող ենք մասնացոյց անել Թիւրքիայի պատմութեան վրայ 19-րդ գարում: Այդ պատմութիւնից մենք պարզորէն տեսնում ենք, որ մինչև իսկ երբ ինը Թիւրքիան պատրաստականութիւն է յայտնել և ուղեցել կառավարական որևէ ճիւղում բեֆորմներ մտցնել իր պետութեան մէջ՝ անկարող է եղել. ուստի և այս կամ այն բեֆորմի ընդունուելը կամ խօստումը սուլթանների կողմից՝ միհնոյն է ոչ մի զրական եղբակացութեան չի յանդի:

Այդ բազմաթիւ մասնաւոր բեֆորմների և աւելի ևս բազմաթիւ խօստումների մասին մինք գեռ կը խօսենք ներքն. այժմ անցնենք այն նիւթական պատճառներին, որոնք թէ Մակեդոնիայում և թէ Թւրքա-Հայաստանում ծնեցնում են անորմալ հաստրակական հետևանքներ, ինչպէս օրինակի համար կողոպուտ, կեղեքում, ապատամբութիւն, գաղթականութիւն, իսկ եւրոպայի աչքում Արևելեան հարց և պատերազմական պատրաստութիւններ:

Կարծել, որ Թրքահապատակ ազգութիւնների գժգհոութիւնը անպատճան Թիւրքիայից զատուելու տանջանքից է բղխում —խոշոր սխալ է. աշխարհագրական քարտէզների փոփոխութիւնները չեն, որ զրաղեցնում էին և զրադեցնում են հային կամ մակեդոնացուն, այլ հարստահարութիւնները, կեսմքի ու կայքի անապահովութիւնը, անվերջ մասնկութիւնները ու տնտեսական քայլայումը, մի խօսքով հստարականն անտեսական դրութիւնը: Եւ այդ խօսքերի տակ նախ և առաջ հասկացւում է մի որևէ երկրի թէ ժողովրդի և թէ կառավարու-

թեան հարստութիւնը, հողագործութեան, վաճառականութեան ու արդիւնագործութեան զարգացումը. իսկ միւս կողմից այն նիւթական-իրաւական յարաքերութիւնը, որ գոյութիւն ունի կառավարութեան ու ժողովրդի մէջ և որը հարկերի, տուրքերի և այլ ձևերն է ստանում:

Որո՞նք են կառավարութեան ու ժողովրդի այդ փոխադարձ յարաբերութիւնները:

Թրքահապատակ ազգութիւններից, մանաւանդ մակերոնացիներից և հայերից վերյած հարկերը թէ քանակութեան և թէ հարկանաւարքութեան կողմից անտառնելի են: Բեռնաւորուած ահազին հարկերով՝ նրանք կեանքի ամեն քայլում սայթաքում, չախախտում են այն բեսի տակ:

1855—մինչև 1895 թ. աւելի շատ սնանկութիւններ են եղած Թիւրքիայում, քան թէ 50 տարուայ մէջ:

Մի կողմից տուրքերը կը կնապատկւում են, միւս կողմից յոդած երկիրը էլ զլանում է տուատ բերք տալ: Բայց հարկերը ոչ թէ միայն գումարի տեսակէտից ժողովրդի նիւթական ոյժից բարձր են, այլ և այդ հարկերի ձեւը, այն փողային և ոչ թէ ապրանքային սիստեմն է, որ եռապատկւում է նրանց ծանրութիւնը և կեանքը անկարելի դարձնում:

Բանը նրանումն է, որ 1878—79 թուականներից յետոյ, Թիւրքիայի ֆինանսների սնօրինութիւնը վաստօրէն անցաւ երոպական պետութիւնների ձեռքը՝ նշանակուեց Թիւրքիայի պարտերի վճարման (ամորտիվացիս) ամենախիստ պահանջ. ուստի թիւրք կառավարութիւնը սկսեց իր պարտքերը կամաց կամաց ժողովել ոչ թէ ապրանքով, այլ փողով: Եւ դա մի այնպիսի երկրի ժողովրդից, որտեղ գոյութիւն չունի կանոնաւոր վաճառականութիւն և ոչ էլ խոշոր արդիւնագործութիւն: Այս հանգամանքը, որի վրայ շատ բիշ ուշադրութիւն են դարձնում երոպացիները ահազին փոփոխութիւն մացցեց թրքահապատակ ժողովրդի հասարակական-քաղաքական կեանքում:

Կառավարութիւնը ստիպում է հարկերը վճարել փողով՝ արծաթով կամ այլ մետաղով՝ առանց մի բռպէ ուշադրութիւն դարձնելու, թէ մրտեղից, օրինակ, Մուշի կամ այլ գաւառի գիւղերը կարող են փող մատակարարել Գուցէ կարելի է ծախել հաց կամ այլ ապրանք: Իսկ կան արդեօք այն պայմանները, որոնք կարելի են դարձնում որևէ, գէթ նախնական վաճառականութիւն, ծախել աշխատանքը... իսկ ուր են այն իւրական պայմանները, որոնցով վարձու աշխատանքը կարելի մնէր կանոնաւորապէս ի գործ ածել: Արդիւնաբերել գործարաններում... Բայց չը որ գործարանական արդիւնաբերու-

թեան կինսունակութեան համար պէտք է էլի փողով ծախել, իսկ ժողովուրդը ոչինչ չունի, որ գնի. շլան նոյնպէս ճանապարհներ, որպէսզի արդիւնարերուածը—արտահանուի:

Զկայ տնտեսական նախաձեռնութիւն, այլ կայ կառավարութիւնից տրաշտպանուած վաշխառութեան սխառամ: Կան, չնորհիւ հարկահանութեան փողային սիստեմի—նոր և ընդարձակ պահանջներ—բայց ամեն ինչ կաշկանդման է հնիթարկեռու, որովհետեւ չկան յարմար հաղորդակցութիւններ, թէ գաւառներում և թէ զաւառներից զուրա:

Զկայ մինչև իսկ թէ ճանաւոր և թէ հասարակական սեփականութեան ապահովութիւն: Աւելորդ է ասելն էլ, որ Թիւրքիայի արդի տիրող քաղաքական-ֆինանսական պայմաններում ոչինչ չի կարող զարգանալ և լայն ծաւալ ստանալ:

Մի կողմից մհծանում է հողագուրկ գիւղացիների քանակութիւնը, միւս կողմից խոշոր արդիւնարերութեան բացակայութեան պատճառով նոյն հողագուրկ գիւղացիները դադիւմ են երկրից զուրս: Միշտ աչքի տուած ունենալու է այն հանգամանքը, որ Թիւրքիայում համարեա ամենայն ազատութեամբ ներմուծւում են երոպական գործարանական ապրանքները: Եւ Լէյպցիկի կամ Վիեննայի այս ինչ ապրանքը մտնելով մի որևէ Մոնաստիր կամ Մարդուան, տեղն ի տեղը ոչնչացնում են տեղային արհեստաւոր դասակարգի արդիւնարերած ապրանքները: Շնորհիւ շատ սլայմանների այդ ապրանքները անհամեմատ աւելի լաւ լինելով հայերի, մակելունացիների, թուրքերի տնային և գործարանական արդիւնարերութիւնից—վերջինս անկարող է մրցել Լէյպցիկի կամ Վիեննայի մեքենայական սիստեմի գէմ և քայլքայլում է: Եւ որովհետեւ թրքաց գաւառներում չկայ խոշոր արդիւնարերութեան համար իրաւական մթնոլորտ, ուստի քայլքայլուած արհեստաւորը հետեւ լով քայլքայլուած գիւղացուն՝ ձեռք է առնում գաղթականութեան ցուլը և օտար վայրեր է ճանապարհ ընկնում:

Այդ նոր վայրերումն է, որ նա զարգացնելու է արդիւնագործութիւնը, որպէս պրոլետարիատ: Իսկ ի՞ր մօտ—իր մօտ, իր երկիրը անապատ է դառնում, որովհետեւ ոչինչ չէ պաշտպանուած, ոչ աշխատանքը, ոչ կեանքը և ոչ էլ մինչև իսկ կապիտալը: Եթէ գոյութիւն ունենային այն տարրական իրաւական պայմանները, որոնց մթնոլորտում մասնաւոր սեփականութիւնը ապահոված է—գուցէ հէնց աւստրիացի, գերմանացի կամ ֆրանսիացի կապիտալիստները շտապէին գալ Թիւրքիա և այնտեղ հաստատուելով՝ բանային խոշոր գործարաններ ու շահագործէին էժան, առաս ու անգործ գիւղացու ձեռքերը:

Բայց այդ մինուրալը բացակայում է և գերմանացին գերադասում է արտադրել իր պետութեան սահմաններում և միայն յետոյ մատուկարարել ասիական երկրներին:

Ad valorem—մաքսը օտար ապրանքների վրայ ինքն ըստ ինքեան մի բացառիկ գործօն է մի որեւէ երկրում խոշոր արդինաբերութեան զարգացման համար: Քանի որ սեփականութիւն անձեռնմխելիութիւնը ու հովանաւորող տարիքները գոյութիւն չունին Թիւրքիայում, նա չի կարող մըցել այն երկրների հետ որոնք կապիտալիստական ուղիի վրայ են կանոնած: Եւ հէնց նոյն խոշոր պետութիւններն և կամ նրանոց կառավարող կապիտալիստական դասակարգն է, որ անասելի եռանդով հակառակում է Թիւրքիայում մտցնուելիք հովանաւորող տարիքների դէմ, որովհետեւ եւրոպական զործարանական ապրանքները այդ տարիքների ու մեծացած մաքսի պատճառով շատ աւելի քիչ կարող են ներմուծել Թիւրքիա, քան թէ մինչև այսօր:

Բացի այդ կան և այլ պատճառներ. ինչպէս զարգանայ խոշոր գործարանական՝ արդիւնագործութիւնը, երբ երկրում նախ և առաջ պակասում է ածուխը, եթէ չհաշուենք նաւթը ու ջրվէժները, որ գործ չեն ածուում): Ճիշտ է ածուխը գոյութիւն ունի Փոքր Ասիայում, բայց միայն, «Երէզլէ»-ի հանքն է որ շահագործում է, այն էլ սահմանափակ քանակութիւնը: Թըրքաց Հայաստանում, Երզրումի մօտերը գտնուած են մի քանի ածխի հանրեր, բայց ինքը Թիւրք կառավարութիւնը ամեն միշտոց գործ է ածում կոնցեսուիա չտալու համար<sup>1)</sup>: Արգելուած է ձեւը տալ նոյնպէս Թոքատի ու Վանի շրջականներում գըտնուած ածխի շերտերին:

Քանիյս եղել են դէպքեր, երբ եւրոպացի կապիտալիստներ եկել են Փոքր Ասիայում գործարաններ բանալու նպատակով, բայց հանդիպել են անվիրջ ձևակերպութիւնների, բաղմատեսակ «բարշիչների», այնպէս որ գործը գետ չոկած՝ կապիտալի կէսը «անհրաժեշտ ծախսերի» մէջ մսխել ու գործը հէնց իր սաղմում սպանել են:

Միայն մի դէպքում Թիւրքիան առատ սերմեր է տալիս կապիտալիսմի զարգացման համար, դա ինչպէս ասացինք հոգագուրկ ժողովրդի պրոլետարիակացիան է (սեփականազուրկ դառնալը): Բայց պրոլետարիատը մենակ, առանց միւս նիւթական ու իրաւական պայմանների դեռ չի կարող զարգացնել կապիտալիստական արդիւնագործութիւնը: Աղքատոցած և որեւէ

<sup>1)</sup> Տես Bul. de la chambre de commerce franc. à Constantinople, janvier 1892.

նիւթական սեփականութիւնից զուրկ հողաղործների մի մասը մնում է գիւղում, տանելով իր չարքաշ կեանքը. դրանց դրութիւնը շատ աւելի վատ է քան թէ արդիւնաբերական քաղաքների բանտարների զրութիւնը: Այդ սեփականապուրկ գիւղացին գտնում է խոշոր քիւրդ կամ ալբանացի հողագործների, «աղա»ների մօտ սարկութեան մէջ, խօսրիս կատարեալ նշանակութեամբ: Իսկ սեփականապուրկ գիւղացիների միւս մասը, հայերը թողնելով իրանց տունը, տեղը, ընտանիքը—գաղթում են դէպի օտար երկիրներ՝ գլխաւորապէս խոշոր արդիւնաբերական կենտրոններ՝ Բաթում, Բագու, Օգևսա, Նովորոսիսկ, Բուրգաս, Լին-Մաս, Նիւ-Եօրիլ, Զիկագօ, Նոյնովկս Կ. Պոլիս և Զմիւռնիա: Եւ այդ կենդրուններում մանելով տեղական արդիւնագործութեան մէջ, որպէս վարձու բանտար, հայ գաղթականը մեծացնում, լայնացնում է այդ վայրերում գտնուած օտար պրոլետարիատի շարքերը: Ամերիկայում կարելի է հաշուել մօտ 40 հաղար, նոյնքան էլ, զուցէ և աւելի նուսասատնի ծովտինեայ քաղաքներում: Բայց այդ երկիրներում արդէն նրանք ոչ թէ հայ պրոլետարներ են, այլ ամերիկացի, ուսւ, և այն պրոլետարիատ:

Թող թէ այդ հայ բանուորը պահպանած լինի իր կրօնը և լեզուն, բայց քանի որ նա իր սեփական հայրենիքում և ծննդավայրում չի խաղում պրոլետարիային յատուկ հասարակական-քաղաքական գերը, քանի որ նա չի մասնակցում իր հայրենի երկրի հարստութեան կուտակման գործում—ուստի և նա չի կարող որեև սոցիալական գեր խաղալ, որպէս հայ պրոլետարիատ, իր երկրից գուրա: Պրոլետարիատին յատուկ, բնորոշ հասարակական գերը նա խաղում է այն երկիրների վերաբերմամբ, որը և շահագործում է նրա մկանացին կամ մտաւոր ոյժերը, ոյժերը, որ նոյն երկրի հարստութեան կուտակման գործին են ծառայում:

Ոչ մի տեղ իրերի զրութիւնը այնքան հակառութեան մէջ չէ ձգել իրաւական և տնտեսական փոխագալք յարաբերութիւնները, որքան թիւրքիայում: Այդտեղ ներկայ քաղաքական պայմաններում և ունեորի և չունեորի շահերը պահանջում են թրքաց միավետական կարգերի ոչնչացումը, որոնք իրանց կառավարական, հարկացին և ֆինանսական սխոտեմներով ու ձեերով վերոյիշեալ երկու դասակարգերի զարգացման ու շահերի համար էլ արգելք են, աւելիչ են, վնասակար և իրանց էութեամբ անհամապատասխան թիւրքիայում ծագող տնտեսական նոր յարաբերութիւններին:

Սրանք այլևս պահանջում են, հասարակական-քաղաքա-

կան նոր, բոլորովին տարբեր դասակարգեր՝ համաձայն այդ նոր յարաբերութիւնների էռթեան, ներքին տրամաբանութեան: Կարո՞ղ են այդ բոլորը անել, հատուկառ, պոչատ, մասնաւոր բեֆորմները: Ի հարկէ ոչ:

Հէսց այդ նոր յարաբերութիւններն են, որ պատմական քեմի վրայ են հանել մի հայկական, մի մակելոնական դատ, որը այդ ազգութիւնների տնտեսական և հետևապէս քաղաքական-հաստարակական ընդհանուր առաջադիմութիւնան ու զարգացման դատն է: Հէսց ինըը անսեսական կեանքը պահածում է, որ Թիւրքիայում կերպարանափոխուեն քաղաքական, իրաւական ու սոցիալական յարաբերութիւնները:

Այլ խօսքով կեանքի ներքին, նիւթական իմաստը ուսել է մինչև այն աստիճան, որ էլ արտաքին ձեզ անբաւարար է դասնում և կեղեց պատառում է: Մյու պրոցեսը մարդիկ ապստամբութիւն են անուանում: Պատմութեան տեսակէտից այդ պայմաններում է հայ կամ մակելոնական հարցի մեկնաման կէտը: Պէտք է որոնել հէսց այդ տեղ և ոչ այլ տեղ հայկական և մակեդոնական խլուտումների, ապստամբութիւնների շարժափթը: Հէսց այդ նիւթական պայմաններովն է բացատրում և այն պատմական իրողութիւնը, որ հայերը կամ մակեդոնացիները հարիւրաւոր տարիներ իրքեւ «ամենախաղաղ» և «հատարիմ ազգ» հոչակուելուց յետոյ, միայն վերջի 20—25 տարիները նրանք սկսեցին սիստեմատիկաբար ապստամբուել: Սուլթանը թւում է որոնել բոլոր աղէտների պատճառը մի Սոֆիայում, մի Փընուում կամ Պարիզում ու Լոնդոնում—մինչդեռ իր բայքայուած երկրի անտեսական ու ֆինանսական սիստեմը անսպառ աղբիւր է ներկայացնում ամեն տեսակ զժողութիւնների, որոնք քաղաքական ապստամբութեան ձեր տակ են երեան դալիս ժամանակ առ ժամանակ:

Ի՞նչ պարզ կը լինէր ժողովրդների պատմութիւնը և ի՞նչ նեշտ կը լինէր մարդկային պատմութեան բացատրութիւնը եթէ ժողովրդների զժողութիւնը բացատրելու և հասկանալու համար մենք որոնէինք մի. քանի անհատների, մի քանի Սարաֆովների, Մուրատների և այլոց չար կամ բարի կամքի մէջ...

Կայ աւելին, նոյն իսկ թրքանպատակ ազգիրի ճակատագիրը երբէք կախուած չէ որեէ բարի կամ չար սուլթանի քը-մահաճոյքից: Որոշ և մասնաւոր զէպքերում, սուլթանի չար կամը քանից յայտնուել է, և նա արդէն պատմութեան մէջ կապստոնի բերնից իր անունը ստացել է,—խօսք չունենք. բայց հազիւթէ նա իր բարի կամքով վաղը կարողանար բարուքել իր հապատակների գրութիւնը, գործադրելով այս կառ

այն մասնաւոր բեֆորմները։ Այդ բէֆորմների ամբողջ պահելարութիւնը տեսնելու համար անհրաժեշտ ենք համարում մի քանի խօսք ասել թրքահալատակ հայ և մակեդոնացի ժողովրդի տնտեսական-սոցիալական պայմանների մասին։

Յայտնի է, որ մի երկրի ժողովրդի, այն էլ հողագործ ժողովրդի համար կենաքի ամենածանր ու ամենաէական դըմուարութիւնները կայանում են հարկերի ծանրութեան և այդ հարկերի վճարման ձևի մէջ։ Հարկերի քանակութիւնը ու տեսակները թիւրքիայում բաւականին առատ են, մի քանիսը նըրանցից գոյութիւն ունեն մի քանի գարերի ընթացքում, միւսները ներմուծուած են 19-րդ դարու վերջի բառորդում։ Հարկերից ամենանշանաւորն է իր ծանրութեամբ ու պատմական հետևանքներով «տասանորդ» կոչուածը, որ կայանում է հետևեալում։ կառավարութիւնը նախօրօք աճուրդով է ծախում ցանքսի մօտաւորապէս ստացուելիք արդիւնքը ամեն մի վիւայէթի համար առանձին առանձին։ Այդպիսով ամեն վիւայէթի տասանորդը աճուրդից զնած մի որևէ անհատի կողմից—նորից ծախում է երկրորդ կարգի սպեկուլեաններին։ իսկ սրանը բաժանում են վիւայէթը սանջակների և ստացուելիք տասանորդը ծախում են մաս-մաս զանազան անհատների։ Եւ որովհետեւ ամեն մի զնողը ստիպուած է նախ և առաջ իր ծախում փողը յետ առնել ապա և բացի զրանից մի որևէ գումար վաստակել՝ կարելի է երեակայել, թէ ինչ մեծ զանազանութիւն է լինում կառավարութեան ստացած տասանորդի ու գիւղացիներից վիաստօրէն վերցրած տասանորդի մէջ։

Ցանքսի տէրը, գիւղացին, համարեա միշտ պարտքերի տակ բեռնաւորուած, անհամբեր սպասում է իր բերքի ծախելու բոպէին։ Բայց երբ նա արդէն հնձել է իր ցորենը, նա դեռ ստիպուած է կալսելուց առաջ սպասել երկար օրեր, մինչեւ իսկ շաբաթներ, մինչեւ որ տասանորդի տէրը բարեհաճէ գալ և նըրանից վերցնել պատկանելիք տասանորդը։ Տասանորդի տէրը որը ընդհանրապէս հացահատիկների վաճառական է, օգտում է այդ վրութիւնից՝ ստիպելով հայ կամ մակեդոնացի գիւղացուն հանդիսատես լինել իր ցանքսի փոտելուն՝ դաշտում, բաց օդի տակ։ Հէսց այդ ժամանակ տասանորդատէրը այցելում է գիւղացուն և իրան պատկանելիքը վերցնելուց յետոյ հարկադրում է անկողմնակի կերպով իրան ծախել և «աւելորդ մասն էլ», ամենաէժան գնով։ Աւելորդ է ասել, ոչ հարկահանը մենակ չի գալիս։ Նա իր կարգադրութեան տակ ունի կառավարական պաշտօնեաններ, զափիթիաններ, իսկ գլխաւորը բերել է իր հետ գիւղի մուխտարին, որոնք ամենայն պատրաստականութեամբ

զսպում են զիւղացու դժգոհութիւնը։ Հարկահանը պէտք է ստանայ իր պահանջը ինչ ձևով էլ որ լինի. ուստի եթէ գիւղ դպցու բերքը ոչինչ տուել նա հէնց տեղն ու տեղը բանի ծախում է գիւղացու ամենակարեսոր տնային պիտոյքները և ինարկէ չափաղանց էժան գնով. ոչխարն ու կովը, էշն ու եղը, տան կահ-կարասիքը, անդամ անկողինն ու վերմակը, մինչեւ որ պատկանելիք, հարկը ստացուի. բողոքները աւելորդ են։ 1894 թ. հայկական գաւառների մասնաւոր շարժումների արձատը պէտք է որոնել հէնց այդ հարկահանների և պաշտօնեաների հարստահարութիւնների մէջ, որոնք վերջացան սարսափելի կոտորածով։

ՈՌՈՒԷՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

(Կը շարունակուի)

## ՄԵՐ ԴԺԲԱԽՏՈՒԹԻՒՆԸ

(Պատմուածք)

Ես պառկած, ծխում էի անդադար։ Երեսակայութիւնս ստեղծում էր հարիւրաւոր պատկերներ՝ մէկը միւսից սքանչելի, մէկը միւսից այլանդակ։ Այնպիսի երազողներից եմ ես, որին՝ որպէս սասլատողին՝ միայն գերեզմանը կարող է ուղղել։ Ոչ կեանքի գաւն փորձերը, ոչ սպիտակ թելերը, որոնք գաւաճանօրէն խառնուել են մազերիս հետ, չզրկեցին ինձ այդ յատկութիւնից։

Իմ հին բարեկամ Մուրէնը՝ նստած սեղանի մօտ՝ խորասուզուել էր ընթերցանութեան մէջ։ Այդ մարդը՝ որը թէն կեսմբի կէսը անցրել էր նիւթապաշտ քաղաքում, ուր ամեն մի զգացմունք զոհ է բերում ոսկի հորթին, այսուամենայնիւ չէր բաւականանում այն նեղ շրջանակով, որի մէջ նրան սահմանափակում էր արհեստը։ Դիտութեան ծարաւը մեծ էր. նա ուսումնասիրում, վերբուծում էր ամեն մի երևոյթ, որի վրայ կանգ էր ասնում իր ուշադրութիւնը։ Դուցէ հէնց այդ հանգամանքի շնորհիւ չընկղմուեց այն ճահճի մէջ, որը բոլորին քաշում էր, խոբանուզում։ Երկար տարիներ վարակիչ մթնու

լորտի մէջ ապրելով, նա չէր կորցրել մարդավայշիլ կերպարանքը. զիտէր և նուրբ զգալ և կարեկցիլ ուրիշի տանջանքին...

Ես նայում էի նրա զունաս, ջղային գէմքին, ունփերի մէջ խորը ընկած ակօսին և ենթաղբութիւններ էի անում՝ թէ ի՞նչու այդ երեկոյեան սովորականից աւելի ախուր, աւելի մտախոհ էր նա...

— Դէս ձզի՞ր զիրքդ, — չհամբերեցի ես, — ի՞նչ ես զլուխց ցաւցնում... Զարմանում եմ... Եւ մի՛թէ այդ փիլիսոփաների իմաստուն մեկնութիւնները կարող են քեզ բաւականաչափ գոհունակութիւն պատճառել... Կեանքը աւելի ուժեղ է... Հաւատացիր... այն՝ ինչ որ կարող են անել մի զոյզ զեղեցիկ աշքեր, որոնք համակրութեամբ նայում են քեզ, սակածում հոգիների լուր ներդաշնակութիւնը, այդ աշքերը կարող են աւելի մեծ հրաշք դործել, քան այդ հաստ ու անհամ զբքերը...

— Դրաւանիր, որքան կտմնաս, թէկուղ մինչև խիլացնութիւն... Բայց ուրիշներին մի խանգարիր... պատասխանեց նա զժգոնութեամբ. քու թերահաւատութիւնը զէսի զրքերը, և զիտութիւնը... անհիմն են... Հաւատացնում եմ քեզ... Եթէ մարդկութիւնը սանձահարէր իր զազանային ընապղումները և արիւն թափելու փոխարէն հետևէր զիտութեան հիմունքներին, երկրագունզը զբախտ կը լինէր զարձած... Ի՞նչ ոյժեր... հոկայական ոյժեր է կլանել կործանման ողին: Ստեղծագործելու փոխանակ, աւելի է երկիրը, նրա ամինալաւ նիւթերը ծծել... Ի՞նչ է ներկայացնում համաշխարհային պատմութիւնը, եթէ ոչ անթիւ կոտորածների, ահաւոր պատերազմների ժամանակագրութիւն... Նոյնիսկ զերագոյն, վեն զաղափարները՝ յաղթանակ տարել են արիւն թափելով... Սոսկալի իրողութիւն... Վերցնենք մեր պատմութիւնը... Հաղիւ քայլայուած երկիրը կամեցել է ուշիքի գալ մի արշաւանքից, թափուել են միւս բարբարոսները... Ենթաղբիր մի բոպէ, որ մարդկային հանճարը ծառայէր միայն խաղաղ բարեկարգութեան... իշխէր միայն զիտութիւնը... Նրա օրէնքները... կրկնում եմ երկրագունզը զըրախտ կը լինէր...

— Բաւական է... թող... — կանդնեցրի նրա խօսքերի հոսանքը, — թող այդ համաշխարհային վիշտը... Ի՞նչ ենք ներկայացնում մենք անհունի մէջ... չնչին հիւլէ... Նստիր այստեղ... ինձ մօտ... վազը զու կը ճանապարունես... Թվ զիտէ... գուցէ երկար ժամանակ իրար չենք հանդիպելու... Ի՞նչ օտարութիւնը է... մարդիկ մօտենում իրար... Ելի նորից բաժանւում... Դեռ չվայելած տեսութեան զուարձութիւնը, զգում ես

բաժանման կողին... Դու վազը ճանապարհուում ես... Գուցէ նորից չտեսնուենք... իսկ թնջով ենք մենք գրադուած... Ես դիտում եմ թէ որպէս են անյայտանում ծխի օղակները... իսկ դու... լուս ու մունջ նստած ես... որքան անտարբեր ենք վերաբերում իրար, սամասփրտ... բայց դա սուտ է... արդարացի ենթագրութիւն չէ... Դու կը հեռանաս, ես կը մտարերեմ քեզ և ինձ կ'տանջի այն միտքը, որ չկարողացայ քեզ հետ մտերմանալ, ամրապնդել հին կապը, ուսանողական նոտարիանի վրայ զօդուած և մինչեւ անգամ... չծիծաղես միայն... որոշ չափով չփաղաքշեցի քեզ... Վաղեմի բարեկամներ... Գիտես... դա հազուազիւս երեսյթ է: Մեր գարում, երբ ուկին ժամանքի նման ուտում է մարդկանց սրտերը, անշահասէր յարաբերութիւնը, ազատ՝ արծաթասէր հակումներից, արժանի է ուշագրութեան...

—Ներիր ինձ... դու արդարացի ես... Ես մի փոքր ինձ լաւ չեմ զգում, ջղերս անհանգիստ են, իսկ ոչ մի բան այնքան չի հանգստացնում, որքան սրամիտ, տաղանդաւոր գրուածքը...

Ռուբէնը բարձրացաւ տեղից, վակեց գիրքը, վառեց պատպիրոսը.

—Եյս... ժամանակը մեր թշնամին է... Մեր կեանը արդէն սկսում է մարել... անցնում են տարիները, ապա ուրիշն և երիտասարդութիւնը և խանդավառութիւնը... բայց թնջն է աւելի վիրաւորական, այն որ զգնում ես, թէ կեանք կարծ է, իսկ դու ապրում ես, այսինքն կատարում մի շարք անմիտ գործողութիւններ որոնք ոչ քեզ և ոչ մերձաւորիդ ոչ մի բաւականութիւն չեն պատճառում: Ես հասկանում եմ. երբ մարդ կարողանում է իր յետեից որոշ պայծառ հետք թողնել, շրջապատողներին տալ որևէ հանճարեղ միտք, գիւտ, կամ ինքը զգում է, ասլում է ամրող էութեամբ ուժգնօրէն, գոնէ կարծ ժամանակով կարողանում է առօրեայ կեանքի դատարկութիւնից բարձրանալ: Երբ բացակայում են նրանք և մարդ ապրում է միակերպ, մի օրը միւսին նման, մինչև ձանձրոյթ ուղղուանք, կեանքը ուղղակի կորցնում է իր նշանակութիւնը...

Ռուբէնը մերթ ջղայնաբար քայլում էր, ձեռքերը մէջ-քին ծալած, երբեմն կունդ էր առնում, ուսը պատին գէմ տալիս:

Ես ծիծաղով դիմեցի նրան.

—Յեղ համար գեղեցիկ զամբանական եմ պատրաստում... լոիր... այսպէս կըսկսեմ.

«Եյս մարդու հոգիոր պահանջները աւելի մեծ էին, բան

իրականութիւնը և դարը կարող էին նրան բաւականութիւն տալ...

—ի գուր են քո կատակները, ես կ'ապրեմ այնքան, մինչև բնական ժահը կը կտրի իմ կեանքի թելը...

—Ռուբէն... ի՞նչու ես մոայլ տրամադրուած, եղբայր... աշխարհի ցաւը քեզ չեն տուել... Եղիր զուարթ...

—Եղիր. ասելը հեշտ է, կատարելը՝ գդուար... Շրջապատող կեանքը ազդում է, արտացոլում քո մէջ... Զի կարելի խնդալ, երբ շուրջու սուկ է... որքան աւելի մօտից եմ ծանօթանում մարդկային վշտի հետ, այնքան աւելի մրմուռով նկատում եմ թէ որքան հեռու է մեր կեսմաքը կատարելագործութիւնից։ Հրաւիրում են հիւանդի մօտ. ինչ հոգեկան և մարմաւոր տանջանք է յաճախ թագնուած՝ թաւշապատ սենեակներում... աւելի ես... խոնաւ աղքատ, մոայլ ու յուսահատ ներքնայարկերում...

—Ես կարծում էի՞ թէ այսօր աւելի կենսուրախ կը լինեմ, —ընդհատեցի նրան, —ես քեզ դիտմամբ ծանօթացը ի այն սիրուն աղջկայ հետ, որպէսզի քեզ ապացուցանէ, թէ կեանքը այնքան էլ վատ չէ, որպէս քեզ թւում է... որ նա ունի և պայծառ, ներդաշնակ կողմիր...

—Ես չեմ հերքում...

—Այրուսեամկ... ի՞նչ հրաշալի անուն է... ճիշդ որ նման է վաղորդեան աստղի, որը ծնւում է գունատ շողերի և թարմ հովի մէջ... զգում ես՝ որպէս մեղմիկ զեփիւռ՝ փչում է նա այրուող ճակատիդ, ալարգում մտքերից. թւում է՝ թէ քեզ շրջապատում է աղատ, լայնատարած դաշտ և հոգիդ՝ աղատ հողանիւթ փաթեթից՝ սաւառնում է թեթև, անհոգ, մանկական...

—Բանաստեղծ ես դարձել —լսուեց բարեկամիս անայլայ ձայնը... որքան յիմար ենք տղամարդիկս... Մի զոյգ աչեր, մի ժպիտ և արդէն կորցնում ենք զլուխներս...

—Մի հեգնիր... խոստովանիր... որ ամենալուրջը մեզանից աղատ չէ այն հմայքների աղդեցութիւնից, որով փաթաթում է մեղ սիրած կինը...

—Բնութեան զօրեղ ձայնն է... Սամսոն և Քալիլա... ին առասպել է... Աւելի լաւ է, ուու բացատրիր՝ թէ ինչու կինը՝ եթէ այդքան ուժեղ են նրա զուրգուրանքները, աղատ կամքով շեղում է այդ ճանապարհից, ձգտում է անկախութեան, զիտութեան,

—Զէնքը աւելի ուժեղ դարձնելու... Ժամանակի պահանջ է...

—Գեղեցկութիւնը և անկախութիւնը... եթէ սրանց հետ

միացած չէ կամքի ուժը, եթէ չկան բարոյական որոշ սկզբունքներ, հիմնուած՝ կեանքի անխուսափելի օրէնքների վրայ, փտանգաւոր բարեկամներ են: Հէնց դրա համար՝ մասամբ ինձ պատեց անձկութիւն, թախիծ... Այդ աղջիկը նման է քնքոյշ վարդի, որի թերթիկները անպոյշ, կոպիտ շարժումից կարող են խկոյն թառամել, թափել:

—Ուրեմն, դու կարծում ես, որ նա իր նպատակին չի հասնի...

—Դա ցաւալի կը լինէր, բայց վախենում եմ...

—Դու մոռանում ես, որ նրա ձկտումները մատչելի են, ունեն հիմնաւոր հող: Չէ որ լաւ կրթութիւն է ստացել: Երեխայ հասակից աչքերը բաց են արել, սովորեցրել լուրջ խորհել... Դու նկատեցի՞ր. երազում է մայրէնի զրականութեանը ծառայել և նա՝ այդ մատաղ արարածը արդէն սեփական կամքով՝ ուսումնասիրում է լեզուն և վճռել է արտասահման զրազուել այդ հարցով: Մեր կեանքում զա հազուադիւտ երևոյթ է: Զգիտեմ... գուցէ դա ժամանակի պահանջ է, արդէն հասել է ճգնաժամը, բայց և հիացնում է, հոգիս լցնում բերկրանքով, թէն անսպասիլի, օտարութի երևոյթ է թւում...

Ռուրէնը լուռ ծխում էր, իսկ ես շարունակում էի մտքերս բարձրաձայն արտայայտել.

—Մեր կեանքը հետաքրքիր ընթացք է ընդունում, կարծես սթափուում է երկար քնից... հարստանում է բազմակողմանի երեոյթներով... յառաջանում են այնպիսի հանգամանքներ, որոնց նախատեսել գժուար էր... շնորհիւ դրան՝ կեանքը բարդացել է, զարմանալի կերպարանք ստացել, և գեղեցիկ և՝ այլանդակ... Այդ յորձանքում, անտարակլոյս, շատերը կուլ կը գնան, մինչև որ փոթորիկը հանդարտուի, խաղաղուի... Կատակ չէ... Հին կեանքը ճայթում է, ճեղքւում. աստուածները փշրւում են, նրանց տեղը կառուցանւում են նորերը: Յանկարծ ծայրայեղ կարծիքների տէր երիտասարդի հետ ասպարէզ է դուրս գալիս և մարտնչում մի ուրիշ՝ անդրջրհեղեղեան արարած, որից բորբոնահոտ է փչում: Դրանք անկարող են իրար հասկանալ... իրանց մէջ բացուել է խոր անդունդ:

—Այո... հիմա բացւում է լայն հորիզոն գործելու. տեսնենք... Ի՞նչ ոյժեր են առաջ գալիս... Ո՞վ գիտէ... Գուցէ հէնց այդ աղջիկը որոշ հետք թողնի... Նա և իր նմանները գուցէ ստեղծեն նոր դարեշրջան... այնքան բարոյական ոյժ կայ նրա մէջ, այնքան բնական խելք: Մեր կանայք երկար ժամանակ քնել են, բայց նրանց մէջ թագնուած են թարմ ոյժեր, ինչպէս ածուխի զանգուածների մէջ աղամանդի խոշոր շերտեր...

—Դու զառանցանքի մէջ ես, բարեկամ,—որպէս կոպիտ իրականութեան սթափեցնող ձայն, շշնջաց Ռուբէնի հեղնական ըրքիջը։ Օդային ամրոցների մէջ ես թափառում։ Ի՞նչ կատարեցին նրանք մինչև այսօր... ես հերքում եմ նրանց բարոյական ոյժը...

—Դու խստապահանջ ես... վաղուց է որ ճայ կինը թողեց երեսի քօղը, փոխեց իր գարեւոր հագուստը եւրոպականի... Բայց նա ահագին քայլեր է անում. հաւանական է, անվասահ, դեղևկոտ. շատ անգամ սայթարեւում է նա, շեղում ուղիղ ճանապարհոց... Բայց այդ անխուսափելի է... պատմութիւնը թուիչքներ չի կատարում...

—Ռւսման ծարաւը կայ՝ գտ պարզ է։ Բայց նրան արդիւնաբեր գարձնելու համար, հարկաւոր է խելացի ուղղութիւն տալ նըա ընթացքին։ Ոյժեր շատ են կորչում... ափսոս է... մանաւանդ մեզ համար, ամեն մի անհատ՝ խելացի, գիտուն, եռանդուած մեծ արժողութիւն ունի...

—Ես մի առանձին ընդունակութիւն ունիմ... նախազգացում... վեցերրորդ զգայարանք է... ինչպէս կամենաս անուանիր... Երբ փակում եմ աչքերս, զգացմունքներս նըանում են... առարկաները կորցնում են իրանց անթափանցկութիւնը... օժտում են նոր յատկութիւնով... Իմ մտաւոր աչքերը թափանցում են ժամանակների խորը և իմ սրընթաց միտքը տեսնում է, զգում՝ այն հսկայ հասարակական փոփոխութիւնները...

—Եւ դու երազամոլ, լողում ես վարդագոյն օդի մէջ, կախարդական ամրոցներ ստեղծում... Բայց հէնց որ բաց ևս անում աչքերու... տեսարանը փոխում է... կապոյա եթերից ցած իջնելով, դառնում ես սոսկական մարդ իր բոլոր թերութիւններով...

—Անտարտկոյս... թոյլ չիմ տայ, որ սոտիս կոխեն... Ինքնապաշտանութեան զգացմունքը ընական է, յատուկ է ամեն մի արարածի...

—Դու ինքդ խստովանուեցիր... Ես չէի վստահանալ մեր տեսակցութեան վերջին վայրկեանները թունաւորել վիրաւրանքով։ Բայց միթէ աւելի լաւ չէ իրականութեանը նայել ուղիղ, առանց պատրանքի, ապա թէ ոչ հիասթափումը ծանր կը լինի...

—Ռւբեմն, զու կարծում ես, որ գտ քմահանութիւն է... Թողնենք։ Դիմես՝ ինչ, իմ մէջ զգում եմ բանաւոր ալահանջ քեզ հազորդելու իմ սրտի գաղանիքը։ Այդ աղջիկը ինձ գրաւել է... Եթէ ես իմ մէջ զգայի բաւական վստահութիւն, ասենք, անխոդութիւն՝ յողնած, արդէն բաւականաչափ ապրած մարդու կեանքը կա-

պել նոր բացուող վարդի հետ։ Եթէ ես մոռանայի իմ տարիք... Գուցէ—դու լսնեմ ես—առաջարկեի նրան բաժանել իմ վիճակը, իմ բաղզը..., Բայց ես ինձ չէի ների երբէք, զրկել վառյուսերից, մեղքնել այն՝ ինչ որ կազմում է նրա ամենագեղեցիկ յատկութիւնը...

—Անտարակոյս... իսկ յետմյ դու համոզուած ես արդեօք որ նա կը հասնի իր նպատակին... կը լինի երջանիկ...

Մի ինչ որ նոր արտայայտութիւն կար ընկերոջս ձայնի մէջ և յուսահատութիւն և կտկիծ... Ես բարձրացայ տեղիցս, վերցրի աթոռը, նստեցի։ Լուս նայում էի։ Նա կանգնեց իմ առաջ, ձեռքերը մէջքին ծալած։ Էլէքտրական լոյսի շողը ընկաւ նրա գունատ, ջղային դէմքի վրայց, որ փոփոխուում էր ներքին վրդովմունքից։ Աչքերը յառած անորոշ տարածութեան...

—Լսիր... դու ինձ շատ անգամ ես հարց տուել, թէ ի՞նչու, ես՝ որոշ չափով ունենոր մարդ, ապահով գրութեան տէր, մինչև հիմա մնացել եմ աղատ ամուսնական կապից։ Դա քեզ հանելուկ էր թւում։ Ես միշտ խուսափել եմ պատասխանելուց, միշտ հեղնել, բայց այս երեկոյ խոստովանում եմ... տասնու մէկ տարի սրանից առաջ ես պատրաստ էի այդ քայլը կատարել... միայն՝ յարմար ըստէին չունեցայ բաւականին վըստահութիւն... իսկ յետոյ... ոչ մի էտակ չկարողացաւ ինձ գրաւել, այն աստիճան ասպաւորութիւն ներգործել, որ ես հասնեմ ինքնամուացութեան... Այս երեկոյ... այդ աղջիկը յիշեցրեց վաղուց անցած դէմքը... ժամանակի մթութիւնից հանեց մոռացութեան քօղով ծածկուած տեսքը... Տասն ու մէկ տարուայ ընթացքում մտարերում էի նրան, իսկ վերջերումս ինձ տանշում էր այն միտքը, որ ես զուցէ մեղաւոր եմ նրա դժբաղդութիւն մէջ... որ զուցէ ինձ կը յաջողուէր ստեղծել նրա համար այնպիսի կեանք, ուր նա կը կարողանար իր հարուստ բնական ընդունակութիւնները մշակել...

Թուրէնը տխուր քայլում էր։ Ես նորից պառկել էի և աչքերովս հետևում էի նրա վայելուչ կազմին...

—Դու յիշում ես... շարունակեց նա, ես նորաւարտ գաւառսկան ըժիշկ էի, գլուխս լցուած վեհ գաղափարներով, գեռուսանողական նստարանի վրայց... Ես ունէի միջոց, կարող էի մնալ մայրաքաղաքում, մամնագիտութիւն ընարել, ուսումնասիրել ապագայ ստեղծել... բայց ես իմ բարոյական պարտքը համարեցի... ինչպէս և մենք բոլորս... վերագանալ և մայրենի հողի վրայ գործել... ծառայել մեր ինեղն հայրենակիցներին... Հիմա, երբ ես ակնարկ եմ ձգում անցեալին, ինձ ապշեցնում

է այն փոփոխութիւնը որին ենթարկուել եմ ոչ միայն ես, և ըստ կերներս, որոնցից շատերը միայն մամոնային են երկրպաղում, այլ և երիտասարդները... Կտրուել ենք՝ հեռացել ամեն ինչից... Այն խեղճութիւնը, ագիտութիւնը, որի ականատեսն էի լինում ամեն մի քայլափոխում՝ իմ սիրտը լցնում էր կսկիծով և, իմ ջղերը՝ բնութիւնից ոչ այնքան զօրեղ, երկար չկարողացան տանել այդ կեանքը, կատարելապէս քայլայուեցան: Ես թողեցի ծառայութիւնս, վճռեցի մի քանի ամիս ճանապարհորդել հանգստանալու նպատակով:

\*\*

Զարմանալի է որ, ոչ մի տեղ չի կարելի մարդկանց հետ այնքան հեշտ մտերմանալ, որքան ճանապարհին: Դա հոգերանական մի հանկուկ է, որը կարելի լինի գուցէ բացատրել հետևեալ կերպով. ամեն մարդու մէջ նստած է անդուսպ հակումը ուրիշին հաղորդելու, մասնակից դարձնելու իր թէ ուրախութեանը և թէ տրտմութեանը, իսկ ահը՝ թէ մի գուցէ ծաղրի առարկայ դառնայ իր սրտազեղութներով, նա զապում է իրան, զգուշանում է յայտնել իր ներքին մտածումները այն մարդկանց, որոնց յաճախ հանդիպում է: Իոկ ճանապարհին, այդ ահը չկայ, պատահեց և բաժանուեց, գուցէ յաւիտեան...

Ուղեկիցներս մտերմացել էինք... խօսում, ծիծալում էինք... Հետաքրքիր անձնաւորութիւններ կային... Բժիշկը՝ փոքրահասակ արարած, կենդանի՝ որպէս մնդիկ, խօսում էր անվերջ, կատակներ էր անում, ուղղակի շունչ չէր թողնում քաշելու:

Օրիորդներից մէկը նրա հասցէին ասաց.

— Գիտու՞ք, ես երբէք չէի ենթադրի, որ այդքան լուրջ գիտութիւնը կարելի է ամփոփել այդպիսի թեթևալիք մարդու մէջ:

Սկզբում նա վիրաւորուածի ձև ընդունեց, յետոյ բացատրեց, որ դա ինքնախարէութիւն է, որ նա կատակներով կամենում է իր մէջ խլացնել այն վիշտը, որ պատճառում են բըժժկական արհեստի ծանր տպաւորութիւնները: Գուցէ այդ նկատողութիւնը մասամբ արդարացի էր, բայց անկարելի է հերքել և այն հանգամանքը, որ նա բնութեամբ կենսուրախ էր...

Իմ ուշադրութիւնը գրաւեց և մի միջահասակ կին, խայտաբղէտ հայկական հագուստով:

Նրա հետ էին երկու օրիորդներ, մէկը տգեղ, բայց համակրելի դէմքով, կենդանի, բայց մի քիչ կոպիտ շարժուածքներով՝ սկ, կտրտած մազերով, անհող հազնուած:

իսկ միւսը, երեխ նրա կրտսեր քոյրն էր... Մուրիլօյի քնքոյց վրձինը միայն կարող էր նրա համանմանը նկարել: Կարծես՝ նրա պատկերներից էր ցած իջել: Սև քողը՝ երեսի վերին մասը ծածկելով տալիս էր նրան միանձնուհու արտայայտութիւն:

Երբ բժշկի հետ արդէն ծանօթացել էինք, նա ականջիս փսխոսց.

—Ընկեր... նայեցէք... արդարեւ այս գլուխը արժէր արքայական թագով զարդարել...

Երեակայիր... նրանք զնում էին Զուիցերիա ուսում առնելու: Մայրը ուղեկցում էր նրանց, մի քանի ամսից պէտք է վերադառնար: Նա այրի էր, հասարակ, ոչ այնքան ունեոր վաճառականի կին:

Ինձ համար մինչև հիմա հանելուկ է՝ թէ ի՞նչպէս այդ անկիրթ կինը վստահացել էր ոչ թէ միայն երկու անփորձ աղջիկնեռաւոր երկիր ուղարկելու, նոյնիսկ ինքն էլ էր նրանց ընկերացել, թէս կարճ ժամանակով: Ուղղակի տարօրինակ երեոյթ էր՝ այդ հայ մայրը և գստերը՝ իրանց ձգտումներով գէպի անկախ կեանքը, գիտութիւնը...

Երբ ես գիմեցի մօրը այդ հարցով՝ նա բիթկալը ցածրացրեց և կարճ պատասխանեց.

—Ժամանակիս պահանջն է... քտմին այնպէս է փչում... կրթուած երկրներում աղջկերք ուսում են առնում, գլուխները պահում:

—Ի՞նչ է արդեօք, —մտածում էի ես, —ընական առողջամտութիւն թէ այլոց աղջեցութիւն... չգիտեմ... դժուար էր քացատրել: Պարզ էր միայն այն՝ որ առանց վաղօրօք քննադառութեան ենթարկելու, նա վստահացել էր վճուկ էր այդ հարցը:

—Ո՞ւր էին զնում նրանք միայնակ, օտար երկիր...

...Երկու օր կատարեալ արբեցողութեան մէջ էի գտնուում. ես պատրաստ էի ամեն խելագարութիւն անելու... Երիտասարդական անհանգիստ արիւն էր հոսում երակներումս, որի զօրութիւնը մինչև այդ օրերը ես չէի զգացել... Ի՞նչ զգացմոնք էր զարթնել իս մէջ, չգիտեմ. սէ՞ր էր՝ հիշացք, թէ համակրութիւն... Բայց պարզ էր միայն, որ իմ ամրողջ կեանքում առաջին անգամն էի գլուխս կորցրել... Հրաշալի էակ էր նա՝ այդ աղջիկը. իր պարզ, համեստ զգեստում, ուրախ, զուարթ՝ երգում էր, ծիծաղում... յանկարծ, մէկ էլ տեսնես, երեսը ծածկում տիրութեան քօղով...

—Միանձնուհի, —կըկնում էի ես:

Նա ժպտում էր թեթև և ապա շատ չանցած, մի որևէ է սրամիտ կատակ թոցնում իր շրթունքներից, դանում էր մի չարաձնի երեխայ որին պէտք էր կանգնեցնել խելացնոր շարժումից: Կամ լուս կը նստէր... ապա մելամաղձոտ ձայնով կը սկսէր երազել, թէ ի՞նչ հրաշքներ է կատարելու... Մի անգամ նա հոչակաւոր դերասանուհի էր, միւս անգամ գիտնական: Կամ թէ չէ՝ խոռված, շրթունքները ուոցրած, նա յայտարարում էր. Դատարկ բան է... ես գիտեմ... ոչ մի առանձին չնորհք չունեմ...

Վհատութիւն: Էր թէ կոկէտութիւն՝ դժուար էր որոշել... Ուղղակի ջղերի գունդ էր...՝ գեղեցիկ գունդ...

Մերթ ցանկանում էի առաջարկել, որ նա թողի այդ ցնորքը, վերագանայ և ինձ հետ ամուսնանայ, մերթ վճռում էի գնալ նրա հետ... հեռու... գնալ անվերջ՝ մինչև կը հասնենք նպատակին:

Երբ մօտեցաւ բաժանուելու ժամանակը, նրա աչքերուն երեաց նոր արտայայտութիւն, որից արագանում էր սրտիս բարախումը. և բուռն համակրանք և թախիծ, ափսասանք՝ որ ստիպուած ենր բաժանուելու... Երբեմն ինձ թուում էր թէ՝ մի խօսք, մի շարժում իմ կողմից և նա չի շարունակիլ ճանապարհը... կամ դուցէ միայն թուում էր... չգիտեմ... խափուսիկ զգացմունք...

Հասաւ բաժանման վերջին րոպէս: Մօտեցայ վճռականապէս, վերցրի ընքոյշ ձեռփիկը, կամենում էի խօսել, աղաչելու նա չթողնի ինձ, բայց... մի ինչ որ թուութիւն ինձ պատեց, լեզուս չհնազանդուեց: Ներքին յուզունքը, ներքին ձայնը ինձ ասում էր, որ այդ րոպէն վերադարձնել անկարելի կը լինի յետոյ, որ դա վճռում է երկուսիս ապագան, որ կենաքում պէտք է անմիջապէս զգացմունքով առաջնորդուել... բայց... բառերը սառել էին շրթունքներիս վրայ: Ես կամենում էի բզաւել, մնացիր, — բայց դրա փոխարէն շնչացի.

— Մնաք բարեաւ, օրիորդ...

Երբ հրեղէն աչքերով հսկան, շրխկացնելով իր շրթաները, շարժուեց, ես ուշքի եկայ. կամենում էի թոչել...

— Պարոն, մի մօտենաք... գնացքը շարժուում է, — լսուեց առկանջիս տակ մի հրամայողական և սառնասիրտ ձայն և երկու զօրեղ ձեռներ ինձ յետ մղեցին:

Գնացքը դանդաղ, օձալոոյտ սողաց և տարաւ թանդագին էակը...

Ռուբէնը լոեց... լուս էի և ես:

Նա աչքը յառել էր մնորոշ տարածութեանը, կարծես այն

տեղ հեռուում, փնտռում էր այն բոլորի մեկնութիւնը՝ ինչ որ նրա, կամքի հակառակ կատարուել էր...

—Անցած տարիներ... Ես տեղափոխուեցի մեծ քաղաք,— շարունակեց նա, — ամեն ինչ ինձ յաջողուում էր, ժպտում էր... արդէն հասարակութեան մէջ որոշ ժողովրդականութիւն էի ստացել... կանայք էլ նոյնպէս անտարբեր չէին դէպի ինձ, բայց ոչ որի յաջողուեց լուրջ կերպով գրաւել իմ ուշադրութիւնը. Իսկ ամուսնանալ՝ առաջնորդուելով զուտ հաշւով... Ես անընդունակ էի... բայց այդ՝ պէտք է խոստովանուել, որ ոչ մի առանձին ցանկութիւն չէի զգում զրկուել ակատութիւնից:

Մտարերում էի ես նրան, ճշմարիտ է, բայց ժամանակի ընթացքում այդ պատկերը նուազում էր, յիշողութիւններս հալում էին: Շատ անգամ, թատրոններում, երեկոյթներում, վողոցում, հրապարակում ամեն մի պատահական կնոջ դէմքի վրայ փնտռում էի այն զծագրութիւնները որոնք ինձ գերելէին և եթէ գոնէ հեռաւոր նմանութիւն գտնում էի կազմուածքի կամ մի որ և է շարժումի մէջ, սիրտս սկսում էր ուժգին բարախել:

Ինչպէս զիտես, ես սոսկալի ծանրաբենուած եմ գործերով և ուրեմն սակաւ եմ դուրս գալիս զուտ իմ զուարձութեան համար: Բայց երբեմն՝ լաւ եղանակին՝ ես սիրում եմ գնալ հասարակական այգին և մի կէս ժամ հրապուրուել հրախաների խաղերով: Սիրում եմ այդ փոքրիկ մարդկանցը, որոնք այնքան մաքուր են, անարտ, բայց աւանդ, յետոյ զառնում են նոյն հրէշները: Նայում եմ դրանց, և շատ անգամ թախիծ է պատռում ինձ... զույց բնութիւնն է վրէժինդիր լինում, խուլ բողորում, որ նրան շեղել են ուղիւ ճանապարհից: Իմ հոգու մէջ այդ պահանջը մնացել էր սննդառական...

Անցեալ տարի մի մանուկ գրաւեց իմ ուշադրութիւնը: Կատարեալ հրեշտակ էր, չորս հինգ տարեկան գանգրահեր աղշիկ... Նա նմանութիւն էր տալիս ծանօթներից մէկին, բայց թէ ում, չէի կարողանում որոշել, մտարերել, բայց և չէի կարողանում աչք հեռացնել նրանից: Հետզհետէ նկատեցի, որ երեխան մօտենում էր մի բաւականաչափ անհետաքրքիր զոյգի. տղամարդը միշահասակ, անհամաչափ երեսով, շարունակ անասնական հայեացքով հետեւում էր անցնոող կանանց: Նրա մօտ նստած նիհար, անձաշակ հագնուած, տհամելի գէմքով կինը անտարբեր էր զէպի շրջապատող բնութիւնը և հասարակութիւնը. կարծես դիակ լինէր: Միայն երբ երեխան մօտենում էր նրան, մի ինչ որ թոյլ ժպիտ ծամուում էր նրա երեսը, որպէս դառն բիննա խմած մարդ, բայց միևնոյն ժամանակ մերենական շարժու-

մով սեղմում էր կը ծքքին։ Այդ կծու սիրոյ մէջ թագնուած էր մի ինչ որ անբացատրելի թախիծ... Ես զիտում էի զրանց... Այդ խումբը շարժել էր իմ հետաքրքրութիւնը... Երևակայութիւնը ստեղծում էր յանդուզն պատկերներ... Անորոշ մի զգացմունք ինձ թելազրում էր թէ՝ այդ չքնաղ մանկիկը ատելութեան պըտող է... թէ այդ զոյզը իրար վերաբերում է, որպէս զալունի թշնամի. և կինը և ամիջում է և սզում այն կապը, որից զաւակը յառաջացաւ, բայց և խելացնոր սիրում է երեխային, որը փոխարինում է նրա անցած ցնորքների երջանկութիւնը և յոյսը և սէրը...

Երեխան վայր ընկառւ... մայրը թռաւ տեղիցը... ի՞նչ անսահման վախկոտութիւն կար նրա աչքերում... Բայց երբ ստուգեց, որ անհիմն էր այդ սոսկումը, նորից մեռելի դիմակը զըրեց երեսին... իսկ տղամարդը անվրդով շարունակում էր կանանց կլանել իր վաւաշոտ հայեացքներով...

Ես կամենում էի լուծել այդ առեղծուածը, բայց ոչ մի հետեանքի չհասայ, բոլորովին անծանօթ մարդիկ էին... իսկ երեխան... նրա ծիծաղը հնչում էր առանձնապէս զեղեցիկ, և իմ սրտի խորքերում տալիս էր արձագանք... Կրկին և կրկին նայում էի այդ մարդկանցը. ոչ մի ընդհանուր կապ, ոչ մի ծանօթ ուրուագիծ... Նրանք բարձրացան անցան իմ մօտով... Երբ իմ դէմ ու դէմ էին, կինը մի վայրկեան կանգ առաւ, աչքերում երեաց առանձին արտայտութիւն, որպէս անակնկալ հարուածից... շրթունքները շարժուեցին, բերանից թռաւ անսպասելի հառաջը... Մի ակնթարթ տղամարդը նայեց նրան, աչքերը շողացին վատ փայլով... Բայց այդ բոպէից անցաւ մի մեծ խումբ զրօսնողների և ծածկեց նրանց. Ես բարձրացայ տեղիցս, նայեցի շուրջս. բայց նրանք անյայտացել էին: Դժուար էր հաշիւ տալ թէ՝ ինչ զգացմունք զարթեցրեց իմ մէջ այդ դէպքը, միայն յիշում եմ, որ անբացատրելի թախիծ պատեց ինձ... Երկար ժամանակ զղերս հանգիստ չէին տալիս, որպէս թէ տեսած լինէի ուրուական...

Այս ձմեռ, մի մասնաւոր բարեգործական երեկոյթում ինձ մօտեցաւ մի երիտասարդ և հրաւիրեց հետեւ իրան մի ծանօթ օրիորդի մօտ: Ես յայտնեցի իմ պատրաստակամնութիւնը և մենք դիմեցինք սեղանատունը, ուր մի անկիւնում նստած էին երկու կին և մի ուսանող: Դրանք ինչպէս երեսում էր՝ վերջացրել էին ընթրիքը, բայց գինու չհաւաքած շիշերն ու բաժակը ները ապացուցանում էին որ քաղցը զրուցելով՝ Բաքոսին մատուցանում էին իրանց պաշտամունքը: Կանանցից մէկը փոքրիկ արարած էր, նիհար թոյլ կրծքով, խոշոր աչքերով, բայց

ոչ գեղեցիկ... Միւսը՝ միջահասակ, տխիղծ, տգեղ, արդէն թառաւած, բայց համակըելի դէմքով:

— Դուք ինձ չեք մտարերում,—ասաց նա, հրաւիրելով ինձ նստել,—ես պատահմամբ իմացայ որ դուք այստեղ էք... Շմաւոնն ասաց,—և ցոյց տուաւ ինձ առաջնորդող ուսանողին:

— Ներեցէք... բայց ես, դժբաղղաբար, չեմ յիշում, թէ թրբ ենք մենք իրար հետ ծանօթացել,—զարմանքով հարցրի ես, այդ անծանօթ անձերին տեսնելով:

— Երևում է, որ ձեր յիշողութիւնը թոյլ է, բայց ես կ'աշխատեմ սակաւ առ սակաւ օգնել մտարերելու, թէն ես հաւատացած էի, որ դուք չպէսաք է մոռացած լինէիք... Ամառուայ տօթ օր, փոշի, անտանելի ճանապարհ և երկու խելացնոր օրիորդներ...

Մի ակնթարթում՝ աչքիս առջև կայծակի արագութեամբ անցան վաղուց մոռացուած պատկերներ... Ահա ուրեմն երկար տարիներից յետոյ մենք կրկին հանդիպեցինք իրար: Այն, սա նա է՝ աւագ քոյրը, ուրախ և զուարթ աղջիկը... Ապա ուրեմն ես իմանամ թէ՝ ուր անյայտացաւ իմ կեանքից այն հրաշալի էակը: Ես շատապեցի պատասխանել:

— Այն, այն, ներեցէք, չճանաչեցի... Ես ուղղակի ասլշած եմ... Որքան ժամանակ է անցել... որքան ջրեր են ցամաքել... Բայց այդ դժւաք էք... հիմա եմ նկատում միայն... չեմ թագշցում, փոխուել էք...

— Ի հարկէ... կատակ չէ... մոռացել էք... քանի տարի է... Բայց ձեր վերաբերամբ դժուար է ասել թէ պառաւել էք... Մենք, կանայքս, դժբախտ ենք այդ կողմից... մեր երիտասարդութիւնը շուտ է վերջանում, մանաւանդ նրանցը, որոնք ի բնութիւնէ չեն կարող հապատանալ իրանց արտաքինով,—աւելացրեց նա կծու և ապա շարունակեց.

— Դուք յաջողութիւն ունէք, լսել եմ...

Մենք երկուսս էլ խօսում էինք ջղայնաբար... Մի հարց պտոււմ էր. բայց երկուսս էլ խուսափում էինք շօշափել նրան, որպէս կը վախենան մերկացնել վէրքը, որը արդէն կեղև է կապել...

Մեր խօսակցութեան նիւթը առօրեայ կեանքի երեսյթներն էին: Սեղանակից ուսանողները իմ նեարդները գրգռում էին իրանց բարձրածայն խօսակցութեամբը: Շարունակ խմում էին, կատակներ անում: Ուսանողունու շարժուածքները հակասում էին նրա կաղմուածքին. տղամարդու էին յիշեցնում: Նա առանձնապէս շեշտելով՝ յայտաբարեց, որ այլ ևս հայրենիք չի-

վերադառնալու, որովհետև ամեն բան այստեղ խորթացել է իրա համար, հեռու, հիւսիսում կեանը աւելի հետաքրքիր է...

Ես չկարողացի զապել իմ տհաճութիւնը. հարևանուհիս այդ նկատեց, թեքուեց դէպի ինձ ցածր ձայնով արդարացնում էր ընկերուհուն:

—Մի վրգովուէք... նա լաւ հոգի ունի... բայց...

Այլ ևս չկացի շարունակութիւնը. մեր սեղանակիցները աղմուկով բարձրացան, հրաժեշտ առին՝ թեթև զլուխ տալով...

Մենք մնացինք միայնակ...: Ես նստած էի լուռ՝ որպէս մեղադրեալը որ սպասում է դասավճռին... Մեր շուրջը անց ու դարձ էին անում ծանօթ մարդիկ, որոնց ես չէի նկատում, չէի ողջունում: Իմ ուշագրութիւնս իմ հարևանուհին էր գը-բաւել:

Յանկարծ նա դիմեց ինձ հարցով.

—Դուք չէք հետաքրքրում՝ թէ մւր է քոյրս...

—Ընդհակառակը... աղաչում եմ՝ ասացէք...

—Յիշում էք՝ ի՞նչ հրաշալի էնկ էր... Ես հպարտանում էի նրանով: Դուք երեակայել չէք կարող թէ՝ նա ի՞նչ ուժեղ տպառութիւն էր թողնում բոլորի վրայ... իսկ հիմա... Եթէ տեսնէք չէք ճանաչի... նոյնիսկ արտաքինը միանգամայն փոխուել է, տգեղացել ... Ոչ մի բանով չի հետաքրքրում... անտարբեր սառը... ասես, կենդանի դիակի... նա կինդանութեան նշոյներ է միայն ցոյց տալիս այն ժամանակ, երբ հարցը վերաբերում է աղջկանը, փոքրիկ, գեղանի, որպէս մի ժամանակ մայրն էր...

Իմ հոգու աչքերի տաշն կենդանացաւ պարտէզը, անտարբեր զոյդը, հրեշտականման մանուկը... թէ ինչո՞ւ... հսինը բացատրել չեմ կարող... գաղափարների զուգորդութիւն գուցէ... չգիտեմ: Սոսկալի միտք թափանցեց ուղեկու:

—Միթէ նա էր... Անկարելի է... սքանչելի միանձնունու գէմքը և մրգած կիտրոնի ոլէս այլանդակուած կինը... Ոչ միթէ կարելի է այդքան փոփոխութիւն... Ապա ուրեմն ինչ ահեղ եղելութիւն է կատարուել նրա կեանքում, որը աղաւաղել է գեղեցիկ գծագրութիւնը, բթացրել դէմքի գրաւիչ արտայայտութիւնը և կրակ ցայտող աչերից խլել նախկին փայլը, գարձրել անգոյն...

Ես դանդաղ հարցրի:

—Նա ամուսնացած է...

—Այս. —ոչ... կցկտուր պատասխանեց:

Ի՞նչ էր նշանակում դա. ազատ ուր, թէ ապահարզան... Պարզ էր միայն, որ կեանը կերպարանափոխել էր նրան մի անգամայն...

Հարեանուհիս լուռ նայում էր դէմքիս, կարծես կամենում էր թափանցի որտիս խորքը, գննել թէ ի՞նչ տպաւորութիւն թողից իւմ վրայ իր ասածը: Ապա արագօրէն սկսեց խօսել...

—Գիտէք... դա մեր զժրազդութիւնն է... ես խոստովանում եմ... մենք յանկարծ, անմիտ քայլ արինք... նախապատրաստութիւն չկար... համահաւասար էր թէ վանդակում պահուած թոշնակին մի շարժումով տալ ազատութիւն... Հեռանում ենք, կը տըրւում մայրենի հողից, ընտանեկան ըլջանից... ուր... նոր երկիր, տարբեր պայմաններում ամենանուրբ և զդայուն տարբիները անցկացնելու, երբ ամեն մի պատահուկան գէաք շատ անգամ վճռում է ամբողջ կեանքի ընթացքը... հեռանում ենք՝ առանց մի որոշ, հիմնաւոր հայեցակիտի... ըստ մեծի մասին հայրը չի խանուում կրթութեան հարցում, իսկ մայրը տղէտ է լինում, կամ թերուս... գուք յիշում էր մօրս... Շատ անգամ աւելի ունկորների մօտ՝ վարձկան գաստիարակներ են, զանազան ազգերի մտաւոր տականքը... Ի՞նչ են մեզ ոովորեցնում. կապկութիւն անել, իմ քանի անհամ նախապատրիւններ կոտրատել... բարեկըթութեան խրառաներ են տալիս, առանց կենազնի օրինակի: Իոկ այն հիմնաքարը, որը ապազայում կաղում է մարդու ամբողջ կութեան սիւնը, ամեն մի քայլափոխում նրա ղեկավարողը՝ հոգենորմտաւոր աշխարհը... Ի՞նչ են մեզ տալիս... մի երկու աղօթք, մի երկու խրառական խօսք... Բայց մեզ գեռ սպասում է ուսումնարանը իր մեոցնող մթնոլորտով, ուր տալով մեզ գիտութեան մի փոքր պաշար՝ աղաւալում են կատարելապէս, նույնացնում այն բարոյական ոյժը, որով օժտուած ենք լինում լինութիւնից:

Ներկայ զալոցը հոգերանական ընդունակութիւն չունի, չի կարողանում մեղանից ամեն մէկին ուզիկ ճանապարհը ցոյց տալ զարգացնել մեր յատկութիւնները: Վերջացնում ենք զդաիլ յոդնածութեամբ և մասնում կեսանքի մէջ, որպէս մակոյկը առանց առազատների և ղեկի լայնատարած ովկիանոսում... Մեոցուած է նախածեռնութեան ովին, թուլացրած կամքի ոյժը, չկայ քննապատական վերաբերմունք ամեն մի երեսյթի հանդէպ...

—Այս... ծանր պայմաններում ենք աղբում...

Նա խօսում էր՝ այդ ագեղ աղջիկը, որ երեկի կամ վարժուհի էր կամ մանկաբարձուհի: Ես լուռ լուռ էի՞ աւելի ուղիղն ասած՝ զգում էի... իմ մտքի առաջ կանգնած էր ընքոյշ միանձնուհին, ժպառում էր... Աչքերը երբեմն վառուում էին բոցեղին փայլով: Այդ պատկերի հետ միասին կենդանանում էր և մի այլը՝ այն կատարեալ ոչնչութիւնը, որին երկու ժամուայ ընթացքում զիտում էի այլումը... Տարբերութիւնը մեծ էր...

— Իուք ինձ ականջ չէք դնում... յուղնաւած էք... լսեցի հարևանուհուս ձայնը,—ես նկատում եմ այդ և խղճում եմ... խորը խղճում: Ոչ թէ ձեզ, այլ քրոջս... Խղճուկ, փոթորկից վշշուած ոստիկ...

Անողոքելի է կեանքը իր երեսյթներում... Նրա սառը, մեռյնող ձեռքը ոչինչ չի ինայում, աւելում է, բարուքանդ անում...

Ես... այլ կեանք ընտրեցի, շարունակեց նա մի փոքր կանդ առնելով,—չկամեցայ ոչ խոռվայոյզ մէր, ոչ էլ յոյսերի խորտակում: Ոչ, չեմ հերքում. բնութիւնը զօրեղ է, երբեմն նա ըմբոստաբար պահանջում է... բայց հէնց մի փոքր երբ ենթարկում ես վերլուծման, զգում ես, որ բուան սիրոյ մէջ անգամ կայ ատելութեան սաղմը, և այն ժամանակ կամենում ես լինել ազատ... ազատ ամեն կապանքներից... տխուր, միապաղադ կեանք, բայց զգում ես, որ այս կեանքն էլ մի որևէ բանի հարկաւոր է...

Ես լուս նայում էի այդ տպեղ, բայց համակրելի աղջկայ դէմքին, նրա մարած աչքերին և կարդում էի նրանց մէջ՝ երկար, անքուն գիշերների պատմութիւնը, միայն բարձերին հաղորդուած խանդավառ սիրոյ պատմութիւնը... մարտնչիլը սեփական կրքերի հետ և վիշտը, և յաղթութիւնը... Ես տեսնում էի և նրա բրոջը, այն անմեղ գառնուկին, որը չգտաւ իր մէջ բաւականաչափ ոյժ դիմադրելու և ընկղմուեց կեանքի ճահճի մէջ...

— Ուշ է... վեր կենանք... ես միայնակ եմ, ինձ կը ճանապարհէք...

Երբ ես նրան կառք նստացրի, նա նայեց ինձ և կարծես ինքն իրան պատասխանում էր:

— Անտարակոյս... ոյժեր ունենք... Բայց ափսոս որ՝ ստիպուած ենք հեռաւոր երկրներում այս կամ այն տեսակ ցըել... դա է մեր ցաւը:

Այլ ևս ոչինչ չխօսեցինք. մենք երկուս էլ խորասուզ ուած էինք մտածողութեան մէջ...

Երբ դուռը բացուեց, ես համակրութեամբ դրօշմեցի համբոյրս նրա կուսական ձեռքին...

— Մնաք բարեաւ... շշնջաց նա յուղուած:

Ես վերադառնում էի տխուր զգացմունքով, որպէս վերադառնում են սիրեցեալ մարդու թաղման հանդէսից...

Ռուբէնը լսեց... Կրկին սկսեց քայլել ու ծխել:

Այդ տիսուր պատմութիւնը փչացրեց տրամադրութիւնս: Մելամաղձոտ ձայնի ելեջները թափանցեցին սրտիս խորքը... Գլուխս սկսել էր ցաւել սաստկապէս... Երկար ժամանակ քունս չէր տանում... յետոյ արթուն էի թէ արդէն քնել էի չգիտեմ, միայն լսում էի նրա ջղային քայլուածքը, քնաթաթախ աչքերով՝ որպէս մշուշի միջով, հետեւում էի նրա ստուերին: Երբեմն նա փոքրանում էր, դառնում թղուկ և այնքան ծիծաղաշարժ և ողորմելի էր երեսում իմ աչքում... Երբեմն նա մեծանում էր, ընդունում հսկայական չափսեր, լցնում իր ներկութեամբ ամրողջ սենեակը, բարձրանում մինչև առաստաղը, սեղմում նրան ինձ թւում էր թէ՝ նա մօտենում է ինձ և որպէս դիւցազն, վերցնում մի ձեռքով, սլանում ենք վերև՝ գեպի բարձունքը: Յետոյ... Լուսոյ ճանանչները թափանցեցին սենեակը, փայլեց մի աստղ, որը հետընեսէ մարդկային կերպարանը էր ստանում, դաւնում չքնաղկոյս երկայն հիւսով, յաղթական ժապիտը երեսին... Իմ ականջում շշնջաց մեղմիկ ձայնը.

—Հանգիստ կացէք... գալիս ենք մենք... Նոր սերունդս... խորունկ մտածող... ճանապարհ տուէք...

Նա խօսում էր և շուրջը սփռում էին ծաղիկներ: Հետեւցան այլ դէմքեր, որոնք աճում էին, բազմանում... անհետացան նեղ պատերը, հորիզոնը անսահման լայնացաւ. ազատ շունչ էի քաշում... օդը մաքուր... կանաչում էին արտեր, պարտէզներ...

—Զառանցանք է սա, թէ եղելութիւն, մտածում էի երազումս...

Յետոյ... խորը քնի մէջ ընկղմուեցայ: Մի անգամ միայն աչքերս բաց արի և խսկոյն էլի փակեցի լոյսից... արդէն արեց ծագում էր, արշալոյս էր... Յիշում եմ միայն, որ Ռուբէնը նստած էր, զլուխը յենած ձեռքերին... Յիշողութիւններն էին կլանել նրան ամրողապէս, թէուրիշցաւունէր՝ չգիտեմ...

Երբ առաւօտը զարթնեցի, նա չկար... արդէն ճանապարհուել էր: Սեղանի վրայ գտայ մի քանի տող:

«Ափսոսում եմ, որ հրաժեշտի վերջին ողջոյնից զրկուեցի... Դու յոգնած էիր, չղարթացըրի... խառն ժամանակ է, ո՞վ զիտէ, կը տեսնուինք նորից... Մնաս բարե աւ...»

Ռուբէնը ուղերուել էր գաւառ, խոլերայի առաջը կտրելու. բայց ով գիտէ, ինչ նոր անակնկալ թշնամու նա կը հանդիպի, մտածում էր, և մտարերեցի բանաստեղծի գեղեցիկ խօսքերը:

Եւ նա խոռվայոյզ՝ մըրիկ է որոնում:

Կարծես մըրկի մէջ հանգիստ է գտնում...

Տիկ, Ել, Բահամթուր

ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԱՍԱ-  
ՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷԶ\*)

Պրոլետարիատի թշուառ տնտեսական վիճակը հասկանաւու և այդ վիճակի հետևանքները պատկերացնելու համար մենք կը բերենք մի քանի վկայութիւններ և մի քանի վիճակագրական պերճախօս թուեր:

1863 թուին Անգլիայում պաշտօնական ընտութիւն է նըշանակուած եղել արսորի և տաժանակիր աշխատանքների դատապարտուած ոճրագործների ապրուստի և սնունդի վերաբերմամբ: Քննութեան արդիւնքները տպաղըել են յետոյ «Կապրոս զրքուած»: «Մանրազնին համեմատութիւնները,— ասուած է ի միջի այլոց քննութեան մէջ,— անգլիական բանտերում փակուած ոճրագործների և բանտորական տներում տպաղոց չքաւորների ու զիւղական ազատ բառորների սուացած սնունդների միջև ցոյց են տալիս, որ առաջինները (ոճրագործները) աւելի լաւ են կերակրուած, քան վերջին երկու գառակարպերը»:

Մարքսը «Կապիտալի» մէջ բերուած է Բելզիական բանտերի գլխաւոր տեսուչ Տուրեալ հետեւալ պատմութիւնը:

«Ամեն մի բանտորական ընտանիք միջին թուով ունի 4 երեխայ. ուրեմն՝ ծնողներին էլ հետը հաշուելով նա բաղկացած է 6 հոգուց: Այդ վեց հոգուց կարող են աշխատել 4-ը, եթէ չպատահի որևէ հիւանդութիւն և այլն: Այդ պայմաններում ընտանիքի արդիւնքների մաքսիմումը կը կազմի 1068 ֆրանկ: Եթէ բանտորը այնքան սնունդ ստանաբ, որքան նաւաստին, նրա ընտանիքի տարեկան ծախը կը բարձրանար մինչև 1828 ֆր., որ կը կազմէր 760 ֆր. գեֆիցիս. որքան զիսւորը, այդ ժամանակ նրա ընտանիքի ծախը կը բարձրանար մինչև 1473 ֆր. որ կը կազմէր 405 ֆր. դեֆիցիս.

\*) ՏԵՇ «Մուլճ» № 5:

որշան բանտարկեալը,—այդ ժամանակ կը բարձրանար մինչ 1112 ֆր., որ կը կազմէն 54 ֆր. գեղիցիտ»:

Ուրեմն Բելգիայում ևս աղատ բանուորը աւելի վատ է ապրում քան բանտարկեալը:

«Առաջ բերած օրինակելի ընտանիքում,—շարունակում է Ducepetiaux-ն,—միացրուած են արդիւնքի ամեն տեսակ աղբիւրներ: Բայց բանուորական վարձ տալով ընտանիքի մօրը, մնաք զրկում ենք գրանով տունը տանտիկովից: Ո՞վ պէտք է հետեւ տան կարդ ու կանոնին, սպիտակեղէնը և շորը կարկատէ, կարէ հայլ: Եւ ինչպէս են անում բանուորների մեծ մասը, որոնք ապրանքները գնում են ոչ թէ օպտով, ինչպէս բանտերում, այլ փոքրիկ մասերով: Ինչպէս են կառավարում նրանք: Նրանք այդ կարողանում են անել շնորհիւ այն մի շարք միջոցների, որ կազմում են բանուորական ընտանիքի զաղանիքը: Նրանք կրամառում են իրանց ամենօրեայ կերակրի բանակը, միս քիչ են գործածում, կամ բոլորովին չն գործածում: Նոյնպէս իւղը և բուսեղէնը: Տեղաւորում են իրանց ընտանիքը մէկ կամ երկու սենեակներում, որտեղ աղջիկները և երիտասարդ տղամարդիկ ընում են միասին, յաճախ խոտէ միևնոյն տոպարակի վրայ: Նրանք տնտեսում են իրանց շորերի և սպիտակեղէնի վրայ, զրկում են իրանց մաքրութիւնից, կիրակնօրեայ բաւականութիւններից ևայլի: Երբ նբանք հանում են այդ սահմաններին, բաւական է լինում կենսական պիտոյքների գների անշան բարձրանալը, որպէսզի գլորէ նրանց մուրացկանների շարքերը... Ամբողջ Բելգիայում հաշվում են 930,000 ընտանիքներ: Նրանցից, պաշտօնական վիճակագրութեան համաձայն՝ 90,000 հարուստ (ընտրողական իրաւունք ունեցող) ընտանիքներ, որոնց անդամների թիւը հաւասար է 450,000-ի, 190,000 մանր միջին գտառակարդի ընտանիքներ (զիւդիրի և քաղաքների ազգաբնակութիւնից), որոնց նշանաւոր մասը անընդհատ անցնում է պրոլետարիատի շարքերը,—ընդամենը 1,950,000 հոգի: Աերջապէս 450,000 բանուորական ընտանիքներ, ընդամենը 2,500,000 հոգի, որոնց օրինակելի ընտանիքները ճաշակում են վերև նկարազրած բարօրութիւնը: 450,000 բանուորական ընտանիքներից աւելի քան 200,000-ը մտցրուած են ազգատների ցուցակներում:»

Այս նկարագրութիւնը կազմուած է մի քանի տասնեակտարի սրանից առաջ: Շմառ է փոխուել արգեօք դրանից յետոյ պրոլետարիատի զրութիւնը:—Այդ հարցին պատասխանում են մասամբ վերև բերուած վիճակագրական տեղեկութիւնները, որ կազմուել են համեմատարար վերջին ժամանակներս: Բերենք Ցունիս,

մի վկայութիւն ես, որտեղ նկարագրուում է բանուորների ներկայ վիճակը Գերմանիայում: Այդ վկայութիւնը պատկանում է մի բուրժուական գրողի՝ դոկտ. էրնստ ֆրանկեի գրչին և այդ պատճառով աւելի ես զնահատելի է:

«Ճիշտ է, կայսրութեան հիմնուելու օրից,—ասում է Ֆլորանկէն, —զերմանական ազգաբնակութեան նշանաւոր մասի կեանքի պայմանները և բարեկեցութիւնը բաւական բարձրացել են և այդ մեջ թարախական զարգացման մէջ նշանաւոր մասնակցութիւն են ունեցել իրանք ժողովրական մասաները, բայց առաջադիմութիւնը ուժեղ շօշակել է մասսաների միայն վերին խոռոչը: Խոկ ներքեւ, խորքերում՝ զոնուող շերտերը առլում են դեռ կարիքի, չքարորութեան, աղքատութեան մէջ, նրանք իջեցրուած են մինչեւ զոյուժեան մինիմումը<sup>1)</sup>: Նայեցէք քաղաքների աղքատ բնակարանների նկարագրութիւններին, նրանց անրարոյականացնող ազգեցութեամբ մարդու հոգու և մարմնի վրայ: Կարգացէք այն տեղեկապրերը, որտեղ պարզուած է, թէ որպիսի աղքատիկ մնունք են ստանուած իրանց բնակարաններում աշխատող բազմաթիւ բանուորներ, որոնց ստացածը հազիւ հնարաւորութիւն է տալիս նրանց քարշ տալու իրանց գոյութիւնը: Տեսէք, թէ կարգին բանուորական ընտանիքների բիւջէններում որքան աննշան ու ողորմիլի են շորի, կօշիեղէնի, ամանների և կահակարասիրի համար նշանակուած զումարները: Պրուսիայում ընտանիքների աւագներից 70%-ը աղքատուած է եկամուտային հարկից, որովհետև այդ ընտանիքների տարեկան մուտքը 900 մարկից պակաս է: Գերմանական բանուորների տարեկան աշխատավարձը կազմում է 600—700 մարկ: Սաքսոնիայի և Սիլեզիայի մի քանի տեղերում արհեստաւոր ստայնհանկների բազմաթիւ ընտանիքներ ամենազողութելի գոյութիւն են քարշ տալիս տարեկան 300—400 մարկով: Դերձակների մօտ աշխատող կանանց գրութիւնը, որոնք շարաթական 6—7 մարկ են ստանուած, դեռ վատթարագոյնը չէ: Այդ տեսակ ընտանիքների բիւջէնների մէջ շորի, կօշիեղների, կամ կարասիրի վրայ ընկնում է հազիւ 40, 30 և մինչեւ իսկ 20 մարկ տարեկան: Միլիոններու մարդիկ միայն մեծ տօններին հնարաւորութիւն ունին տեմնելու իրանց սեղանի վրայ իսկական մնի կտոր: Հարիւր հազարները աղքաւ են նեխուած, խճողուած բնակարաններում: Եւ այդ կարգի բնակարանները լցուած են հաշւուած միայն այն ժամանակ երբ ամեն մի սենեակում, աղքաւ են 6 հոգի, իսկ երկու սեն-

<sup>1)</sup> Ընդգծութեան մերն են.

եակից բաղկացած բնակարաններում՝ աւելի քան 10 հոգի»

Ահա թէ ինչ է ներկայացնում իրանից—բուրժուական դրողի այս համաստ և կցկառը նկարագրութեան համաձայն, —զերժանական պրոլետարիատի ներկայ վիճակը։ Այդ թշուառ տնտեսական վիճակի ընական և անխուսափելի հետեւանքն է ազգաբնակութեան մեծամասնութեան ֆիզիքական և բարոյական այլասեռում։ Բարտկացաւը և այլ նման «պրոլետարական» կոչուող հիւանդութիւնները, որ հետեւանք են տամնեակտարիների կիսարազցած դոյցութեան։ վաղաժամ մահացութիւնը բանուորների մէջ քանի դնում աւելի և աւելի հրէշտաւոր չափեր է ընդունում։

Եանոսնի «Համեմատական վիճակագրութեան» մէջ բերուած են մի քանի հետազօտութիւններ, որ ձեռնարկել են վերջին ժամանակներս եւրոպական մի շարք բաղաքներում մահացութեան աստիճանները որոշելու համար սպարնակութեան զանազան խստերում։

Պէշտի վիճակագրական բիւրօնի հետազօտութիւնների համաձայն՝ մենազների միջին հասակը զանազան կարգերի ազգաբնակութեան համար եղել է հետեւալը։

Հաշուելով ե-	Առանց հա-
րեխաներին շուելու մին-	
միջին 5 տ.	չե 5 տարե-
	կան երեխ.

1 կարդի, հարուստ ազգաբնակութիւն	—38,81	50,86
2 » միջակ կարողութ. տէր ազգար.	—23,50	44,66
3 » չքաւոր ազգաբնակութ.	—14,41	41,31
4 » ազգատ ազգաբնակութ.	—10,12	40,22

Ուրեմն հարուստ ազգաբնակութիւնը,—եթէ ի նկատի չառնենք երեխաների մահացութիւնը,—մօտ 50 տարի, իսկ ազգատը մօտ 40 տարի։ Իսկ եթէ հաշուենք և երեխաներին, ուրոնց մէջ մահացութիւնը (եթէ մանաւանդ նրանք ազգատ են) անհամեմատ աւելի ուժեղ է քան հասակաւորների մէջ, մենք կը աւեսնենք, որ աղքատի կեանքը միջին թուով համարեա 4 անգամ աւելի կարճուուն է, քան հարուստինը (38, 81 և 10, 12)։

Նոյն արդիւնքներն է տալիս Գերմանիայի մի քանի քաղաքների վիճակագրութիւնը։ Լայպցիգում վիճակագրական բիւրօն որոշել է մահացութիւնը ըստ փողոցների, որ նա բաժանել է երեք կարգի։ 1) փողոցներ, որտեղ ամեն մի սենեակին միջին թուով դալիս է 1 ընակիչ (նշանակում է հարուստ փողոցներ), 2)—որտեղ ամեն մի սենեակին գալիս է երկու ընա-

կիչ (միջին կարգի փողոցներ) և 3)—ամեն մի սենեալին 3  
բնակիչ (աղքատ փողոցներ):

1000 մար-	1000 երեխա-
դուց, բուրը	լից, 0 — 1
հասակները	տարեկան
վերցրած.	հասակում

Մեսել են՝	1871—1872	1871—1872
1 կարգի փողոցներում . . .	23	18
2 « « . . .	33	22
3 « « . . .	49	30

Ուրեմն, աղքատ ազգաբնակութեան մահացութիւնը 1871 թուին (ծաղիկ հիւանգութիւն է եղել այդ տարին) 2 անգամ աւելի շատ է քան հարուստ ազգաբնակութեան, իսկ 1872 թուին 60% աւելի, Աղքատ մասնուկների մահացութիւնը 71%-ին 91% աւելի, 1872 թուին 90% աւելի:

Բրառնչվայդի վիճակագրութեան մէջ փողոցները բաժանուած են համաձայն բնակիչների տարեկան միջին հկամուարի թուերը վերաբերում են 10 տարուայ ժամանակամիջոցի, 1864-ից մինչև 1873: Այդ վիճակագրութեան համաձայն, միջին թուով՝ 1000 հոգուց մեսել են տարեկան—

Այն փողոցներում, որտեղ մի հոգու եկամուար	աւելի է քան 250 տալլեր—15,2 հոդի=100
	200—250 « —19,1 « =130
	150—200 « —19,1 « =130
	100—150 « —22,5 « =150
	75—100 « —26,8 « =179
	75ից պակաս « —34,7 « =237

Եթէ առաջին կարգի փողոցներում մեսնողների թիւը հասարեցնենք 100-ին, ինչպէս ցոյց է տրուած աղիւսակի մէջ՝ վերջին կարգի փողոցներում մեսնողների թիւը կը կազմի 237:

Վիեննան բաժանուած է 10 քաղաքամասերի: Առաջին քաղաքամասում, որտեղ ապրում է հա— 1874—1875 րուստ ազգաբնակութիւնը, ամեն 1000 հոգուց մեսել են՝ 13—14 Միջնակարգի քաղաքամասերում՝ 25—28 Խ քաղաքամասում, որտեղ ապրում են քանուորական լնտանիքներ՝ 61—43

Այդպիսով Վիեննայում աղքատ ազգաբնակութիւնը՝ բարեյաջող տարին (1875) Յ անգամ աւելի է մեսնում, իսկ անբարեյաջող տարին (1874) մինչև իսկ 5 անգամ աւելի, քան հարուստ ազգաբնակութիւնը:

Ցըրանսիացի տնտեսագէտ Ժիմի ասելով, Պարիզում՝

առարելան մահացութիւնը, որ իջնում է հարուստ կվարդալներում մինչև 10-ը (1000 վերաբերմամբ) Մոնմարտրի կվարտալում, որտեղ ապրում են բացառապէս բանութիւնները, հասնում մինչև 43: Կարելի է ուրեմն ասել, —նկատում է այդ առիթով իւսնիւկովը,—որ աղքատը 4 անգամ աւելի շատ շանսեր ունի մեռնելու, քան հարուստը:

Աւելի սարսափելի կը լինի տպաւորութիւնը, եթէ մենք վերցնենք մահացութեան տարբերութիւնը էպիդիանների ժամանակ:

Բրաունշվայգում զանազան խաւերի մեռնողների թիւը եղել է, ըստ փողոցների, որտեղ ամեն մի բնակչի միջն տարեկան հկամուար կազմել է՝

250 տալ.	աւելի,	200—250,	150—200	100—150	75—100,	75-ից	ողակառ
Ծաղիկ հիւանդութիւնից		100	166	400	766	933	1700
Թոքախտից	· · ·	100	146	157	200	226	
Խօլերայից.	· · ·	100	100	466	466	1000	1766

Ինչպէս տեսնում էր այս թուերից, 100 հարուստ մեռնողների գէմ թոքախտից մեռել են 226 աղքատներ, այսինքն տեսի քան 2 անգամ շատ, ծաղիկ հիւանդութիւնից 100 գէմ—1700, այսինքն 17 անգամ աւելի, և խոլերայից 100 հարուստի գէմ՝ 1766 աղքատ, այսինքն  $17\frac{1}{2}$  անգամ աւելի:

Այս թուերը միանգամայն պարզում են բանուոր դասակարգի զարհուրելի զրութիւնը և ցոյց են տալիս այն վիճը, որ բաժանում է միմեանց ներկայիս երկու հակամարտ դասակարգերը՝ բուրդուարից:

Այդ թշուառ անտեսական պայմանների հետևանք է նաև ալկօնլականութեան, ոճրագործութիւնների և պրոստիառուցիայի յարաձուն զարգացումը՝ որ անագին աւերութիւններ է զործում բանուոր դասակարգի մէջ: Ժամանակակից անտրոպոլոգիական կրիմինալիստական դպրոցը, ի դիմաց հոչակաւոր Լոմբրոզի, Տարնովսկու և Ֆերրիրօի, ճգնում էր և դեռ ճգնում է հաւատացնել մարդկանց, որ ներկայ քաղաքակրթութեան այդ բըսարդների արտայայտութիւնները զուտ ըիօլոգիական-անտրոպոլոգիական կատեգորիաններ են, որ մարդիկ ոչ թէ դառնում են ալկօնլականներ, ոճրագործներ, պոռնիկներ՝ չսորհիւ այս կամ այն արտաքին պատճառների, այլ ծնւում եմ, որպէս ալկօնլականներ, ոճրագործներ և այլն: Ներկայումս հասարակակից տական թէօրիանները մի կողմից, և ստատիստիքական բաղմաթիւ ուսումնասիրութիւնները միւս կողմից միանգամայն պար-

զել են, որ այդ երևոյթները, իբրև լայն, մասսայական երևոյթներ, ոչ թէ բիօլոգիական այլ ընդհակառակը սոցիօլոգիական կատեղորիաներ են, որ նրանք անմիջական արգիւնք են տիրող անորմալ ու անապորոյն սոցիալական կարգերի, ազգաբնակութեան անապահով, թշուառ տնտեսական վիճակի:

Ալկոհոլականութիւնը, ոճրագործութիւնը և պրոստիտցիան միևնույն պատճառների հետեւանքները լինելով՝ ամենասերտ կերպով կապուած են միմիանց հետ իրանց արտայայտութիւնների մէջ: Ոճրագործութիւնների միծ մասը կատարում է անմիջապէս ալկոհոլի ազդեցութեան տակ: Պրոստիտցիան համարում է ոճրագործութեան մի որոշ տեսակը, Weibliche Erscheinungsform des Verbrecherthums—ինչպէս ասում են գերմանացիները:

Բերենք մի քանի վիճակազրական թուեր:

Գերմանիայի ազգաբնակութիւնը 1901 թուին բաղկացած է եղել 56 միլիոն հոգուց: Այդ թուականին ամրագլ ազգաբնակութեան ծախքը կազմել է՝

Համար—1700 միլիոն մարկ,	ամեն մի հոգուն միջ.	թուով—30 մարկ:
Մակ. 2250	«	«
Ոգել. խմ. 3300	«	«

Այսպիսով ալկոհոլի վրայ գերմանական ազգաբնակութիւնը համարեա 2 անգամ տևելի է ծախսում, քան հայր վրայ: Յայտնի է, որ ալկոհոլի գլխաւոր սպառողը պրոլետարիան է: Նա զրկում է իրան հացից, մնագարար կերակուրներից և քանի գընում աւելի ու աւելի մեծ չափերով արւում է հարցեցողութեան: Dr. Richard Fröhlich-ը իր «Alkoholfrage und Arbeiterklasse» գրքոյկի մէջ, մատնացոյց անելով այն պայմանները, որ մղում են պրոլետարիատին ալկոհոլականութեան գիրկը, վերջացնում է իր խօսքը հետևեալ տողերով: «Օրինակները օրինակների յետեկց գալիս են մեզ ասլացուցանելու, թէ որչափով պէտք է «սոցիալական յարաքերութիւնների» մէջ փնտուել արկոհոլականութեան գլխաւոր արմատը: Ով աչքի առաջ ունի բանուորների վարձատրութեան և բնակարանացին պայմանները, նրանց սնուելու եղանակը, թշուառութեան ամբողջ ստորացուցիչ գերը, թշուառութեան, որ չնորհիւ մեր հասարակական կարգերի թափաւորում է բոլոր խաւերում իշնելով մինչեւ գիւղական բանուորի անասնական գոյութեան պայմանները և տընային արհեստաւորի մահացուցիչ վիճակը,—ով այդ ըոլորը գիտէ, նա կարող է միայն զարմանալ, որ մարդիկ դեռ աւելի շատ չեն գործածում ալկոհոլը, որպէսզի մոռացութեան տան

իրանց, որպէս զի չտեսնեն և չղղան իրանց ամբողջ թշուառութիւնը»:

Ալկոհոլականութեան հետեանքները յայտնի են—ամեն տեսակ հիւանդութիւններ, խելագարութիւն, վաղաժամ մահ, ոճրագործութիւններ եայլն:

1892—94 թ. թ. գերմանական հիւանդանոցներում մեռել են 35,736 ալկոհոլիկներ և 4,454 ալկոհոլից խելագարուածներ<sup>1)</sup>:

Անգլիայում ինքնասովաճների 30%—ը (իսկ Ռուսաստանում նոյնիսկ 38%—ը) եղել են ալկոհոլիկներ:

Ալկոհոլից խելագարուածների թիւը Գերմանիայում և Աւստրիայում կազմում է 25%, իսկ Ֆրանսիայում մինչև իսկ 40%:

1876 թ. Գերմանիայում պատահական ոճիրների (Gelegenheitsverbrechen) թիւը, որ զործուել են ալկոհոլի աղղեցութեան տակ կազմել է 41,7%: 1795 և 96 թ., Վիեննայում, բանտարկութեան ընդհանուր ժամանակամիջոցից, որին գտապարտուել են բոլոր ոճրագործները,—294 տարի, 6 ամիս և 8 օր գալիս է այն լէպքերին, երբ ոճրագործութիւնը կատարուել է ալկոհոլի անմիջական աղղեցութեան տակ: Դա կազմում է ընդհանուր ժամանակամիջոցի 65%<sup>2)</sup>:

Պրոստիտուցիայի և ոճրագործութիւնների քանակի մէջ եղած կազմը ցոյց են տալիս հետևեալ թուերը:

Անգլիայում 1858 թուից մինչև 1864-ը կի՞ն ոճրագործների թիւը կազմել է 377,000 հոգի: Դրանցից 209,000-ը, այսինքն 60%-ը եղել են հասարակական կանոյք: 1843-ից մինչև 1854-ը, 12 տարուայ ժամանակամիջոցում, զողութիւններ ընդհանուր թուից 360%-ից աւելին կատարել են հասարակական կանոյք:

Այդպէս սերտ կերպով կապուած են միմեանց հետ ժամանակից քաղաքակրթութեան այդ երեք անտիպոտները—ալկոհոլականութիւնը, պրոստիտուցիան և ոճրագործութիւնը: Դառնանը նրանց պատճառներին:

«Ոճրագործութիւնը աւելի յաճախ պատահում է ստորին, քան բարձր դասակարգերում,—տառմ է պրոֆ. Մայո Սմիտը<sup>3)</sup>: և ամեն տարուայ ոճրագործների նշանաւոր քանակը մտակարարում են ստորին զասակարգերը:»

<sup>1)</sup> Brockhaus, B. I, Alkoholismus.

<sup>2)</sup> Paul Hirsh.—«Verbrechen und Prostitution.»

<sup>3)</sup> Майо Смить. «Статистика и социология», стр. 240, пуд. 1901 г.

Յայտնի է, որ ոճիրների ամենամեծ քանակը գործւում է սեփականութեան դէմ (գողութիւն, կողոպուտ, բանութիւն ու սպանութիւն այդ նպատակով և այլն): Եւ այդ ոճիրներից 94, 40/0-ը ընկնում է չքաւոր գառակարգերի վրայ:

Նոյն բանը աւելի որոշ կերպով մենք տեսնում ենք պրոստիտուցիայի վիրարերմամբ: Բոլոր երկրների և բոլոր ժամանակների վիճակագրութիւնները ցոյց են տալիս, որ պոռնիկների համարեա 100% (այսինքն համարեա բոլորը) չքաւոր գառակարգից են և որ բոլորը զիմում են այդ գժբախտ արհեստին հարկագրուած իրանց չքաւորութիւննից: Օրինակի համար կարելի է յիշել 1855 թուին, 1873 թուին և 1898 թուին Գերմանիայում կատարուած վիճակագրութիւնները: 1) Բաւական պերճախտ է այդ կողմից Փարիզում կատարուած մի վիճակագրութիւն 5000 պոռնիկների վիրարերմամբ: Դրանցից 1440-ի համար պոռնիկութիւնը արգինք է եղել չունենոր և զրծքաղի վիճակի: 1250 հոգի բոլորովին զուրկ են եղել ծնողներից և նիւթական միջոցներից: 230 հոգի գործադրելիս են եղել այդ արհեստը, որպէսզի կերակրին իրանց աղքատ ծնողներին: 1400 հոգի եղել են ամուսնաթող (տղամարդկանց կողմից) կանայք, կարօտ ապրուատի միջոցների: 400 հոգի զանազան կողմերից սպաների և զինուորների միջոցով Պարիզ բերուած աղջկներ են եղել, որոնք գժբախտանալուց յիշոյ, ապրուատի միակ միջոցը անառակութիւնն են գարձրել: Վերջապէս մնացած 280 հոգին եղել են յդի ժամանակ իրանց սիրահալներից թողնուած աղջիկներ:

1871—72 թուականներին Բերլինում արձանագրուած  
2224 պոռնիկներ եղել են իրանց ծագումով

1015 հոգի՝ 47,90/0—արհեստաւորական շրջանից

467 " — 22 0/—զործարանային բանուորների շրջ.

305 " — 14,40/0—փոքրաստիճան ծառայողների "

222 " — 10,40/0—միջին կարգի " "

87 " — 4,10/0—գիւղական " "

26 " — 1,20/0—զինուորական " "

Մնացած 102 աղջիկների ծագումը չէ իմացուել: 2)

Այս տիպիքական աղիւսակը մեզ ցոյց է տալիս, որ պոռնիկների ամենամեծ տոկոսը տալիս են<sup>1)</sup> արհեստաւոր բանուորները, որոնց վիճակը ամենավատթարն է պրոլետարիա-

<sup>1)</sup> See Dr. Alfred Blaschko, «Prostitution im 19. Jahrhundert.»

<sup>2)</sup> August Bebel.—Die Frau und der Sozialismus, J. 176.

կան ըուլոր խաւերից, և 2) գործարանային, կտմ ինստուտրիական ըանուորները:

Պունկութեան և «ոոցիտլական միջավայրի» մէջ եղած կապը պարզ կարելի է դիտել տնտեսական կրիզիսների ժամանակ:

1875 թուից մինչև 1878-ի ժամանակամիջոցը յայտնի է Դերմանիայում իրրե արդիւնաբերութեան անկման շրջան, որ շարունակում է մինչև 82 թուականը: Իսկ 82-ից սկսում է արդիւնաբերութեան ծագկման շրջանը, որ տևում է մինչև 1885 թիւը: Այդ ժամանակամիջոցներում Բերլինի պոռնիկների ցուցակները, ներկացնում են հետեւալ պատկերը:<sup>1)</sup>

Բերլինի բնակիչների թիւը	Ռոտիկանական հսկողութեան տակ գոտնուազ աղջիկների թիւը	Առաջարկակութեան մանե 100,000-ից պոռնիկների թիւը
1875	964,538	2241
1876	995,699	2386
1877	1,024,193	2547
1878	1,054,701	2767
1882	1,196,205	3900
	1883	3769
	1884	3724
	1885	3598
		306
		293
		273

Այդպիսով 1875-ից մինչև 1878-ը տնտեսական կրիզիսի ժամանակամիջոցում, երբ կենսական մթերքների գները բարձրացած և աշխատավարձի չափը ընկած է եղել, պոռնիկների թիւը հետզետէ աւելացել է: Իսկ 1882-ից մինչև 1885-ը, երբ մթերքները սկսել են էժանանալ և աշխատավարձը բարձրացել է, պոռնիկների թիւը սկսել է ընկնիլ:

1886 և 1887 թուականներին հացը, կարտոֆիլը և միսը յանկարծ սաստիկ էժանացել են և պոռնիկների թիւը մօտ 600-ով միանգամից պակասել է:

«Եոյն թուերը,—ասում է Պաուլ Հիրշը,—մենք տեսնում ենք ամեն տեղ: Եելուի տուելով, Լոնդոնի ոստիկանական ստատիստիկան ցոյց է տալիս նոյնպէս, որ պոռնիկների թուի

<sup>1)</sup> Paul Hirsch.

րարձրանալը կամ ընկնելը սերտ կերպով կապուած է հացի գնի բարձրանալու և ընկնելու հետ:

Ճիշտ միենոյն բանը,—աւելացնեաք այստեղ,—մենք տեսնում ենք և ոճրագործութիւնների վերաբերմտմբ: 1875 թուին, կրիզիսի սկզբում, կարգապահ ոստիկանութեան (Ordnungspolizei) կողմից պատժուել են 16,218 ոճրագործներ: 1878 թուին, կրիզիսի վերջում, նրանց թիւը հասել է 22,624-ի: 1882-ին, երբ արդիւնաբերութիւնը սկսել է ծաղկել, ոճրագործների թիւը եղել է 22,765, և հետզհետէ ընկնելով, 1885-ին հասել է մինչև 18,856:

1845 և 1846 թուականներին Բելգիայում և Ֆրանսիայում սով է տիրել: 1845 թուին, Բելգիայում, երգուհանների գատարանը սհիականութեան զէմ գործուած ոճիրների համար գատապարտել է 275 հոգու: 1846 և 47 թուականներին այդ թիւը հասել է 498-ի: Խոկ 1850 թուին, երբ սովի ազգեցութիւնը արդէն վերջացած է եղել այդ թիւը ընկնում է մինչև 168:

Ֆրանսիայում 1845-ին գատապարտուել են 3798 հոգի, 1846-ին—4063 հոգի, 1847-ին—4580 հոգի: Խոկ 1848-ին, սովը վերջանալուց յիսոյ, այդ թիւը ընկնում է մինչև 3287:

Այս թուերը պարզապէս ցոյց են տալիս՝ թէ, որպիսի սերտ կապ կայ կենսական պիտոյքների գների բարձրութեան, կամ առհասարակ մարդկանց տնտեսական վիճակի և ոճրագործութիւնների թուի մէջ: Աըժէ յիշասակել այստեղ և այն նշանաւոր պատմական փաստը, որ 1871 թուին, կոմմունայի ժամանակ, երբ ապագայի ազատ պետութիւնը, ասուպի նման, կարծ ժամանակով շողացել է Եւրոպայի հորիզոնի վրայ Պարիզում, երեք ամսուայ ընթացքում տեղի չի ունեցել ոչ մի զողութիւն, ոչ մի ոճրագործութիւն:

Դառնանք պոռնիկութեան խնդրին:

Պոռնիկութիւնը, ինչպէս յայտնի է, քանի գնում աւելի ու աւելի հրէշաւոր չափեր է ընդունում:

Լոնդոնում գտնուած պոռնիկանոցների թիւը 19 դարու կիսում կազմել է 5000, խոկ պոռնիկների թիւը մօտ 80,000: Ներկայումս, ուրեմն, հազիւ 50 տարի անցած, այդ թուերը կրկնապատկուել են, պոռնիկանոցների թիւը այժմ հաւասար է 10,000-ի, խոկ ուսունիկների թիւը 150,000: Բերլինում պոռնիկների թիւը ներկայումս 50,000-ից աւելի է, խոկ Պարիզում նա կազմում է 120,000: Բնորոշ է ժամանակակից կարգերի

համար, որ պլուստիտուցիան ինչպէս ցոյց է տալիս վիճակագրութիւնը տւելի արագ է աճում քան ընդհանուր ազգաբնակութիւնը. մասնաւորապէս Բերլինում, վերջին 20 տարուայ ընթացքում, նա երկու անգամ տւելի արագ է աճել քան Բերլինի բնակչութեանը:

Ի՞նչու է այդպէս աճում պլուստիտիւնը և ով է այլքան պոռնիկների «սպասողը»:—Այն միլիօնաւոր մարդիկ, որոնք հնարաւորութիւն չեն ունենում շնորհիւ գոյութեան կոուի ծանրութեան ներկայ հասարակութեան մէջ ամուսնանալու, կամ «ազատ սիրոյ» միջոցով բաւարարութիւն տալու իրանց սեռական պահանջներին:

1895 թուին, Բերլինում, ամուսնացած մորդկանց թիւը եղել է 468,000, իսկ ամուրիների թիւը (18 տարեկանից մինչև 50 տարեկան հասակում)՝ 451,000 հոգի: Ահա այդ լիկիօների պահանջին բաւարարութիւն տալու համար անհրաժեշտ են պոռնիկների տամնեալ հազարները: Ժամանակակից տնտեսական անհաւասարութիւնը, ազգաբնակութեան մեծամասնութեան անապահովութիւնը և ազգատութիւնը մի կողմից ստեղծում են տղամարդկանց այդ լէզբիոնները որոնց համար անհրաժեշտ է օգտուել պոռնիկութիւնից: միս կողմից կանանց ահազին բազմութիւններ, որոնք իրանց գոյութիւնը պահպաններու համար հարկադրուած են դիմել պոռնիկութեան: Հաստատուած է նոյնիսկ պետական վիճակագրութեամբ (Գերմանիայում), որ արդիւնաբերութեան բաղմաթիւ ճիւղերում կանանց ստացած վարձատրութիւնը այնրան քիչ է, որ նրանք չեն կարողանայ ապրել, եթէ բացի իրանց աշխատանքի ոյժը ծախելուց, չծախէին նաև իրանց մարմինները:

«Պրոստիտուցիան,—ասում է Բերէլը, իր վերել յիշուած աշխատութեան մէջ,—գարձել է բուրժուական հասարակութեան համար այնպիսի մի անհրաժեշտ սոցիալական հասատատութիւն, ինչպէս ոստիկանութիւնը, զօրքը, եկեղեցին և այլն:» Նոյն միութը արտայայտում է և Կարլ Կառուցին. «Պրոստիտուցիան, պատմում է նա, նոյնպան հին երեսյթ է, որքան հարստութիւնը և ազգատութիւնը: Բայց առաջ պաւաջ պաւանիկները մի տեսակ միջին տեղն էին բռնում մուրացկանների և գողերի վերաբերմամբ: Նրանք՝ լուքսուսի (շքեղութեան) առարկաներ էին, որ հասարակութիւնը կարող էր իրան թոյլ տալ, բայց որից զրկուելը երբէք չէր սպասնայ նրա գոյութեանը: Այժմ ազգատնները և անզործները չեն միայն, որ ստիպուած են ծախել իրանց մարմինները, այլ և աշխատաւոր կանայք: Պրոստիտուցիան այժմ լուքսուս չէ: Նա գարձել է արդիւնաբերութեան զարգացման

հիմքերից մէկը: Կապիտալիստական արդինագործութեան տիրապետութեան օրով, պրոտիտուցիան դառնում է հասարակութեան նեցուզներից մէկը:

Այդքան հրեշաւոր չափեր ու ձեւեր են ընդունում մեղ զրադեցնող պոռնկութիւնը, ոճրագործութիւնները: Եւ այդ բոլորը, ինչպէս տեսանք, իր ամրող գիշատիչ ու մահասփխուու ծանրութեամբ ընկնում է պրոլետարիատի վլայ:

Այդքան սոսկալի է ներկայ հասարակութեան մեծամասնութիւնը կազմող սեփականազուրկ ու չքաւոր գաստկարգի վիճակը:

Այս, սոսկալի է այդ վիճակը, բայց բարեկարդար, պէտք է աւելացնենք մենք, յուսամհատական չէ:

Պատմութիւնը երբէք տեղիք և իրաւոնք չի տալիս իրան ճշմարիտ բժբհնողներին, յուսեան լինելու իր վերաբերմանք: Ստեղծելով իր զարգացման ընթացքում որոշ անհրաժեշտ ու անխուսափելի չարիքներ, նա միևնույն ժամանակ կուռմ-կոփում է այն գէնքները, որ պէտք է հարուածեն ու վերացնեն այդ չարիքները, ճանապարհ հարթելով մարդկութեան ազատ ու յաղթական առաջադիմութեան համար:

Թէ որոնք են այդ փրկարար գէնքները, այս մասին մենք չենք կարող խօսել ներկայ յօդուածում: Ինչպէս նկատել էինք սկզբում, մենք վերցնում ենք այսուղի խնդրի միայն մի կողմը, —պրոլետարիատի ծագման և նրա վիճակի, նրա գոյութեան նիւթական պայմանների նկարագրութիւնը:

Սակայն մի երկու խօսք եւ:

Բուրժուատ գիտնականներից շատերը և մինչև անգամ պրոլետարական իտէօլոգներից ոմանք Բերնշտէյն և բնկ, վերջին ժամանակներս շատ լաւատես են զարձել պրոլետարիատի զրութեան վերաբերմաբ: Ոչ ոք նրանցից չի ուրանում ի հարկէ, որ այդ զրութիւնը սարսափելի է ներկայումս, բայց, առում են, քանի զնում նա նկատելի կերպով լաւանում է: Ճիշտ է արդիօք այդ: Այս հարցին մենք պատասխանեցինք վերև բերած վիճակագրական թուերով և նկարագրութիւններով: Մենք տեսանք, որ ազգաբնակութեան ահագին մասսաները հետքետէ անցնում են պրոլետարեատի շարքերը, որ յաւելեալ արժէքի նորման, ուրիշ խօսքով, ինչպէս գիտենք, բանուոր ների շահագործութեան աստիճանը քանի զնում աւելի ու աւելի բարձրանում է, որ ալկոհոլականութիւնը, ոճրագործութիւնները, պրոտիտուցիան և դրանց հետ կապուած հիւան-

առթիւնները, մահացութիւնը քանի գնում աւելի ու աւելի մեծ չսփեր են ընդունում:

Անկասկած ճիշտ է, որ բանուորները շնորհիւ իրանց կաղմակերպութիւնների և իրանց պրոֆեսոֆօնել կոուժ կարողացել են ստուգել կաղխաղիսաններին որոշ չափով լաւացնել իշրանց աշխատանքի պայմանները, աւելացնել աշխատավարձը և այլն: Ճիշտ է և այն, որ նրանց քաղաքական կուսակցութիւնը, իր պարլամենտական կոուով, կարողացել է հարկադրել կառավարութիւններին միջամտել կապիտալի և աշխատանքի յարարերութիւնների մէջ և մի շաբթ օրէնքներ հրատարակել բանուորների օգտին: Բայց թէ այդ փոքրիկ, անմիջական տնտեսական նուաճումները և թէ ամբողջ նորագոյն «սոցիալական օրէնսդրութիւնը» անկարող են որ և է էական ու աշըի ընկողող փոփոխութիւնն մատցնել պրոլիտարեատի վիճակի մէջ: Նրանք աննշան կաթիլներ են թշուառութեան այն ովկիանում, որ ներկայացնում է իրանից բանուոր դասակարգել զրութիւնը...

Ս. Շ.

# Օ Բ Ե Ր Լ Ե Ն Ե Ր Ը

Վ Ե Պ

Օքնէ Ռազմի

III

Առաջին ընտանեկան ժողովը

Ժանը գանգաղութեամբ հետևեց զանգի ձայնին որ նրան կանչում էր։ Այդ վայրկենին ամին ինչ նրա համար ուրախութիւն էր։ Տարիներից յետոյ վերստին նրա առաջ բացւում էր բնակութեան, աշխատանքի և երջանկութեան մի աշխարհ։ Կուրծքը լի էր անուշ յուղմունքով և մաքերը դառնում էին նրա գլխում, ինչպէս ձկների մի խումբ, որոնք անցնում են ջրի մակերևոյթից, մինչդեռ ուրիշները վարից հետեւում են նրանց։ Եւ այդ վերջիններն էին ընտանեկան կեանք, հասարակական գերի իր բոլոր յարմարութիւններով, երբ նա կը կարողանայ զեղեցկացնել, մեծացնել տմեն ինչ իր շուրջը։ Զրվէժի մօտից ծառուղիով անցնելիս նա քնրոյց զգացմունքով զիտում էր իրանց տունը, հայրական տունը։ Նա պատկասանքով բարձրացաւ սանգուղքի աստիճանները, յիշելով՝ որ պապն է շինել այդ, որին և պատկանում է ամբողջ կալուածը, բացի տախոսակի գործարանից և աշխատանոցից։

Տան մի ճակատից միուսը տանող միջանցքը կտրելով՝ նա բաց արեց վերջին զուռը զէպի ձախ։ Սեղանատունը միակ սենեակն էր, որ ժողէֆ Օքերլէի ճաշակի և ցուցմունքների համեմատ ալերանորոգուած էր։ Մինչդեռ դահլիճում, բիլիարդանոցում և միւս սենեակներում հրեռում էին պապի բերած կահկարասիներ Ուտրեխտի զեղին կամ կանաչ մախմուրով պատած, և ակամուի փայտից շինած։ Դրա հակասակ ժողէֆ Օքերլէի ճաշակը, կամ ինչպէս ինքն էր տառեմ իր ստեղծա-

\*) Տես «Մուրճ» № 5.

գործութիւնը աչքի էր լճակնում գծերի կատարեալ բացակայուածիամբ: Դոյնը բնուում էր ոճի տեղ: Պատերը ծածկուած էին թղկենու շերտաւոր նուրբ տախտակներով մոյզ կապոյտ, մուգ շուշանսպոյն տեղահեղ, մոխրագոյն, մուգ-վարդագոյն, որոնք բարձրանում էին մինչև յարկի կէսը: Վերեւում առաստաղի ներկած գերանների հետ միանալով չորս քառակուսիներ, զարդարուած պատկերներով ներկայացնում էին իրիս, միաթերթ վարդեր, կարմիր շուշան, աղաւնաբօս: Ամեն տեղ, ուր այդ հնարաւոր էր, ուղիղ դիմում: Դոների ցցուած մասերը ձևացնում էին այնպիսի գալարուող գծեր, որոնք լիանի ցողունների պէս չփառն ինչու իրարից փախչում էին խելայիլորէն: Լայն լուսամուտների շրջանակները ալիքածև գոլարաներ ունեն: Եղենու ոլորուն փայտից շինուած աթոռները բերուած էին վիեննայից: Ամբողջը որոշ բնաւորութիւն չունէր, այլ մեղմ լոյսի մի հայք, և բուսական աշխարհի նմանողութիւն: Կարծէք մի ջահիլ ու երջանիկ ամուսինների սեղանատուն լինէր այս:

Սովորական չորս սեղանակիցները, որ ժանը պիտի աեսնէր այնտեղ ուրախութեան այս պատկերին չէին համապատասխանուած: Նրանց ու սեղանատան զարդերի մէջ ներդաշնակութիւն չկար: Նրանցից իւրաքանչիւրը անխախտ կերպով բննում էր նոյն տեղը, բառակուսի սեղանի շուրջը, համաձայն փոխադարձ խորին հակակրութեան ու համակրութեան:

Լուսամուտից գէպի ձախ տիկին Մռնիկ Օբերլէն էր, բոլորվին մօտիկ շեղակտուր փեղկերին, որոնք արտացոլում էին նրա թիկունիքին, իրանց ստուերագծերով: Բարձրահասակ ու նիհար այդ կինը իր գունատ գէմքով, որ ժամանակին լիքն էր եղիլ ու թարմ, իսկ այժմ կնճռու ու վտիտ, այնպիսի արտայայտութիւն ունէր, որ կարծես շարունակ լսում է մի հատիկ խօսք, «Դու մեղաւոր ես!»:

Երբ նրա կարձատես, բայց խիստ անուշ աչքերը անցողակի դառնում էին նոր հիւրին, մինմոյն ժամանակ նրա շըրթունքների վրայ երեւում էր մի եթերային ժպիտ, պատրաստ էր վայրկինապէս քաշուել ու անյայտանալ: Նա երկար էր նայում միայն այն ժամանակ, երբ արգէն դիտէր, որ ոչինչ նրան յետ չի մղի կամ արհամարհի: Այն ժամանակ նրա հայեացքի մէջ կարելի էր տեսնել մի պայծառ մտածողութիւն, խիստ բարի սիրա, որ դեռ ընդունակ էր յափշտակութիւնների և երիտասարդական յոյզերի:

Անհոգ մանկութիւնը նրան բնաւ չէր պատրաստել այն գերի համար, որ ապագայում վիճակուեց նրան: Այն ժամանակ

նա կոչւում էր Մօնիկ Բեհեր, Օրերնէի հինաւուրց Բէհեր ընտանիքից։ Հայրական տան բարձրութիւնից, որ փոքրիկ քաղաքի ամբութիւնների վրայ իշխում էր ևսանկեւնի կոռուպցի հա տեսնում էր իր առաջ անհուն դաշտը։ Պարտէզը՝ ուր նո լազում էր, լի էր տանձենիներով, մշաւագալտր, խաչուած մացաներով, սրափուշ ծաղինիներով, ու միայն մի երկաթեայ ցանցով էր բաժանուած հասարակաց գրուալյարից, որ հաստատուած էր հին պարիսպների տեղում։ Այսպիսով մանուկ օրերից նրա հագում ամեն օր տպաւուրում էր Ալգասի պատկերը և այս հայրենիքի սէրը, որ մի ժամանակ այնովէս երջանիկ էր իր գեղեցկութեամբ, իր խաղաղութեամբ, աղասութեամբ, իր գիւղերով որոնց անունները նա դիտէր, որոնց խաղողի ողկոյդները ցաք ու ցրիւ արտերի մէջ նա կարող էր նկատել։ Մրանցից զուրս Մոնիկ Բէհերը ուրիշ ոչինչ չգիտէր։ Միայն տարին մի անգամ երկու ամսով նա իւրայինների հետ հեռանում էր Օրերնէից, գնում էր Հէյդենրուխ Սէնտ-Օդիլի անուաններում աման անցկացնելու։ Մի անգամ նա տափթ էր ունեցել անցնել վոժի լեռներից իր ամուսնութիւնից մի տարի առաջ Դոմերեսի ուխտ զնալու համար լոթարինդիայում։ Այդ տոթիւ նո երեք օր յափշտակութեան մէջ էր։ Եւ տիկին Օրէրէն միշտ յիշում էր այդ երեք օրը որպէս իր կեանքի ամենասանիսան ուրախութեան ժամանակ, որի մասին նա ասում էր՝ «իմ ճանապարհորդութիւնը միանոյն ժամանակ անկեղծութիւնը և իր երկրի, նրա ընակինների համար մի տեսակ գաղտնի ու յանդու գըն սէր, որ յատուկ է ջահիլ աղջիկներին։ Տեսնելով թէ ինչպէս իր ամուսինը յարում է Ալգասի գերմանական կուսակցութեանը, նա տանջուել էր աւելի քան մի ուրիշը կը տանջուէր ալզասունու իր վիրաւորուած հպարտութեան և մանաւանդ իր մայրենի սիրոյ համար։ Իր զաւակները հետացնում էրն նրանց նոյն պատճառով, որով նա ինքը հետացած էր իր ամուսնուց։ Իր ճակատի կնճիւններից իւրաքանչւրը կարող էր մի անուն ու նենալ, և ցաւ, որ ակօսել էր նրանց, և արհամարհուած բարութիւն, և անօգուտ մնացած հոգացողութիւններ, և հայրենիքի սնարգանք, և անջատումն իր զաւակներից, ինչպէս և ունայնութիւն սիրոյ այն գանձի, որ նա կուտել էր նրանց համար իր ամբողջ կեանքի ընթացքում թէ որպէս աղջիկ և թէ որպէս ջահիլ կին։ Սրտի զանութիւնը էլ աւելի մեծանում էր նրանով, որ տիկին Օրերէն շատ լաւ գիտէր ամուսնուն առաջ նորդող շարժառիթները։ Ամուսինն այդ լաւ հասկանում էր և

իրան ստորացած էր զգում այս վկայի առաջ առանց կարողաւ նալու նրան մեղադրել և որին չէր էլ կարող չյարգել: Նրա համար այս կինը մարմացումն էր այն դատի, որ ինքը ժըխտել էր: Եւ միշտ երբ ինքն իրան արդարացնելու կարիք էր զգում, և դա յաճախ էր պատահում—նա իր կնոջն էր դիմում, և նրա լուռ յանդիմանութեան առաջ, գարձեալ նրա վրայ էր զայրանում: Քսան տարուց ի վեր և ոչ մի անգամ նա չէր կարողացել կնոջ շրթունքներից կորզել մի խօսք յօգուտ Ալզասի գերմանացման:

Ոյժի առաջ ընկճուող այս թոյլ կինը, սակայն չէր հաշտում իրողութեան հետ: Նա իր ամուսնուն հետևում էր զերծ մասնացի հասարակութեան մէջ և այնտեղ իրան այնպիսի արժանապատութեամբ էր պահում, որ ամենը հասկանում էին նրա բոնած դիրքը, բայց և ոչ ոք չէր կարողանում զրա համար նրա դէմ ոխ ոլահել: Այսպիսով նա կարողանում էր ոչ միայն արտաքին վայելչութիւնը պահպանել այլև իր ներքինն զգալ տալ: Զաւակներից զատուած այս մայրը, սակայն անրաժան էր իր ամուսնուց: Նրանք պահում էին դեռ մինոյն սենեակում ամուսնական զոյդ անկողինը: Նրանք մշտական ընդհարումներ ունէին, մերթ լոխն մի կողմից և մերթ բուն ու սուր երկու կողմից: Օբերլէն գիտէր, որ ամուսինը ատում է իր զայտնատեսութիւնը և իր դատելու եղանակը, բայց և նա հաւատացած էր, թէ ինքը չէ միշտ մեղաւորը: Այժմ, երբ երեխաները մեծացել էին նա մտածում էր, թէ պէտք կը լինի գերազանցօրէն կարենը որոշումներ անել նրանց համար, և որ իր երկարատես համբերութիւնից և այնքան զիջողութիւններից յետոյ նա գուցէ իրաւունք ունի խօսել և իր ձայնը լսել տալու:

Նրա աջ կողքին միշտ տեղ էր բռնում պապը, Ֆիլիպ Օբերլէն: Քանի տարուց ի վեր հացից մի հինգ րոպէ առաջ սկզբանատան դուռը բացընած էր, և ծերունին ներս էր մտնում յենուած իր սպասաւորի ձեռքին, աշխատելով քայլել ուղիղ, հազնուած մուգ բրդի թխագոյն զգեստ, կարմիր ժապաւէնը կոճկատեղին, զլուխը յողնած ու կախ, արտեանունքները համարեա փակ, իսկ դէմքը ուռած ու արիւալի: Նրան նստացնում էին մոխրագոյն ծածկոցով պատած ականջաւոր բազկաւթոոի մէջ յետոյ կապում պարանոցից իր անձեռոցիկը: Եւ նա սպասում էր մէջքը բազկաթոոին յենուած, սեղանի վրայ գնելով մոմի պէս զունատ ձեսները, որոնց վրայ երևում էին արիւատար կապոյտ երակները: Երբ սեղանակիցները գալիս էին, ժողեփ Օբերլէն ողմում էր նրա ձեռքը, կիւսիչնը նրան համբուրում էր թեթեակի և մանկական ձայնով մի շարք բաշնիս, 1905.

ներ ասում: Տիկին Օքերլէն կտանում էր և նրա ճակատին գլոշակում էր իր հաւատարիմ շրթունքները: Մերունին շնորհակալութիւն էր յայտնում նայելով թէ ինչպէս նա նասում մինչդեռ է, միւսներինչ էր նայում: Յետոյ նրանք երկուսով խաչակնքում էին երեսները, նին Արգասեան սերնդից այս միտել աղօթողները: Եւ ապա այս լսակեաց ու գիտու հարմանունին, որ ճանաչում էր ծերունու ճաշակլը, նրան ճնշում պատճառող որոշ թուլութիւնները, որ գիտէր կանխել նրա ցանկութիւնները, բաժին էր տալիս ծերունուն, և նա սկսում էր ուտել գանդապոթեամբ, գժուարութեամբ շարժելով իր ծնութի ձգուած ջիկերը: Իր խոհուն գլուխը՝ միշտ յենուած բազկաթուուին, տակաւին հսկում էր աւելուած մարմնի մէջ: Այդ գլուխը, մի բնմ էր, որտեղից մի հաս մարդու հաճոյքի և ցաւի համար անցնում էին նրանց նախահայրերը, որոնց անունները տալիս էին իր առաջ: Նա չէր խօսում, բայց յիշում էր:

Երբեմն նա համում էր իր գրապանից աշակերտական մի քարետախտակ և մի մատիտ, և նա գրում էր անհաստատ տառերով երկու երեք բառ, տալիս էր կարգալու իր հարեանունուն: Այսուեղ տախտակի վրայ նա սովորաբար ուղղում էր մի սխալ ասուած բան, յիշեցնում էր մի մոռացուած տարեթիւն ընդունում կամ ժխտում էր սեղանի միւս ծայրին արտասանուած խօսքեր: Յաճախ իր ծանրացած արտևանունքների թարթելուց իմանում էին որ նա հետարբրուուած է, կամ յուզուած: Բայց դա միայն մի վայրկեան: Կեանքը վերստին թաղւում էր բանափի խորքը, որի փականքը նա ի զուր էր փորձել տեղահան անել: Գիշերը նորից իջնում էր արտայայտուելու անկարող նրա մոքի վրայ: Զնայելով որ այս բոլորը սովորական էր սեղանակիցների համար, այնուամենայնիւ ցաւի և աւերածի այս տեսարանը քարի պէս ծանրանում էր ընտանիքի անդամներից իւրաքանչիւրի սրտի վրայ: Օտարները, որոնց վիճակում էր մի երեկոյ սեղանակից լինել Օքերլէ ընտանիքին, այդ ծանրագրութիւնը այնպէս չէին զգում, որովհետեւ այդպիսի օքերում ծերունին ճիգ չէր անուու փշրելու մանուան և խաւարի այն շղթան, որ ճնշում էր նրան: Ժողեփ Օքերլէն մինչև վերջին տարիները պէտք էր համարում ներկայացնել իր հիւրերին հօրը. բայց մի օր վերջինս գրեց քարետախտակի վրայ հետևեալը. «Ոչ ոքի մի ներկայացրու ինձ, մանաւանդ ոչ մի գերմանացու. թող բարեկն ինձ և այդքանը բաւական է»: Ոքին պահել էր սուկայն ամեն երեկոյ տան ծերունի պետին իր գործարանի ընթացքից տեղեկութիւն տալու սովորութիւնը այս եսասէր մարդի կողմից սա մի յուզիչ միտք էր:

ձաշից յետոյ՝ երբ մայր ու աղջիկ անցնում էին սալոնը, նա ծիսկով պատմում էր հօրը վերջին պոստով սատացուած թղթերի, ուղարկուած ասլրանքի, զնուած ծառերի մասին։ Չնայելով որ Ֆիլիպ Օրերլէն միայն դրամագլխով էր մասնակից իր հիմնած արդիւնագործութեանը, այնուամենայնիւ նա ինքն իրան երեակայում էր գետ խորհրդատու և վարիչ։ Նա ուղում էր խօսել թիկենիների, սօնիների, եղենիների և կաղնիների մասին, որուց մինուլորտում նա անց էր կայցրել յիսուն տարի։ Նա սիրում էր այդ «խորհրդակցութիւնը» ինչպէս կոչում էր նա, երեկոների այդ զրոյցը, որպէս միակ վայրկեանը ամբողջ օրուայ, երբ նա ինքն իր աչքին գառնում էր ուրիշների կեանքում գեր խաղացող մի մարդ։ Դրանից դուրս նա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի համբ և շարժուն ստուեր, որ քննում էր իր տան անցած դարձածը և որ հաղիւ երեմն ասում էր իր վճիռը։

Որդին մի խոշոր հարցի վերաբերմամբ նրա հետ անհամաձայն էր։ Սեղանի վրայ նստած ուղիղ հօր գէմ ու գէմը, ժողեփ Օրերլէն կարող էր ի հարկին ձեւացնել, թէ ինքը խօսում է կնոջ և աղջկայ հետ։ Նա կարող էր չտեսնելու տալ թէ ինչպէս անհամբերութիւնից զողզողում են հօր մասները, կամ ինչպէս նա զրում է տիկին Օրերլէի համար։ Բայց նա այն մարդկանցից չէր, որոնք խոյս են տալիս իրանց համար զառն խնդիրներից։ Ինչպէս բոլոր այն մարդիկ, որոնք իրանց կեանքում առիթ են ունեցել մի ծանր վճիռ կայացնել և այդ արել են հոգու խորին յուղմունքով, նա շարունակ վերադառնում էր նոյն դերմանական հարցին։ Ամեն ինչ նրա համար առիթ էր այդ հարցը վերսկսելու, և գովասանքները, և յանդիմանութիւնները, առաւտեան թերթերի հազորդած մանր լուրերը կամ խոշոր քաղաքական անցքերը, ցրիչի բերած մի բաց նաւամկը, Հանովերից, կամ Դրեզենից ստացուած տախտակի պատուէրը, Լիւսիէնի արտայայտած ցանկութիւնը ներկայ լինել մի պարահանդիմի։ Նա կարիք էր զգում ինքն իրան փառաբանելու իր արածի համար, ինչպէս յաղթուած այն զօրապետները, որոնք բացատրում են իրանց պարտութիւնը այսպէս կամ այնպէս վարուելու անհրաժեշտութեամբ։ Իր հարուստ հոգու բոլոր ոյժերը նա գործ էր դնում խղճի այդ ինդրի վրայ, որ նա համարում էր վաղուց լուծած, որը վէճի պատճառ չէր գառնում ոչ ծերունու կողմից և ոչ էլ այն ճնշուած ու ինքն իրան լուռթեան գատապարտած կնոջ կողմից։

Միայն Լիւսիէնն էր, որ քաջալերում և պաշտպանում էր հօրը։

Նա այդ անում էր ջահիլներին յատուկ վճռականութեամբ, որոնք դատում են առանց խնայելու ծերերի ցաւոս սիրտը, նրանց յիշողութիւնները, անցեալի հմայքը և առանց հասկանալու իսկ այս բոլորը, որ նրանց թւում է մեռած և լոկ խելքի ենթակայ: Նա քսան տարեկան էր, խիստ հպարտ, բայց անկեղծ բնաւորութեամբ, միամիտ հաւատով դէպի իր անձը, և անզուսպ խառնուածքի տէր. գեղեցկութեան հոչակ ուներ որ միայն կիսով չափ էր ճշմարիտ. բարձրահասակ և հոյեակապ ինչպէս մարդ, նա հօրը նմանում էր լայն զիմագծերով, որ յատուկ է ալզասեան տիպին, և գիրանալու հակամէտ էր երևում: Մարմինը կատարելապէս ձևակերպուած էր և փարթամ, այնովէս որ նրան առաջին անգամ տեսնողները համարում էին մի ջահիլ կին և ոչ աղջիկ: Նրա դէմքը չափազանց բաց էր և գիւրաշարժ:

Ժպտալիս՝ և՛ նրա աչքերը, որոնք աւելի փոքր էին ու նուազ կանաչագոյն քան իր եղրօրը, և նրա բերանը ընդունում էին երկարաւուն ձև: Եւ երբ նա ականջ էր դնում՝ հետեւելով որևէ խօսակցութեան, աչքերում կարելի էր կարգալ նրա միտքը: Նա քիչ անգամ էր երազուն: Նրա աշխարհիկ յաջողութիւնները, իր կայտառ բնաւորութիւնից գուրս, վերագրելի էին նրա մի այլ հմայքին, նրա դէմքը ու կարմիր շրթունքների աննման գոյնին դալուկ փայլով շէկ մաղերին: Բոյցադոյն խոպավներով զարդարուն այդ մաղերը այնքան հարուստ և այնքան ծանր էին, որ կոտրում էին սարափի սանտրերը, զուրս պլրծնում բորսցներից և քաշ ընկնելով դէպի յետ, նրան ստիպում էին բարձր պահել գլուխը, ողողելով ճակատը լոյսի ցոլքերով, իսկ ծոծրակի վրայ կազմելով մի ոսկեզօծ ծալք: Այս բոլորը լիւսիեն Օբերլէին տալիս էր մի հպարտ աստուածունու զլիի կեցուածք: Իր քենի Ուրլիխը նրան ասում էր ծիծաղելով՝ քեզ համբուրելիս ևս կարծում եմ թէ գեղձ եմ համբուրում: Նա լաւ էր քայլում, և հմուտ էր զնդախաղի մէջ: Նա մանաւանդ շատ լաւ լողում էր և յաճախ Բաղեն-Բաղենի թերթերը տպել էին նրան անուան սկզբնատառերը այն յօդուածներում ուր նրանք հոչակում էին «մեր լաւագոյն լողացողները»:

Ֆիզիքական այս դաստիաքակութիւնը նրան արգէն հեռացրել էր իր մօրից որ թէս զբօսանքի խիստ սիրահար էր, բայց միջակ քայլող: Կային և ուրիշ պատճառներ, որոնք այս մայր ու աղջկան անգարձ կերպով բաժանել էին իրարից խորապէս: Եւ դա աղջկայ ստացած դասիարակութիւնն էր Մինդ-ների գիշերօթիկ վարժարանում, որ գիտական, հանդիսաւոր ու իմաստակ, աւելի ցրուած՝ և նուազ կրօնական. մինչդեռ մայրը

գաստիարակուել էր մասամբ Օբերնէում, մասամբ Ստրասբուր-  
գի Մինեօր փողոցի Աստուածամօր կոյսրի մօտ: Բայց ամենից  
աւելի նրանց բաժանողը նրանց միջավայրը և յարարերու-  
թիւններն էին: Լիւսինը հօր պէս փառասէր և նրա պէս դէ-  
պի յաջողութիւններ ձգտող, բոլորովին դուրս մնացած մօր  
ազդեցութիւնից, եօթ տարի շարունակ յանձնուած զերմանացի  
վարժուհիների, ամենից երես տուած, մէկ տեղ շնորհիւ իր  
բնաւորութեան հմայքի, ուրիշ տեղ քաղաքական պատճառնե-  
րով, կամ նրա հոգին անգիտակցարար փոխելու միտումով—էին  
ալզասցիներից բոլորովին տարբեր յատկութիւններ էր ձեռք  
բերել: Տուն վերադառնալով, նա էլ չէր հասկանում իր ցեղի  
և իր ընտանիքի աւանդութիւնները: Նրա համար բոլոր նրանք  
որոնք պաշտպանում էին իրերի նախկին կացութիւնը կամ ցա-  
ւում նրանց համար, ինչպէս մայրը, բեռին և իր պապը—մի  
անցած շրջանի և անխորհուրդ կարծիքների ներկայացուցիչներ  
էին: Եւ նա իսկոյն անցաւ հօր կողմը միւսների դէմ: Բայց  
նա տառապում էր և տիսրում տեսնելով բոլորովին մօտիկ ի-  
րան այս կարգի մարդկանց, որ Միւնդների ամրող դպրոցը  
ինչպէս և իր շրջանի ծանօթները Բաղեն-Բաղենում և Ստրաս-  
բուրգում համարում էին յետաղէմ: Երկու տարի էր, ինչ նա  
ապրում էր հակասութիւնների մթնոլորտում: Դէպի իւրային-  
ները՝ նա իրար հակասակ զգացմունքներ էր տածում: Այսպէս  
օրինակ, նա իսկապէս սիրում էր մօրը, միւնոյն ժամանակ  
խղճում, որ նա պատկանում է մի դատապարտուած սերնդի,  
ինչպէս մի անցած դարի: Նա սրտակիցներ չունէր: Ժանը, իր  
եղբայրը, արդեօք կը հաօկանամը նրան: Նա անհանդիստ էր  
նրա գալստեան առթիւ, ինքը նրան միանգամայն անծանօթ  
էր, միւնոյն ժամանակ սէր էր վնդում, և յունած էր ըն-  
տանեկան կոիւններից: յոյս ունէր նաև որ Ժանը նրա կողմը  
կը բռնէր, և կը դամնար նրա համար մի յենարան, մի նոր  
փաստ: Ահա թէ ինչու, նա և՛ շտապում էր տեսնել եղրօրը և՛  
երկիւլ էր կրում: Հայրը նրան հաղորդել էր ժանի հետ ունե-  
ցած իր խօսակցութիւնը: Եւ նա պատասխանել էր, համարեա  
ճշալով «Ճնորհակալ եմ, որ եղբօրս տալիս ես ինձ:»

Նրանք չորսով նստել էին սեղան, երբ ներս մտաւ երի-  
տասարդը:

Երկու կանայք, որոնք իրար դէմ տեղ էին բռնել լուսա-  
մուտից թափուող լոյսի տակ, գլուխները դարձրին, մէկը մեղ-  
միւ և այնպիսի ժպիտով, որ կարծես ուզում էր ասել: «Ա՛խ  
ինչպէս հպարտ եմ ես իմ զաւակով»: Միւսը յիտ ընկած աթո-  
սի թիկունքներն, շրթունքները կիսաբաց, հայեցքը քնքոյշ,

ասես մտնողը իր նշանածը լինէր, նրան դուր գտլու ցանկութեամբ բռնուած և վստահ, որ դուր կը գայ ասաց բարձրաձայն. «Արի այստեղ, նստիր ինձ մօտ, սելանի ծայրին: Նայիր, ես գեղեցկացրել եմ ինձ քո պատուին»: Եւ նրան համբուրելով աւելացրեց ցած ձայնով «Տէր Աստուած, ինչ լաւ է, երբ կարող ես մի ջահիլ մարդու բարե ասել»: Երիդներով մէջ ընդ մէջ զարդարուած իր կտորոյտ մեապսեայ կորսածի մէջ նա զիտէր աչքի դուրեկան դունալ: Նա խիստ ուրախ էր տեսնելով եղբօրը, որի վրայ նախընթաց օրը, երբ ինքը Ստրատորուրգ էր մեկնում, հազիւ կարողացել էր աչք ձգել. Ժանը նրան շնորհակալութիւն յայտնեց իր սիրալիի ու երջանիկ հայեացքով և նստեց սեղանի ծայրին մօտ և քրոջ մէջտեղը և ըաց արեց իր անձեռոցիկը: Մօտեցաւ սպասաւոր վիկտորը, ալզասեան մի զիւղացու որդի, լուսնի պէս կոլոր զէմքով, փոքրիկ աղջկայ աչքերով, որ միշտ վախենում էր մի բան սիսալ անել, մօտեցաւ նրան կերակրով լի ամանը ձեռքին, երբ ժողով Օքերէն, նշանակելով ինչ որ իր ծոցատետրում, քաշեց իր երկու փափորիսները և ասաց.

—Տեսնում էր Ժան Օքերլէին, հայր, Մհնիկ և դու, Լիւսիէն, նրա մասին ձեզ նորութիւն ունիմ հազորդելու: Ես թոյլ տուի նրան ապրել Ալշէյմում վերջնականապէս և դասնալ վայտավաճառ:

Երեր զէմքեր միանգամից կարմրեցին: Նոյնիսկ Վիկտորը տերեկի պէս զողալով յետ քաշեց ամանը:

—Միթէ, ասաց Լիւսիէնը, որը չէր կամենում մօրը ցոյց տալ, թէ ինքը արդէն զիսէ այդ. միթէ նա չպիտի վերջացնի պաշտօնի թիկնածութեան համար նշանակուած ծառայութիւնը.

—Ոչ.

—Իր կամաւոր զինուորութիւնից յետոյ ուրեմն նո յիշտ կը գայ այստեղ ընդմիշտ:

—Այն, ընդ միշտ մեզ հետ:  
Երբեմն յուգունքի երկրորդ վայրկեանը աւելի անտանելի է, քան առաջինը:

(Կը շարունակուի)

# ԱԵՐԿԱՅ ՃԱՊՈՆԼ<sup>1)</sup>

Մ Ի Շ Ե Լ Ռ Լ Վ Ռ Ո Ւ Ի

Առանց կանդ առնելու տիրապետութեանց և պատերազմների յաջորդութեան վրայ, երբ մարդ զբաղուի միայն մհծյեղաշրջումներով, որոնք՝ առանձին վեցըրած՝ իրօք որ նետաքրիր են, և մէկ լնդհանուր հայեացը ձգէ ճապոնի պատմութեան վրայ, կը նշմարէ երկու խոշոր գէպքեր. սրանք ամենից աւելի զերակշոող են և ցցում են ազգային զարգացման երկու էական կէտերում. մէկն է՝ Քրիստոնյաց յետոյ վեցերորդ դարում չինական քաղաքակրթութեան ներմուծումը, իսկ երկրորդը՝ արևմտեան քաղաքակրթութեան ներմուծումը, տասնիններորդ դարի կէսերին:

Ապա ուրեմն ճապոնական պատմութիւնը բաժանուում է երեք գլխաւոր շրջանների, որոնք վերաբերուում են քաղաքակրթութեան երեք րոլորովին տարրեր վիճակների. առաջին՝ նախական քաղաքակրթութեամբ, երկրորդ՝ հին ճապոնը, ուր չինական ճապոնն իր ինքնուրոյն քաղաքակրթութիւնն աւելանում է աեղականինի վրայ, և երրորդ՝ նոր ճապոնը, ուր արևմտեան քաղաքակրթութիւնը գալիս է ամբողջացնելու միւս երկուուրը:

Հէնց այս վերջին շրջանն է, որ պիտի պարզեմ:

Քիչ առաջ ասածից արդէն նետեում է որ 1867-ի ճապոնական յեղափոխութիւնը նրա պատմութեան մէջ միակը չէ, այլ 550 թուին (Ք. յ.) ունեցաւ իր նախորդը: Եթէ տասնիններորդ դարի այդ յեղափոխութիւնը զարմացրեց եւրոպացիներին, որոնք քիչ են վարժուած արագ կազմակերպութեանց,

1) Յօդուածի հեղինակ՝ ուսուցչապետ Մ. Մըլոն ճապոնում երկար տարիներ ուսումնասիրած է ճապոնացիների լեզուն, պատմութիւնն ու հին և նոր քաղաքակրթութիւնը, որոնց մասին արդէն պատկանելի էջեր է հրատարակած:

ընդհակառակը՝ ճապոնացիներին բոլորովին բնակչութեամբ թուեցաւ, նրանք տասներեք դար նոյն ճկունութեամբ և հաստատութեամբ արդէն կատարել էին ուժի միևնոյն շրջանը, գեր աւելին էին արել նախորդ յեղափոխութեան ժամանակ, որը շատ աւելի խոր էր, քան երկրորդը. վերջինս չէ ներկայացնում այն հրաշալի բնաւորութիւնը, որ ընդհանրապէս վերագրում են նրան:

Մեղ հաշիւ տալու համար, սկսենք լաւ որոշել այս յեղափոխութեան իսկական պատճառները, որոնցից պիտի ծաղէր նոր ձապոնը, որովհետեւ այլապէս չենք հասկանայ այն արդիւնքները, որոնք ծնուեցան այդ պատճառներից. իսկ սրանք արդէն պարունակում էին ժամանակակից յառաջադիմութեան սաղմերը:

Երբ մարդ դէպքերի լոկ մակերևոյթականը, արտաքինն է դիտում, հարցը խիստ պարզ է թւում. կարծես հետեւել պատկերն է ստացւում:

Տասնըվեցերորդ դարի կէսերին պորտուգալցիներն էին, որ երեան հանեցին ձապոնը. Մենդել Պինտոն առաջին անգամ 1842-ին ցամաք գուրս եկաւ ձապոն, և սուրբ Ֆրանցիսկոս Թոմերը եօթը տարի յետոյ եկաւ՝ այնտեղ առաջին անգամ քարոզելու ըրբատոնէութիւնը: Յետոյ սպանացիները հասան իրանց հերթին, և որանց հետ էլ Փրանչիսկեան կրօնաւորները: Ձապոնցիներն սկզբում հիւրասէր բարութեամբ ընդունում են այս օտարականներին, «հիւսիսային բարբարոսներին». բայց քիչ յետոյ, մի կողմից պորտուգալցի վաճառականների ու ճիզուիտների, իսկ միւս կողմից սպանացի վաճառականների ու Փրանչիսկեանների մէջ կըբոտ մըցութիւն է ծագում և այն աստիճան, որ սպանում է խանգարել ժողովրդի խաղաղութիւնը: Միևնոյն ժամանակ՝ ճապոնցիները նկատում են, որ, սովորակար, երբ եւրոպացիք քարոզիչներ են ուղարկում հեռաւոր կողմեր, քիչ յետոյ էլ զինուորներ են ուղարկում: Ուստի կասկածում են, թէ չինչ կրօնափոխութեան մի վիրած է դա, որ կանխագուշակում է տիրապետական ձգտում: Ահա թէ ինչու տասնեօթերորդ դարի սկիզբից մի արմատական հրաման արգելեց քրիստոնէութիւնը, արտաքսեց քարոզիչներին. միայն հոլլանտացի վաճառականներին թոյլ տրուեցաւ մտնել երկիրը. սրանք խաղաղասէր առևտրականներ էին:

Այսպիսով՝ արշիպելագոսի հանգրուանները փակուեցան. ապա ձապոնը խաղաղ ապրեցաւ և փակուելով ինքն իր մէջ՝ միշտ զարգացրեց իր զտուած քաղաքակրթութիւնը: Այս խորին խաղաղութիւնը տեսեց մօտ երկու հարիւր յիսուն տարի:

Բայց 1853-ին հասնում են չսկ նաւերը։ Հրամանատար Պերսին Ամերիկայի անունով գալիս է, բոնի մտցնում արևմտեան վաճառականութիւնը։ Ճապոնցիք թհողանօթների սպառնալիքների տակ զիջանում են այդ գերազանց ուժին։ Ճապոնը բացւում է և արևմտեան քաղաքակրութիւնը վերջապէս կարող է ազատ թափանցիկ այնտեղ։

Այս է իրերի արտաքին տեսքը։

Սակայն եթէ խնդրի խորը քննենք, պատկերն իսկոյն կը փոխուի. Պերրիի գալուսար լոկ մի առիթ կը թուի, որ կը շտափեցնէ վաղուց պատրաստուած ձկնաժամը. այսինքն՝ կային զօրեղ պատճառներ, ճշմարիտ հիմքեր՝ հեռաւոր ու խոր։

Ի՞նչ էին ժողովուրդն զբաղեցնող պատճառները։

Այդ պատճառները նախ՝ բարոյական, ապա՝ տնտեսական և յետոյ՝ քաղաքական էին։ Համառօտակի նշանակենք այդ բուլորը, որովհետև զրանք արդի կաղմակերպութեան իսկական իմաստը լաւ ըմբռնելու կ'օգնեն մեզ իսկոյն։

Բարոյական պատճառները կարող են երեք գլխաւոր ձըգատումների բաժանուել—չինական զասական ոգին, ապա ճապոնական ազգային ոգին, և յետոյ՝ արևմտեան գիտական ոգին։

Մրանցից առաջինը սովորեցնում էր՝ 'ի միջի այլոց, թէ քաղաքականութիւնը ծագում է բարոյականութիւնից, և հետեւաբար, եթէ միատեսդը բոնաւոր գառնայ, ժողովուրդն իրաւունք ունի ապստամբելու նրա դէմ։ Հին իշխանութեամբ՝ ճապոնական կայսրութիւնն երկու ներկայացուցիչ ունէր. վերեւում՝ կայսրը, իբր ամենաակարողութեան տեսական ազրիւր. իոկ ներքեւում Շոգունը, որ իրաւունքով պարզ հրամանատար, իսկ իրօք՝ Փիզիքական ոյժի յափշտակիչ էր։ Ճապոնացոց հայիացըով Շոգունն էր բոնաւորը, և նրան կործանելու ամենալաւ միջոցն էր նրան ներկայացնելի իբր անհաւատարիմ պաշտօնեայ, իբր կայսեր երկնային իրաւունքի հակառակորդ։ Այսպէս՝ տասնեօթերորդ գարուց սկսած՝ ազնուազարմ իշխան Միտոն քաջալերում էր փիլիսոփայ պատմիչների մէկ ամբողջ դպրոց, նրանց երկերին նպաստելու համար մէկ միլիօնից աւելի ծախսելով տարեկան։ Մրանց երկերը մանաւանդ տասնեօթերորդ գարում, ժողովրդի մէջ տարածեցին կայսերական վերակազմութեան գաղափարը։ Վերոյիշեալ տոհմի վերջին գլխաւորն էր, որ հնչեցրեց յեղափոխական ազգարարը։

Դասնանը ազգային ոգուն, նշանաւոր մատենագիրների մի խումբ, ազգային հնութեան հիացըով լեցուած, ալխատում էր վերակենդանացնել ամբողջ նախնի ճապոնը, կրկին ներմուծել Շինտոյիզմը, և հետեւաբար վերահստատել աստուած-

ների որդու հեղինակութիւնը \*): Այս նոր մատենագիրները ծայրացել ազգասէրներ էին, խորշում էին ամեն օտարոտաւթիւնից: Սակայն, ինչպէս որ կայսրը չինասէր գիտաների համար իդէալական իմաստուն էր, այնպէս ել ճապոնասէր գիտուների համար նաև կենդանի աստուած էր, որին ամենքը պարտաւոր էին ծառայել. ահա թէ ինչ էին բարողում նրանք իրանց անթիւ զլութիւններով՝ ամբողջ տասնութերորդ դարի ընթացքում: Եւ այսպիսով էր, որ սմենաազգու կերպով պատրաստեցաւ յեղափոխութիւնը՝ պահպանողական հնագէտների մի խմբի ձեռքով:

Վերջապէս, փիլիսոփայ պատմագէտներին և ապա հայրենասէր պատմագէտներին եկան, միացան իսկական զիտականները: Շոգունական կառավարութիւնը ժողովրդական կը թութեան համար շատ բան էր արել. սակայն այդ կառավարութիւնը միայն գրական ուսմունքներն էր ճանաչում. նա արգելում էր զիտական ուսումնասիրութիւնները՝ վախնալով այն վտանգաւոր նորութիւններից, որ դրանցից կարող էին ծնուիլ: Բայց ճապոնցիները արդէն ձանձրացել էին զասական հին ճարտասանութիւնից, նոյնպէս լեզուարանութիւնից, ոչ պակաս նաև պատմութիւնից: Այս տեսակէտներից՝ նրանց տասնութերորդ դարը նոյնչափ բեղմնաւոր է, որչափ ֆրանսական աւանդներորդ դարը, և որոնումների դաշտը գրեթէ սպառուել էր: Նբանք կուղէին ուսումնասիրել լնագիտութիւն, քիմիա, մանաւանդ կենսաբանութիւն, որն այնպէս հարուստ է օգտակար կիրարկութիւններով: Սակայն 1771-ին էր միայն, որ հոչակաւոր բժիշկ Սուղիտա Դիմրակուն կարողացաւ անդամահատել՝ առաջին անդամ՝ մէկ ոճրագործի զիակ: Այսուամենայնիւ ճապոնցի զիտականները մինչեւ այդ ժամանակ շարունակում էին աշխատել խիստ ծածկաբար և իրանց կեանքը վտանգի ենթարկելով: Իրերի այս դրութիւնն արդէն ցոյց էր տալիս, թէ շողունական կառավարութիւնը թշնամի էր յառաջադիմութեան, այնպէս որ ազդի ամբողջ մտածող դասակարգը հետղնետէ պատրաստեց նրա անկումը: Այսպիսով՝ դասական ոգին տասնութերորդ դարից ի վեր սկսել էր շունչականութեան բարոյական հիմքերը կործանել. ազգային

1) Բնթերցողին յայտնի է, որ ճապոնական աւանդութեամբ, նրանց կայսրը ծագում է աստուածների սերնդից և անընդհատ ժառանգութեամբ համարում ցարդ. և ահա վերոյիշեալ մատենագիրների ձգտումն էր շեշտել նաև այդ խնդիրը, տալ նբան գործնական իմաստ, որ ի վերջոյ յաջողեցրին:

ողին տասնութերորդ դարում ամենամեծ ուժգնութեամբ ցընցել էր այդ հիմքերը. տասնիններորդ դարում էլ զիտական ողին եկաւ, հասցըրեց վերջին հարուածը:

Որպէսզի ամեն ինչ տապալուէր, շոգուններին մնում էր միայն, զարգացեալ զասի առելութիւնից յետոյ, գրգռել նաև ժողովրդի զժգոնութիւնը և իշխանների զզուանքը: Շուտով տնտեսական կեանքում համդէս եկաւ զա, քանի որ աւելի էր ծանրացած օտար արտադրութեանց ներմուծումն արգելող ճիւազային սիստեմը, վերջինս երկու դարից ի վեր փակում էր ձապոնն արտաքին ամեն վաճառականութեան առջև, իսկ երկրի ներսում բոյն էին դրել գաւառային մաքսատները, աշխատաւորներին ճնշող կարգեր կորպորացիաներ, (согороди-  
ration), արլստներ, կարճ խօսքով՝ ամեն տեսակ կեղծ հնարք-ներ, որ կարող են աւերել մի ժողովուրդ: Կայսրութիւնը չէր կարող այլ ևս կերակրել իր աճող լնակիչներին. սովերը, համաձարակ ախտերը հասնում էին իրար յետից՝ առաջ բերելով ապստամբութիւններ, որոնցից մէկի պարագլուխը հէնց ինքը Հենաչիրօ փիլիսոփան էր: Աղ-  
գը շնչառապառ էր լինում այս փակուած արշիպելագոսում, և խնդրում, որ իրան տան օդ, աղատութիւն, թոյլ տան գործադրել իր ուժերը:

Այստեղից տեսնում է, որ տասնիններորդ դարում երկրի բացուելը չէր, որ տնտեսական կեանքում արտադրեց վերջնական պայմումը: Բնդհակառակը, տասնեօթերորդ դարում երկրի փակուած լինելն ու չափազանց ճնշուած դրութիւնն էին, որ յառաջացրին այդ պայմութիւնը:

Վերջապէս քաղաքական պատճառներն էլ շտապեցրին այդ քայլայումը: Ինչպէս Փրանսական հին միապետութիւնը, շողունական կառավարութիւնն էլ՝ միաժամանակ բազմաթիւ սխալներով ու անշնորհք վերանորոգումներով՝ վտանգել էր վարչութիւնը՝ ամբողջ տէրութեան այդ էական հիմքը: Կառավարութեան նախանձող իշխանների ագանութիւնը կարողացաւ օդուել անկման այս շրջանից: Հիւսիսակողմեան մհծատոհմ Սացումանեանը, Զոշիունեանք պատրաստում էին քաղաքական կոուիք. իսկապէս կարելի է ասել, 1850-ից արդէն դատապարտուած էր հին ոհժիմը:

Եւ ահա հէնց այդ ժամանակ էր, որ ներքին այս պատճառների ազդեցութեանը գալիս է, նպաստում՝ արտաքին, վըճռական պատճառը, այսինքն՝ գալուստը օտարների, որոնք արդէն շատ անգամներ, տասնիններորդ, դարի առաջին ամբողջ կիսին, եկել էին արդելուած կզզու չորսդին թափառելու. —

ոռւսները 1805-ից, յետոյ՝ անգլիացիք, վերջապէս՝ ամերիկացիք Կալիֆորնիայի գաղութ լինելուց ՚ի վեր: 1842-ին կառարութիւնը սարսափած՝ հրամայեց իշխանական զարմերին (daimios) զինուել այդ կարելի թուացող յարձակման դէմ: Դա նման էր հոռվմայական կառավարութեան այն խոհեմ հնարքին, որով երկրի սահմանների պաշտպանութիւնը յանձնում էր բարբարոս պիտերի: 1846-ին իշխան Միտոն խնդրեց Միացեալ Նահանգներին, որ մի նաւատորմիդ ուղարկեն ձապրոն: 1853-ին Պերրիի հրամանատարութեամբ հասաւ այդ նաւորմիդն ու քիչ յետոյ բռնկել տուեց յեղափսխութիւնը:

Թէ ինչպէս եղաւ այդ յեղափսխութեան ընթացքը, որ կարելի է այնքան տեսակէաներից մօտեցիլ գրանսականին, այստեղ չնոք կարող մանրամանորէն մէջ բերել բաւականանք յիշատակելով թէ, երկրի նկրառում, որա ընդհանուր արդիւրներն եղան շոգունականութեան կործանումը, Փէօդալականութեան ջնջումը, և վերանորոգուած կայսերական իշխանութեան ձեռքում հաւաքուած վարչական նոր կեդրոնացումը: Իսկ արտաքին մասում՝ երկրի բացումը և անմիջական շփումը քաղաքակիրթ աշխարհի մնացեալ մասի հետ:

Սակայն ինչ որ ամենից աւելի պէտք է շեշտել՝ դա այն գանդաղ կազմակերպութիւնն է, որ այս մհծ շարժումին կարապետեց, որովհետեւ դա շատ պարզ կերպով և հէնց սկզբից մեզ ցոյց է տալիս յաջորդող յեղափսխութեան ընոյթագծերը: Իրօք ի՞նչ էին ուզում ճապոնցիք, երբ կործանում էին կառավարական նախկին ձեւ:—Ուզում էին ընդունել մեր կրօնութերք:—Ուզում էին իւրացնել մեր բարոյականութիւնը: Երբէք:—Ուզում էին լուսական մեր ընտանեկան կամ ընկերական կազմը: Ոչ էլ այդ: Նրանց ճշմարիտ ցանկութիւնն էր, և կրի ներսում, ջնջել ատելի դարձած կառավարութիւնը: Իսկ արտաքին կողմից՝ փոխ առնել Արևմուտքից սրա նիւթական յաջողակութեան տարրերը: Ոչ մի բան աւելի բնական չէ, քանի որ մի կողմից վաղուց ի վեր նրանք նախանձում էին մեր գիտութիւններին և դրանց օգտակար կիրարկութեանց, այսինքն միակ բանին, որ գեռ պակասում էր ճապոնական քաղաքակրթութեան: և քանի որ միւս կողմից՝ երբ Արևմուտքը գալիս է սպառնալու՝ նրանք իսկոյն ըմբռնում են, որ անհրաժեշտ էր միւնոյն ձեռվ զինուել, որպէս զի կարող լինին պաշտպանուիլ: Միաժամանակ զգում էին, թէ իրանց հին երազի իրազործումովը (այսինքն՝ օտարների հետ վաճառականութիւն) անհրաժեշտ էր ազգային հարստութիւնը զուգընթացօրէն աճեցնել:

Ուստի այժմեանից կարելի է դուշակել, թէ ինչ կը դառնայ ներկայ ծապոնը:

Ինչպէս լաւատեսներն են կարծում, գուցէ այդ տարօրինակ ժողովուրդը հրաշագործ ու անսպասելի մի յեղաշրջում կ'ունենայ, և, սիրահար մեր զարգացման՝ միանդամբից և հիացքով ու ամրողջովին կընդունէ և մի քանի տարում կիւրացնէ մեր քաղաքակրթութիւնը: Կամ, այդ կիսաբարբարոս ցեղը մի դժբախտ ու շտապ յեղաշրջում կունենայ, և մեզ նըմանելու ազահութեամբ՝ լոկ մակերեսոյթօրէն և բեկունութեամբ կը կարողանայ մեղ նմանուել:

Ո՛չ մէկը և ոչ էլ միւսը. այլ խիստ լուրջ և խիստ խոհմարար կը կաղմակերպուի այդ զտուած ազգը, որ գիտէ ընտրել ինչ որ ուրիշների ընտիր մասն է կազմում, և որ կատարեալ ու լաւ հասկացողութեամբ է անում ամեն ինչ: Ուրեմն մեր բարոյական կեանքին բնաւ չեն հետեւում, միակ բացառութիւն կազմում են մտաւոր որոշ մեթոսներ: Խոկ մեր ընկերական կեանքին նոյնպէս չեն հետեւում, բացի ճոխութեան վերաբերեալ մի քանի հաստատութիւններից, որ օգտակար կը լինէր ցոյց տալ օտարներին: Սակայն գրա փոխարէն մեր նիւթական կեանքին արագ և կատարելապէս հետեւեցաւ այն ամեն բանում, որ կարող էր լինել իրօք գործնական:

Այս է, որ պարզ երեսում է, երբ մարդ՝ օդային դիտողութիւնները մի կողմ թողնելով՝ մօտից զիտում է խնդրի էութիւնը, մէկիկ-մէկիկ ճշգրիտ կերպով քննելով այն ճշմարիտ գործերը, որոնցից կաղմաւում է մի քաղաքակրթութիւն:

Պարզ է, որ չենք կարող այստեղ այդ երկար ու կանոնաւոր ուսումնասիրութիւնը տալ. էական արդիւնքները ուրուագծելով բաւականանաք, Ուստի, ճապոնական քաղաքակրթութիւնը յառաջ բերենք՝ անցնենք մակերեսոյթական արտաքինից, որը քաղաքակրթութեան լոկ փայլուն փրփուրն է կազմում, և ուղղակի դիմենք խնդրի խորը, այսինքն՝ մարդու խւական կարիքներին, որոնք բոլորն էլ ձգտում են մեր կեանքին գոհացում տալու. յետոյ ամեն քայլափոխում համեմատենք հին ռեժիմը նորին հետ:

Մարդկային կեանքում ամենից առաջ նկատուող տարբերը միշտ սկզբնական երեք կարիքներն են—սնունդ, քնակարան և հագուստ: Տեսնենք արևմտեան ազգեցութիւնը կարողացաւ որ և է բարեփոխութիւն մտցնել այդ կարիքների մէջ:

Սնունդի կողմից՝ յիշատակութեան արժանի ոչ մի փոփոխութիւն չէ կարելի ցոյց տալ: Մնունդի և խմիչքների քա-

Նաևի տեսակէտից նախկին կառավարութիւնը հաստատած էր ծախսի վերաբերեալ խնատ մանրակրկիտ օրէնքներ, որոնց նպատակն էր արգելել մանաւանդ շոայլ ծախսերը. ընտանիքների համար որոշուած էին՝ նրանց ընկերական պայմանների համեմատ՝ խիստ պարզ սննդացուցակներ: Նոր կառավարութիւնը ջնջեց այս օրէնքը, որ առաջին հայեացը լունաւորէ, իսկ էապէս՝ հայրական: Բայց ճապոնցոց ժուժկալութիւնը միշտ միենոյն մնաց, և յատիկապէս խմիչքների նկատմամբ նրանք դեռ շարունակում են իրանց սոսկումը: Իսկ ինչ վերաբերում է հեղուկ կամ թանձր սնունդների որակին, այդ ևս ոչ մի փոփոխութիւն չի կրեց: Հանքային ծագում ունեցող սնունդները ոչ մի փոփոխութիւն չի կրեցին: Բուսական ծագում ունեցողներից գարեջրի հետզհետէ աճող սովորոյթից աւելին չէ կարելի ցոյց տալ: Գարեջրի արտարութիւնն էլ, սակայն և այնպէս, աւանդական բրնձագինու մէկ քառասներորդ մասից աւելի չէ: Կենդանական ծագում ունեցող ուտելիքների կողմից՝ հաշուեցուցակները ցոյց են տալիս մսի գործածութեան որոշ չափով աճելը: Սակայն ճապոնցիք էապէս մնացել են ինչ որ էին, այն է՝ բռնակեր և ձկնկեր:

Կը նշանակէ, որ սննդի խնդրում արեմտեան ոչ մի լուրջ ազգեցութիւն չեն կրած ճապոնացիք:

Միենոյն բանը կը տեսնէնք նաև բնակարանների խընդրում: Բնակարանների հարցը մի մեծ հանելուկ է, որ այս գեղասէր ու նըրբամիտ ժողովուրդը կարողացիլ է լուծել: Իրօք մըրոնք են այն էական պայմանները, որոնց հիման վրայ պէտք է շինուի տունը: Նախ՝ ապահովութիւնը, ապա՝ պատշաճաւորութիւնը իր բարոյական տարրերով, որ կը տեսնենք շուտով, և որ չափազանց անտես են առնում մեր ճարտարապետներն իրանց գրութեանց մէջ. յետոյ՝ տնտեսադիտութիւնը, որ մեր ճարտարապետներն ելի և դեռ աւելի են մոռանում կամաւ:

Ապահովութիւնն ինքնին պէտք է որ երեք բան նկատի ունենայ, —մարդկային կեանքը, որ ամրութիւն՝ կը պահանջէ, առողջութիւն, ինչ որ կը պահանջէ առողջապահութիւնը. վերջապէս ինչքերը, որ հրդեհի և գողութեան դէմ պաշտպանուելու պէտք ունին:

Արդ, ամրութեան տեսակէտից՝ ճապոնական տունը շինուած է բաւարար հաստատութիւն ունեցող նիւթից: Երկրաշարժների դէմ դեռ աւելի դիմացկուն է, քան եւրոպական տունը, որովհետեւ հիմք չունենալով՝ դադարեցնում է երերումների աճող ծաւալումը, և որովհետեւ խիստ ծանր տանիքը պահպանում է հաւասարակշռութիւնը:

Առողջապահութեան տեսակէտից էլ ճապոնական տունը մերինից գերադասելի է, քանի որ պատեր չունի, այլ շարժական շրջափակեր միայն, որոնք ամառը կը վերցուին, իսկ ձևմեռը ցրտից կը պաշտպանեն, առանց արդելելու ուակայն շարունակական օգափոխութիւնը. հետեւարար մեր ծանրաշէն բնակարաններից աւելի լաւ է համապատասխանում մարդկային ամենամեծ կարիքին, այն է՝ շնչառութեանը. Ահա թէ ինչու բժշկական գիտողութիւնը հաստատում է այդ երկրում, թէ փայտէ տներում ապրողների մէջ աւելի քիչ հիւանդութիւն, մանաւանդ երեխաների մէջ քիչ մահ է պատահում, քան օտարապղի բնակչութեան մէջ, որոնք աղիւսէ կամ քարէ անկրում են ապրում ձապոնում:

Իսկ ինչ վերաբերում է ինչքերի ապահովութեան, ճապոնական տունը իր գիշերային փեղկերով բաւ է հեռացնելու գոզ գերին, որոնք այնտեղ շատ քիչ վտանգաւոր են: Դրա փոխարէն ճապոնական տնիրը բոլորովին անպաշտապան են հրդեհի դէմ, սակայն այդ յաճախազէպ պատուհասը նրանց համար նոյնչափ աւերիչ չէ, ոչչափ եւրոպայում, որովհետև տան արժեքը շատ չէ, տպա քիչ առարկաների է պարունակում. իսկ թանկագին իրեղինները գրուած են լինում մի կողմ, անկիգելի մի շինուածքի մէջ:

Անցնենք բնակարանների պատշաճաւորութեանը. այդ տեսակէտից էլ տունը կարելի է բաժանել երեք մասի—ազգային կարիքների յարմարութիւն, ապա՝ գեղեցկութիւն, և յետոյ դիւրութիւն,

Արդ՝ ճապոնական տունը, իր շինուածքովը, արևելականութեամբը, և այլն, շատ լաւ համապատասխանում է տեղական կլիմային պահանջներին, ինչպէս և նիւթական միւս բույր պայմաններին: Համապատասխանում է նաև ժողովրդի բարոյական ըմբռնումներին, որոնց մէջ պէտք է շեշտել իր գեղասէր հակումները: Յոյների եղբայր ճապոնցոց համար կատարեալ տունն այն է, որ ամենալաւ կերպով համապատասխանում է իր իսկական կոչմանը, սկսած շինուածքից (իսխտ պարզ գծերով) մինչև ամենափոքրիկ տուարկան, որի գեղագիտական բնաւորութիւնը պէտք է ներդաշնակուի իր իրական գործածութեան հետ: Հետեւելով այս հասկացողութեան, նրանք զանց են առնում տան ճակատը, որովհետև ոչ մի ընտանիք չի ապրում փողոցում: Նրանք գեղեցիկ կարասիներով չեն լեցնում դահլիճը, որովհետև ընդունաբանը շուկայ չէ: Նրանք մտերիմներին համար են պահում միշտ իրանց ամենասիրուն սենեակները, որ լուսառատ բացւում են հրաշալի պարտէզների վրայ:

իսկ ինչ վերաբերում է գիւրութեան խնդրին, նրանք ամբողջովին արհամարհում են այն ամենը, որ մենք անուանում ենք հեշտակեցութիւն: Ուրեմն նրանք ոչ մի կարիք չունին կուտակելու այն ամեն իրեղէնները, որոնց անհրաժեշտութեանը մենք հաւատացած, պրծած ենք, այդ բաները ճնշիչ են նրանց համար:

Բայց դրա փոխարէն, գաղափարների այդ շարքում, շատ շուտով իւրացրին երկու միակ օգտաւէտ յառաջաղիմութիւն, որ կարող էինք նրանց նուիրել—ընակարանները տաքացնելու և լուսաւորելու մեր կատարելագործուած միջոցները: Նրանք տները լուսաւորելու համար սկսեցին գործածել նախ նավթ, ապա էլեկտրականութիւն, որի տարածմանը նպաստելու համար յիսունի չափ ընկերութիւն կայ ամբողջ կայորութեան մէջ:

Մոււմ է ուրեմն տան տնտեսական հարցը, որի մէջ ևս ձապոնական տունը գերազանելի է: Այսպիսով տեսնում ենք, որ իրանց մասնաւոր բնակարանների մէջ ոչինչ զրեթէ մտցըրած չեն ձապոնցիք՝ մեզնից փոխ առնելով: Իսկ երուպական յատակագծերի վրայ կառուցուած շինութիւններն էլ մի կողմից տնտեսագիտական հաստատութիւններն են—գործարաններ, զրամատներ, և այլն,—իսկ միւս կողմից հասարակական հիմնարկութիւններ—պաշտօնատներ, խորհրդարաններ, համալսարաններ, զօրանոցներ: Պէտք է արդեօք աւելացնել, որ շատ յաճախ այս փոփոխութիւններն եղած են Արևմուտքի վրայ որոշ բարոյական տպաւորութիւն թողնելու համար, քան թէ զրական անհրաժեշտութեան համար: Նախկին փայտաշէն պաշտօնատներում նրանք նոյնչափ լաւ կարողանում էին տեսնել իրանց գործերը, ինչպէս աղիւսէ նորաշէն հաստատութեան մէջ: Բայց օտար քաղաքական ուժերի ունեցած իրաւունքի հաւասարութիւնը ձեռք բերելու համար՝ օգտակար կը լինէր նրանց ցոյց տալ երուպական մտքով պատկառելի արտաքին ունեցող շէնքերի ճակատներ ճապոնի՝ մայրաքաղաքութեան:

Սնունդից ու բնակարաններից յիսոյ՝ վերջապէս հասնում ենք զգեստներին:

Ու է երկրի հագուստը դատելու համար, պէտք է խնդիրը զննել առողջապահական, ապա յարմարութեան և վերջապէս տնտեսական տեսակէտներից:

Հագուստի առողջապահականը ամենից աւելի կախուած է իր տարրերի քաղաքութիւնից: Յիշատակենք, որ ընդհանուր առմամբ, ճապոնական զգեստը կարծէ առ նուազն մերինը,

լինի նիւթով, քամնի որ գործածուած բամբակն ու մետաքսը տաքութեան չափաւոր հաղորդիչներ են, լինի իր արձակ ձեռվ, որի առաւելութիւնները շատ պարզ են: Թուենք նաև, առողջապահական հայեցակէտով իրը կարեոր մաս, սովորութիւնը թղթէ թաշկինակների, որ մի անգամ գործածուելուց յետոյ դէն են շպրառմ. ուրեմն Մոնտէների<sup>1)</sup> ծիծաղը շարժող մեր թաշկինակներից այնչափ տարբեր են:

Ինչ վերաբերում է զգեստի պատշաճաւորութեանը, զրա մէջ նախ նկատի առնելու է գեղեցկութիւնը: Աւելորդ է կանդ առնել ճապոնական հագուստի աղնուականութեան ու վայել-չութեան վրայ, համեմատած օտարների հագուստների հետ, որ տոկիօցի մի դերձակ իր խանթի ցուցակի վրայ անուանում էր, «Եւրոպացիների կապկային ժաքետ»: Ինչ որ կարելի է քննա-դատել գեղագիտական կողմից՝ դա կանացի ահազին գօտին է, որի հանգոյցը խիստ ծանր է: Յարմարութեան տեսակէտից նախապատութիւնը մեր կողմին է, որովհետեւ ճապոնական հա-գուստը, որ հրաշալի է հանգստաւէտութեան համար, լնդհա-կառական մերինից աւելի անյարմար է աշխատանքի ժամանակ: Բայց ընկերական պատշաճաւորութեան մէջ ճապոնացիք գե-րազանցապէս փափկանկատ են: Խօսքս ամօթխածութեան մա-սին չէ, որի մէջ նրանց զաղափարները խսպառ տարբեր են, քանի որ արևմտեան կանացի հագուստի ամենաչնչին պէճնան-քըն անգամ անբարյական են համարում, ոչ. այլ այն ինչոր ուզում եմ մատնանիշ անել, դա ճաշակի այն կատարեալ ըմ-բռնողութիւնն է, որը միայն երեխաներին է թոյլ տալիս տչ-քի գարնող գոյների գործածութիւնը. այդ միենոյն ըմբռնո-ղութիւնը հրամայում է խիստ չափաւոր երփներանգութիւն ոչ միայն կանանց, այլ և օրիորդների զգեստների համար, որ-պէս զի ամուսնանալու նպատակով վաճառքի հանուածների տեսք չունենան: Վերջապէս այդ միենոյն ըմբռնողութիւնը պահանջում է (ուշագրութեան արժանի գիծ է սա), որ հա-գուստի միայն մտերմութեան մէջ երևացող մասը, այսինքն աստառը, աւելի գեղեցիկ լինի, քան արտաքին կերպասը: Նկատենք նաև, թէ ճապոնական արդուզարդը, որ յաճախ շատ ձոխ է հէնց իր արտաքին պարզութեան մէջ իսկ, մերինից աւ-ելի աժան է նստում, որովհետեւ նորաձեի քմահաճոյքին չէ են-թարկւում: Այս առթիւ չի մոռանանք նոյնպէս, որ ճապոնա-ցիք երկար դարերից ի վեր հրաժարուած են թանկագին քարերի

<sup>1)</sup> Խօսքը ֆրանսիացի հոչակաւոր Փիլիպովիայ Մոնտէներ (1533—1592 թ.) մասին է:

գործածութիւնից, մի բան, որ նախնական դարերի հետքն է և որի գործածութիւնը մեր բաղաքակրթական վիճակում բաւական տարօրինակ է:

Ուրեմն հասկանալի է, որ ճապոնացիք իրանց աղքային հագուստը փոխելու ոչ մի լուրջ պատճառ չունէին. և, իրօք, խոշոր մեծամասնութիւնը հաւատարիմ է մնացած: Իսկ եթէ մի փորբաժասութիւն էլ գործածել է սկսել եւրոպական զգացաները, այդ ևս ծագում է լոլորովին տարլեր պատճառներից, որոնցից ամենամեծն է զիւանազիտական հայեցակետը: Ճիշտ է, որ մարդկային ցեղերից իրավանչիւրն իրան երեակայում է իրը ամենաառաջնակարգը, և պէտք է խոստովանել, որ դա մեզ և եւրոպացիներին էլ օտար չէ. արդ, մենք այդ ընդունենք թէ չընդունենք, հագուստի հարցն այդ խնդրում իր կարևոր կէտն ունի, որովհետեւ, դժբաղդաբար, մեր երեակայութեան մէջ իրերի հիմքն ու ձեզ միացած են մի կապով. եւրոպական հագուստը՝ բոլորովին ընական ճանապարհով՝ մեղթւում է իրը ճշմարիտ քաղաքակրթութեան արգասիք գերազանց ձեզ տակ: Ուստի և ճապոնցիք մտածել են, որ, օրինակի համար, սպիտակամորթ ցեղից մի զիւանապէտ հաւասարութեան աւելի կամաւոր իրաւունք պիտի տայ իր գեղսամորթ պաշտօնակցին, եթէ սա որդէնզոտով է, քան թէ նրան, որի արևելեան վերաբերուն իր հոգու մէջ պիտի զարթեցնէ ստորին էակի հանդէպ լինելու տպաւորութիւն: Ահա թէ ինչու նրանք նուրբ հոգեբանութեամբ շատ շուտով ընդունեցին պալատական, քաղաքային-պաշտօնական, և զինուորական նոր համազեստներ: Ճիշտ է, որ զինուորական համազեստի կողմից, եւրոպականն աւելի լաւ է յարմարեցուած նոր զէնքերի գործածութեանը, սակայն, այդ զէպքում իսկ, ինքնատիպ գիծ. նրանք իրանց զինուորներին կաշուէ կօշիկներ հազցնել տուին միայն խաղաղութեան ժամանակ, այն ինչ պատերազմի շրջանում դարձեալ շարունակում են գործածել իրանց նախկին տրեխները, որ քայլելու և գործելու աւելի նպաստաւոր են: Պարզ է որ այդ միապետական երկրում բարձր դասից սկսուած, օրինակը արձագանդ էր գտնելու նաև ժողովուրդի մէջ. և իրօք ընկերական որոշ դասակարգ անմիջապէս իւրացրեց եւրոպական հագուստի որոշ մասեր պարզ քմահաճոյքի համար: Սակայն այսօր նախադիմութիւնը կատարեալ է: Պաշտօնակատարներն (fonctionnaires) իսկ կրկին ձեռք են առնուած իրանց նախկին աղքային հագուստները այն րոպէից, երբ մտնում է մինիստրութեանց մէջ: Գալով կանանց՝ ամրողջովին վերը կըսած են նախկին հագուստների գործածութիւնը: Իսկ տղա-

մարդիկ վերջ ի վերջոյ պահում են միտյն եւրոպական գըլ-խարկներ, միակ բանը, որ կարելի է տեսնել յարատեհելիս մի խումբ ճապոնական ամբոխի մէջ:

Ուրեմն զգեստների, բնակարանների և մասդի կողմից ոչ մի լուրջ փոփոխութիւն չկայ: Այս երեք էական կարիքների մէջ ձապոնը պահել է իր քաղաքակրթութիւնը, որ առնուազն արժէ մերինը: Բացառութիւն են կազմում միայն պաշտօնական հացկերոյթները, պաշտօնական հաստատութիւնները և համագլեստները, որովհետև այս խնդրում մեր հին կանխակալ կարծիքներն ստիպում էին, որ ձապոնն էլ մեր ձեռվ վարուէր: Բայց իրանց մասնաւոր կեանքում կողմնակի անձինք ոչ մի բան գրեթէ չեն փոխած իրանց ապրելու հին ձևում, կամ եթէ դէս ու դէս երեւմ էլ են խելքի փշուած բացառութիւններ, գրանք ևս իսկոյն վերադառնում են կրկին հնին:

Այժմ անցնենք իսպառ տարբեր, սակայն խիստ արժէքաւոր մի այլ կարիքի—առողջապահութեան հարցին, որի մէջ մտնում են բժշկութեան, վիրաբուժութեան, առողջապահուհեան բոլոր ձևերը: Այստեղ ընդհակառակը, մեղնից են փոխառել ճապոնացիք ամեն ինչ, որովհետև, այս կէտում, ճշմարիտ որ, նրանցից զերազանց էինք:

Անկասկած, նախկին իշխանութեան օրով, բժշկութիւնը ձապոնում ընդարձակ տեղ էր բննում արդէն: Ասատա Սոհակու հոչակաւոր բժիշկը, Լայլնիցի պէս, մտածում էր, թէ. «մարդու վլխաւորապէս պէտք է զրադեցնեն երկու բան.—բարոյականութիւնը, որ սովորեցնում է դեկավարել կեանքը. բժշկութիւնը, որ սովորեցնում է պահպանել կեանքը:»

Եւ իրօք, ճապոնցի նախկին բժիշկները շատ առաջ էին գնացած որոշ ճիւղերում—բժշկական նիւթերի համար՝ բուսաբանութեան մէջ, բժշկական արուեստի կողմից՝ մանկաբարձութեան մէջ: Սակայն նրանց պակասում էին էական տարբեր —անդամազնական գիտութեան ուսումնասիրութիւնը: Հասկանալի է, թէ ինչ հիացմունքով նրանք ընդունեցին Արևմտաքի բժիշկներին և ուշք գարձրին սրանց թանկաղին զիւտերի վրայ: 1858-ից սկսած, հաստատեցին պատուաստի համար ուղղուած մի հիմնարկութիւն, որ երեք տարուց դարձաւ Տուկիօյի բժշկական դպրոցը. արդի համալսարանի սաղմն էր դա. և չի մոռանանք, որ 1873-ից ի վեր երեխայոց պատուաստումը պարտագիր է արդէն ձապոնում, մի բան, որ ձենաների<sup>1)</sup> հայրենիքում դեռ դոյութիւն չունի:

<sup>1)</sup> Հնթերցողին յայտնի կը լինի արդէն որ այստեղ խօսքը վերա-

Յետոյ գերմանական համալսարաններից կանչւում են ամենաշատ ուսուցչապետներից մի քանիսը, որպէսզի Տոկիօյում բըժշկութիւն դասաւանդեն: Այժմ ծավոնի ամեն կողմերում հիմնւում են արդէն այնպիսի հիւանդանոցներ, ուր այցելելիս եւրոպացիներս չենք կարող հպարտանալ մեր գերազանցութեամբ: Բազմաթիւ համախմբութիւններ են կաղմւում, լինի բժշկական կրթութիւն տարածելու նպատակով, լինի բարեգործութեան համար, օրինակ՝ յիշատակութեան արժանի է կարմիր—Խաչի հիանալի ընկերութիւնը, որ վեց հարիւր հազար անգամ ունի և որի լոկ անդամավճարներից ստացւում է տարեկան չորս-հինգ միլիոն, մարդ զլուխ վճարում է տարին եօթը ֆրանկ ու կէս (մօտ երեք բուրլի): Վերջապէս, երեսուն տարուայ մէջ բժշկութիւնն այնտեղ տարածւմ է և յաղթանակներ տանում ողջ պետութեան մէջ, սկսած համալսարաններից, ուր մէկից աւելի կարեոր գիւտեր են եղած, մինչև ամենայնտին գիւղը, ուր տեղացի, պարզ բժիշկները ձեզ կը պատմին Եւրոպայում կատարուած ամենավերջին գիւտը արեան շինուկի մասին: Ուրեմն բժշկութեան այս ամբողջ սահմաններում կատարեալ փոխակերպութիւն է աիրում, որովհետև մենք գերազանց էինք:

(Վերջը յաջորդ համարում:)

---

բերւում է անդլիացի հոչտկաւոր ձեռններին, որին պարտական ենք ծաղկադախութ պատուաստման կենսաբժեք գիւտը:

Ծ. Թ.

## ՔՆՆԵԴԻԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏԵՆԸՆՅՈՒԹԻՒՆ

Սիամանքօ, «Հայորդիները» (առաջին շաբթ) 1905, Ժընէվ, 2 Գրանկ:

«Հայորդիների» հեղինակը, մեր՝ հայերիս մէջ, եթէ ոչ առաջին, գոնէ ամենայատկանշական և ամենառուժեղ խորհրդապաշտ բանաստեղծն է (symboliste):

Բայց ի՞նչ է նախ խորհրդապաշտ, սէմբոլիստ բանաստեղծութիւնը:

Սկզբներում, երբ բանաստեղծութեան այս դպրոցը երևեցաւ Եւրոպայում, իր դէմ հանեց գրական նախորդ սերունդի բոլոր դործիչները: Պատճառականները՝ սէմբոլիստների անդրանիկները, այս վերջիններին ուղղում էին գլխաւորաբար այն մեղադրանքը, որ նրանք մութ են, յաճախ անհասկանալի և մանաւանդ լմբոստ՝ քերթողական ընդունուած կանոնների դէմ: Խոկ սէմբոլիստները՝ բնականաբար այդ յարձակումների առաջ լուս չեին մնում, ընդհակառակը, իրքու աւելի «երիտասարդներ», որոնք, միշտ, իրաւամբ թէ անիրաւ, արհամարհու են լինում դէպի «հինները», մեղադրում էին պատճառականներին մի անգոյն ու անհոգի բանաստեղծութիւն մշակելու մէջ: Սէմբոլիստները գտնում էին, որ պատճառականները գուրկ են զօրեղ անհատականութիւնից, որ նրանք գերի են դարձել տաղաչափական կանոններին, որ վերջապէս, յոգնել, մաշուել են այն լարերը, որ հնչեցնում էին պատճառականները: Այս գրական կախւը տեսեց շատ երկար, մինչև որ սէմբոլիզմը յաղթանակը տարաւ և սկսեց արդէն մտնել իր անկման շրջանի մէջ: Ահա այդ ժամանակ, կիրքերի և բանակուների խաղաղացման ժամանակ է որ կարելի եղաւ անկողմնակալ կերպով դատել թէ ի՞նչ էր ներկայացնում պատճառական դպրոցը և ի՞նչ՝ սէմբոլիզմը:

Մատենախօսական մի յօդուածի սահմաններից դուրս կը լինէր մտնել այդ երկու ուղղութիւնների էութեան մէջ, ցոյց տալ թէ ի՞նչ պատճառներ ծնունդ էին տուել այդ երկու դըպրոցներին: Պարզ է, որ գրականութիւնը, գրական գործողները

օդի մէջ չեն ապրում, նրանք իրանց ժամանակի մտաւոր, բարոյական հոսանքներով, աշխարհայեացքներով են սլայմանաւորուած: Դրական և գեղարուեստական քննազատութեան մէջ իպոլիտ Տէնի մտցրած հոյակառ մեթողից յետոյ, քննադատը երկասիրութիւնները կամայական կերպով դատելու իրաւունքը այլևս առ յաւէտ կորցրած է: Նա անկարող է այլևս a priori, որոշ օրէնքների անունով դատելու և դատապարտելու: Քննադատի պարտականութիւնն ու պաշտօնը կայանում է իր առաջ զրուած գործերը հասկանալու և բացատրելու մէջ: Կան զործեր, որոնք մեր արդի հասկացողութեամբ անհեթեթութիւններ են միայն ներկայացնում: բայց երբ նրանց տանում, դնում ենք իրանց ժամանակաշրջանի և իրանց միջավայրի մէջ, այն ժամանակ նրանք ստանում են իրանց խոկական արժէքը: Անա ինչու համար քննադատը որոշ գոգմաների անունով չպիտի խօսի: և այդ ինքն ըստ ինքնիան, հասկանալի է, որովհետև այն որի անունով նա վճիռներ է արձակում, դատում և դատապարտում է, որոշ ձև և որոշ սահման չունի,—այսինքն գեղեցիկը:

Մի բանի խօսքով բնորոշելու համար պառնասականներին ու սէմբոլիստներին, պէտք է ասել, որ մինչդեռ առաջնաները՝ առարկայականի, օրեկտիւ կամ ուրիշ բառերով անանձնական բանաստեղծներ էին, վերջինները եղան ենթակայական, սուրելիլիւ, անձնական երգիչներ: Վերցրէք պառնասականների հայրերը՝ Թէօփոր զը Բանովիլ, Թէօֆել Գոտիէ, և մանաւանդ զմայիլի, մոայլ, տրտօրէն ազնուական Լըկոնդ զը Լիլը, և նրանց գործերի մէջ զուք ես-ը ջնջուած լինելու աստիճան աղօտ կը գըտնէք: Պառնասականների մէջ տիրապետում է զլիստորաբար ձևի շքեղութիւնը, գոյների, երանգների փարթամութիւնը և տաղաչափական կանոնների անստղիւտ կիրարկութիւնը: Իսկ սէմբոլիստները այդ կանոնների յարգանքը չունին երբէք, ոչ միայն յանդերի նուրիբագործուած օրէնքները չեն պահում, այլ և յաճախ յանդի անհրաժեշտութիւնը չեն բնդունում, և անհաւասար երկարութեամբ, անհաւասար չափով տողեր են գործածում մի երգի մէջ: Մի խօսքով նրանք ստեղծում են տաղաչափական կապանքներից աղստ ոտանաւորը (vers libre): Եւ ինչ որ բնորոշում է նրանց, սէմբոլներով են մտածում: Բայց թնչ պէտք է հասկանալ այդ բաստիւ կատիւլ Մէսդէս, պառնասական յայտնի բանաստեղծներից մէկը, որ Թրանսիայի ժամանակից թատերական առաջնասկարդ քննադատներից մէկն է և սկզբներում թունդ հակառակորդ էր եղել սէմբոլիստներին, հե-

տեհալ շատ յաջող ձեռվ է բացատրում սէմբոլիստ արունստի հոգին:

«Մէմբոլի գործածութիւնը, բանաստեղծութեան մէջ, առում է Մէսդէս, ինձ թւում է որ արուեստն է, ասենք բնագդական, հողիներում զարթեցնելու զգացումներ, յիշատակներ, երազներ, որոնց՝ խօսքը, բառը անկարսղ է լինում արտայայտել ոչ լիապէս և ոչ ամբողջովին: Մէմբոլի միջոցով՝ բանաստեղծը, ասելով հանդերձ ինչ որ ասում է, հասկացնել է տալիս ուրիշ բան, և, չնորմիւ խորհրդաւոր նմանութիւնների, հրափրում է խօսքը, սահմանափակ և թելազրիչ, ըմբռնել տալու անբացատրելին»:

«Բայց, շարունակում է Մէսդէս, այս գէպքում ամենքը համաձայն են, և այն բանաստեղծները՝ որ կոչում են սէմբութիստ, ոչինչ նոր բան չեն հնարած: Որովհետև, իսկապէս, եթէ դէն դնենք կոնժարանութեան երայիչներն ու տիբացու տաղաչափները, մը բանաստեղծն է որ չէ ասել, կամ գտնէ չէ յուսացել թէ ասել է իր ասածից աւելին, որ չէ յուսացել թէ իր խօսքերից իւրաքանչիւրը՝ իր նախնական հնչիւնից տարբեր, թէ ի համասեռ, արձագանդ պիտի գտնէ անհատից անհատ, և ժամանակի ու տարածութեան մէջ, մի որևէ անսանօթ հոգու խորքում պիտի դառնայ իր սեփական հոգու ցոլքը, որը չէր ուզիցել երբէք ամբողջապէս որոշել:»

Միւս կողմից, մի ծանօթ սէմբոլիստ, Ագոլֆ Ռետակ սահմանում է սէմբոլիզմի դերը յետագայ ամփոփ բացատրութեամբ:

«Մէմբոլիզմը ձգտեց պարզապէս ընդլայնել աւանողութիւնը, հազորվել ոտանաւորին երաժշտութեան և թելադրիչ ուժի բարձրադրույն աստիճանը և նոյնպէս, հակաղղիկ գուտ նկարագրական բանաստեղծութեան չափազանցութիւնների դէմ, որով աչք էին ծակում պատճականները:»

Այժմ մեղ համար յստակ է, թէ ի՞նչ է սէմբոլիստ բանաստեղծը: Մի երգիչ, որ խօսում է ձեր մտքին և սրտին սէմբոլիներով, և որի զործերը կը ունի զօրեղ անձնականութեան կնիքը:

Սիամանթօ մեղանում, սէմբոլիզմի ամենալորոշներկայացուցիչն է, և չմոռանանք ասելու, որ սէմբոլիստի խառնուածքը ունեցող մեր բանաստեղծներից շատերը աւելի կամ պակաս կրել են արովէն նրա ազգեցութիւնը:

Աւելացնենք սակայն, որ Սիամանթօյի մօտ էլ նկատւում են հետեւք, —և բաւական խորը—Փրանտիացի մի քանի ծանօթ և շատ տաղանդաւոր սէմբոլիստների, որոնց զործերի մաերմու-

թեան մէջ է ապրում: Այդ ազգեցութիւններից ամենախոշորը գործում է կմիլ Վէռհառէն, ծագումով բելգիացի, ֆրանսիա հաստատուած մի բանատեղծ, մի բնաւոր մեծութիւն, որի հմայքն անդիմաղը կի է:

Բայց ես կարծում եմ, որ «Հայորդիների» հեղինակը՝ գեռ ևս երիտասարդ, իր առաջ ունի լայն ու բեղմնաւոր ճանապարհ: Երբ նրա մէջ մտածումը հետզհետէ աւելի ընդարձակուի, խորանայ, հասունանայ, նա պիտի կարողանայ մեզ տալ մեծ արժէքով գործեր: Այժմ նրա մէջ նկատելի է և այն՝ որ նա երրեմն բռնադատում է իր տաղանդը և փոխանակ անկեղծութեան մաքուր, յստակ, ինքնարպուխ ակից քաղելու ներշնչումը, ուղեղային տենդից է բղխեցնում այն:

Անա այն զիտողութիւնները որ կարելի է անել Սիամանթօյին: Իսկ այս նկատողութիւնների փոխարէն, նա ունի բանաստեղծի տիրական յատկութիւններ:

Նրա զգայնութիւնը զարմանալի կերպով զիւրագրգիռ է և սուր, և ինչ որ նրա զիխաւոր արժանիքն է կազմում—կարողանում է արտաքին աշխարհից կրած զգայութիւններն ու տպաւորութիւնները զօրեղ նմանութիւնների, պատկերների միջոցով արտայայտել:

Բայց, ինչպէս ամեն սէմբոլիստ բանաստեղծի, նոյնպէս և Սիամանթօյի արուեստի անսլատեհութիւններից մէկն այն է, որ նա հաւասարապէս մատչելի չէ ամենուն: Նրանք՝ որոնք արուեստագիտական բաւական խոր կրթութիւն չունին, նըրանք՝ որոնք անկարող են բանաստեղծի հոգեկան որոշ տրամադրութիւնը իւրացնել—այսինքն հասարակ ժողովուրդը—շատ բան չպիտի հասկանան սէմբոլիզմից: Եւ սա բնական է: Մենք ցոյց տուինք թէ ինչն էր կազմում սէմբոլիստի գաղտնիքը, նա աշխատում էր խորհրդաւոր նմանութիւնների, պատկերների միջոցով ընթերցողի հոգու մէջ զարթեցնել զանազան զգացումներ, յիշատակներ և երազներ, որոնք անկարող են լինում ամբողջապէս արտայայտել բառերը, խօսքերը: Ուրիշն սէմբոլիստը պահանջում է ընթերցողից մտքի որոշ ճիգ, հոգեկան որոշ տրամադրութեան մէջ մտնելու կարողութիւն, մի բան, որ իմացական և արուեստագիտական յայտնի զարգացումից զուրկ անհատների համար համարեա անկարելիութիւն է: Եւ ահա այս պատճառով էլ սէմբոլիզմը դիմուկրատիկ նկարագիր չունի, նա մեռած տառ է անդիտակից, տանջուած, արդարութեան, ձշմարտութեան կարօտ թշուառ մասսաների համար, որոնք, ինչպէս ասում է Միքայիլ Փան Ռուլը՝ նոյնքան «իրաւունք ունին գեղեցկութէ ան» որքան

բուրժուաները և որոնց մուլթ գիտակցութեան մէջ մի քիչ արշալոյս, բնադատուած հոգիների մէջ մի քիչ երաժշտութիւն, խարխափող ուղեղների մէջ մի քիչ ներգաշնակութիւն ծագեցնելու պարտաւոր է իւրաքանչիւր ինքնաճանաչ ինտելիգէնտը: Կեանքի տարրական վայելքներից զրկուած պարիային, պրոլետէրին չզրկենք նաև Խօսքի մխիթարութիւնից, արուեստի աստուածային հաճոյքներից...

Իսկ եթէ մնաք զեկավարուենք «արուեստը արուեստի համար» տեսութեամբ, եթէ արուեստագէտը աղատազրենք իր ուրոշ պարտականութիւններից դէպի հասարակ, ցաւատանջ ժողովուրդը, պիտի խոստովանուենք, որ սէմբոլիստը գեղարուեստական յուղումի մի աղրիւր է, ինչպէս ամեն ստեղծագործ ուժ:

«Հայրդիները» բաղկանում են հինգ երգերից «Անդրանիկ», «Խրմեան Հայրիկ», «Աղբիւր-Սերոր Վարդանեան», «Զըդ-Ջումին Թափորը», «Հողին Չայնը»:

Սիամանթօ երգում է ըմբոստացումը: Նա փառարանում է նրանց, որոնք կոռւեցին և ընկան հերոսաբար նուիրական Դատին համար: Ողբում է այն եղերական ու անլուր ճակատագիրը, որ հալածում, հալածում է մեր ցեղը, դարերից ի վեր: Նրա բոլոր երգերն էլ պատում են մեր ժամանակակից, նորադոյն պատմութեան շուրջը:

### Տ. Զաւէն

Հեղինէ Մելիք Հայկազեան. «Մի պեոյց ճականում» 1905, Թիֆլիս, 40 կ.:

Այս բոպէիս չկայ մի բառ որ մարդկային երևակայութեան խօսի այնքան ուժգնորէն որքան Տոգօների և Օյամաների հայրենիքը:

Ճապոնիա...

Ահա այս տարօրինապէս գրաւիչ երկրում կատարած ճամբորդութեան յիշատակներն է որ մեզ պատմում է օր. Հեղինէ Մելիք-Հայկազեան: Ճապոնիայի մասին վերջին ժամանակներս շատեր են գրել և խօսել բայց օր. Մելիք-Հայկազեանի «Մի պտոյցը» մասնաւորապէս շահագրգուռմ է ընթերցողին իր ինքնատիպ, նուռը, խոր գիտողութիւններով: Դիրքը՝ ծայրէ ծայր կարդացում է մեծ հաճութեամբ: Հեղինակուհին ոչ միայն գիտէ գիտել, այլ և իր գիտածը ցայտուն կերպով արտայայտել, նաև պատմութեան թեմի ու ախորժելի ձերն տակ մեզ ցոյց է տալիս ճապոնացուն իր ամեն երևանելով՝ իր ներքին և արտաքին կեանքում, իր բարքերի, սովորութիւններին:

րի, իր կրօնական, բարոյական, խմացական ըմբռնումների և հասկացողութիւնների մէջ:

Այդ հիանալի ժողովուրդը, որի վրայ ամբարտաւան Եւրոպան նայում էր երկար ժամանակ արհամարհանքով՝ իր մէջ թագյնում է մեծ ազգի բոլոր ուժեղ յատկութիւնները։ Մինչդեռ եւրոպացին իր թթից այն կողմ չէ տեսնում, ճապոնացին հետարքրւում է ամեն բանով, նա ճանաչում է նոյնիսկ հային Այս մասին շատ բնորոշ է այն՝ ինչ պատմում է օր. Մելիք-Հայկազեան։ Օրիորդը Կիոտոյում մի ճապոնացու տան հիւր է։ Մաճում է տաճտէրը մի վայելչահասաւլ գեղեցիկ ճապոնացի։ Փոխադարձ բարեներից յետոյ, այսինքն ձեռները ծնկների վըրայ դրած՝ խոր գլուխ տալուց յետոյ, տաճտէրը իր ուրախութիւնն է յայտնում որ հիւրը պատիւ է արել իր տունը այցելով։

«Յետոյ հարցրեց ազգութիւնս, և երբ իմացաւ, թէ հայ եմ, խիստ զարմացած՝ աչքերը չոեց ու հարցրեց վարանումով։

—Ա՞յն հայերից, որոնք շարունակ թուրքերի դէմ կուռաւ են։

Հիմա էլ զարմանալու հերթը իմն էր։

—Ա՞խ մի՞թէ դուք լսել էք հայերի մասին։

—Ի՞նչպէս չե՞ յիշում եմ մի քանի տարի առաջ կոտորածներ կային, եթէ չեմ սխալում։ Այսուղ մի ինչ որ միսիօնար փող էր հաւաքում ձեզ ուղարկելու համար։ Հիմա ի՞նչ վիճակի մէջ է ձեր երկիրը։

Ես նայում էի նրա երեսին ու չգիտեի, ի՞նչ պատասխանեմ, ուրախանամ թէ տիրեմ, որ մեր մեծ ցաւերի ալիքները մինչև ճապոնական կղզիներն էին հասել։»

Դժբախտ ժողովուրդ, որ քա ողբերգական անօրինակ ճակատագրով։ Ասիայի ամենախուլ անկիւններում անդամ տրամօրէն հռչակուեցիր։

Զ.

Մ. Սերա, «ՀՅանիքն մօռ», «Անրօքին խօսք», թարգմ. ? հրատ. տիկին Զաբէլի. 1905, Պետերբուրգ, 7 կոռէկ.

Վերջին տարիների հրատարակութիւնների շարքում բաղադրաբար ուշադրութեան արժանի են տիկին Զաբէլինները, որոնք լոյս են տեսնում Պետերբուրգում և աչքի են ընկնում իրանց մաքուր տպագրութեամբ և լաւ թղթով։ Բացի արտաքինից, հրատարակչուհին ուշք է դարձնում և նիւթերի ընտրութեան վրայ։

Այս 88 երեսից բաղկացած գրքոյնը նրա 7-րդ հրատա-  
րակութիւնն է և պարունակում է իտալացի ժամանակակից  
վիպասանունի տիկին Մաթիլդ Սելայի երկու պատմուածքնե-  
րը: Երկու վէպիկներն էլ կարդացում են հատաքրքրութեամբ,  
որովհետև համարեա ժամանակակից նշանակութիւն ունեցող  
հարցեր են շօշափում: Երկուն էլ վերցրած են տաժանակիլ  
աշխատութեան զատապարտուածների կեանքից: Վերջինը մա-  
նաւանդ բնորոշ է: Թարգմանութիւնը կատարուած է թւում  
ուսւաերէնից: լեզուն պարզ է, բայց առ հասարակ ջիղ չունի:  
Մըրագրութիւնն անխնամ է:

Մորեն

### ՆՈՐ ԱՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Գր. Չալխոշյան—Արմանակ առ Ռուսիա, 1905 թ.,  
Ռոտով առ Դոն, վեցական 10 կոպ.
- \*2) Յ. Վելորուս, «Թափառական բուլղար», պատմուածք  
բալկանեան ազգերի ապատամբութիւնից, թարգմ. Ե. Ք.  
Նալբանդեանի, 1905, Ալէքսանդրովուլ, 30 կ.:
- 3) Բ. Ա. Պլոտովսկի, «Զանադ Մարօն», զրամատիքական է-  
տիւդ մի զործողութեամբ, հրատ. տիկին Զարէլի, 1905,  
Ա. Պետերբուրգ, 5 կ.:
- 4) Ա. Զանեանի, «Երկու պատկեր», Դիւլակ, և գործ. կեանքից  
1905, Բագու, 10 կ.:
- \*5) «Պետրոս Դուրեան», բանաստեղծութիւնների ժողովածու,  
հրատ. Ա. Մահտեսի Յակոբեանցի. 1905, Շուշի 10 կ.:
- 6) Ա-Դօ, «Հայրէնիքի կարօտը», 1905, Ա. Պետերբուրգ 5 կ.:
- 7) Իպույէլ Միքաղեան, «Ալի իմ դարդեր», 1905, Վաղարշա-  
պատ, 10 կ.:
- 8) Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկո, «Կենդանացած երգը», պատ-  
մուածք, թարգմ. Վ. Թումանեանի, 1905, Բագու, 10 կ.:
- \*9) Մ. Տ. Շւոտ, «Բիւրդ պէկ», (գծեր հայ-քրդական կեանքն),  
2-րդ տպագրութիւն, 1904, Ա. Պետերբուրգ 15 կ.:
- 10) Մատենդացցա, «Հիւանդ Սէր», տոողջապահական վէպ, լո-  
տպագր., թարգմ. Ա. Գ. Դ. Ե., 1905, Ալէքսանդրովուլ,  
40 կ.:
- 11) Ա. Քամալեանց, «Սիրելի հերոս», Հասան խանի ժամանակի  
պատմութիւն, 1905, Թիֆլիս, 25 կ.:
- \*12) Վ. Վերեսակ, «Մի անմեղ մարդու սոսկալի մահը», թարգմ.

- Պ. Պոօշեանի, հրատ. «Ստ. Լիսիցիան և Բնկ.», 1905  
Թիֆլիս, 6 կ.:
- 13) Է. Շատրիան, «Ժամագործի յիշողութիւնները», ադ. թարգմ.  
Շ. Խաժակնեանի, հրատ. «Ստ. Լիս. և Բնկ.», 1905, Թիֆլիս 8 կ.:
  - 14) Դերենիկ Դեմիքչեան, «Ուխտաւորներ», աշուղի հէքիաթը  
հրատ. «Ստ. Լիս. և Բնկ.», 1905, Թիֆլիս 7 կ.:
  - 15) Ս. Շիեանց, «Մի մահ», «Անառակը», երկու պատմուածք,  
հրատ. «Ստ. Լիս. և Բնկ.», 1905, Թիֆլիս, 7 կ.:
  - 16) Ղ. Աղայեանց, «Հէքիաթներ», հրատ. «Ստ. Լիս. և Բնկ.»,  
1905, Թիֆլիս, 50 կ.:
  - 19) Հ. Մելիք Հայկազեան, «Մի պտոյտ ձապոնում», իմ յուշերից  
և տպաւորութիւններից, հրատ. «Ստ. Լիս. և Բնկ.», 1905  
40 կ.:
  - 18) Գոգու, «Ամուսնութիւն», կատակերգ. երկու գործող.  
թարգմ. Պ. Պոօշեանի, 1904, Թիֆլիս, 30 կ.:
  - 19) Լ. Խանսահամեան, «Զարարիա ժարպեցու օրիբը», պատմակ.  
վէպ. (849—889), հրատ. Ստ. Պաղսեանի, 1904, Պետերբուրգ,  
1 ր.:
  - 20) Կարա. Մուրզայի մշակած հայկական երգերը, ներդաշնակեց  
ովիանօի համար Լէօնիդ Կոխնա, 1905, Պետերբուրգ,  
75 կ.:
  - 21) Տեղեկագիր, Թիֆլիսի Հ. Բալեգործ. Բնկերութեան 1904, թ.  
Թիֆլիս, 1905.:
  - 22) Սիամանթօ, «Հայորզիներ», 1905, Ժընէվ, Փրանկ:
  - 23) Փ. Վարդաղարեանի՝ «Վշտի և թախիծի երգինը», Յովհաննէս  
Թումանեան, 1905, Թիֆլիս, 20 կ.:
  - 24) Օնեկի, «Մօսունի և Չոռի արշաւանքները» (յուլիսի 25, 1904)  
(Արտատագ. «Հայրենիք շարաթաթերթէն) 1905, Բոստոն  
50 սանտիմ:
  - 25) Ա. Պալեան, «Թրքուհին» (միջադէպ մը Եղեսիոյ կոտորածէն)  
1905, Գահիրէ 50 սանտիմ:

## ԹԱՒՐՓ ՄԱՄՈՒԼԸ

«Մուրճի» անցեալ համարում մենք տեսանք, թէ ի՞նչպէս ող. Աղայեվը գառն արտասուբներ էր թափում, որ մահմեղականները մոռացել են դորանը, չեն կարգում այս: Եւ այդ սարսափելի զանցառութեան հետևանքը, Աղայեվի հաստատելով լինում էր այն՝ որ «զայլի թնատրութիւն ունեցող մահմեղականները զանուովի մորթի մէջ էին մտնում»: Նախշեանի և շրջակայ դաւաների սիրտ կարառող, հանրածանօթ գէպքերից յետոյ, որոնք ցոյց տուին թէ թաթարները իսկապէս ո՞ր աստիճան «զառնուկի» մորթի մէջ էին մտել, մենք ցաւով ու ամշութեամբ մտածում ենք, ի՞նչ կը լինէր այն ժողովուրդների վիճակը, որոնք դժբախտութիւնն ունեն մահմեղականների հետ խառն ապրելու, և թէ այդ անխնայ կոսորող, թալանող, հրդեհող «զառնուկները» Աղայեվի երազած զայլերը գառնային! Բայց Աղայեվը կարող է այժմ հրճուել, որովհետեւ իր ցանած սերմերը լաւ են ածել. «Կասողից» սկսած մինչև «Շարքի-Ռուս», նա շարունակ համիտամութեան թոյնն էր նեշարիկում մահմեղականների մէջ, նա անդադար քարոզում էր կրօնակիցներին զառնալ զայլ՝ արիւնարբու գազան. ի՞նչպէս անցեալ համարում տեսանք, նա քօղարկուած ձեւերով հասկացնում էր մահմեղականներին թէ «նրանց աշխարհը» նրանց ձեռքից յափշտակել էին... Ո՞վ էր յափշտակել, այդ արդէն շատ պարզ է...

Մենք Աղայեվի յօդուածի մի մասն էինք տուել, խոստանալով միւսը այս անգամ առաջ բերել. մենք այդ խոստումը անկատար պիտի թողնենք, նախ, որովհետև Աղայեվ իր նոյն յօդուածի շարունակութեան մէջ նոր բան չի ասում, ծանրանում է իր նտխորդ ասածի վրայ տարրեր դարձուածքներով, տքնում է ապացուցանել թէ մահմեղականների փլուաթիւնը դուրանի մէջ է միայն, թէ մահմեղականները կարող են առաջադիմել (?) միմիայն զուրան կարդարով. նա զարձեալ նենդաւոր ակնարկներ է անում թէ մահմեղականները անունով մի-

այն մահմեղական են, թէ նրանք չեն ցոյց տալիս այն մարտական, սազմիկ ոգին, որով կը տեսչար վառուած տեսնել նըրանց. օրինակ նա մի տեղ զրում է.

«Այնպիսի անուններ ենք կրում, որոնք երբէք մեր մէջ փաստերով դործերով չեն արտայայտուում. ինչպէս Ռուքն էդդին—կրօնի վիճաքար—Սյափ Էդդին—կրօնի սուր—ևայն ևայլն...»

Այսքան համարձակ զրուումներից յետոյ, պարզ է թէ Աղայելի անանձ քարողները իրանց արդիւնքը պիտի տային: Եւ դեռ ևս Աղայելը քաջութիւն ունի արիւնոտ դէպրերի պատասխանառու համարել հայերին...

Եթերորդ պատճառը, որով մենք Աղայելի յօդուածի—իր ընդհանուլ ոգուն մէջ արդէն մեզ յայտնի—շարունակութիւնը զանց ենք առնում, այն է, որ մեր ընթերցողներին ներկայացնելու այլ, և գերազանցապէս շահագրգիռ քաններ ունենք: Մեր ձեռքի տակ ունենք արտասահմանի իսլամ պարբերական հրատարակութիւններից մէկի «Իջթիհատ»-ի № 4-ը, ուր կայ մի այսպիսի տոկումէնու: Ռուսաստանի մահմեղականները մի տեղեկադիր են կազմել այն հարստահարութիւնների մասին, որ կրում են ոռւս կառավարութեան կողմից: Այդ տեղեկագիրը մահմեղականները ներկայացրել են ոչ միայն ոռւս կառավարութեան, այլ և ուղարկել են բոլոր օտար պետութիւններին, ինչպէս Թիւրքիային, Դներմանիային, Ամերիկային, Աստրիային, Անգլիային, Խոտալիային, Փրանսային և նոյնիսկ Շալոնիային:

Արտասահմանի յիշեալ օրգանը տպագրել է այդ տեղեկագրի էական մասերը և իր կողմից աւելացրել է մի շարք խորհրդագածութիւններ, որոնք այսքան էլ փաղաքշական չեն զանգատառը մահմեղականների համար:

Ահա այդ գոկումէնտը նոյնութեամբ:

Ռուսաստանի մահմեղականները -

Ռուսաստանի մահմեղականների՝ ոռւս կառավարութեան կողմից կրած հարստահարութիւնների մասին մի երկար տեղեկագրի ստացանք, որի մի քանի հատուածները ի ստորև առաջ ենք բերում:

«Այնպիսի մի ժամանակ, երբ առհասարակ ամենքը օգուտ են քաղում կարծիքների ազատութիւնից, ինչու համար Ռուսաստանի մահմեղականները զրկուին այդ ազատութիւնից: Ռուսաստանի մահմեղականների ամեն տեսակ իրաւունքները

ուսնակոխ են եղել և հետզհետէ լինում են: Ռուսաստանի մահմեդականների հոգևոր գործերի վարումին և հոգևոր կալուածների (վաղբ) կառավարումին համար ժամանակով առանձին վարչութիւն հաստատուած և նրանց մի շարք արտօնութիւններ շնորհուած էր թէև, բայց, այսօր, ուստի կառավարութիւնը՝ հակառակ քսաներորդ դարու ներկայ քաղաքակրթութեան, իսլամական իրաւունքները բռնարարելու և բնաջինջ անելու վրայ է: Հետևաբար, մահմեդականների բռնարարուած իրաւունքներից մի քամիսը յիշատակում ենք հետեւել կերպով:

«Հնայցին.—Եկատերինա Երկրորդ կայսրուհու օրով՝ 1787 թուին մահմեդականների հոգևոր գործերի կառավարութեան և սրբազն շէրաաթի հիման վրայ դատաստան տեսնելու նպատակով Ռուֆա քաղաքում մի կրօնական դատարան հաստատուեց. այս դատարանի համար հոգևորականներից մի մուֆթի (կրօնական դատաւոր) և երեք դադի ընտրուեց մահմեդականների միջև տեղի ունենալիք խնդիրների, վէճերի լուծման, և մզկիթների և մէզրէսէնների տնօրինութեան և կառավարման և ամուսնական և ապահարզանի և ժառանգութիւնների բաժանման նման դատերի քննութեան և կարգադրման համար:

«Մուփթին այդ դատարանի նոխագահ լինելու պայմանով՝ միւս երեք դազիններն էլ միասին պիտի ընտրուէին Կազանի մահմեդականների միահամուռ հաւանութեամբ: Այդ դատարանի իրաւասութիւնը, ինչպէս և նրա անդամների զուտ մահմեդական հոգևորականներից ընտրուելը՝ պետութեան անհրաժեշտ օրէնքով վճռուած էր:

«Երկրորդ.—Ղրղզների և կազակ ցեղերի մէջ իսլամական աստուածայայտ կրօնի ուսուցման համար մահմեդական ուսուցիչներ ուղարկուելու մասին 1792 թուին կայսերական մի հրովարտակ շնորհուած էր: Բուխարայի և Խիլայի կողմից դադաթելով Սիբիրիա հաստատուած մահմեդականներին տեղի ընդգարձակ արտօնութիւններ տրուած էին. նրանք անձնական և առևտրական տուրք չպիտի վճարէին:

«Երկրորդ.—Ղրիմի մահմեդականների համար էլ մի հոգևոր առանձին դատարան բացուած էր և նրանց բոլոր կրօնական գործերի կարդաղըութիւնը ինչպէս և հոգևոր կալուածների մատակարարութիւնից գոյացած հասոյթը յօգուտ ազգի և ազգային գալրոցների և մէզրէսէնների ծախսուելը յիշեալ դատարանի իրաւասութեան պատկանում էր: Ղրիմի իսլամ գինուորները պէտք է առանձին գունդ կազմէին և միայն Ղրիմի թերակղզու սահմաններում ծառայէին. նրանք Ռուսաստանի

այլ մասերը չպիտի ուղարկուէին և պիտի ունենային իրանց յատուկ իմամները:

«Չորրորդ. — Ամբողջ Ռուսաստանի մահմետականները կրօնական աղաւառութիւն և ոռուների համահաւասար իրաւունքներ պիտի վայելէին: Այստեղ յիշուած իսլամական իրաւունքներից գոնէ մի բանիոը եթէ պահպանուած լինէին, ի հարկէ զրափոխարէն մահմեղականները մշտապէս կատարեալ հաւատարմութեամբ կառավարութեան պիտի հնագամնդէին: Մինչզեռ 93 թուրից սկսած՝ կայսերական հրամանով առաջարկուեց մուֆթիներին ընտրել ուս բարձր գպրոցներից շրջանաւարտ անձերից: Իսկ ոռուսական այդ գպրոցները առարտած անձերը առհասարակ իսլամ կրօնագիտութիւնից անտեղեակ են:

«Վերջերս առաջարկուեց նոյնապէս, որ Օրէնքուրզի կրօնական դատարանի անդամներն էլ անպատճառ ոռուսերէն իմանան և այդպիսով ջնջուեց իսլամ ժողովուրզի մուֆթիներ և զագիներ ընտրելու իրաւունքը: Կառավարութիւնը ինքը անձամբ ընտրում է, և ընտրում է տղէտ անձերին իրու մուֆթի և զագի: Կառավարութիւնը սրանով էլ չբաւականանալով՝ ժառանգութեան բաժանման հարցերը Օրէնքուրզի իսլամ հոգևոր զատարանի իրաւասութիւնից խլելով՝ քաղաքային դատարաններին յանձնեց: Կասկած չկայ, որ շուտով՝ ամուսնական և առաջարգանի վերաբերեալ դատերն էլ կը յանձնուի բաղարական զատարանի: Նոյնիսկ սրանից մի քանի տարի առաջ Օմսկից մի բարձրաստիճան ոռուս պաշտօնակատար Ակմոլա նահանգի Գեօկցէտավ(?) քաղաքը զալով ոստիկանութեան միջոցով բոլոր մահմետական կազակներին հաւաքեց ոռուս եկեղեցուն և նրանց ասաց. «Այսօրուանից սկսած՝ դուք այլ ևս չպիտի հետեւիք զուրանի պատուէլներին. ահա ձեր սուրբ զիրքը:» Եւ նրանց իւրաքանչիւրին մի մի Աւետարան բաժանեց: Յետոյ խօսքն ուղղելով նրանց իմամներին աւելացրեց. «Մահմեղականներդ այսուհետև շարիաթի օրէնքով չպիտի զեկավարուէք քննաւ. նրա անունն անդամ չպիտի արտասանէք: Վերջապէս դուք չպիտի խառնուէք ամուսնական, ամուսնալուծական և երգմնեցնելու հարցերում:»

1864-ից սկսած՝ գպրոցների և մէդրէսէների կառավարութեան իրաւունքը կրօնական դատարաններից խլուելով ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան յանձնուեց: Մինչզեռ մեր գպրոցներն ու մէդրէսէները մասնաւորապէս կրօնական գիտութիւն ուսուցանելու սահմանուած են: Իսկ լուսաւորութեան մինիստրութեան մէջ մահմեղական լեզուին ծանօթ մի հոգի անդամ չկայ: Իսլամ գպրոցների յառաջա-

դիմութեան և պահպանութեան համար քառասուն տարուց  
ի վեր ոչինչ չէ արած: Մի քանի նահանգներում երբեմն  
հազիւ հազ մի բնիչ գալով՝ առաջարկում է դպրոցներում  
սուս լեզուի ուսուցումը: Եւ երբ ժողովուրդը այդ ա-  
ռաջարկը չի ընդունում, նա՝ դպրոցները փակիլով հեռանա-  
լուց բացի ոչինչ չէ անում: Այս կերպով մեր մի քանի կրօնա-  
կան դպրոցները փակիցին: Բուս կառավարութեան գիտաւո-  
րութիւնը այս մասին՝ միմիայն մեր մէջբէսէներում ուսու լեզուն  
ներմուծեն: Է Տարօրինակ է, որ մինչզեռ ուսու բոլոր դպրոց-  
ների ծախըը լուսաւորութեան մինիստրութիւնն է հոգում, և  
նրանց հողմուր դպրոցների վարչութիւնը հոգեորականների ձեռ-  
քին է, մեր դպրոցները թէ մեր ձեռքից խելով յանձնում են  
լուսաւորութեան մինիստրութեան, թէ չեն հոգում նրանց ծախ-  
քերը և թէ նոյնիսկ մեր դպրոցներում ուսուերէնի ուսուցման  
հարկաւոր եղած ծախքերը մեղ են առաջարկում վճարել: Բացի այդ՝  
առաջարկում է գիտական հասարակութեան իմամներին ուսուե-  
րէն կարդալ զրել իմանալ: Բայց միթէ հնարաւոր է տաճնեհինդ  
տարի մէջբէսէներում ուսունելուց յետոյ, ուսու նախնական դըպ-  
րոցները յաճախելով ուսուերէն սովորել: Եթէ նոյնիսկ իսլամ  
հոգեորականները այդ մտքով դիմում անեն, այդ կարգի ու-  
սումնարանների կամոնագրութեան համաձայն չեն կարող ըն-  
դունուել: Հետեաբար, ուսու կառավարութիւնը շատ լաւ իմա-  
նալով որ իմամները ուսուերէն սովորելու անկարող են, պահան-  
ջում է որ ուսուերէն չիմացողը իմամ չլինի, որով ձգուում է ի-  
մամութիւնը բոլորովին ջնջել: Այս պատճառով մահմելական-  
ների մէծամասնութիւնը նախընտրելով գաղթել, վաղուց ի վեր  
ցիր ու ցան լինելու վրայ է: Մի մեծ մասն էլ օսմանեան կառա-  
վարութեան երկիրը գաղթելով՝ խալիֆէի բարձր հովանաւո-  
րութեան տակ մտած և ասպնջականութիւն վայելած են:  
Բուս կառավարութեան վերոյիշեալ վատ դիտաւորութիւնը՝  
այժմեան ուսուական Սինօդի նախագոհ Պորիկամնոսցէվի և  
կաղանի համալսարանի անօէն՝ իլմինսկիի միջն փոխանակուած  
գրագրութիւնից և մամուլի մէջ լոյս տեսած լուրերից և թըղ-  
թակցութիւններից աւելի ակնյայտ գարձաւ: Բուխարայի և  
Խիլայի կողմերից Սիրիիա գաղթած մահմեդականներին՝ ժա-  
մանակով շնորհուած արտօնութիւնների հետքն անդամ չէ մնում:  
Սրանց սեփականութիւնը եղող ամբողջ հողերին կառավարու-  
թիւնը տիրացած է, և առևտըի վերաբերեալ արտօնութիւններն  
էլ ջնջուած են, նոյնիսկ Սիրիիայի վոլու նահանգի մահմեդա-  
կանների ամսուտէրական (մուխթարիյէթ) վարչութիւնները  
չնջուելով ուսու դիւղերի տաճուտիրական վարչութիւնների մէջ  
Յունիս, 1905.

մտցնելու մասին որոշում կայացրել են և հարկ եղած գործողութիւնները կատարել են. այս պատճառով էլ նոյն մահմելու կանները ստիպուել են գաղթել և իրանց կողմից փոխանորդներ ուղարկել են Կ. Պոլիս:

«Իսկ ինչ վերաբերում է Ղրիմի մահմեդականներին, որանց մէջ էլ մուֆթիի պաշտօնը ջնջուելով՝ կառավարութեան կողմից ընտրուած տղիտ անձերի միջոցով փոխանորդաբար կառավարուում են, իսկ հոգեոր կալուածները ամբողջապէս կրօնական ատեանից խլուելով՝ ոռու պաշտօնէութեան յանձնած են. սրանք էլ՝ գանձուած հասոյթը՝ զպրոցների և մէկրէսէնիւրի օգտին չյատկացնելով՝ վատնելու վրայ են: Ներկայումս, հոգեոր կալուածների վարչութեան մօտ էլս միլիոնից աւելի փող գտնուելով հանդերձ, մի կոսէկը յօդուա իսլամութեան չծախսուելուց զատ, ընդհակառակը ամբողջը ոռուների կողմից իւրացրուած է: Զինուորները՝ հակառակ օրինաց, ցրուել են բոլոր զաւառներում. Էսկադրոնի իմամները անունով՝ միայն գոյութիւն ունին, հետեաբար սրանք էլ ճնշումներին անկարող լինելով դիմանալ, ամբողջովին գաղթել են:

«Եյժմ գանք մահմեդականների կրօնական աղատութեան և ոռուների հետ համահաւասար իրաւունքներ վայելելու հարցին:

«Քաղաքներում, կառավարական օրէնքների հիման վրայ գումայի վարչութեան անդամների թուի  $\frac{3}{4}$ -ը ոռու պէտք է լինի: Բայց նոյնիսկ Սեմիպղատի նման քաղաքներում, չնայած որ մահմեդականները կազմում են մեծամասնութիւն, քաղաքային վարչութեան անդամների թուի  $\frac{3}{4}$ -ը գարձեալ ոռու են:

«Երբ մահմեդականները ամեն տեսակ տուրքերը ոռուների հետ հաւասար են վճարում, այլև ի՞նչ միտք ունի այս օրէնքը: Ռուսական գործոցներում մահմեդական աշակերտների համար մի կրօնուացյ անգամ չկայ, մինչդեռ ոռու աշակերտների համար ամեն գործոցներում կրօնքի ուսուցիչ կայ: Ռուսների բարձը հոգեորականները ոռուիկ են ատանում. կառավարութիւնը նպաստ է տալիս գործոցներին, մեր ոչ հոգեորականներին և ոչ էլ գործոցներին պաշտպանութիւն ցոյց չուրուելուց բացի, նոյն իսկ մեր իմամները զինուորական ծառայութիւնից աղատ չեն կացնուած. մզկիթի մէջ այսօր իմամութիւն անողը՝ էկուց զինավարժութեան է կոչւում, իթէ պահեստի կամ մուսթահաֆրդ (պահեստից յետոյ կանչուող) զինուոր է. պաշտօնական ոչ մի տուրքից էլ աղատ չէ կացնուած. բացի զբանից՝ Ռուսաստանի 40,000 մահմեդականներին՝ կառավարութիւնը բանի՝ քրիստոնեայ անունը տուել է. այս մարդիկը հակառակ սերնդից սե-

բունդ մահմեդական լինելուն, կառավարութիւնը ճնշումներ է գործ դնում նրանց բոնի քրիստոնէացնելու համար:

«Մուս կառավարութիւնը կովկասի և Դաղստանի մահմեդականների թէ անհատական և թէ հասարակական իրաւունքները բնաւ ուշադրութեան չառնելուց, և նրանց առաջ, հոգեորդործերում, ամեն տեսակ խոչընդոտները յարուցանելուց զատ, կրօնական հարցերի և գաւանական պահանջների մէջ ևս իր ոտնձիքութիւնները չափ ու սահմանից անց է կայնում: Մինչդեռ ամեն տեղ, ամեն երկրում կրօնքի աղաւութիւնը ապահովուած է, ուստ կառավարութիւնը բաց արձակ մահմեդականներին արգելում է աղօթել և նրանց աղօթատեղիները անասունների և մասնաւորաբար խոզերի բնավայր է զարձնում: Իսլամ հոգևորականներից և չէյլսերից շատերին աքսորել, անյայտ կորցնել, և լսու ոմանց, սպանել է: Ի միջի այլոց, սրբակրօն հոգևորականներից հաջի Արդ-իւլ-Լաթիֆ էֆէնդուն՝ աքսորած և անյայտացրած է Հիջազ և Կ. Պոլիս ուխտի գնացած լինելուն պատճառով: Կըմուկի կողմերում գանուած մի քանի մահմեդական գիւղերում աւաղակախմբեր բնակեցնելով՝ զիւղացիների հողերը բանութեամբ յափշտակել և յիշեալ աւաղակներին յանձնել է: Եւ Քըրա քաղաքի շրջակայրում գտնուած մի քանի մահմեդական գիւղերը ամրողապէս աւերելով՝ բնակիչներին Պարսկաստանի սահմաններն է աքսորել և նրանց տեղ յիշեալ աւաղակախմբերին է բնակեցնում: Այս մահմեդականների մի մասը չհանդուրժելով այդ անխնայ հարստահարութիւններին ապաստանել է խալիֆային: Նուիրագործուած օրէնքների համաձայն՝ փոխանակ իւրաքանչիւր մահմեդականից տան համար տարեկան մի բուրլի հարկ ստանալու, զիտմամբ, հարստահարելու նպատակով այժմ իւրաքանչիւր տնից երկու հարիւր բուրլի պահանջելով՝ գանձելու ձեռնարկած է: Որովհետեւ մահմեդականներին սպանողները փոքր կտշառքներով՝ պատժից աղաւում ևն, մահմեդականներին սպանելու համարձակողների թիւը օրէց օր աւելանում է: Մինչդեռ մի ուստի կողմից ներկայացրած աղերսագիրը անմիջապէս ուշադրութեան առնուելով բաւականութիւն է տրւում նրան, մահմեդականը իր իրաւունքների պաշտպանութեան համար երբ խնդրամատոյց է լինում, բոնում ևն նըրան, բանտարկում, և տուղանքի ենթարկում: Մահմեդականների վրայ ճնշում և հարստահարութիւն գործ դնող անձերին կառավարութիւնը բաց արձակ պաշտպանում և հովանաւորում է: Կառավարական այս թոյլտուութիւնից քաջալերուած՝ աւաղակարարոյ անձինք ամեն օր մահմեդականների պատիւն և ստացուածքը բանաբարում են որևէ միջոցով...»

Այս տեղեկագրի տակ մահմետական օրգանի՝ «Իջթիհաղ»-ի խմբագրութիւնը հետևեալ շահագրգիս խորհրդածութիւններն է աւելացնում:

«Մահմեդականներդ՝ ոռուս կառավարութեան կողմից հարստահարութիւններ կրենուող մասին էք խօսում. բայց ի՞նչ օգուած էք սպասում խօսելուց: Եթէ մահմետականները ճնշում և հարստահարում են, պատճառը նրանց մահմետական լինելը չէ, այլ տգէտ և ծոյլ լինելը: Ի՞նչ էք կարծում, այն իսլամները որ գտնուում են մահմետական կոչուած կառավարութեան տակ, նրանք պակմած ճնշումի և հարստահարութեան են ենթարկում ձեր փառաբանած խալիֆայի կողմից: Ռուսական կառավարութիւնը շարունակ ձգուում է, ասում էք, ձեզ ոռուերէն սովորեցնելու վատ բան է անում: Այդ զեպքում գոնէ ձեր չգիտցած ու չառկացած թուղթի տակ ստորագրելուց ազատ կը լինէք: Ռուս կառավարութիւնը ձեզնից զինուոր է առնում և ձեր հաւատակից եղբայրների վրայ սուր է բաշել տալիս: Միթէ ձեր խալիֆա յորջորջած Արդիւլ-Համիդը միենոյն բանը չի անում: Եէմէնում մեր զօրքերի նահատակած արարները միթէ մահմետական չեն: Միթէ նրանց մորթոյ զօրքերը մահմետական չեն: Այդ զօրքերի զերագոյն հրամանատարը այդ կեղծ խալիֆա Արդիւլ-Համիդը չէ: Մեր այդ տրար հայրենակիցների և հաւատակիցների ասպատամբութեան պատճառը միթէ նրանց կրած ճնշումն ու հարստահարութիւնը չէ: Գրում էք որ ձեր այդ տեղեկագիրը ուղարկել էք Դերմանիսիայի, Ամերիկայի, Աստրիայի, Ռուսաստանի, Շապոնիայի և այլն գեոպաններին... Հրեաներից աւելի ճնշուած աղդ չկայ Ռուսաստանում. բայց հակառակ նրանց կրած բոլոր հաւածանքներին, միթէ չէք տեսնում, թէ նրանք ի՞նչ դիրք ունեն գրաւած վաճառականութեան և արուեստների, ընկերութիւններ կազմակերպելու, բժշկութեան, երկրաշափութեան, փաստարանութեան և այլ ամեն անսակ ասպարէզների մէջ: Ռուսաստանում 20 միլիոն մահմեդականներից քանի հատ պըտփէսէօր, քանի բժիշկ, քանի ընկերութիւնների անօրէն, քանի բանկիր կան: Ռուս կառավարութիւնը հրէայ երկու սեփի աշակերտներին հազար անսակ գժուարութիւններով է ընդունում զիմնազիաներում և համալսարաններում: Պարիզի, Բերլինի, Լոնդոնի, Ֆրանչէլի համալսարաններում երկու սեփից հազարաւոր սուսահապատակ հրէայ ուսանողներ գիտութիւն և արուեստ են սովորում: Օտար Երկրներում ուսման զիմնելու պատճառը Պետերբուրգի և Մոսկովյայի համալսարաններում չընդունուելն է: Իսկ մահմեդականների առաջ Ռուսաստանի բոլոր գըպ-

բոցների գմները բաց են. ինչու համար ձեր զաւակներին չեք ուղարկում այդ գպրոցները և ուսման տալիս: Ինչու նրանց չեք ուղարկում Եւրոպա: Եթէ ձեր զաւակներին թէ Խուսաստանում և թէ Եւրոպայում ուսում առնել տաք, այն ժամանակ նրանք թէ կառավարական և թէ մասնաւոր գործերում կարևոր դիրքեր կարող են գրաւել և հարցը բոլորովին այլ կերպարանք կը ստանայ: Հերիք խալիֆա, խալիֆա աղաղակէք. հերիք խալիֆայի երկիրը երաղէք: Արդ-իւլ-Համիդ՝ խալիֆայի երկրին էլ, խալիֆայութեան էլ յարգն ու պատիւը խաղը, խայտառակ արեց: Եւ բոլոր մահմեղականների կրած թշուառութիւնների խօսկան պատասխանատուն՝ մեծ մասով՝ Արդ-իւլ-Համիդը և Արդ-իւլ-Համիդի նման օսմանցի դաւաճան սուլթաններն են: Եթէ Արդ-իւլ-Համիդը կրօնի և աղջի թշնամի, անխիղճ մի թագաւոր չլինէք, քսան և ուժ տարուայ ընթացքում թուրքիան աւելի հաստատուն և քաղաքակիրթ մի պիտութեան դրութիւնը կը ստանար: Եւ մահմեղականներն էլ այն ժամանակ զօրեղ մի ապաստան, մի յինարան, գիտութիւնների աղքիւր կունենային... Այժմ Թիւրքիայի թագաւորը մի բուլղար իշխանաւորի առաջ զորդողում է: Խնդրագիրներ և տեղեկագիրներ ներկայացնելով ի զուր ժամավաճառ մի լինէք, եղբայրներ: Ռւսում և փող վաստակեցէք: Առանց գիտութեան փող շահել, առանց փողի ուսում առնել և առանց երկուսին ազատութիւն և իրաւունքներ ձեռք բերել և պահպանել անկարելի է: Մահմեղական կառավարութիւնների իրանց հպատակների վրայ գործ դրած հարստահարութիւնները, Թուսաստանի՝ իր մահմեղական հպատակների վրայ գործ դրած հարստահարութիւններից մեղքնում է: Եւ նրանց մնունքին յատկացրած փողով՝ իր անձի պահպանութեան համար գործ ածած լրտեսներին է պարարտացնում: Օսմաննեան երկրի ոչ մի մասում ամպահովութիւն և արդարութիւն չկայ: Թիւրք, հայ, քիւրդ, արար, յոյն և այլն ամենը միմիանց մորթոտում են: Այդ բոլոր խառնակութիւնների և թշուառութիւնների հեղինակն ու պատճառը խալամակն խալիֆան չէ: Մենք այժմ բացի մահմեղականութեան անունից ոչ մի բանի տէր չենք: Անօդում է լաց լինել, խնդրագիրներ տալ: Թուսաստանից ստացուած վերջին հեռազների համաձայն՝ այժմ, Կովկասում, մահմեղականները իրանց հայ հայրենակիցների հետ միմիանց սպանելով զբաղուած են: Այս վայրենութեան պատճառը ի՞նչ է, եթէ ոչ տղիտութիւնը: Ժամանակ՝

գիտութեան, արուեստների, վաճառականութեան ժամանակ է: Բաց արէք ձեր աչքերը: Սովորեցէք ոռւսերէն, փրանսէրէն և այլ լեզուներ, և ձեր զաւակներին սովորեցրէք. ընկերութիւններ կազմեցէք: Եթէ այսպէս տղէտ մնանք, ոչ թէ Ռուսաստանում, այլ Եւրոպայի ամենասազատ և ամենաբարդաբարդատ երկրում անգամ մեր բաժինը անարդարութիւնից բացի ուրիշ բան չի կարող լինել:

«Մի խօսքով կատարեալ տիսրութեամբ կարդացած ձեր խնդրագրի մի քանի մասերում զուք շատ իրաւացի էք: Բայց այդ իրաւունքները ձեռք բերելու համար անհրաժեշտ եղող միջոցների ընտրութեան մէջ սխալում էք:»

Թուրք օրգանի այս շատ իրաւացի և շատ խելօք խորհրդածութիւններից յետոյ, մենք կ'ուզէինք շեշտել հետևեալ կարևոր կէտի վրայ:

Մահմեդականները անդադար կրկնել են որ թիւրքահայերը աններելի յանցանք են գործել Սուլթանի կառավարութեան կողմից իրանց կրած անլուր հարստահարութիւնների և տանջանքների դէմ բողոքելով Եւրոպային: Նրանք այդ դիմումով իրրե թէ կամեցել են Եւրոպայի միջոցով պատառ պատառ տնել տալ Թիւրքիան: Այժմ նոյն քայլն են անում և իրանք, այդ «ամենահաւատարիմ հպատակները» գիմում են օտար պետութիւններին: Մեկնութիւններն աւելորդ են...

Տ. Զատէն

## ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՐԴԻՑ

Համառու տեսութիւն զեղարուեստական դպրոցներու, սկիզբն մինչեւ նորագոյն ըրջանները \*):

Վերոյիշեալ պայմաններուն տակ ուրեմն կրօնքը հզօրապէս նպաստեց յունական արուեստին կատարելագործման, իր առոտուածներուն համար մարդկային ամենակատարեալ էակի մը ձևերը պահանջելով արուեստագէտներէն, որոնք ստիպուած էին գիտել, ուսումնասիրել, բազգատել բնութեան մէջ իսկ այն գերազանցօրէն գեղեցիկ և ճկուն կազմուածքները, որոնց տմէն օր, ամեն ժամ իրենց աշքերուն առաջ ունէին տօներուն, հանդէմներուն, մարտահանդէմներուն մէջ, յանձին յոյն երիտասարդ ըմբիշներուն:

Ասուածութիւններու պատուին կազմուած հանդէմները՝ որոնց տօնելու կերթային երկրի իւրաքանչիւր մտաէն ամենազգեցիկ երիտասարդները և աղջիկները, որոնց կատարելութիւնը իրենց երկրի փառքը կազմելով իրենց հանրապետութեան մասին բարձր գաղափար մը տալու կը ծառայէր՝ օլիմրիական խաղերը, որոնք փառքի և պատուի ասպարէզ մը եղած էին մրցման ակնդը բերելով իւրաքանչիւր հաստրակութեան ամենէն հումկու, առողջ և գեղեցիկազմ ըմբիշներուն և ամենէն ճկուն մարտիկներուն, աւելի քան կրթիչ դուրոցներ էին յոյն արուեստագէտներուն համար, որոնք տօն միջոց ունէին դեղեցկութեան, ճկունութեան և զօրութեան գերատիպարը՝ ամփոփուած այդ խաղերում յաղթական հանդիսացող ըմբիշին մէջ:

Եւ այդ ոյժի ու գեղեցկութեան փառքը կը յաւերժանար Փիդիասի մը կամ Պոլիկլէտի մը մատներուն տակ արձանի մը փոխարկուելով, որը ըմբիշի հայրենիքին մէջ տեսակ մը հիացմունքի և պաշտամունքի առարկայ կը դառնար այնքան իբր

\*) Տէս «Մուլճ» № 4.

որուեստի կատարեալ գործ մը, որքան ոյժի և դեղեցկի մարմընացում մը:

Բայց ամենառւշագրաւը սա պարագան է թէ նոյն իսկ Յունաստանում արուեստը հաւասարատէս իր բոլոր մասերուն մէջ միևնույն չափով չէ զարդացած, և այդ այն միակ պատճառով որ իր ապրելուն և զարդացումին անհրաժեշտ միակ տարրէրը՝ յարգանքը և պատիւը՝ չէ գոտած երբէք:

Պատմութիւնը շատ բացորոշ կերպով այդ հաստատած է, նոյն իսկ Յունաստանէն սկսելով մինչև նորագոյն ժամանակաները, ապացուցանելով որ այն երկիրներուն մէջ ուր զեղարուեստները սիրուած յարգուած և զնահատուած էն, կրցած էն հասնիլ իրենց կատարելութեան ամենաբարձր՝ արտայայտութիւններուն, մինչդեռ ինքնակալի մը հաճոյքին կամ հասարակութեան որոշ մենաշնորհեալ դասակարգի մը ցանկութիւններուն ստրուկ գարձած, և կամ ինք իր վիճակին ձգուած գեղարուեստները սկսած էն շեղիլ իրենց վհի նպատակէն, անեկումի շըջանի մը մէջ մտնել և տկարանալ, ինչպէս այդ պիտի տեսնենք Փրանսական արուեստին Լուդովիկոս ԽIV և ԽV-ի օրերուն կրած բնորոշ փոխիսութիւններուն ժամանակ:

Յունական այն նահանգներուն մէջ ուր բնական պայմաններու և բարքերու տարրելութիւններու պատճառով վաճառականութիւնը չէր ծաղկած, արուեստը գրեթէ մուտք չէ գործած, մինչդեռ Աթէնք որ վաճառականական կենտրոն մը եղած է, չէ ուշացած նաև զեղարանցորէն զեղարուեստական կենտրոն մը ըլլալ, դէպի ինքը ձգելով զեղարուեստական հոսանքները, կազմելով զլուխ-գործոցներու տպաւորիչ հաւաքածոյ մը և դառնալով լուսաւոր ջահ մը, որուն յառած պիտի մնան նոյնիսկ յետագայ գորերու բոլոր արուեստագէտներուն աշըրբը:

Պէրիկլէսի գարը՝ (550—429 Ք. առաջ) որ Փիդիասի դարն է միանգամայն այդ հայեցակէտին անհերքելի մի փաստն է: Յունական գեղարուեստը այդ դարուն մէջ Պէլիկլէսի խելացի իշխանութեան տակ միայն կրցած է արտադրել իր վլուխ գործոցները, շնորհիւ այն հովանաւորութեան՝ որը վայելած է, և այն ժողովրդականութեան՝ որը իր դէպի կատարելազործումը ձգտումին ամենառաջեղ ազգակն է եղած: Ժողովուրդը որ այնքան առատօրէն տուած էր և կուտար արուեստագէտներուն Աթէնքի զարդարումին համար՝ անդամ մը սակայն սկսաւ տըրտընջալ Պէրիկլէսի գեղարուեստական գործերուն և արուեստագէտներուն հանդէպ՝ ունեցած շոայլութեան համար: Սակայն

Պէրիկլէս հրապարակային ժողովի մը մէջ քանի մը բառերով  
միայն պատասխանեց.

«Իմ ըրած ծախաելու չափազանց կը գոնէք, լաւ, ևս իմ  
հաշուիս կը վերցնեմ, անոնք, բայց իւրաքանչիւր կառուցուող  
շնութեան վրայ իմ անունս պիտի գրուի, և այդիսով իմ սե-  
փականութիւնս պիտի ըլլայ ան»:

Յոյն ժողովովովի ամենազգայուն ջիղերուն էր դպած Պէ-  
րիկլէս, և իր արուեստագէտներու գեղարուեստական արտա-  
գրութիւններուն վրայ նախանձուտ խնամքով մը հոկող, անոնց-  
մով հպարտացող ժողովուրդը լաւագոյն համարեց կրկին իր  
քսակը լայն բանալ քան թէ ապագայ գլուխ-զործոցները ան-  
հատի մը սեփականութիւնը տեսնել:

Սակայն ժողովուրդը միմիայն վճարող մը չէր: Դործերու  
գնահատութեան մէջ որոշ գեր մը կատարած է ան: Նոյնիսկ  
Փիդիաս անգամ մը չէր վարանած իր մէկ արձանոց՝ Օլիմպիան  
Ժիւլիսէրը՝ հասարակութեան գնահատութեան հնթարկելու,  
որ քանի մը թերութիւններ գտաւ: Իր աշխատանոցին մէջ  
կրկին փակուելով Փիդիաս ուզգեց այդ սխալները, դատելով,  
որ հասարակութիւն մը, մարդոց բազմութիւն մը աւելի լաւ  
կրնար տեսնել քան թէ մէկը՝ եթէ նոյնիսկ այդ մէկը Փիդիաս  
մ'ըլլար:

Անշուշտ պէտք չէ հետացնել թէ տղէտ և անճաշուկ  
ամրոխ մը կրնայ միհնոյն հատունութեամբ վճիռ տալ գե-  
զարուեստական գործի մը մասին: Փիդիաս լաւ կը ճանչնար  
աթենացիներու կիրթ և բնածին ճաշակը, և անշուշտ սխալ մը  
չէր ըրած դիմելով անոնց գնահատութեան:

«Ժողովուրդը շատ անգամ միջակ գործի մը վրայ կզմայլի,  
բայց երբ այդ գործին քով դնէք աւելի գեղեցիկը ու կատա-  
րեալը, ան չափուի վարանի իր ընտրութեան մէջ—կըսէր կրկի-  
ռոն:

Արկիփօ—Սիկլոնեան Դալրոցին մէջ կազմուած էր Փի-  
դիաս, իրեն կրեթէ հաւասար Պոլիկլէտի և Միոսինի հետ, իր  
Պարթենոնի ճակարին և քիւերուն վրայի հարթաքանդակները,  
խմբարձանները կատարելութեան որոշ աստիճանի մը հասած  
են, որոնց մէջ սակայն միմիայն իր գրիչին պատկանող կտոր-  
ները գեռ որոշապէս չեն պարզուած. մէկ մետր բարձրութեամբ  
հարիւր վաթսուն մետր երկարութեամբ Պարթենոնին շրջապատը  
գարձող հարթաքանդակները ապահովարար իր աշակերտներու  
օղնութեամբ միայն կրցած է վերջացնել:

Իր առանձին և հսկայ մեծութեամբ արձանները այսօր  
կորուուծ են:

Փիդիաս Պոլիկլէտի՝ որ մարմնի համաշափութեան գեղեցիկ օրինակներ տուած է՝ և Միռոնի հետ՝ որ բնութեան հարազատ և ուշադիր հետեւող մ'է եղած՝ յոյն Արուեստին կատարելագործման ձգտումին, աստիճանաբար մարդկային գեղեցկութեան զարդարականացումի և աստուածացումի ձիգերուն մարմնացումը կը կազմին:

Բայց Փիդիասի առաւելութիւնը եղած է մարդկային արտաքին ձեւերուն հետ միացնել ներքին մտածումի, մը արտայայտութիւնները: Այդ պատճառով իր աղղեցութիւնը տարածուած է Աթէնքէն դուրս, յունական արուեստին վրայ ընդհանրապէս, զայն աւելի աղնուացնելով ու բարձրացնելով:

Յունական արձանագործութիւնը սակայն փոքրիկ, բայց նշանաւոր բացառութիւններով՝ հոգեկան արտայայտութիւններու շատ ըիչ բարդութիւններ ներկայացուցած է:

Զանազան հեղինակներ՝ ինչպէս Վինքէլման, Լէսոխինկ և ուրիշներ «հոգիի լուութիւն» ով որակած են յունական արձաններուն մարմնի ձեւելու և դէմքի հանդարտութիւնը, որ արուեստագէտներուն կողմէն դիտաւորեալ ենթաղրած են: Բայց ուրիշ հեղինակ մը Քէման՝ աւելի տրամաբանական և բնական ձեւով մը բացատրած է այդ երևոյթը, ենթագրելով թէ արձանները նուիրուած ըլլալով աստուածութիւններու՝ որոնց մարդկայնացուցած էին արտաքնապէս՝ չին կլնուար համարձակիլ աւելի մարդայնացնել, անոնց արտաքինին վրայ ցոյց տալով որևէ մարդկային զգացման արտացըլում:

Նոյնպէս որոշ մաս մը մահկանացներու յիշատակը յաւերժացնելու, աստուածացներու համար քանիզակուած, պէտք էր կրքերու և զգացումներու կարելի եղածին չափ քիչ արտայայտութիւններով երևար, «Աստուածներուն պարտադիր եղած բովանդակ յարդանըը ներշնչելու և կենդանի կամ մեռած հերոսներուն աստուածային երևոյթը տալու համար»:

402 (Քր. առաջ) թուականին Լիբանդը՝ աթէնացիներուն յաղթելով իր և իր զօրավարներու արձանները՝ կանգնեցնել կուտայ հրատարակներու վրայ, աստուածներու արձաններուն քով, և այդ կեանքի կտորները, կենգանագիրները, աստուածային խորհուրդի հմայքը մեծապէս կը նուազեցնին:

Սիկիօնի դպրոցը իրավաշտութեան որբանը կը զառնայ և Լիգիպակ՝ իր հեղինակութիւն մը դարձած օրերուն՝ այդ նոր դպրոցը կը բնորոշէ սա բառերով,

«Պոլիկլէտ, Փիդիաս և Միռոն՝ մարդիկը ներկայացուցած են ինչպէս պէտք էին ըլլալ, իսկ ես կը ներկայացնեմ ինչպէս որ են:»

եւ սակայն Պոլիլլէտի մահէն յետոյ շատ քիչ տարիներ  
սահած էին:

Որոշ ժամանակ մը Լիդիպպի աշակերտները իր դաւա-  
նանքներու հեղինակութիւնը կը պահպանէն, բայց կը հասնի  
ժամանակ մը, երբ «արուեստագէտները աւելի կը ճառն ի-  
րենց արուեստին վրայ, քան թէ զլուխ-գործոցներ կարտա-  
զրեն»:

Հոռվմէական արշաւանքները այդ ազօտ զրութիւնը աւե-  
լի կը հասնացնեն իրենց աւերիչ ոյժին ազդեցութեան տակ:

Փիդիատէն յետոյ արուեստը զանազան պատճառներու  
տակ՝ որոնց մէջ գեր մը կը խաղայ անշուշտ Պելոպոնէսի պա-  
տերագմը՝ կըսկսի ձևափոխում մը կրել, որով աւելի կը նկրտի  
զրաւել քան մտածեցնել տալ և հոգին բարձրացնել:

Անշուշտ հասարակութեան մտածելու եղանակը և կեանքի  
պայմանները՝ որոնք նոյնպէս կրնային փոխուած ըլլալ՝ կագ-  
գին արուեստին վրայ այդ ուղղութեամբ:

Միենոյն ժամանակ զեղարուեստները կը սկսին ծաւալիլ  
Յունաստանէն դուրս Աղէքսանդր մեծ աշխարհակալի յա-  
ջորդներուն պալատները զարդարելու, քաղաքները պճնելու  
ձեերուն տակ՝ և որոնց համար Յունաստանի յայտնի արուես-  
տագէտները կը հրայիրուին:

Բայց հետզհետէ իր մայր հողէն կտրուած, կորնթոսի՝  
հոռվմէական լէզէօններու ձեռքով աւերումէն յետոյ, յունական  
աբուեստը կը սկսի այլասեռուիլ, համակերպելով հոռվմէական  
ինքնականներու, ազնուականներու քմահանոյքին, սպասաւորե-  
լով անոնց հպարտութեան ու «ես»-ի զգացումին, և կորցնե-  
լով այն մաքուր նկարագիրը և նպատակակէտը, որու ձգտու-  
մին արդիւնքներն են եղած այս բոլոր Վէնիւսները, Ապոլոն-  
ները, Փիւնոնները, որոնց զարերու աւերիչ ազդեցութեան տակ  
մաշուած՝ բայց գեռ անհունապէս շնորհալի՝ մնացորդներուն  
առաջ կըզմայլինք:

Հոռվմ՝ Աղէքսանդրի մահէն և անոր հետեւող յոյն ա-  
րուեստագէտներու մեծ մասամբ իտալիա գաղթումէն առաջ՝  
յոյն արուեստի ազդեցութիւնը կրած է իր նախնական էտ-  
որիւսք (Etrusque) կոչուած արուեստին վրայ, որու ծագումը  
IX (Քր. առաջ) զարու մէջ կինթագրեն:

Կարթագինէի և աւելի ուշ Միկիլիայի և իտալիոյ հա-  
րաւային եղերքներուն վրայ յունական քաղաքներու հիմնար-  
կութիւնները ընդարձակած են յոյն արուեստի ազդեցութեան  
ընացնակը, որ իր բնորոշ հետքերը ձգած է աւելի ճարտարա-  
պէտական ձևերու, գերեզմաններու ոճին և զարդերուն վրայ:

Սակայն յոյն արուեստագէտներու զանազան պատճառներով վերջնական ցըռումին ժամանակ միայն Հռովմ ամենալայն չափերով օգտուած է յոյն վարպետներու գիտութենէն և ճաշակէն, որոնք չեն ուշացած նոյնիսկ դեղաբուեստական գըպ-րոցներ հիմնել:

Հռովմ սկսած իր հիմնարկութենէն մինչև Vլ-րդ դարը (Քր. առաջ) աստուածութիւններու արձաններ չեն ունեցած Յունաստանի նման: Նույնա առանձին օրէնքով մը գատապարտած և արգելած է աստուածները ներկայացնել մարդկային կերպարաններով: Ապահովաբար այդ վճիռը և ըմբռնումը միծապէս վնասած է խտալական արուեստին, որ այդ օրէնքի տապալելէն յետոյ իսկ փայլած է աւելի օտար երկիրներէ յափշտակուած դեղաբուեստական գործներով, քան ինքնուրոյն սուեղծագործութիւններով:

Յունական հանճարներու նախնին մարուր և հարազատ արուեստը չեն ուշացած նաև որոշ ազդեցութիւն մ' ընել լնդ-հանճարապէս զբականութեան և մասնաւորապէս բանաստեղծութեան վրայ. և «թէպէտ վիրգիլիոս յոյն հանճարներէն տելի բարձր յատկութիւններ ունէր, բայց կասկածելի է որ այնքան լրիւ կատարելութեամբ պատկերներ կարենար տալ, իթէ աչքի առաջ ունեցած չըլլար այն քանի մը գործերը, ուր դեռ կը ցոլային Փիդիասի բարձր մտածումը, Պոլիկլէտի շնորհը կամ Ապէլլի գծագրութեան մաքրութիւնը»:

Օգոստոս կայսրի օրով (63 թ. Քր. առաջ) հռովմէական արուեստը կը սկսի զարդացումի շաւդի մէջ մտնել, և այն ամեն աեղերը, ուր հռովմէական յաղթական լէգէօնները կը մտնեն, ճարտարապետութիւնը և քանդակագործութիւնը կը սկսին կատարել իրենց քաղաքակրթումի և ճաշակի գարզացման գործը, պատրաստելով այն որրանը՝ ուրիշ սլիտի ծնին րիւզանդական, ոսմանական և արարական արուեստները:

Բայց և այնպէս հռովմէացիք յունական նուրբ զգայնութիւնը և հոգին չեն ունեցած երբէք: Իրենց հսկայ գործերով՝ որոնք սակայն նիւթական հսկայութիւնը ունեցած են միայն երբէք չեն կրցած համարի այն փոքրիկ արձաններու կատարելութեան կամ միջակ մեծութեամբ չէնքերու ճաշակաւոր գեղեցկութեան, որոնցմով փայլած էր Աթէնք:

Եւ յոյն արուեստին վերջին շնորհները կամաց-կամաց մնհետացած են Օգոստոսի և իր յաջորդներու պերճանքի, շուայտութեան և շլայհնելու ցանկութեան վնասակար ազդեցութեան տակ՝ թէպէտ ճոխ, բայց առանց որոշ ուղղութեան բաղադրեալ արուեստի մը ծնունդ տալով՝ որը ոմանը աւելի հարուստ և

գեղեցիկ զտած են:

Յոփ կեամբի մը հիւանդ հաճոյքները, մարտական խաղերը և զգացումները՝ բնութեամբ այսրան տարբեր յոյն ըմբշախազերէն՝ անշուշտ չէին կրնար վեհ ու ապաւորիչ արուեստի մը կազմուելուն ազդակը ըլլաւ, մանաւանդ Օգոստոսին յաջորդող Կալվուլաներու նման բռնակալներու իշխանութեան տակ, որոնք աւանց ամենապոյզն յարգանքի և խզահարութեան փշրել են տուած յայտնի մարդկանց արձանները, կտրել տուած են աստուածութիւններ ներկայացնող արձաններու դլուխները, իւրենց զիմաղիծերը կրող գլուխներով փոխարինելու համար:

Հոռվմէական արուեստը իր վասասիրական ձգտումները մարմնացնող զործերով առջեցուցած է աշխարհը, իսկ յունական արուեստը իր մաքուր մտապատկերներու մարմնացումներով հիացուցած:

Եւ վերջապէս ղատամութիւնը անհերքելի կերպով ապացուցած է թէ, յունական և հոռվմէական միջավայրերը, օրէնքները, հասկացողութիւնները որբան տարբեր են եղած:

Արուեստագէտները՝ հետեւաբար և արուեստը՝ լլ-րդ գարուն (*Քր. առաջ*) Ազրիէնի օրով այն աղատութիւնը և յարգանքը չեն ստացած, ինչ որ վայելած են Աղեքսանդրի օրով Յունաստանի մէջ:

Հետեւալ երկու օրինակները շատ ուշագրաւ կերպով կը ցոլացնեն երկու տարբեր ստանձնայատկութիւնները՝ և նկարագիրները, որոնք յունական գեղարուեստին անցեալ գերակայութեան պատճառը կրնան բացատրել:

Մեծն Աղեքսանդր օր մը յոյն նկարիչ Ապէլլի աշխատանոցին մէջ նկարչութեան մասին կը խօսէր: Նկարիչը առաջարկեց խօսակցութեան նիւթը փոխել, նկատելով աշխարհակալին նր, ներկ պատրաստող աշակերտները կը ծիծաղէին զինքը լըսաելով: Աղեքսանդր փոխանակ նեղանալու, նկարչի անկեղծութիւնը գովեց և գնահատեց:

Քանի մը կարեր յետոյ Ազրիէն Հոռվմի մէջ իր ծրագրած ձեռվ տաճար մը շինել կուտար, որուն չափաղանց ցած ձեղունին տակ նստած արձաններ միայն կը զնէր: Իր ժամանակին ամենայայտնի ճարտարապետը՝ Ապոլոտոր՝ որուն մեծամուաբար չէր ուզած խորհուրդ հարցնել, հետեւալ որամիտ նըսկատողութիւնը ըրաւ. «Եթէ այս աստուածուհիները ուզեն կանգնիլ և տաճարէն դուրս դաւ, վլուխնին պիտի կոտրեն»:

Արուեստագէտն այդ իրաւացի նկատողութիւնը միայն մահուան պատճի արժանի դաւա Ազրիէն, և չի վարանեցաւ եօթանաւամեայ ծերունին տանջանքներով սպանել:

Հին Հոռվմի ամենափայլուն ժամանակը սակայն եղած է Օդիւստի ժամանակաշրջանը, որ ժամանակ Հոռվմ զարդարուած է Յունաստանէն քերուած անթիւ արձաններով և նոր շինութիւններով:

Օդիւստի նախորդները իրեն աղիւսէ Հոռվմ մը յանձնած էին, իսկ ինը իր յաջորդներուն յանձնած է մարմարեայ Հոռվմ մը:

Բայց յետագայ ինքնակալներու քմահաճոյքին տակ անկումը կը սկսի աւելի և աւելի շեշտուելով Դիոկլէտիանոսի օրով և աւելի ուշ, երբ Կոնստանտին քրիստոնէութիւնը ընդունելով և Հոռվմը ձգելով իր բազզին, լարձակումներու ենթակայ, իր գահը կը փոխագրէ Կոստանտոնուպոլիս, ծնունդ տալով նոր արուեստի մը՝ բիւզանդական արուեստին:

Հոռվի մէջ բարոյական խոշոր յիղաշրջում մը՝ քրիստոնէութիւնը՝ իր նոր զաղափարներու, նոր ձգտումներու արշալոյսով կը նսեմացնէ հին արուեստի մը մնացորդներուն հետքհետէ մարող փայլը, արշալոյս մը, որ նոր հորիզոններ կը բանայ, որ նոր շրջան մը կը սկսի որբան մարդակային կեանքին ու բարքերուն վերաբերմամբ, նոյնքան և գեղարուեստներու վերաբերմամբ, որուն առաջին արտայայտութիւնը եղած է բիւզանդական ոճը, Յուստինիանոսի օրով կառուցուած Սուրբ-Սովիայի եկեղեցիով խտացած (այժմեայն կ. Պոլսոյ Այս-Սովիայի մզկիթը):

Գեղարուեստներու պատմութիւնը՝ իմ կարծիքով՝ կարելի է երեք մեծ շրջաններու բաժանել: Նախնականը՝ սկսելով գեղարուեստական առաջին արտայայտութիւններէն մինչև քրիստոնէութեան ծագումը, միջինը՝ սկսելով քրիստոնէական արուեստին առաջին արտայայտութիւններէն մինչև Վերածնութիւնը, և վերջինը՝ սկսած Վերածնութեան գլորոցներէն մինչև ներկայ ժամանակներս, իրենց մէջ առնելով զանազան գեղարուեստական դպրոցներու ուղղութիւնները, ձգտումները և նըսպատակները:

Առաջին շրջանի մտապատկերը աստուածութիւններու, անծանօթ խորհուրդի մը կամ խորհուրդներու պաշտամունքը եղած է, իր գեղեցկութեան, իմաստութեան, քաջութեան, արգարութեան, բարութեան և զանազան մասնակի արտայայտութիւններով: Երկրորդ շրջանը՝ այսպէս ըսելով՝ աւելի զտուած, աւելի պարզուած է այդ բոլորին մէկ զաղափարին՝ քրիստոնէութեան դաւանանքին՝ և մէկ մտապատկերի մը՝ Քրիստոսի անձնաւորութեան մէջ խտացումով: Վերջին նորագոյն շրջանը՝ որ մասամբ դէպի անցեալը ձգտում մ'ունեցած է՝ բնորոշ է իր

մարդկային մտապատկերի, իրական կեանքի առողջ գաւաճնանքով, որը այժմեան տիրող հոսանքը կը հանդիսանայ հետզհետէ ուժեղանալով:

Առաջին շրջանը մարդկութեան տուած է Փիդիասներ, Պրաքսիտէլներ, Ասկէլլներ, որոնք ողիմողուեան մտապատկերները մարմնացուցած են անմահ գործերով: Երկրորդ շրջանը իր նոր գաւաճնանքով ծնած է Մաֆայէլի, Միշէլ-Անժի, Մուրիլոյի նման համաձարներ, որոնք քրիստոնէական վարդապետութեան անմահ փառարանողները եղած են և են իրենց նոյնքան անմահ գործերով: Նորազոյն շրջանը իր աւելի բարդ արտայայտութիւններով աւելի հետաքրքիր և կենսունակ, արտադրած է Ռիւրեններ, Ռամրասնդներ, Վան-Դիքներ, Դավիթներ և Տըլաքուաններ՝ իրենց բազմաթիւ հետևողներով՝ որոնք ապրուած կեանքը երգած են իրենց աւելի բան մարդկային գործերուն մէջ:

Հեթանոս Հոռվմը նկարչութեան տեղ չէ տուած՝ ինչ որ տուած է ճարտարապետութեան: Հոռվմէական փառասիրութիւնը միայն մարմարեաց շինութիւններու, յաղթական կամարներու և պարատներու մէջ գտած է իր յաւիտենականութեան ձգուումին գոհացումը, եղիպտացիներուն նման, բայց զգացումներու և մտածումներու բնաւորութեամբ բոլորովին տարբեր:

Քրիստոնեայ արուեստը՝ գեռ անկարող բացարձակ երկրի երեսը յայտնուելու՝ իր առաջին նկարչական փորձերը ըրած է Հոռվմի գետնափորհներուն (Catacombe), այդ նախկին քարահանքներուն մէջ՝ գերեզմանաքարերու վրայ Քրիստոսի կեանքէն պատկերներ նկարելով՝ որոնք ըմբռնումի և վերարտադրութեան տեսակէտով միամիտ գործեր են եղած:

Եւ այգակս այդ գետնափորհները եղած են քրիստոնեայ արուեստին առաջին որրանները, ուր ներոններու վայրագութիւնները առաջին քրիստոնեանները ստիպած էին ապաստան փնտւել:

Այդ առաջին արուեստագէտներու ձեռքին տակ կաղմուող զարդերը, ամանները և նկարները՝ որոնց նիւթերը առնուած են Հին և Նոր Կատակարտաններէն՝ անշուշտ գեղարուեստական գործեր չեն եղած, բայց կրօնական ազատութիւնը հաստատուելին յետոյ, երբ ժողովուրդը սկսած է այդ գետնափոր գերեզմանները նորոգել և զարդարել նոր նկարներով, ապագայ նկարչութիւնը հոն գտած է առատ նիւթ և առաքեալներու պատմական տիպարներ, Աստուածամայրի զանազան դիրքերով պատկերներ, որոնք Միջին Դարէն յետոյ օրինակ են հանդիսացած կրօնական նկարիչներուն:

Քրիստոնեայ ճարտարապետութիւնը իր նախնական փոր-

ձերուն մէջ հեթանոս արուեստը լնդօրինակած է անխռուսափելիօրէն, անշուշտ սկսելով կամաց-կամաց ձևափոխել տաճարները, որոնց պէտք էր յարմարցնել հասարակութիւնը լնդունելու համար, մինչդեռ նախորդ մեհեաններուն մէջ հասարակութիւնը մուտք չուներ:

Ի՞նչ որ տարօրինակ է սակայն՝ սա իրողութիւնն է, թէ, մինչև VIL-րդ (Քր. յետոյ) գարը քրիստոնեայ արուեստը հազիւթէ արտապրած է մի քանի արձաններ միայն։ Քրիստոնէական այդ ժամանակաշրջանի վարդապետութիւնը՝ արձանագործութիւնը՝ որ զգայնոտ և կուռքերը յիշեցնող բան մ'ունէր իր մէջ՝ տեսակ մը արգելուած արուեստ նկատած է, որ անշուշտ անգարմանելի գագար մը պատճառած է արուեստի այդ ճիւղի զարգացումին, մինչդեռ լնդհակտուակը նկարչութիւնը՝ զետնափորներէն սկսուած միծ տեղ մը կը գրաւէ արուեստին մէջ, աւելի պաշշաճօրէն ներկայացնելով քրիստոնէութեան դաւանանքները և գտղափարները, թէպէտ միշտ խուսափելով մարդկային մերկ մարմինը՝ յոյն արուեստին այդ պարծմնքը՝ ներկայացնել ունէ ձեռվ։

Քրիստոնէական վերածնութիւնը արձագանդ գտած է նաև Ֆրանսիայի մէջ՝ ուր Բլուլիս՝ գաղղիացւոց առաջին օծեալ թագաւորը կոստանտինի օրինակին հետեւելով քրիստոնէութեան գրօշակը կը պարզէ, վերջ գնելով Գաղղիոյ մէջ հոռվմէական տիրապետութեան և հեթանոսութեան, և նոյնպէս բանալով նոր շրջան մը, ուր գեղարուեստները՝ այդ թարմ օդի մաքուր հոսանքով կենդանացած՝ մի նոր մթնոլորտում, գեղարուեստական պատմութեան մէջ շրջանագլուխներ կազմով անհատի պիտի յղանան։

Մարսիլիա՝ այդ տեսակէտով՝ առաջին կեղրոններէն մէկը կը լլայ, ուր իտալիայէն և ուրիշ տեղերէն գաղթող մտաւորականութիւնը կուղայ զպրոցներ հաստատել «որոնց մէջ 40,000 աշակերտներ կուսանին և որը Գաղղիոյ Աթէնքը կը կռնի»։

Այդպէս քրիստոնէութիւնը գեղարուեստական տեսակէտով լնդհանուր կեանք մը կը մտցնէ լնկերութեան մէջ, որ իր գարերու անորոշ և զրեթէ աննպատակ գոյութենէն խլուած, նոր կեանը մը սեմին վրայ ոտք կը գնէ, կատարելու համար քաղաքակրթական նշանակելի գեր մը գեղարուեստներու և գիտութիւններու մէջ, գեր մը որ այլապէս փառաւոր և արդիւնաւոր պիտի ըլլայ, քան անցեալի իր արիւնոտ աշխարհակալութիւնները և նուաճումները։

Հը. Ալնանաք

(Ծարունակելի)

## ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Երեւանի նախաճգի անցերը:—Համիստամական ծրագիր է եռա իրազործման նպաստուու համամաշնեներ:—Հայ գիրացիների կրած վճառների մօսուու չափեր:—Դիմումներ Կովկասնան փոխորեալին: Տեղովով տուած լիազօրութիւններ:—Երկրագործութեան մինիստրութեան խափանումը:—† Կուրայետ Եգեան:

Բագուկ սարսափները, ինչպէս երեաց մայիս ամսուայ դէպերից, միայն նախներգանք էին մի արինահեղ ողբերգութեան, որի գործողութիւնների շարքը դեռ յալանի չէ թէ երբ և ի՞նչով կը վերջանայ: Սակայն գժուար չէ հէնց այժմ էլ, ողբերգութեան սկզբում, հասկանալ այնքան զգուշութիւններով թագնուած համիսլամականութեան զիւային ինսորիգը, որի առաջին զոհը գարձաւ հայ ժողովուրդը, հայերի բնաջնջումը թուրք համիսլամականների վերջնական նպատակը չէ, ի հարկէ. հայը համարում է միայն առաջին խոչընդուն յաջորդ քայլերի համար, Յայտնի է պատմութիւնից թէ ինչ դեր է կատարել հայը մահմեղական տիրապետութեան անկման զործում Հարաւային կովկասում. մոռացուած չեն և Թիւրքաց Հայաստանի դէպերից: Համիսլամականները լաւ գիտեն և այն, որ հայ ժողովուրդը ընդհանուր առմամբ ուռսաւէր է: Եւ երբ Կովկասի նախորդ բարձր աղմինիստրացիայի սխալ քաղաքականութիւնը և թիւր տեղեկութիւնների հիման վրայ կայացած մի քանի կարգազրութիւնները՝ Կովկասի այժմեան փոխարքայի կողմից փոփոխելի յայտարարուեցին առաջ բերին յուզումներ հայ հասարակութեան մէջ, և այդ յուզումները թշնամացրին տեղական մի քանի պաշտօնեաններին հայերի դէմ—մեր համիսլամականները իսկոյն օգտուեցին ահա այդ նպաստուոր հանգամանքներից և սկսեցին իրագործել իրանց ծրագիրները նախ այն վայրերում, ուր հայ տարրը համեմատած շիա-թուրքերի հետ չնչին է և պոլիցիան կազմուած է մեծ մասամբ թուրքերից: Հասկանալի է որ ամեն կերպ պէտք է համիսլամականները թագդնէին, սրօղէին իրանց ըուն նպատակները, մի տեղ կազմակերպուած ջարդեր առաջ բերելու ան-

հրաժեշտութիւնը պատճառաբաներով «հայ կոմիտէաների» գոյութեամբ, մի այլ տեղ՝ այս կամ այն մասնաւոր սպանութեան (մի բան որ միշտ եղել է չնորհիւ թուրք-թաթարական խառնուածքին) աշխատել են «աղդայնական հակառակութեան» բընաւորութիւն տալ, երբորդ գէպքում թուրք-թաթարական տմբոխը համդիսացել է իրեւ «ուստական բեժինի պաշտպան ընդդէմ պատամբ հայերի» և այլն, և այլն: Միշտ նախայարձակ, ցոյց տալով հայերին՝ համբաւամականները երբէք թոյլ չեն տուել իրանց բացատրելու թէ այդ ի՞նչպէս է որ հայը չի կպչում ոչ մի մահմեղականի մաղին անգամ այն տեղերում, ուր հայ տարրը 70—80% է կազմում, իսկ թուրքերը չնչին թիւ են ներկայացնում, օրինակ Ալէքսանդրոպոլի, Ախալքալաքի, Նոր-Բայազէտի գաւառներում:

Համբաւամականները թուրք-թաթարական ամբոխը գրաւելու համար, բացի քաղաքական ծրագրների հեռանկարով, գըրգուում էին և նրա մէջ թալանի ախորժակը, ինչպէս և կրօնական ֆանատիկոսութիւնը, տարածելով ամեն տեսակ զրպարտութիւններ հայերի մասին: Միւս կողմից անազնիւ գործիչներից առանձին խելք չէր պահանջում շահագործել և առբոխային հոգեբանութիւնը ուուս ժողովրդի և պաշտօննեաների որոշ խաւերում, քանի որ ամբոխային մտածողութեամբ՝ տեղական իշխանութեան այս կամ այն անձի գէմ մի քանի տաքզուխ հայերի թշնամական ցոյցերը իրեւ թէ համահաւասար են ուուս ժողովրդի գէմ տածած հակակրութեան, սեպարատիստական փորձերին: Մոլորեցնելով թուրք և ուուս ամբոխային կարծիքը, համբաւամականները օգտուեցին ուուս-ճապոնական անաջող պատերազմի չնորհիւ սահեղուած խառն զրութիւնից և ձեռնարկեցին հայերին տնտեսապէս և բարոյապէս անդամալոյժ անելու ծրագիրի գործադրութեանը: Թուլացնելով այդ տարրը, ըստ համիսլական լողիկայի, խախուտ էր դառնում և այն յենակէտը, որ ունի մահմեղական տիրապետութեան Մերձաւոր Արևելքում հարուած հասցնող պետութիւնը: Հայերի տնտեսական ոյժը կենարոնացած էր Բագու, հայ տարրը իրեւ խոչընդոտ աչքի էր ընկնում սահմանագլխի գաւառներում: Եւ ահա՝ նախ կաղմակերպուեց հայկական կոտորած և հայի հարստութեան յափշտակութիւն Բագուում և, երբ առաջին փորձը աջողութեամբ պատկուեց, սկըսուեց երկրորդ փորձի իրագործումը նախ Երևանում, անմիջապէս Բագուից յետոյ, ապա մայիսի 12-ից Նախճաւան քաղաքում և նրա ու հարեան գաւառներում, և կրկին անգամ Երևանում:

Պէտք է միամիտ լինել հաւատալու համար որ Ալիսարադի մի թուրքի սպանութիւնը կարող էր առաջ բերել այն ծաւալով կոտորածներ, թալան, հրկիվութիւն, բռնարարութիւններ, որբութիւնների պղծում և բռնի մահմեղականացումներ, որոնց ականատես եղաւ բաներորդ, դարում ապրող հայութիւնը: Մինչև այժմ 50 հայ գիւղ է զո՞ն վնացել շիա՞թուրքերի այդ ճիւղաղին կատաղութեան: Նախճաւանի և նրանից հետու գտնուող շատ զիւղերի վրայ յարձակումը եղել է միաժամանակ. յարձակուող թուրք ամրոխը կազմակերպուած է եղել «ինտելիգենց» որոշ պարագլուխներից, որոնց անունները յայտնի են բոլորին: Միաժամանակ սահմանի միւս կողմից անցնում են զինուած և վարժ քիւրդ ճիւղաւոր հրօսակներ, որոնք ընդհարում են ունինում նաև կանոնաւոր զօրքերի հետ: Կոյր պէտք է լինել չտեսնելու համար նախօրօք կազմակերպուած ընդհանուր մի ծրագրի սիստեմատիկ գործազրութիւնը: Կրկնում ենք, մասնաւոր սպանութիւններ ամեն օր են եղել, ինչպէս 75 տարի առաջ, այնպէս էլ այն ժամանակամիջոցում, երբ Հարաւային Կողկասը դուրս եկաւ խաների և փաշաների իշխանութեան ձեռքից և մտաւ քրիստոնեայ պետութեան հովանաւորութեան տակ: Սակայն երբէք մասնաւոր սպանութիւնները առիթ կամ «մահանա» չեն եղել հայկական կոտորածներ սարքելու, հայ գիւղեր հրկիվելու և թալանելու, հայ եկեղեցիներ պղծելու, հային բանութեամբ մահմեղական դարձնելու: Xl դարից սկսած, երբ առաջին անգամ մեր երկիրը կոխեցին թուրք-սելջուկեան վոհմակներ, հայը շատ է տեսել ամեն տեսակ անզթութիւններ, սակայն նա չէր կարող երեակայել անգամ որ Թողրուկ թէգերի, Զինդիզ խաների և Լենկթեմուրների օրերը կը կրկնուեն բանակներորդ դարում մի քրիստոնեայ պետութեան սահմաններում... Եւ աներեալայելին—այսօր արիւնոտ իրականութիւն է, չնորհիւ մեր համիսլամականների գիւղային նենգամտութեան և գաղանային բնագիտների. քաղաքակրթութեան այդ թշնամիները չէին կարող մոռանալ ծերունի Գլագոլունի խօսքերը թէ «To serve Armenia is to serve civilization»: Եւ որպէսզի եւ բոպական ցիվլիզացիայի հարցը հայերի շնորհիւ մի ուրուական չինի կասպից ծովի ափերից սկսած մինչև Բոսֆորը՝ պէտք է բնաջինջ անել այդ տարրը, որ կզգիների նման ցրուած էր թուրք թաթարական ովկիանոսում: Ռուսական առաջխաղացման դէմի առնելու համար պէտք էր ոչչացնել այդ կղզիյենակէտերը: Եւ ահա քանի գեռ չէին փոխուած հայերի համար աննպաստ համուգամմանքները կովկասում՝ պէտք էր շտապել...

Եւ մեր համիսլամականները այն աստիճանն աճապարհցին որ երեան հանեցին իրանց ծրագրների ծայրերը...

Այժմ արեան և բոցի մէջ խեղդւում են Նախճաւանի և Շարուր-Դարալագեպի հայ գիւղերը, մահմեղական խուժանի ձեռքով կատարում են ճիւաղային անգութիւններ հայ անգէն գիւղացիների վրայ: Ամենափոքր ընդդմաղրութիւնը հայ տարրի կողմից, ինչպէս օրինակ Երևանում, կատաղեցնում է թուրքերին և նրանք իրանց վրէժը հանում են Շարուր-Դարալագեպի և Նախճաւանի հայ գիւղերից: Այժմ խսպառ աւերուած կարող են համարուել այդ գաւառները և հայ տարրի տնտեսական բայցայումը պէտք է առաջ բերի սով: և այն վայրերից, որոնք նախապատմական ժամանակներից սկսած եղել են հայ բնագաւառներ, սկսուելու է գաղթ...

Եթէ արձանազրուին այն բոլոր բարբարոսութիւնները որ կատարել է թուրք խուժանը հայերի նկատմամբ—մենք կը տեսնենք որ դարերի ընթացքում այդ ցեղի անգութ և արիւնարու ինստինկտների մէջ ոչ մի փոփոխութիւն չի կատարուել, բաւական էր թուրքերը համոզուէին որ տեղական իշխանութեան կողմից արգելքների չէին հանդիպելու, որպէսզի երևան զար իրանց գիւղային ծրագիրը իր առենահրէշտուոր արտայայտութիւններով:

Նախճաւանի և Շարուր—Դարալագեպի գաւառներում բոլոր վասառած գիւղերի թիւը, որքան յայնի եղաւ լրագրներից, այժմ համում է աւելի քան 50-ի: Կարելի է, առանց չափազանցելու, միջին թուով իւրաքանչիւր գիւղում աւերուած համարել 100 տուն, որովհետև կան գիւղեր, որոնց աների թիւը մի քանի հարիւրի է համում և այդ գիւղերը այժմ հողի հետ են հաւասարեցրուած: Ուրեմն, առնուազը աւերած են 5000 հայ տուն: Իւրաքանչիւր տուն իր իրեղներով, անային անասուններով և այլն կարելի է զնահատել առնուազն 1000 բուրլի: հետևաբար հայ գիւղական տարրը այդ թուրք-թաթարական արշաւանքների շնորհիւ կորցրել է մօտ 5 միլիոն: Պատկերը աւելի ևս զարհուրելի կը գտննայ, եթէ դուք հաշուի առնէք սպանուած աշխատաւոր տղամարդկանց թիւը, փչացած ցանքները ու այգիները: Եւ այդքան սարսափելի կորուստներ իրեւ թէ կարող էին առաջ գալ Ալիաբաղի մօտ պատահած մի ինչ որ թուրքի սպանութեամբ: Դա չարանենդ անհեղեղութիւն է: Պէտք է երկար ժամանակ թուրք տղէտ, աւաղակաբարոյ և ֆանատիկոս ամրոխը թունաւորել գիւղային զրագարտութիւններով, մոլորեցնել նրա կարծիքը, խրախուսել այն համոզմամբ որ տեղական իշխանութեան հա-

ճելի բան արած կը լինեն, եթէ ոչնչացնեն հայ տարրը, իբր թէ յանցաւորները անպատիժ են մնալու ևայլն, որպէսզի առաջ գային այդ բոլոր ծայրայեղորէն վայրագ չարագործութիւնները։ Մարդ այնպիսի սոսկում է զգում որ նրա ուղեղի մէջ անհետանում է դարերի անջրաբետը և նա սկսում է կարծել թէ ապրում է Թուլլուլբէղերի, Զինգիլ-խոնների և Լենկիթեմուլների ժամանակներում։ Եւ այդ բոլորից յետոյ զանազան Աղայեցներ ուղում են որ թագդնուին սոսկալի ոնիքները, մասնանիշ չանուին չարագործութիւնները, հայը լոելիայն տանի այդ բոլոր խժդութիւնները...

Մեր երկրի նոր կառավարիչը, կոմս Վորոնցով-Դաշկովը, ժառանգութիւն էր ստանում նախորդ բեժիմի բոլոր ցաւերը. տեղական ամբողջ աղմինիստրային և մանաւանդ պոլիցիան շարունակում էր զործել հին ուղղութեամբ այն ժամանակը, երբ փոխարքան իր գեվիզն էր դրել՝ «Երկրի խաղաղ բարգաւաճումը հասարակական ոյժերի աջակցութեամբ»։ Թուրքերի առաջ բերած մասային կոտորածներն և աւերմունքը այժմ ստիպում են բոլոր ոյժերը կենտրոնացնել նախ և առաջ խաղաղութիւնը վերականգնելու մէջ։ Այդ խաղաղութիւնը եղել է և հայ աշխատանքը տարրի միակ իդէալը ևնա պատուի, անձի և գոյքի ապահովութեան, ինչպէս և ազգային-կուլտուրական ազատ զարգացման մէջ է ամփոփում իր բոլոր բաղձանքները։ Ներկայ մոմենտում, երբ առաջին պահանջը արիւննեղութիւնների առաջն առնելն է, կարծում ենք, հայ ժողովուրդի ցանկութիւններն են արտայայտում Փոխարքային ներկայացած մի խումբ հայեր, որոնց խնդրագիրը և այդ առիթով տեղի ունեցած մտքերի փոխանակութիւնը առաջ ենք բերում ներքեռում։

Յաճիսի 2-ին։

Հ. Ս.

Հայկական պատգամաւորութիւնը փոխարքայի մօտ

Չորեքշարթի, յունիսի 1-ին, առաւօտեան ժամը, 10-ին, հայերից բաղկացած մի պատգամաւորութիւն ներկայացաւ նորին պայծառավագայլութեան կոմս ի. ի. Վորոնցով-Դաշկովին, նորին Մեծութեան Փոխարքային Կովկասում։ Պատգամաւորութեան մէջ մտնում էր մի մասը այն ներկայացուցիչներից, որոնք հայ ազգաբնակութեան զանազան խմբերի կողմից հաւաքուելով Թիֆլիսում երկու ամիս առաջ, մշակեցին հանրագիր հայերի կարիքների մասին։

Պատգամաւորութեան անդամներն էին. իշխան Ա. Բէհ-բութեան, Պ. Ղամբարեան, Տ. Յովհաննիսեան, Ա. Քալանթար, Յ. Սպենդիարեան, Կ. Ստեփանսեան, Ա. Խատիսեան. Ս. Յա-

րութիւնեան, Կ. Խատիսեան, Լ. Սարգսեան, Յ. Սաղաթէլիան,  
Ա. Տիգրանեան, Ա. Աֆանասեան, Ա. Մէլիք-Ազարեանց, Յ. Տէր-  
Միրաքեան:

Ի նկատի ունենալով այժմեան սուր դէպքերը Երևանի  
նահանգում, պատգամաւորութիւնը ներկայացրեց նորին պաշ-  
ծառափայլութեան, իր ստորագրութիւններով, հետևեալ դե-  
կուցագիրը.

«Ծուսաց իշխանութեան կովկասում հաստատուելուց ի  
վեր, հայերը, քաղաքացիական պարտաճանաչութիւնից դրդուած,  
դործունեայ մասնակցութիւն են ունեցած կովկասը բարեկար-  
պելու և այնաեղ քաղաքակլրթութիւն տարածելու համար:

Հայ սղգաբնակութիւնը, զիտակցելով սուս ժողովրդի  
հետ միութեան կարսորութիւնը, անձնատուր էր եղել խաղաղ  
աշխատանքի՝ խորը հաւատով, թէ երկրի օրէնքները ապահո-  
վում են նրա ազատ քաղաքական և աղքային զարգացումը:

Սակայն, աղատարար շրջանից յետոյ, սկսուից ուժեղացրած  
ճնշումների և վարչական կամայականութեան շրջանու Հայերը  
լիապէս կրեցին այդպիսի կարգի ամբողջ գառնութիւնը, հն-  
թարկուելով սիստեմատիք ճնշումների:

Կովկասեան բարձր իշխանութեան կարդաղրութիւնները  
սկսցին ձկուել դէպի հայերի բռնի սուսացումը, նրանց հա-  
մաքաղաքացիական և աղքային իրաւունքների կրծատումը և  
հայոց եկեղեցու անկախութեան սահմանափակումը:

Կանգ չառնելով Գակտերի երկար շարքի վրայ, բաւակա-  
նանում ենք Նրանցից միայն մի բանիսը մատնանիշ անելով:

Հողի սոկաւութիւնից նեղուած հայ գիւղական աղգաբ-  
նակութիւնը զրկուեց ազատ հողերի վրայ բնակուելու իրա-  
ւունքից: Դեռ քիչ էր այդ, — տեղական կառավարութիւնը յա-  
ճախ յատկացրել է Ծուսաստանի ներքին նահանգներից գաղ-  
թաճներին այն հողերը, որոնցից օգտում էին գիւղական հա-  
մայքները:

Հայոց բազմաթիւ գպրոցները փակեցին և տասնեակ հա-  
զարաւոր մանուկներ փողոցներում մնացին: Փակուեցին կրթա-  
կան և բարեգործական ընկերութիւնները, որոնք ցանցի պէս  
սփռուած էին ամբողջ Կովկասում:

Հայ հրապարակական խօսքին — բանաւոր թէ տպագ-  
րական — ամենուրեք խոչընդուներ գրուեցին:

Հայ ազգի զէմ սիստեմատիք հալածանքը այնաեղ հասաւ,  
որ կենտրոնական կառավարութեան պաշտօնական թերթի  
էջերում կովկասեան կեանքի երևոյթներին ու հայերի ձգտում-  
ներին գիտաւորեալ կերպով սուս լուսաբանութիւն էր տրում,

և սերմանուում էլ զատ զատ աղպութիւնների միջև թշնամանք։ Մինչև իսկ ոռւսաց հայերի բնական համակրութիւնը դէպի իրանց անդրստամանեան և դրայքները և նիւթապէս ու բարոյ յապէս նրանց պաշտպանելու և օգնելու ձգտումը յանցանք համարուեցին և հալածանքի ու պատժի ենթարկուեցին։

Այս և ուրիշ շատ կարդալը լութիւններ խորապէս վիրաւորեցին և վրդովիեցին մինչև այդ՝ խաղաղ աղքաբնակութիւնը։

Ի լրումն ամենայնի, ժողովրդական վերջին սեփականութիւնը—հայոց եկեղեցական գոյքերը գրաւելու մասին օրէնքը, որ առաջացրեց մի կողմից բողոք, միւս կողմից ճնշման միջոցներ, հասցրեց հայ աղքաբնակութիւնը վերին աստիճանի զրգումն, որ վերջացաւ ժողովրդական խոռվութիւններով։

Վերջապէս Բագուի ուրիւնալի գէպիերը, որ ապշեցրին ամբողջ քաղաքակրթուած աշխարհը, ապացուցին, որ հայի կեանքը, պատիւն ու գոյքը ապահովուած չեն։

Բագւում տեղի ունեցած և այնուեղից լայն ալիքով Երևանի նահանգում տարածուած գէպիերը գուրս հանեցին Անդրկովկասի ամբողջ հայ աղքաբնակութիւնը բնական կեանքի շրջանակներից և ստեղծեցին պայմաններ, որոնք դատապարտում էին հաղարաւոր ընտանիքների և առանձին բանուոր ոյժերի գաղթելը իրանց աշխատանքի սովորական տեղերից։

Զիօսելով արդէն պըրապղծուած քրիստոնէական սրբութիւնների և գնդակահարուած և սրախողխող արուած մարդկանց գոհերի մասին, այդ արիւնահեղ գէպիերը քանդում են հայերի քաղաքացիական կեանքը հիմքերը և մղում են մէկ մասին գէպի մուրացկանութիւն և սով, իսկ միւսներին—գէպի իրանց անպաշտպանութեան և կատաղի վրիժառութեան գիտակցութիւնը։ Բագուից սկսուեց բանուորների խմբովին գաղթականութիւնը, որոնք կերակրում էին իրանց ընտանիք։ Դերին նաւթահանքներում աշխատած վաստակով։ Երևանի նահանգում և ամբողջ Կովկասում, ուր ապրում են հայերը, տաղալը են գիւղանտեսութիւնը, առևտուրը և արդիւնաբերութիւնը, մանականում են հաղարաւոր մարդիկ և ամբողջ ձեռնարկութիւններ։ Անդրկովկասի հայ աղքաբնակութիւնը սաստիկ յուղուած դրութեան մէջ է և իր կեանքի անապահովութեան գիտակցութեան պատճառով անընդունակ է սովորական աշխատանքին։

Իսկ գնալով աճում է հայրենի կեանքի, պատուի և գոյքի դէմ մղուած շարժումը։

Այդ շարժումը, խաւար մասսաներից պաշտպանութիւն դանելով, սպառնում է հրդեհել ամբողջ Կովկասեան երկիրը։

Այն գիտակցութիւնը թէ իրանք անպատճէ են մնալու և շարժման դրդիչների տարածած կարծիքը, իրը թէ հայերի ջարդերը համապատասխանում են կառավարութիւնն նպատակներին, համարձակութիւն են տալիս տղէտ մասուներին իրագործելու իրանց մութ նպատակները:

Այդպէս է ներկայումս հայկական գիւղերի և հայ ազգաբնակութիւն ունեցող քաղաքների գրութիւնը:

Ճնշուած գրութիւնը աւելի ևս սաստկանում է այն գիտակցութեամբ, որ տեղական իշխանութիւնները, որոնց պարտականութիւնն է պաշտպանել ազգաբնակութեան կենարն ու գոյքը, ոչ միշտ կատարում են իրանց պարտաւորութիւնը և այդ պատճառով հնարաւոր են դանում այնպիսի վրդովեցուցիչ փաստեր, որպէս կոտորածի երկարատևութիւնը նահանդակական Բագու քաղաքում 4 օր շարունակ և մայիսի 12-ից մինչև օրս շարունակուող ջարդերը երևանի նահանդում:

Այդպիսի պայմաններում առանց յետաձգելու անհրաժեշտ է, նախ՝ որ անկարգութիւնները ճնշեն իշխանութեան ըոլոր ոյժերը հէնց նրանց ծագելու վայրկեանին և սկզբնապատճառները, գրդիչները և յանցաւորները անյապաղ հալածուն և դատի ենթարկուեն, որպէս զի յանցանք գործող իւրաքանչիւր մարդ համոզուած լինի, որ պատժուելու է իր արարքը. 2) որ բոլոր միջոցները ձեռք առնուեն՝ վերակարձնելու վնասուածներին՝ խած բազմամիլիօն գոյքը և բաւարարութիւն տալու վերջիններին կողովարիչների հաշուին. 3) որ իրանց պաշտօնից հեռուացուեն ագմինիստրացիայի և ոստիկանութեան այն պաշտօնեաները, որոնք իրանց անուանարկել են իրանց գործունէութեան իդանակով և 4) որ մտքերը աւելի լաւ հանգստացնելու և ապագայում համանման գէպքերի կրկնութեան հնարաւորութեան տռաշն առնելու համար, իրաւունք տրուի հայ գիւղեական համայնքներին կազմակերպել պահակախումը տեղական իշխանութիւնների հսկողութեան տակ. որ վերջ գրուեն խուզարկութիւններին, որոնք զայրոյթ են առաջացնում հասարակութեան մէջ և նրանցից զէնք խելուն, որովհետև ազգաբնակութեան մօտ զէնք լինելը ամենալաւ երաշխաւորութիւնը կը լինի այն բանի, որ ոչ մի հրացան չի արձակուի ոչ մի կողմից, այն ինչ այժմ հայ ազգաբնակութիւնը զինաթափ է լինում և, իրապէս անպաշտպան մնալով, ընկնում է զինաւորուած մասսաների տրամադրութեան տակ:

Ներկայ բոպէում այդ անյետաձգելի կարիքները յետ են մղում բոլոր ուրիշները և նրանց բաւարարութիւն տալուց և հայերի սրբութիւնների, պատուի, անձնաւորութեան և գոյքի

անձեռնմխելիութեան հաստատուն երաշխաւորութիւնները ապահովելուց յետոյ,—կարելի կը լինի սկսել հայ աղքարնակութեան ներկայացուցիչների հետ միասին քննելու և գոհացում տալու հայերի մնացեալ հասունացած հանրաքաղաքացիական և աղքային կարիւճներին, որոնց մասին Զեր Պայծառափայլութիւնը բարեհաճեցիք աւետել՝ Զեր դիմումի մէջ աղքարնակութեանը՝ Կովկասեան Երկիրը մտնելուց առաջ»:

Կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկով, նախապէս ծանօթանալով զեկուցագրի հետ, անձամբ հրաւիրեց պատգամաւորութիւնը առանձին ունկնդրութեան դահլիճը, ուր ներկայ էին Փոխարքայի պ. օգնականը, ըստ քաղաքացիական մասի, Ն. Ա. Սուլթան-Կրիմ Գրիբէյ: Երբ պատգամաւորները, կոմսի հրաւիրելով, նստեցին իրանց տեղերում, Պ. Ղամբարեան շնորհաւորեց կոմսի զալուստը և յայտնեց, որ հայերի բաժին ընկած սոսկալի գէպքերը ստիպեցին հայ աղքարնակութեան զանազան խմբերի ներկայացուցիչներին դիմել կոմսին իրանց զեկուցումների մէջ յիշած յայտարարութիւններով:

Կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկով յայտնեց, որ ընդհանրապէս ինքը համաձայն է շատ բաների հետ, որոնք գրուած են զեկուցագրի մէջ և կը ցանկանար լսել պատգամաւորութեան կարծիրը առանձին կէտերով: Առաջին կէտի վերաբերմամբ, այն է հայ աղքարնակութեան սակաւանողութեան առիթով՝ կոմսը կարծիք յայտնեց, թէ մինչև վերջին ժամանակները կովկասում տիրող հողային քաղաքականութիւնը՝ գաղթականութիւններ հիմնելու նպատակով հողերի կողմից նեղում էր ոչ միայն հայերին, այլ և ուրիշ աղքութիւններին էլ և որ այժմ այդ քաղաքականութիւնը բոլորովին փոխուած է: Այսուհետեւ աղատ հողերը կովկասում պիտի տրուեն տեղական աղքարնակութեան, որտ հետ և հայերին:

Հայոց գպրոցների հարցի առիթով կոմսը կատարեալ համոզում արտայայտեց թէ գպրոցների գործը շուտով կը քըննուի և կը լուծուի ի կատարեալ բաւականութիւն երկու կողմերի: Ինչ վերաբերում է բարեգործական և կրթական հաստատութիւններին, կոմսը յայտնեց նրանց իր համալրանքը և խոստացաւ իր աջակցութիւնը, որ նրանք բացուեն, նկատելով միայն այն, որ բարեգործական կազմակերպութիւններից նա առաւելութիւն է տալիս այնպիսիներին, որոնք տարածում են իրանց գործունէութիւնը ամբողջ կովկասի վրայ:

Իսկ հայոց տպագրական և բերանացի խօսքին կոմսը չէ ենթադրում իր կողմից որ և է արգելք դնել և այժմեան ժամանակ այդ հարցը այս մտքով էլ մշակուում է Պետերբուրգում:

Դիմելով այնուհետև զեկուցագրի ընագրին, կոմու իր ուշադրութիւնը դարձրեց այն ֆրազի վրայ, որ սկսում էր «հայոց ազգի սիստեմական հալածանք» խօսքերով և ինդրեց ներկաներին անկեղծաբար և բազմակողմանի կերպով բացատակել թէ ինչի մէջ է արտայայտուել սիստեմական հալածանքը:

Երդ. հաւատարմատար Ս Յարութիւնեան յայտնեց հետեալը: Հայերի դէմ հալածանքը ուղղուած էր սահմանափակելու թէ նրանց աղբայնական և թէ բաղաքացիական իրաւունքները: Ինչպէս յայտնի է, հայերը ունէին մեր երկրի զանազան մասերում բաղմաթիւ զարդոցներ, որտեղ հայ մանուկները, ստանալով մայրենի լոգուով կըթութիւն, սովորում էին և պետական սուս լեզուն: Այդ գոլրոցները միայն օգուտ էին բերում թէ հայերին և թէ պետութեան: Սակայն նրանոր փակեցին, իսկ նրանց տեղ բացուած ուրիշ ծրագրով սակաւաթիւ մի քանի գոլրոցները, լինելով անբաւարար, չեն վայելում ոչ մի յարգանք ժողովրդի մէջ, որի միջոցներով նրանք պահուում են: Նոյն հալածանքը փակել տուեց մեր բարեգործական և կըրթակալի հիմնարկութիւնները, որոնք կատարում էին շատ օգտական գործեր թէ հայերի և թէ երկրի համար: Ես պատիւ ունեմ Բագու Մարգասիրեկան ընկերութեան նախագահը լինելու: Մեր ընկերութիւնը բացուած է Բարձագոյն հաստատուած մի կանոնադրութեամբ և թէև կանոնադրութիւնը Բարձրագոյն կամքով զեռ չէ փոխուած, մեղ տուին նոր կանոնադրութիւն: Մեր ընկերութիւնը կառուցել էր գոլրոցի համար երեք յարկանի մի շինութիւն, որտեղ սովորում էին հայ մանուկները: Մեզանից խիցին այդ տունը և մենք մեր ուրիշ բարեգործական ձեռնարկութիւնների համար ստիպուած էինք ուրիշ ընակարանների դիմել: Հայերը խորին վշտով տեսնում էին, թէ ինչպէս աստիճանաբար սահմանափակում էին հայ ազգի գործունէութեան ասպարէզները: Բայց երբ բանը հասաւ այնտեղ, որ եկեղեցական կալուածները խլուեցին ժողովրդից, այն ժամանակ արգէն յուղմունքը պատեց բոլորին: Աւելացրէք դրան և այն, որ հողով ապրուզ սակաւահող զիւղացին տեսաւ, որ նա խորթ գաւակ է և որ երկրի ազատ հողերից ոչ մի յոյս չունի մի կտոր էլ իր համար ստանալու: Այս բոլորից յետոյ հասկանալի է, որ երբ Բագւում տեղի ունեցան սարսափելի կոտորածներ և տեղական վարչութիւնը ցոյց տուեց այնքան անտարբերութիւն, մասսայի մէջ ընդհանրացաւ մի կարծիք, որ ապահով չէ մեր երկրում նոյն իսկ հայի անձը և սեփականութիւնը:

Այս ամբողջ արիւնալի եղերերգութեան մէջ ամենատխուր

երևոյթը նրանումն է կայանում, որ թուրք մասսաների գիտակցութեան մէջ համոզմունք է կայացել որ հայերի անխնայ կոտորածը և կողովուտը կատար են ածւում աղմինիսարացիացի թոյլութեամբ։ Անձրաժեշտ է արմատապէս ոչնչացնել այդպիսի համոզմունքը և առացուցանել, որ կառավարութիւնը ոչ մի կապ չունի այդպիսի չարագործ նախագիծների հետ։ Կարգի և խաղաղութեան վերականգման համար շատ կարևոր նշանակութիւն ունի նոյնուկս այն հանգամանքը, որ վարչական և ոստիկանական իշխանութիւնները իրանց գիրքի բարձրութեան վրայ դանուեն և վատահութիւն ներշնչեն գէպի իրանց։ Այն ինչ աղմինիսարացիացի և ոստիկանութեան շատ պաշտօնեաներ այնքան իրանց վարկարեկ են արել իրանց գործունեութեամբ, որ որքան նրանք պաշտօնի մէջ կը լինեմ՝ անհընարին կը լինի յուսալ, որ կը վերահաստատուի խաղաղութիւնը։

Մենք հայերս նոր հաւատով և յոյսերով կարդացինք ԶերՊայծառափայլութեան մինիթարական կոչը ուղղուած կովկասի ազգերին և այսօր եկել ենք յայտնելու, որ ներկայումս հայ տարրին սպառնում է մեր երկրում մեծ վտանդ այն խառնակութիւնների շնորհիւ, որոնք սկսուեցին Բագրում և արձագանք գտան Երևանեան նահանգում։

Ոչչացաւ բարձրաթիւ անմեղ ժողովուրդ, աւերուած են հարստութիւնները, գիւղերը և անտեսութիւնները, գոյքերը կազմութուած են և զանազան թանկագին իրեր անամօթարար ծախուած են Բագրուի շուկաներում, որին ականատես են լինում այդ իրերի տէրերը, և ուրիշ քաղաքներում, մինչև անգամ Պարսկաստանի սահմաններում, որ արձանագրուած է և պարբերական մամուլի մէջ։

Մենք լաւ գիտենք, որ ինքնապաշտպանութեան զործի նպատակայարմար կազմակերպութեան համար միաժամանակ երկրի բոլոր մասերում, հարկաւոր է շատ ոյժ, որա համար մենք մեր կողմից ինչորում ենք, որ թոյլ տրուի կազմել պետական պահակամբեր, ինչպէս յիշուած է մեր յիշատակազրի մէջ։

Այդ բացատրութիւնը լսելուց յետոյ կոմսը ասաց, որ գլորոցների և կարուածքների վերաբերութեամբ, ինչպէս նա փոքր ինչ առաջ նկատել էր, կը տրուի լիակատար բաւարարութիւն։ Բագրուի Մարդասիրական ընկերութեան վիրաբերութեամբ կոմսը առաջարկեց Սուլթան կրիմ Փիրէին զեկուցանել իրան առանձնապէս։ Բագրուի ոստիկանութեան վերաբերութեամբ կոմսը յայտնեց որ այդ ոստիկանութեան բարեփոխութիւնը կազմում է նրա հոգսերի առարկան։ Ինչ վերաբերում է

տգմինիստրացիայի կազմի փոփոխութեան ընդհանուր խնդրին, դա պահանջում է մի որոշ ժամանակ։ Կողոպառուած իրերի վաճառք հանուելու վերաբերութեամբ կոմսը յայտնեց, որ զենքարալ Ալիխանով-Ավարսկու զեկուցման նայելով՝ իրերի մի մասը բռնուած է սահմանագլխի վրայ, մաքսատանը; Ինչ վերաբերում է Բագուին՝ կոմսը յանձնեց համապատասխան կարգադրութիւններ անել Բագուի զենքարալ նահանգապետի ձեռքով։

Կանգ առնելով այն յայտարարութեան վրայ, թէ անհրաժեշտ է հասկացնել խաւար մասսաներին, որ նրանց գործողութիւնները երբէք չեն կարող հաւանութեան գոնել պետական իշխանութեան կողմից, կոմսը պատասխանեց. «Դուք հայերդ գիտէք, որ ես ոչ մի կերպ ասիթ չեմ թոյլ տուել այդ տեսակ եղբակացութիւններ անելու։ Ես իմ կողմից միայն զիմում եմ ձեզ, կարդի մարդկանց, խնդրելով ձեր ազգեցութիւնը գործ դնել կոմիտէտների վրայ, որպէս զի նրանք դադարեցնեն իրանց տերրորական գործունէութիւնը։»

Ներկայ եղողները պատասխանեցին, որ կոմիտէտների գործունէութիւնը չէ հնարարկում անմիջական ազդեցութեան, որովհետև յայտնի չէ, թէ ովքեր են նրանց գործողները և որտեղ են գտնուում, բայց ի նկատի ունենալով, որ. 1) կոմիտէտների գործունէութիւնը առաջ է եկել իրեն հետևանք յատուկ պետական կարգադրութիւնների, որոնք վերաբերում են եղել հայերդ եկեղեցական և ազգային իրաւունքներին և ուրեմն արդիւնք են եղել որոշ պատճառների, որոնք առաջացրել են հայերդի մէջ յուղմունքներ. 2) որ այդ գործունէութիւնը երևան է եկել միայն վերջին երկու տարին և նա կը դադարէ ինքն իրան, երբ կանհետանան գրգող պատճառները, կոմսը նկատողութիւնն արեց, որ կոմիտէտներ և առաջ դոյութիւն ունեին։ Ներկաները պատասխանեցին, որ կոմիտէտների գործունէութիւնը միայն վերջին ժամանակն էր վերաբերում Ռուսաստանին։

Երդ. հաւատարմատար Յ. Սալաթէլինան ընդգծեց հայերի կատարած կարեւոր գերը մէր երկրի մէջ։ Միանալով ուսւ ժողովրդի հետ, հայերը ձգտում էին առաջ տանել կուլտուրական խոշոր նպատակ՝ շնորհնելու երկիրը և նրան զնելու զարգացման կանոնաւոր շաղի վրայ։ Թէ պետական ծառայութեան մէջ, թէ գատաստանական պաշտօններում, թէ դպրոցական ասպարէզում և թէ ամեն տեսակ կրթական և հասարակական գործունէութեան մէջ հայերը աշխատում էին երկրի կուլտուրայի համար։ Բայց յետոյ փակուեցին հայ ինտելիգէնտի համար բոլոր ասպարէզները և այժմ զանազան

ատեաններում, շատ քիչ բացառութեամբ այլ ևս չէք գըտ-  
նի հայերի: Մատաւոր ոյժերով օժտուած մի ժողովուրդակա-  
նատես թէ ինչպէս նա անօր է դարձել զործելու իր հայր-  
ենիքի համար, որ ունի այնքան մեծ կարիքներ և որ կա-  
տրօս է անձնուէր զործողների: Ինչ վերաբերում է վարչա-  
կան շրջանների անդորձութեանը՝ ես Բագուի գէպքերից կա-  
րող եմ հաղորդել, որ երբ իմ մի ծանօթը հարցրեց կողակներից,  
թէ ինչու նրանք անտարեր նայում են կոտորածի վրայ և  
չն կոմում սպասիչներին, նրանցից մէկը պատասխանեց հե-  
տեւեալը. «մի՛թէ գուք կարծում էք, թէ ես քրիստոնեայի սիրտ  
չունեմ և չիմ մորմոքւում իմ տեսածներից, բայց ինչ կարող  
եմ անել. ինձ իրաւունք չէ տուած գնդակ արձակելու»: Գիւ-  
ղերը դինելու հարցի առիթով ես կարեոր եմ համարում յայտ-  
նել, որ եթէ անհնար է իրագործել մեր յիշատակազրի կէտը,  
այն ժամանակ նպատակայարմար կարող են լինել և այն ժա-  
մանակաւոր շրջիկ ոլահակախմբերը, որոնք «բազիհղուի կո-  
մանդաց»-ներ անունով յաճախ կարմակերպուել են մեր երկը-  
րում աւաղակների գէմ մաքառելու գէպքերում:

Կոմսը պատասխանեց, որ նրա համոր գոյութիւն չունի  
աղջայնական խարութիւն և որ նա բնիկներին կը տայ կա-  
տարեալ հսարաւորութիւն նուիրելու իրանց ոյժերը կովկասի  
ծառայութեան: Ինքնապաշտպանութեան հարցի վերաբերու-  
թեամբ Կոմսը գիմելով Սուլթան-Կրիմ-Գիրէյին խնդրեց ներ-  
կայացնել իրան նիւթեր «բազեզդի կոմենդաների» մասին և ասաց  
հետեւեալը. համաձայնուեցէք, պարոններ, որ չէ կարելի թոյլ տար  
որ կառավարութիւնը ինքը նպաստէ դինելու աղջաբնակու-  
թեան մի մասը միւս մասի գէմ, բայց միւս կողմից եթէ ես  
ցանկանայի զինաթափ անել բոլոր աղջաբնակութիւնը, ես այդ  
էլ չէի կարող իրագործել, որովհետև իրավէս զինաթափ ա-  
րուած կը լինէր միայն խաղաղ աղջաբնակութիւնը, իսկ բա-  
ցասական տարբերը միշտ հսարաւորութիւն կ'ունենային զըտ-  
նել զէնք: Այդ պատճառով ես չեմ հաւանում խուզարկութիւն-  
ների և զէնքեր խլելու սիստեմը և ազատութիւն եմ տալիս  
զէնք ձեռք բերելու թոյլատրական վկայականներով:

Այսուհետև գիմելով Բագուի գործերի վիճակին՝ կոմսը  
լսեց ինժեներ Ա. Խատիսեանի հետեւեալ յայտարարութիւնը:

Լինելով Բագուի տեխնիքական լնկերութեան նախագահ,  
ես ծանօթ եմ մեր արդիւնագործութեան վիճակին: Ուստի հա-  
մարձակութիւն ունեմ պնդելու, թէ մեր արդիւնագործութիւնը  
դրուած է այնպիսի պայմանների մէջ, որ նրան սպառնում է  
լիովին կործանում: Իսկ միևնույն ժամանակ այդ արդիւնագոր-

ծութիւնը մեծ դեր է կատարում Կովկասի տնտեսական կեանքում, տալիս է զանձարանին ահագին եկամուտներ և ներկայանում է իրեն զոյութեան աղբիւր մի քանի տասնեւակ հազար րանուրների համար: Անձնական և կարւածական ապահովութեան լիակատար բացակայութիւնը ճնշում է այն բոլոր անձանց, որոնք որևէ տարնչութիւն ունեն գէպի Բագուի գործերը: Բագում ստեղծուած անտանելի վիճակի զլխաւոր պատճառներից մէկը հանդիսանում են մեր վարչութեան անտակա կարգադրութիւնները: Ես ինձ թոյլ եմ տալիս իրեն օրինակ առաջ բերել հետեւեալը: Ապրիլի 30-ին մեզանում հրատարակուած էր գործագուր: Ցանկանալով նրան դադարեցնել, աղմինիստրացիան դիմեց այսպիսի միջոցի: Նա հաւաքեց Բալախանիի փողոցներից և հրապարակներից զինուած մահմեդականների բազմութիւններ և նրանց պատուիրեց «զսպել» աշխատովներին և սահիպել գործելու: Ճիշտ է, գործագուր անյապաղ խաղաղուեց, բայց ի՞նչ գնով: Անպայման թանգ գնով թէ մահմեդականների և թէ հայերի համար: Գործագուր զսպելու այդպիսի մի եղանակ, ծառայեց իրեն կախւի մի նոր առիթ հայերի և թուրքերի մէջ, իսկ նրա հետեւանըն այն եղաւ, որ անկարելի գարձաւ հայ բանուորներին պահել գործարաններում: Նըրարանը, իրբեկ կենդանի վկաներ փետրուարեան դժբախտ օրերի, փախչում են Բագուից հարիւրներով և հազարներով, փախչում են ելովիւղից, որ մի գուցէ զոհ դառնան զանազան ազգութիւնների աշխատովների ընդհարման միջոցին: Աղմինիստրացիայի անտակատութիւնը երեաց և հայ ինտելիցիայիցն պատկանող անձերի վերաբերմաք և այգտեղ իրեն օրինակ կարող է ծառայել ինձ հետ եղած գէպքը: Ես երբէք չէի վստահանայ նեղութիւն տալ Զեր Պայծառափայլութեան իմ անձին վերաբերեալ իրողութիւններով, եթէ սրանք ընորոշ և պերճախօս չըլինէին:

Պատմելով հանգամանօրէն թէ ինչպէս ոստիկանութիւնը, առանց հիմնաւոր առիթների և փաստերի, կատարեց խուզարկութիւններ այն գործարաններում, որի դիրեկտորներից մէկն էլինքը Խատիսեանն է, յայտնելով, որ կազմուած է պաշտօնական ըննիշների ձեւքով մի ակտ կասկածելի իրերի բացակայութեան մասին և ընդգծելով, որ նրան հնարաւորութիւն չէր տրուած լոյս հանելու յիշած ակտը, Խատիսեանը ասեց, որ այդպիսի պայմաններում ծանր է ապրել և աշխատել, ցաւալի է և վիրաւորական զգաւ, որ կորչում է հաւատը գէպի օրէնքը և արդարութիւնը: Թէ իմ և թէ Բագուից ինձ ուղարկողների անունից, յարգանքով լսնդրում ենք հասկացնել Բագուի իշխանութիւններին, որ իշ-

խանութեան առաջ բոլորը հաւասար են, որ սուսական օրէնքները համահուսար են ապահովում իւրաքանչիւր քաղաքցու անձը պատիւը և ստացուածքը, ով և լինի նա, ինչ ազգութիւնն էլ նա պատկանում լինի:

Խատիսեանի յայտնութիւնների վերաբերութեամբ կոմսը խնդրեց Սուլթան-Կրիմ-Ֆիրէյին նշանակել այն բոլորը, ինչ որ պահանջում է յատուկ կարգադրութիւններ:

Այսուհեաւ կոմսը դիմեց պատգամաւորութեան խնդրելով աշակցել խաղաղացնելու ընդհանութիւնը, խոստանալով բոլոր ծրագրուած բարենորոգութիւնները իրագործել կարճ միջուցում:

Բժիշկ Կ, Ստեփանեան արտայայտեց կոմսին շնորհակալութիւն սիրալիք և ուշադիք ընդունելութեան մասին, որ լիակատար յոյս է ներշնչում թէ Կովկասի ազգաբնակութեան խոստացուած բարենորոգութիւնները գտնում են արագ իրագործութեան շաղի վրայ:

Բժիշկ Ա, Խատիսեան թոյլտութիւն խնդրեց կոմսից հրատարակելու ներկայ ընդունելութեան մանրամասնութիւնները, որպէս զի նրա յարուցած լուրջ հետաքրքրութիւնը գտանայ ընդհանուրի սեփականութիւն: Կոմսը յայտնեց լիովին հաւանութիւն:

Դրանից յետոյ «Մշակ» լրագրի խմբագիր Ա. Քալանթար բացատրեց ներկայ պատգամաւորութեան կազմուելը հայ ժողովի զանազան ներկայացուցիչներից և յայտնեց հաւատափացում, որ կոմսը հայերի կարիքների հետ ծանօթանալու համար հայ ժողովը բերանից՝ կը կազմակերպէ ազգային ներկայացուցչութիւն և որ հնարաւորութիւն կը տայ իրան՝ ժողովրդին՝ մշակելու հասունացած կարիքների բաւարարութիւն տալու եղանակները, մանաւանդ որ երկրի շատ էական խնդիրների վերաբերութեամբ գոյութիւն ունեն քննուած ծրագիրներ: Այս խօսքերին կոմսը ասաց, «պարոններ, իմ գոները միշտ բաց են ձեզ համար!»

Յետոյ կոմսը, սեղմելով իւրաքանչիւրի ձեռքը, սիրալիք հրաժեշտ տուեց պատգամաւորութեան:

Ընդունելութիւնը տևեց 1 ժամ և 10 րոպէ,

—1905 թ. Յունիսի 4-ին յայտարարուած է Կովկասի Փոխարքայ զեներալ-ադիւտանտ կոմս Վորոնցով-Դաշկովի հրամանը, որով գեներալ-մայօր պրինց Լիւդովիկ-Նապոլէօնին յանձնուում է Երևանեան նահանգուու խախտուած կարգը վերականգնելու գործը, ենթարկելով նրան բոլոր թէ քաղաքացիական, թէ

կառավարչական իշխանութիւնները, ինչպէս և այդ նահանգի բոլոր զինուորական ոյժերը:

—Յունիսի 4-ին ներկայացաւ կովկասի Փոխարքային Երեանի թեմի փոխանորդ Կարասկետ վարդապետը, որ ուղարկուած է Նորին Վեհափառութիւնից զեկուցանելու Երևանի նահանգում տեղի ունեցող քստմնելի արիւնհեղութիւնների, թալանի և բնուութիւնների մասին: Կոմի Վորոնցով-Դաշկով ցանկութիւն է յայտնել որ հայր փոխանորդը ներկայացնի նրան գրաւոր զեկուցում:

—Բարձրագոյն Ռւկագով ներքին գործոց մինիստրի օգնական Տրեապովին, իբրև ոստիկանական ընդհանուր կառավարչին, արուած են լիազօրութիւններ՝ ըստ իր հայեցողութեան փակելու իշխանութիւնից թոյլատրուած համաժողովները, մի տարի ժամանակով խափանել ամեն տեսակ ընկերութիւններ, համադումարներ, ինչ կարգով էլ բացուած լինին նրանք: Պոլիցիայի ընդհանուր կառավարիչը իրաւունք է ստանում անմիջապէս զեկուցումներ անել Թագաւոր Կայսրին: Այդպիսով պոլիցիայի զինաւորը անկախ է դառնում ներքին գործոց մինիստրից:

—Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը, որ կազմուած էր 1892 թուին, վերափոխուում է և դառնում՝ երկրաշինութեան և երկրագործութեան գիխաւոր վարչութիւն: Երկրագործութեան և պետ. կալ. նախկին մինիստը Ալէքսէյ Սերգէիչ Երմոլով նշանակուում է Պետական Խորհրդի անդամ: Անշուշտ երկրաշինութեան վերաբերեալ բոլոր կենսական հարցերը—հողի սակաւութիւնը, կապալառութեան կամայական չափերը և հողագործութեան զարգացման այլ ինդիքները սերտ կապ ունեն պետական կազմի հիմնական վերանորոգութիւնների հետ, ուստի ժողովրդի ուշադրութիւնը այժմ գրաւուած է ներկայացուցչական ժողովի գումարման հարցով: Այդ ներկայացուցչական ժողովում միայն բաւարար լուծում կը ստանան հողի հետ կապուած աշխատող դասակարգերի անետածգելի պահանջները:

—Պետերբուրգում մայիսի 31-ին վախճանուեց մօտ 70 տարեկան հասակում և յունիսի 4-ին հողին յանձնուեց Մոսկուայում Կարապետ Եղեանը: Հանգուցեալը իր կրթութիւնը ստացել էր Լազարեան ճեմարանում, որ այնքան գործիչներ է տուել մեր գրականութեան և հասարակութեան: Կ. Եղեանը պետական ծառայութիւն վարելով միաժամանակ չէր խղում իր կապը հայկեանքից և գրականութիւնից և աշխատում էր՝ համաձայն իր աշխարհայեցողութեան, ուղղութիւն տալ, նպաստել այս կամ

այն երևոյթին: Եզեանը մի ժամանակ ունեցել է գիշերօթիկ մասնաւոր գպլրոց Պետերբուրգում և մեր շատ գործիչները դուրս էին եկել այնտեղից՝ կրելով իրանց վրայ իրանց ուսուցչի ազգասիրութիւնն և ուղղութիւնը: Նրա աշակերտներից էին Գ. Եւանգուլեանը, Ա. Յովհաննիսեանը: Շնորհիւ իր դիրքի և շատ որոշ ուղղութեան՝ հանգուցեալը մեծ ազգեցութիւն ունէր մեր բարձըր հոգմոր և բոլոր փողատէր շրջաններում. նա դրանց աչքում մի հեղինակութիւն էր, որի խօսքը վճռող նշանակութիւն ունէր շատ ազգային-եկեղեցական հարցերում: Իրեւ շօշափելի խոշոր գործ զրականութեան մէջ կը մնայ նրա «Չոշենի՛ Պետրա Վելիկաց Ը արմանքում» աշխատութիւնը. մեծ էր նրա գերը նաև Կարինի Սանասարեան գպլրոցի հիմնարկութեան, կազմակերպման և կառավարելու գործում: Առ հասարակ հայկական կեանքում Կ. Եզեանը խոշոր մեծութիւն էր համարւում, թէև վերջին տարիները նա կորցրել էր իր նախկին ազգեցութիւնը նոր հոսանքներով զեկավարուող մեր նոր կեանքի մէջ:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ուսւաց նաւատորմի ջախչախումը:—Դերմանիան ազատուած ձեռներով:—  
Նլէդ-Նորվեգեան ընդհարումը:

Կորէեան նեղուցում, Յուշիմա կղզու մօտ, կատարուեց այն  
սոսկալի կատաստրոֆը, որին լարուած ուշալրութեամբ սպա-  
սում էր ամբողջ աշխարհը: Մայիսի 14—15-ին Տողոն բնաջինջ  
արաւ ուսւաց երկրորդ խաղաղովկեանեան նաւատորմիզը, գե-  
րի վերցնելով վիրաւոր ծովակալ Ռոժեստվենսկուն և ծովակալ  
Ներովատովին. 15 հաղար նաւաստիների կէսից աւելին հաճ-  
գիստ գաւաւ ովկիանոսի յատակում, մնացած մասը գերի տա-  
րուեց: Ռուսաց 11 զրահակիրներից չորսը ընկան ճապոնցիների  
ձեռքը, մնացածները խորտակուեցին. 10 յածանաւերից փոք-  
րագոյնը («Ալմագ») ինչպէս և 9 ականանաւերից միայն երկուսը  
(«Գրօգնը», «Բրավըյ») մազապուրծ հասան Վլադիվոստոկի մի  
հիւանդանոցանաւի հետո: Ճապոնացիները գերի վերցրին և մի  
ականանաւ ու 2 հիւանդանոցանաւ: Մնացած նաւատորմիզը միծ  
մասամբ խորասոյզ եղաւ, մասամբ ցիրուցան եղաւ և ապաստան  
գտաւ այս կամ այն պետութեան նաւահանգիստներում զինա-  
թափուելով: Բնաջինջ եղած այդ նաւատորմիզի արժէքը հաշւում  
են 200 միլիօն ըուբլի: Այդպիսի ողբերգական վախճան ունե-  
ցաւ անկոնտրու, անպատասխանատու և կաշառուող ուսւ ըիւ-  
րոկրատիայի պատրաստած նաւատորմիզը, որ գոռող էր թղթի  
վրայ և ոչ իրականութեան մէջ: Այդ սոսկալի չարիքի մէջ էլ  
լաւատես մարդիկ, ի հարկէ, բարիք էլ կը գտնեն. բարիքն այն է  
որ խաղաղութիւն կնքելը դառաւ անհրաժեշտութիւն Ռուսաս-  
տանի համար, որովհետև առանց նաւատորմիզի անկարելի է  
յաղթել ճապոնիային: Միւս բարիքը կը լինի այն, որ բիւրոկրա-  
տիայի իշխանութեան վերջ կը դրուի և Ռուսաստանի ներքին  
վերանորոգութեան հարցը կը դառնայ անյետաձկելի մի գործ:  
Շատ շատերը, որոնք տատանւում էին թէ խաղաղութեան կըն-  
քումի և թէ վերանորոգութիւնների հարցում, այժմ Ռոժեստ-

վիճուկու պարտութիւնից յետոյ, անցել են մինչ այդ «ոչ-հայրենասիրական» կոչուած կուսակցութիւնների կողմը և բարձրաձայն պահանջում են՝ շուտափոյթ խաղաղութիւն և ժողովրդի ներկայացուցչութեան հրաւեր...

Ցուշիմա կղզու մօտ տեղի ունեցած ծովային կոփւը իր ծաւալով և հետեանկաներով առաջինն է համաշխարհային պատմութեան մէջ։ Այդ կոռուի ազգեցութիւնը միջազգային յարաբերութիւնների մէջ իսկոյն զգալի եղաւ, մոսիօ Դելկասսէն, Փրանսուուուսական դաշնակցութեան այդ խոշոր գործոնը, ստիպուած էր թողնել մէծ հանրապետութեան արտաքին քաղաքականութիւնը զեկավարողի պաշտօնը։ Գերմանիան իսկոյն զգացոր իր աջ և ու ձախ թեսերը ազատուել են և Կինտրոնական եւրոպայում ահազին գերիշխում ստացաւ իր ձայնը։ Եւ այժմ այլ տոնով է խօսում Վիլհելմը ոչ միայն Մարոկոի այլև Մերձաւոր Արևելքի հարցում։ կանդնած սուլթանի թիկունքում և աչքելն յառած դէպի Պարսից Ծոցը, նա գաղութային վիթխարի ծրագրներ է յօրինում իր «Փատերլանդի» (հայրենիքի) համար և գերմանացի Միքէլը ձեռները շփում է ապագայ գէշէֆտների հրապուրիչ հեռանկարներ երազելով...

Սկանդինաւեան թերակղզու վրայ առ այժմ խաղաղ ճանապարհով կատարուեց մի մեծ յեղափոխութիւն։ Նորվեգիան խզեց իր քաղաքական միութիւնը (ունիա) Շվեդիայի հետ։ Խիզախ ծովարքաների (վիկինդ) հայրենիք նորվեգիան շատ յաճախ է եղել խաղալիք հարևան Դանիմարկեան և Շվեդեան դինաստիաների ձեռքերում, սակայն ընկճուած, յաղթուած հպատակի դրութիւնը նորվեգները երբէք չեն տարել և միշտ ստեղծուել է նորվեգիական պետութեան «միութիւն» այս կամ այն հարևանի հետ։ ԽՄ-դարում նորվեգիան կառավարում էր Դանիմարկեան թագաւորներից, իսկ 1814 թուականից նա միացած էր Շվեդիայի հետ, որովհետև այսպէս ցանկացան Նապոլիօն Բոնապարտին յաղթող Խուսիան, Անգլիան և Պրուսիան։ Նորվեգիան միացրուած էր Շվեդիայի հետ ոչ իրրե գաւառ, այլ առանձին պետութիւն։ բացի ընդհանուր թագաւորից Շվեդիան նորվեգիան պէտք է ունիսար ընդհանուր արտաքին մինիստրութիւն և ընդհանուր հիւպատուսներ Սակայն այդ միութիւնը հաւասարապէս ձեռնտու չէր երկու կողմերի համար, և ինչպէս Աւստրօ-Ռւսկարիայում Հաբսբուրգները իրանց սրտին աւելի մօտ էին վերցնում աւստրիական—գերմանական, քան ունգար շահերը, այնպէս և շվեդական թագաւորները նախագասէին համարում արիստոկրատիական Շվեդիայի շահերը առեւ-

տրական և գեմոկրատիական Նորվեգիայի շահերից։ Նորվեգիական ազգային ժողովը՝ ստորտինգը յաճախ որոշումներ էր անում, որոնք ցանկալի չէր կտնում շվեդ թագաւորը և դնում էր իր մերժումը (veto)։ Ուստի բաժանուելու ձգտումը քանի գնում աւելի սուր կերպարանք էր ստանում։ «Ունիան» կամ միութիւնը Շվեդիայի հետ խցելու կողմանկից էին Նորվեգիայի լաւագոյն մտածողները, ինչպէս, օրինակ, իրաքն, Բիերնասիերնէ-Բիեօրնսոն։ Նորվեգիայի աղքամերների ընդհարումը թագաւորի հետ աւելի սուր կերպարանք ստացաւ, եթի ստորտինգի որոշումը—հիմնել առանձին Նորվեգեան հիւպատոսներ—մերժուեց Օսկար II-ից։ 1895 թուականին Օսկար II-ը տկարութեան պատճառով ժամանակաւորապէս իր իշխանութիւնը տուեց իր թագաժառանգ Գուստավին, առ իր անտակու ընթացքով աւելի ևս բորբոքեց նորվեգներին, և ահա մայիսի 25-ին Նորվեգեան ստորտինգը միաձայն որոշեց որ թագաւորի իշխանութիւնը դադարեցնուում է, իսկ Շվեդիայի հետ միութիւնը յայտարարուում է ոչնչացրուած։

Ստորտինգը թագաւորին ուղղած իր գրութեան մէջ, ի միջի այլոց, ասում է. «Միութեան ոչնչացումը կապուած չէ թշնամական զգացմունքով ոչ շվեդական ժողովրդի ոչ էլ զինաստիայի նկատմամբ, որին ապացոյց այն որ ստորտինգը զիմում է թագաւորի աջակցութեան և խնդրում որ նրա ժառանակներից մէկը, հրաժարուելով շվեդական գաճի իրաւունքից, թոյլտութիւն ստանայ նորվեգեան թագաւոր ընտրուելու։ Ի վերջոյ ստորտինգը յոյս է յայտնում, որ թագաւորի նոր ընտրութիւնը նորվեգիայի համար կը պատրաստի նոր դարաշրջան՝ խաղաղ աշխատանքի և ճշմարիտ բարեկամական յարաբերութիւնների դէպի Շվեդիայի ժողովուրդը և նրա թագաւորը, որի անձի վերաբերմամբ նորվեգեան ժողովուրդը անփոփոխ կը պահպանի յարգանքի և ածնուիրութեան զգացմունք»։

Օսկար II-ը հակա-սահմանադրական է համարում ստորտինգի այդ քայլը և տրամադիր չի երևում համակերպուելու նըրան, սակայն, ինքն ևս կապուած լինելով շվեդական սահմանադրութեամբ, հազիւ թէ կարողանայ այնպիսի բան բռնել, որից զինուած ընդհարում առաջ գայ երկու պետութիւնների մէջ։

L. U.

Յունիսի 3-ին,

## Կ Բ Ի Պ Ա Կ Ն Ե Բ

«Մուրճ»-ի № 5-ում:

Էջ	տող	տակուած է	ալէտք է լինի
5	10	մութաքաններով	մութաքաններով
5	2	քառասուն	քառասուն
6	3	սիւնները	սիւնները
8	9	կուտը	կուտը
»	12	կուտը	կուտը
»	18	կուտով	կուտով
9	13	մէկ տեղ	մէկտեղ
»	7	լինիս	լինիս
»	1	կը հասնին	կը հասնեն
14	11	Մըսրամելիքի	Մըսրամելիքի
15	7	թէ	եթէ
17	1	ալագեմ	պագնեմ
26	2	քընիլ	քընիլ
28	15	երկաթի	վահանի
30	14	Դժոնով	Զէնով
33	16	մատաղեայ	մետաղեայ
34	2	Քող	Թող

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

Կ Ո Չ

Ներկայ թուականիս մայիսի 1-էն կազմուած ըլլալով «Բարիզի Հայ Ուսանողական Միութիւն» մը, (Union des Etudiants Arméniens de Paris), հրաւէր կը կարգանք Հայ հեղինակներուն՝ իրենց երկասիրութիւններով, և ուսումնասէր անձնաւութիւններուն՝ գրական նուիրատութիւններով օժանդակելու Միութեանս նորահաստատ գրադարանին:

Յոյս ունենք գրագէտ և գրասէր անտարբեր չպիտի մնան Հայ Ուսանողական Միութեան ներկայ կոչին:

Հասցէ. 29 Avenue Trudaine, Paris

ՀԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ, ՄՈՍԿՈՒԱ.

ՊԵՏ. ԽՈՐՃՐԴ. ԴԱՆԻԵԼ ԳԱԲՐԻԵԼԻԵԱՆ ՔԱՆԱՆԵԱՆԻ ՄՐՑԱՆԱԿԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԾ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ Շ-ՐՈՐԴ յօդուածի հիմամբ Լաղարեան ճեմարանի Մատնագիտական Դասարանների Խորհուրդը իւր՝ 1905 թ. Ապրիլի 5-ին կայացած նիստում վճռեց յայտարարել ի գուտութիւն մասնագէտների առաջիկայ երկու նիւթը՝ երկու մրցանակի համար, իւրաքանչիւրը՝ 1000 րուբլի:

Ա.—Հայ զաղթականութեան պատմութիւնը հանդերձ իւրաքանչիւր գաղութի պատմական տեսութեամբ՝ սկսած հայ Արշակունիների անկումից մինչև մեր օրերը:

Բ.—Հայերի և Վրացիների քաղաքական և կուլտուրական փոխադարձ յարաբերութիւնները՝ հին ժամանակներից սկսած մինչև Վրաստանի միանալը Ռուսաստանի հետ:

Հետազոտութիւնները կարող են ներկայացուել հայերէն կամ Ռուսներէն, Ֆրանսներէն կամ Գերմաններէր:

Լաւագոյն հետազոտութիւնը յիշեալ իւրաքանչիւր նիւթի մասին կը պարգևատրուի Խորհրդի կողմից նազար (1000) րուբլի մրցանակով:

Եթէ առաջին կամ երկրորդ նիւթի մասին ներկայացրած հետազոտութիւններից երկուսը հաւասար արժանաւորութիւն ունենան, Խորհուրդը կարող է բաժանել մրցանակը երկուսի հեղինակների մէջ:

Հետազոտութիւնները պէտք է ներկայացուեն ոչ ուշ քան 1-ն Սեպտեմբերի 1907 թ.:

Վերատեսուչ ձեմարանի՝ Վ.Ս. ՄԻԼԼԵՐ.  
Քարտուզար Խորհրդի՝ Ա. ԽԱՆԱՆՅԱՆ.

30 Ապրիլի, 1905 թ.  
Մոսկով:

## LA REVUE

(Ancienne «Revue des Revues»)

A B O N N E M E N T

Etranger (Union postale) par an: 28 fr.

» » » par semestre 16 fr.

Directeur-Rédacteur en chef

JEAN FINOT

Administration et Rédaction:

12 Avenue de l'Opéra

Paris

2—5

“Կ Ռ Ո Ւ Ւ Վ,”

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ ԳԼՈՒԽԻ ԳԵՂԱՐՈւԵԽՈՒԱԿԱՆ (ԵՐԱԺԵՄԱՐԻՒՅԻՆ, ՃԱՐՏԱՐԱՎԵՏՈՒՅԻՆ, ԵՎԱ. ԵՎ.Ա.) Եռամսնայ ու պատկերազարդ հանդէսին առաջին թիւը,  
«ԿՈՌԻՆԿ»-ը քաղաքականութիւնմբ չզլաղիլ:

«ԿՈՌԻՆԿ»-ին նպատակն է՝

1. Հայ արուեստը հանցնել Հայուն,
2. Եւրոպական արուեստը հանցնել Հայուն,
3. Հայ արուեստը հանցնել Եւրոպային:

«ԿՈՌԻՆԿ»-ը, հետևաբար, երկու լեզու կը խօսի՝ հայերէն ու ժրանիւրէն:

«ԿՈՌԻՆԿ»-ը հայ և օտար աշխատակիցներ կ'ունենայ:

«ԿՈՌԻՆԿ»-ը քրանսացի ականաւոր անձնաւորութեանց հովանաւորութիւնը  
կը վայելէ:

«ԿՈՌԻՆԿ»-ն իրեն պարտ կը համարի բանալ իր էջերը, անխտիր, այն  
ամեն յօկուածներու և աշխատութեանց համար, որոնք Հայուն գե-  
ղարուեԽՈՒԱԿԱՆ յատկութիւններն ի վեր հանելու ձգտումով ներշնչ-  
չուած կ'ըլլան:

«ԿՈՌԻՆԿ»-ին պարտին բաժանորդագրուիլ այն ամեն Հայերը, որոնք կ'ու-  
զին՝ իրենք ալ իրենց կարգին՝ նպաստել Հայ Վերածնութեան փթ-  
թումին նույիրուած ձեռնարկի մը, և որոնք կ'ուզին՝ ԳԵՂԱՐՈՒԵԽՈՒ-  
ԱԲԻՆԻՐԱՆԴ զրօշին վրայն ընդհամարել զէթ մեր բարոյական ա-  
զատագրումին նախաշաւեիղները:

«ԿՈՌԻՆԿ»-էն մէկ օրինակ, իր նմուշ, ձրի պիտի զրկուի ամեն անոնց որ  
կը հաճին մեզ իմացնել իրենց հասցէն:

«ԿՈՌԻՆԿ»-ին տարեկան բաժանորդագրինն է՝

Եւրոպայի համար	10 ժրանի
Ամերիկայի »	2 տօնար
Առուսիայի »	4 րուբրի
Տանկարանի »	50 դրա:

Դրամ, եւն. զրկել հետևեալ հասցէով՝

K. PROFF-KALFAIAN

Directeur-Rédacteur du «GROUNG»

159, Boulevard Montparnasse

P A R I S

1—2

ԼԵՒԹՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Մ Ի Ք Ա Ն Ի Օ Ր

ԱՐՑԱԽՈՒՄ ԵՒ ՍԻՒԽԻՔՈՒՄ

Գլուխ է 20 կոպէկ:

Դիմել գրավաճառներին:

Բացուած է չորս ամսուայ բաժանորդագրութիւն

# ՀԱՍԿԵՐ

Մանկական պատկերազարդ ամսագրի

1905 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8 ՄԻՆՉԵ 8 ԱՐՅՈՒԱՅ ՎԵՐՋԸ

Ամսագիրը լոյս է տեսնելու 32—48 երեսոց մեծադիր զրբոյկ-ներով և հրատարակուելու է հետեւալ ծրագրով

1. Բանահիւսութիւն՝ արձակ և ոտանաւոր (վէպ, պատմուածք, բեմական գրուածք, պօէմ, բանաստեղծութիւն, առակ և այլ գեղարուհուական երկեր);—2. Կենսագրութիւն;—3. Ցանապարհորդութիւն;—4. Դրտական-հանրամատչելի յօդուածներ աշխարհագրութիւնից, պատմութիւնից, բնագիտութիւնից և գիտութեան այլ ճիւղերից;—5. Յօդուածներ գեղարուեստի մասին;—6. Մանր լուրեր և Այլեայլք;—7. Ֆիզիքական փորձեր, խաղեր, շարագներ, ոերտուներ և զանազան զուարժալիքներ;—8. Թղթակցութիւն մանուկ ընթերցուների հետ:

—Ամսագրի նպատակն է (ա) ներշնչել մանուկ ընթերցողներին վսիմ զգուամներ, արծարծելով նրանց մէջ սէր զէպի մարդը և դէպի հայրենի միջավայրը, բ) տալ նրանց ճիշտ հասկացողութիւններ բնութեան և մարդու մասին, գ) զարգացնել նրանց նաշակը և դ) ուրախութիւն եւ աշխոյժ մտցընել մանկական կեանքի մէջ:

Ամսագիրը ոննենալու է նաեւ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ, որ հրատարակուելու է իրարանշչիր ամիս 16—24 երեսաւոց առանձին տեստրերով, հետեւալ ծրագրով:

1. Յօդուածներ և ոեփորմներ մանուկների Փիզիքական, մտաւոր և բարոյական կրթութեան զանազան խնդիրների մասին;—2. Նորութիւններ գպորցական իհանքից և մանկավարժական գրավանութիւնից;—3. Մատենախօսութիւն և քննադատութիւն մանկավարժական և մանկական զրքերի;—4. Մանր լուրեր և Այլեայլք;—5. Ոորհուրներ, հարցեր և պատասխաններ;—6. Պոստարկը;—7. Յայտարարութիւններ:

—Եյս բաժինը ի նկատի ունի (ա) օգնել ծնողներին և առհասարակ մանուկների զաստիարակութեամբ պարագողներին լրսարաններու ընտանեկան և հասարակական կրթութեան ճշշմարիտ նպատակներն ու միջոցները ներկայ պարագաներում, երբ հայ ընտանիքը ենթարկուեմ է անխոսափելի արմատական փոփոխութիւնների, (բ) իրար մօսեցնել զպրոցը և ընտարքը և գ) զործնական ցուցմունքներով զիւրացրել ընտանեկան զաստիարակութեան զրքը, մանկական ընթերցանութեան և անային զուարձութիւնների կազմակերպութիւնը, զաստիարակների և զարժուհիների ընտրութիւնը և այլն:

Չորս ամսուայ բաժանորդագինն է.

## ՀԱՍԿԵՐ մանկական

բաժինը թիվիսում 1 ր. մանկավարժական 1 ր. 40 կ.  
թիվիսից դուրս . բաժնով

Արտասահմանում ԵՐԵՔ ֆ. ԶՈՐՄ ֆ.

Խմբագիր-հրատարակիչ Կատ. Լիսիցեան

Բաժանորդ կարելի է գրուել՝ իսմբազրատանը, Թիվիս, Բեհրութեան փ. № 29, (Редакция журнала «Аскеръ», կամ Ré-daction du Journal «Hasker») և «Գուտտենբերգ» և «Կենդրօնական» գրախանութեարում: 1—3

Կովկասի Ռւսումնական Շրջանի հոգաբարձական Խորհրդի որոշմանից, որ հաստատուած է Կովկասի քաղաքացիական պ. կառավագայակետի պահօնակատարի կողմից

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ և Հ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

## ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿ

(Երրորդ և չորրորդ տարիների համար)

Համառու հայերէն-ռուսերէն բառզրութ  
Գին է 70 կ.

(246 երես)

Համարուած է պիտանի սկզբնական դպրոցների համար:  
Դիմել թիֆլիս՝ «Գուտահնըրերդ» և «Կենալոնական», իսկ Բաւ-  
գու՝ «Сотрудникъ» գրավաճառանոցներին:

Խել. Ա. Սումբատովի

## ԴԱԻԱՃԱՆՈՒԹԻՒՆ

Պրամատիկական լեզենդա Վրաստանի անցեալից  
5 արարուածով

(Հեղինակի պատկերով և յառաջաբանով)

Բնագրից թարգմանեց

ԱԼ. ծառութեան

Գին է 50 կ.

Զ. ՄՈՐԹԻՉ

## ՀԱԶԻ ԲԱԲԱՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍԱՆՈՒՄ

Վէպ պարսկական կեանքից

Լորդ Կըրզնի ներածութեամբ

Թարգմ. անգլ. բնագրից

ՄՌ Կալապետեան.

Գին է 2 ր.

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# „ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(33-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ

1905

ԹՈՒԱԿԱՆԻՆ

«Մշակը» կը հրատարակուի նոյն պլողքամեռով և նոյն  
ուղղութեամբ

Ամեն օր սացի տօնմբին յաջորդող օրերից:

Բաժանորդագինը «Մշակի». տարեկան գինը 10  
ոռութիւն, տասնեւմեկ ամսուանը՝ նոյնագիւռ 10 ռ., տասն  
ամսուանը՝ 9 ռ., ինն և ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն  
ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝  
5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3  
ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը 1 ոռութիւն:

Արտասահմանեան քաժանորդագրութիւնը. Ամ ե-  
րիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան  
6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ.  
Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ոռութիւն:

«Մշակին» գրուել կարելի է ԽՍՀԱԳՐԱԿԱՆԸ (Բա-  
զարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գլ-  
րուելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ  
ուղարկելիս՝ պէտք է գիմել հետեւեալ հասցէով. ՏԻՓ-  
ԼԻСՑ, Ռեդակցիա „ՄՇԱԿ“, իսկ արտասահմանից՝  
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունւում են բոլոր լե-  
զուններով:

Ազատիկ քոժանորդագրութիւն չէ ընդունում:

ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА НА  
НОВОЕ ИЗДАНИЕ ТОВАРИЩЕСТВА М. ВОЛЬФЪ:

# Толковый Словарь живого великорусского языка ВЛАДИМИРА ДАЛЯ

3-е, исправленное и значительно дополненное издание, подъ  
редакцией проф. С. Г. Б. университета  
— И. А. БОДУЭНА-ДЕ-КУРТЕНЭ. —

«Толковый словарь Даля» увѣнчанъ Императорской Академией Наукъ. Ломоно-  
совской премией; Императорскимъ Русскимъ Географическимъ Обществомъ удос-  
тоенъ Константиновской медали; соѣтствомъ Императорскаго, б. Дерптскаго, нынѣ  
изъ Юрьевскаго университета награжденъ полной премией имени Реберта Гейм-  
бюргера: въ настоящемъ изданіи признанъ заслуживающимъ рекомендаций  
со стороны Министерства Народного Просвѣщенія, посредствомъ особаго цир-  
куляра, вниманию педагогическихъ совѣтовъ среднихъ учебныхъ заведеній на  
предметъ приобрѣтенія его въ фундаментальная библіотеки этихъ учебныхъ за-  
веденій, и допущенъ, кромѣ того, въ ученическія, старшаго возраста, би-  
бліотеки среднихъ учебныхъ заведеній, а равно въ бесплатныя народныя  
читальни.

**ВЫШЕЛЪ ВЫПУСКЪ XIY—XV-Й (4—5-Й ВЫП. II-ГО  
ТОМА).**

(Куръ-мстить) СПБ., 1905. 40. Столбцы 577-й по 928-й.  
Полное изданіе «Толковаго словаря» будетъ состоять изъ сорока  
выпусковъ, составляющихъ четыре большіе тома въ 4 д. л.,  
въ которыхъ будетъ заключаться до 250 печатныхъ листовъ  
или около 8000 столбцовъ текста убористыми, но четкими шриф-  
тами, на плотной, глазированной бумагѣ,  
Подписная цѣна словаря—20 рублей. Допускается разсрочка:  
при подпискѣ 2 р. 50 к. и за каждый изъ первыхъ 35 вы-  
пусковъ по 50 коп.—Пересылка по дѣйств. стоим., причемъ  
для облегченія расчета выпуски, по мѣрѣ выхода, высылают-  
ся съ наложеннымъ платежемъ.

Подробное объявленіе высылается желающимъ бесплатно.  
**ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ:** у издателей—въ книжныхъ мага-  
зинахъ Т-ва М. О. ВОЛЬФЪ—С. Петербургъ, Гостиный Дворъ,  
18, и Москва: 1) Кузнецкій Мостъ, д. Джамгаровыхъ, и 2)  
Моховая ул., д. Чижова и Курындіной (противъ университета), а также у всѣхъ др. столичныхъ и провинціальныхъ  
книгопродавцевъ.

## ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐԸ

Արժէ 3 ր., փառակազմ՝ 10 ր.

Դիմել՝ Մոսկուա, տիկին Քահանեանին [Сухарев-  
ская площ. собс., д.]

Նոր-Նախիջևան՝ տիկին Պատկանեանին:

Լոյս տեսաւ

## ԹԱՓԱՅԻԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ԵՐԿԵՐԻ

III ՀԱՏՈՐԸ

Գինն է 1 րուբլի

Ծախւում է Կովկասի բոլոր հայ գրավաճառների  
մօտ: Պահեստը՝ Նոր-Նախիջևանում, Մինսս Բերքերեա-  
նի մօտ:

1905

## ԷՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ

Ա. Փրկչեան Հիւանդանոցի Հայոց

Օրացոյց եւ տուարական գիտելիք, ժամանակագրականն եւ  
աշխարհագրականն, պետական վիճակագրութիւնն, հայ  
եկեղեցւոյ եւ պատրիարքարանի տեղեկութիւններ.

Գործնական բաժին.

Գրական բաժին.

(Քարտէզներով եւ պատկերազարդ)

Գինը 10 դր. (80 ԿՊՊ.)

Կը ծախուի յօդուա Պոլսի Ա. Փ. Ազգ. Հիւանդանոցի  
վեցերորդ տարին լոյս կը տեսնի ճոխ եւ բազմակողմաննի  
պարունակութեամբ: 2—2

Ժամանակաւոր պատասխանառութիւնագիր՝ Յ. Սպենդիարեան  
Հրատարակութիւն՝ Ա. Քանանեան

19. ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուստաց նաւառորմղի ջախչա-  
խումբ:—Գերմանիան աղառուած ձեռներով:—Եվրո-  
պարփեղեան թնդարում. I. U. . . . . 182
20. ՎՐԵՊԱԿՆԵՐ ָ . . . . . 185
21. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ָ . . . . . —
22. ՅԱԽԵԼՈՒՄԾ. Ֆէյմն Մորիկը «ՀԱՅԻ ԲԱԲԱՆ ԱՆԳ-  
ԼԻԱՅՈՒՄ», վէպ պարոկ. Լեանըից, թարգմ.  
անդ. Մ. Կարապետեան. . . . . 33—64
-

ՅԵՐԱՅՆԵԿԱՆԻՄ կ ԲԵԺԵՆՈՐԴԵԳՐՈՒԹԵՒՆ

1905 թ.

# ՄԱԿՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա Գ Ի Ւ Ի

(Նոր շրջան Ն տարի)

Բ Ա Ժ Ա Շ Ո Ւ Գ Ա Գ Ի Ն Բ

Օպերատորաց տարեկան	10 ր.	Մարտասահման 12 ր.	(32 դ.)
կէս տարին	6 »	»	(18 դ.)
1 ամսուան	1 »	»	1 » 20 կ. (312 դ.)

ԲԱԺԱՆՈՐԴԵԳՐՈՒԹԵՒՆ կ ԲՆԴՈՒԵԼՈՒՄ է  
Թափառում - իմարտասահմանը (ձայնագումարեան փողոց, ու. № 12)։  
Խորառութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Դիֆլիս, վեր բարձրացնեան չետ պէտք է ուղարկել խմբագրութեան նահանակիցին։  
**Մարտասահմանը**՝ Տիլիս, Շեքտացնեան քայլագումարութեան աշխատավոր համար։

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութեան յատուկ խնդրում է յօդուածազրկեցից գրել պատր, մասնաւոնի բոներ, յատուկ անոն ննին ու օտար բոներ, եւ թորի վրան մի ենիսի վեալ, առանձնապէտ ու գրադանիլ կեսարացիքան, ողպազրութեան եւ նոր պարբերիների սուսամիլ լինելու վրայ, թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեան նահանակիցին։

2. Զընդունած մեծ յօդուածաները պահեւում են խմբագրատանը և ամիս, իսկ յետոյ ոչնչացնեամ հն ։ Զեռազիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախում։ Փոքր յօդուածաներն ու ստանաւորները չեն վերագարձնեում։

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութեանը։ Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռապիրները համարում են անվճարելի։

4. Խմբագրութեան իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրծատելու իրաւունքը։

5. «Վուրեիլ» համարը չստացուելու գէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութեան տալ ոչ ուշ քան յաջորդ համարի լոյս տեսնելը։

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով զիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն համահամբուցմ կամ պսոտացին ըլանկ։

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ։ Հասցէ փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսով զի առաջիկաց համարն ուղարկուի նոր հասցեով։

**ԾԱԾԱՐԱՐՈՒԹԵՒՆ** բնդումնում է ամեն լեզուով։ Յայտարարութեան համարի համար մաքրում են, — 1 երես բանող յայտարարութեան 15 ր., ½ եր., — 8 ր., ¼ եր., — 4 ր., առաջամեջ (կորպ.)— 40 կ.։

Զեռազիրները, նամակները և ծրագրները պէտք է ուղղել խմբագրութեան, ՀԵՂՈՒՆ ՍԱՐԴԱՐԱԿՈՒՅԻ անունով։







